

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՐՈՆԱՄԱՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁԸ (1908-1918)

9(47.925)
Հ-42
հշ.
Գր-ատ



ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՐՈՆԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁԸ (1908-1918 թթ.)

60087

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն
2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 422

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ

Հ 422 Վան-Վասպուրականի կրոնամշակութային կյանքը և պետականության ստեղծման փորձը (1908-1918 թթ.) /Ա. Հարությունյան.- Ս. Էջ միա ծին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրա-տա րակչություն, 2018. - 308 էջ+8 ներդիր էջ:

Նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Հայաստանի Առաջին Հանրապետության և Վասպուրականի պատմությամբ զբաղվող պատմաբանների ու ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

Տպագրվում է հովանավորությամբ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-203-9
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2018

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Յուրաքանչյուր ոք՝ տարեց թե երիտասարդ, քիչ թե շատ տեղյակ լինելով հայոց պատմությանը, ամեն անգամ, թեկուզև մեկ պահ, խոր կսկիծ և ափսոսանք է ապրում այն դաժան պատմական իրողության հանդեպ, թե ճակատագրի չարաբաստիկ հեգնանքի պատճառով ինչ է կորցրել հայությունը 1915-1918 թթ. հայոց Մեծ եղեռնի և դրան հաջորդող տարիներին, ու թե այսօր ինչ նշանակություն կարող էր ունենալ մեր ժողովրդի համար դրախտավայր հանդիսացող Վասպուրական աշխարհը:

Հին հայկական առածն ասում է. «Երկնքում դրախտ, երկրի վրա՝ Վան»: Եվ դա պատահական չէ, քանի որ Մեծ Հայքի 17 աշխարհներից 8-րդը հանդիսացող Վասպուրականը, որ բոլոր նահանգներից ամենամեծն էր, հայտնի էր իր բարձրաբերձ լեռներով ու լեռնաշղթաներով, իրար հաջորդող կանաչազարդ դաշտերով ու բերքառատ հովիտներով, որոնք աջ ու ձախ ակոսում էին Վասպուրականի երբեմնի տարածքը՝ անհամեմատ մեղմ կլիմայով, բնական բազմապիսի հարստություններով, կանգուն ու կիսավեր պատմական անզուգական հուշարձաններով և հայ դպրության ու մշակույթի կենտրոններով: Կապուտագեղ հարսի պես այստեղ է սփռվում Վանա լիճը՝ պատմական Տոսպա կամ Բզնունյաց ծովը, որը կարծես թե իր շքեղազարդությամբ բազմել է Վասպուրական աշխարհում:

Վասպուրականի սիրտն էր հանդիսանում քաղաքամայր Վանը, որը հիմնադրվել է Վանի Սարդուրի Ա թագավորի օրոք՝ Ք. Ա. 835 թ. Հայոց Ձոր գավառի արևմտյան մասում՝ լճափին՝ ունենալով հիասքանչ բնություն, կազդուրիչ օդ և ջուր:

Օտարները միշտ էլ գովեստով են խոսել Վան-Վասպուրականի մասին: Իռլանդացի նշանավոր ճանապարհորդ Հ. Լինչը, որը 1893-1894 և 1898 թվականներին այցելել է Վան, իր տպավորություններն արտահայտել է այսպես. «Նեապոլից մեկ անգամ ավելին պետք է տեսնել Վանը և ապա՝ մեռնել»:

Ավելի քան 45 տարի Վանում ապրած ամերիկացի բողոքական միսիոներ Ռեյնոլդսը 1913 թ. Լոնդոնում մի հավաքույթի ժամանակ արտասանած իր ճառում հիշատակում էր, որ «Վանն այնքան գեղեցիկ է, որ դժբախտություն մը պիտի լիներ զայն չտեսած մեռնել»:

Իսկ 1914-1915 թթ. Վանի ֆրանսիական հյուպատոս Սանֆոն իր նամակներից մեկում նշում էր, որ Վանը՝ յուր կլիմայով, տեսարաններով ու բուսական առավելություններով, նախընտրելի է, քան՝ Շվեյցարիան:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանի հայաբնակ վեց նահանգների մեջ Վան-Վասպուրականն իր աշխարհագրական դիրքով և պատմական իրադարձություններով բռնում էր առաջին տեղը: Օսմանյան սուլթանների զուլումների քաղաքականության հորձանուտում և ազգապահպանման համար մղած համառ գոյամարտերի բովում Վասպուրականի հայությունը մարտական մկրտություն ստացավ, ազգովին հասունացավ և դարձավ արևմտահայության ամենակազմակերպված հատվածը: Նահանգում ծավալվեց ֆիդայական զանգվածային շարժումը, Վասպուրականը դարձավ հայ ազգային-ազատագրական շարժումների գլխավոր թատերաբեմը, իսկ հինավուրց Վանը՝ ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի ամենամեծ և հայաշատ քաղաքը:

Մշակութային զարթոնքի արդյունքում ստեղծվեց ազգային դպրոցների լայն ցանց, աճեց երիտասարդ մտավորականության մի նոր հայրենասեր սերունդ, որն իր ձեռքը վերցրեց ազգային շարժման և մատաղ սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության հայրենանվեր գործը:

Վասպուրականի հայությունն իր շրջահայաց, հեռատես և գործունյա գործիչների շնորհիվ կարողացավ դիմանալ օսմանյան չարաշուք բռնատիրության անօրինակ ճնշումներին՝ պահպանելով նահանգի գերազանցապես հայկական նկարագիրը:

«Վասպուրական, տխուր Հայաստան...»: Ինչեր ասես, որ չես տեսել պատմության դարերի ընթացքում, ինչքան ես մաքառել օտարերկրյա ոսոխների դեմ, ընկել և արնաթաթախ ես եղել, բայց շատ հաճախ հաղթել ու քո ծոցում պահպանել ես ավանդապահ հայության մի հոծ զանգված՝ վասպուրականցիներ, որոնք աչքի են ընկել իրենց ստեղծագործ տաղանդով, ինքնավստահությամբ, համառ աշխատասիրությամբ և պայքարով:

Վասպուրականի հայության նկատմամբ պարբերաբար կիրառված ջարդերի, բռնի մահմեդականացման, ազգային, սոցիալական և կրոնական բռնաճնշումներին համընթաց Առաջին աշխարհամարտի տարիներին Վասպուրականի շուրջ 198 հազ. հայության գլխին կախվեց հայաջինջ Եղեռն:

Վասպուրականի հայությանը սպառնում էր ֆիզիկական բնաջնջման վտանգը, որովհետև գավառներում արդեն 1914 թ. վերջերին և 1915 թ. սկզբներին 24 հազարից ավելի հայ էր կոտորվել, ավերվել էին 100-ից ավելի գյուղեր, իսկ 15 հազ. մարդ դարձել էր փախստական և ապաստան գտել Վանի Այգեստանում: Դեպքերի մահասարսուռ ընթացքը վանեցիներին մղում է ինքնապաշտպանության, որը նահանգի հայության վառ հայրենասիրության լավագույն դրսևորումն էր:

Այսօր Վանի վերջնական դատարկումից 100 տարի անց, երբեմնի շեն ու հարուստ Վասպուրականը գրեթե ավերակ է, իսկ նրա աշխատասեր, շինարար ու տաղանդավոր ժողովուրդը ցրիվ է եկել աշխարհի տարբեր ծագերում:

Արցախյան պատերազմի և արտաքին դժնդակ մարտահրավերների մերօրյա պայմաններում, երբ նորից է դրվել մեր ժողովրդի ֆիզիկական հարատևման և հայոց պետականության պահպանման խնդիրը, էլ ավելի հրամայողական ու ստիպողական է դառնում Վանի օրինակելի և ուսանելի հերոսական պատմության դասերի, մշակույթի նշանակության նորովի և անբռնազբոսիկ ուսումնասիրումը, մեկնաբանումը, վերաիմաստավորումն ու գնահատումը, քանզի յուրաքանչյուր ժողովրդի գոյատևման և իմաստնության առհավատչյան ազգային կենսակերպի ստույգ իմացությունն է. մի կարևոր հանգամանք, որի բացակայության դեպքում ժողովրդի մեջ արթնանում է ինքնագոյատևման և սեփական ճակատագրի՝ տարերային ձևով տնօրինելու բնազդը:

Վասպուրականցին իր պատմությամբ և մշակույթով ապացուցեց, որ «Վասպուրական» բառն, իրոք, նշանակում է «ազնվականների և քաջորդիների երկիր», որ վանեցին իր նախնի վասպուրականցու հարազատ քաջ սերունդն է, որ նա իր ուժը դեռ չի սպառել և մաքառելով շարունակում է իր նախորդների հերոսությունն ու քաջությունը:

Վանի 1908-1918 թթ. իրադարձությունները, Վանի 1915 թ. անզուգական ինքնապաշտպանությունը, Վանի 1915 թ.՝ առաջին, և

1918 թ.՝ երկրորդ կառավարությունները՝ որպես հայոց նորանկախ պետականության նախակարապետներ, հանդիսանում են մեր ժողովրդի պատմության ամենափառավոր էջերից մեկը, որոնք բարոյահոգեբանական ու պատմական առումով նախապատրաստեցին Սարդարապատը և 1918 թ. Հայաստանի առաջին Հանրապետությունը: Դրա հավերժական իմաստը հավասարապես պատկանում է և՛ անցյալին, և՛ ներկային, իսկ այն՝ իր հերոսականությամբ ուսանելի է ոչ միայն երիտասարդության, այլև ողջ հայ ժողովրդի հայրենասիրական դաստիարակության առումով: Չէ՞ որ վանեցիներն իրենց պատմությամբ համերաշխության և միասնականության անխախընթաց ու ցանկալի դաս տվեցին անցյալ, ներկա և ապագա սերունդներին: Ուստի այն անմոռանալի պիտի մնա ու պարծանքով պիտի հիշվի սերնդեսերունդ:

Խոսքս ցանկանում եմ եզրափակել Վահան Տերյանի հետևյալ խոսքերով. «Եթե այսօր հայ ժողովրդի սիրտն ուղղված է ապագային, եթե նա իսկապես հավատում է իր ապագային, ապա նա իր հայացքը պետք է ուղղի ոչ միայն Վանին ու Էրզրումին, այլև՝ իր մեջ, իր հոգու խորքերը, որպեսզի տեսնի՝ կա՞ այնտեղ այն ամենը, ինչ կյանք է տալիս մեր նյութական հայրենիքին՝ և՛ Վանին, և՛ Մուշին, և՛ Էրզրումին: Եվ եթե կա, ապա ժողովուրդը ծուլ ու հոռետես չի լինի, այլ կամքի մեծագույն մղումով ձեռնամուխ կլինի այդ հոգևոր հայրենիքի վերակառուցմանը»:

Գիրքը նվիրում եմ բոլոր նրանց, ովքեր ընկան թուրքական բռնակալության ճիրաններից Հայաստանը ազատագրելու ճանապարհներին մղված կուռ մարտերում, որոնց զոհաբերությունը նպաստեց վերածնվող Հայրենիքի պետականության վերաստեղծմանը:

Հավասարապես փառք, պատիվ և հավերժ հիշատակ Վանի և Հայոց հերոսամարտերի ու պետականությունների համար զոհված հայտնի և անհայտ բոլոր հերոսներին ու մասնակիցներին:

Ազատագրության ձգտող դեռ որքան սրտեր կան, որ սավառնում են նրանց հետքերով:

Փա՛ռք և պաշտամունք Հայաստանի ու Արցախի Հանրապետություններին և ժամանակին Հայաստան երկրի անբաժանելի մասը կազմած Վասպուրական աշխարհին:

Հեղինակ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ, ՀՈԳԵՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ (1908-1918 ԹԹ.)

1.1. Մշակութային կյանքի աշխուժացումը (1908-1914 թթ.)

1908 թ. օսմանյան սահմանադրության հռչակումից հետո Վան-Վասպուրականը եռուզեռի մեջ էր: Հաստատված հարաբերական «ազատությունը» թռիչք էր հաղորդել նահանգի հասարակական-քաղաքական գործունեությանը, որի արդյունքում էլ արագ թափով զարգանում էր մշակութային կյանքը: Սահմանադրական վեց տարիները հնարավորություն տվեցին Վանի հայ ժողովրդին ոգևորությամբ և նվիրումով դրսևորելու իր բնածին մշակութային ստեղծագործական ընդունակությունները. «Հայ ժողովուրդը մօտ 7-8 տարի չունչ քաշեց և այդ կարճ ժամանակամիջոցում, տաճիկներին լոկ հաւասար իրաւունքներ վայելելով, տնտեսական և կուլտուրական մի այնպիսի յառաջադիմութիւն ցոյց տուեց, որի վրայ թուրքերն սկսեցին նախանձով նայել»[1]: Վանի հայությունը գիտեր, որ զուլումի տարիները ծանր էին անդրադարձել նահանգի մշակութային կյանքի վրա և «հիմա կ՚աշխատէր արագ քայլերով շահիլ կորսուած ժամանակը»[2]:

Օսմանյան սահմանադրությունը հնարավորություն տվեց ժողովրդին՝ բացելու լուսավորության հիմնարկություններ: Խորհրդային կուսակցական աշխատող և լրագրող, վասպու-

[1] Վասպուրականը և իր տարեգիր զաւակները, Պոսթըն, 1942, էջ 45:

[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 159:

րականցի Վահան Ծովյանը (Խերանյան) Աղասի Խանջյանի մասին պատմող իր հուշերում նշում էր, որ «... աշակերտական, հասարակական, ընկերական, ակումբային շրջանակները սունկի պես աճում էին Վանում 1908-1914 թթ.: Լեգալիզացիայի էին ենթարկվել կուսակցությունները, կազմակերպվում էին աշակերտական միություններ, ակումբներ, հասարակական գրադարաններ, տեղի էին ունենում ներկայացումներ, հրապարակային դասախոսություններ, դիսկուսիաներ, հրատարակվում էին թերթեր, ամսագրեր և այլն»[1]:

Իսկ Լ. Զորմիսյանը ակնարկում է, որ առաջին անգամ հայ միաքը առանց զգուշավորության, առանց ինքնագսպումի, թղթին էր հանձնում իր խոհերի և զգացումքների թնջուկը. «Առաջին անգամ ըլլալով հայ ուսուցիչը առանց վախի կը խօսէր Մեծն Տիգրանի, Վարդան Մամիկոնեանի, Սասունցի Դաւիթի մասին իր աշակերտներուն»[2]:

Պարբերական մամուլը

Երիտթուրքական հեղափոխությունը նոր թափ հաղորդեց պարբերական մամուլի զարգացմանը:

Ընդհանրապես, դարավերջից մինչև 1908 թ. ընկած ժամանակաշրջանի արևմտահայ մամուլում զգալիորեն սահմանափակվել էր արևմտահայ սոցիալ-տնտեսական կյանքի լուսաբանումը, որի պատճառը գրաքննական արգելքներն էին: Զբացել էին նաև արևելահայ հասարակական կյանքին, տնտեսությանը, մշակույթին և այլնին վերաբերող նյութերը, որով այնքան առատ էր 1860-1890-ական թթ. պարբերական մամուլը: Երբեմն տպագրվում էին միայն էջմիածնի կաթողիկոսության մասին թռուցիկ լուրեր ու ծանուցումներ, որոնք, սակայն, առանձնահատուկ արժեք չէին ներկայացնում[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 1304, ց. 1, գ. 18, թ. 98:

[2] **Չորմիսեան Լ.**, Կուսակցութիւնները, Երևան, 1995, էջ 54:

[3] **Խառատյան Ա. Ա.**, Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-*1908*), Երևան, 1989, էջ 311:

Վանի պարբերական մամուլի հիմնադիրը Մ. Խրիմյանն էր, ով 1857 թ. հրատարակեց «Արծուի Վասպուրական» թերթը, որը, սակայն, կարճ կյանք ունեցավ: Հետագայում՝ Մ. Խրիմյանի պատրիարքության օրոք վանեցի Մանվել Անանյանի խմբագրությամբ սկսեց վերահրատարակվել «Արծուի Վասպուրական»-ը, սակայն վեց ամիս անց այն արգելվեց[1]:

1906-1908 թթ. Վանի ծխական կենտրոնական վարժարանի դաշնակցական շրջանավարտ աշակերտները հրատարակում էին խմորատիպ «Նոր սերունդ» թերթը, որն ուներ քննադատական և հարձակողական ուղղվածություն[2]:

1908/1909-1911 թթ. Վանում հիմք է դրվում երկու թերթերի հրատարակմանը: Դաշնակցականները 1909 թ. հրատարակում են «Աշխատանք»-ը (Հրատ.՝ Իշխան, ավելի ուշ՝ Համայակ Մանուկյան)[3], իսկ ռամկավարները 1910 թ.՝ «Վան Տոսպ»-ը (Հրատ.՝ Հ. Ավագյան), որոնք մեծ դեր են խաղում Վան-Վասպուրականի հասարակական-քաղաքական կյանքում[4]: Բացի դրանից, Շատախում, Գավաշում և Արճակում հրատարակվում են «Յորձանք», «Ժայռ», «Տիգրիս», «Ծովակ», «Գաւառի ձայն», «Լոյս», «Ովազիս» և այլ թերթեր[5]: Դրանցից «Տիգրիս» խմորատիպ պարբերաթերթը (խմբագիր՝ Տիգրան Բաղդասարյան) «ամենէն տարածուն թերթը եղած էր իր ճոխ բովանդակութեամբը, տեղագրական քարտէզներով և ուսումնասիրութիւններով»[6]:

[1] **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., Ալեքսանդրիա, 1929, էջ 123:

[2] **Անդ**, էջ 123:

[3] **Աճեմեան Յ.**, Սգապսակ Իշխանի (պատկերազարդ), Թիֆլիս, 1916, էջ 14, նաև՝ «Դրօշակ», Ժնեւ, 1926, օգոստոս-հոկտեմբեր, թիւ 8-10, էջ 269:

[4] **Աճեմեան Յ.**, Սգապսակ Իշխանի (պատկերազարդ), էջ 14, նաև՝ **Երամեան Յ.**, Յուշարձան, հտ. Բ., էջ 123:

[5] **Ա-Դո**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Երևան, 1917, էջ 18, նաև՝ **Չիթունի**, Յուշիկք Հայաստանի (vade=mecum d'Armenie), Կ. Պոլիս, 1919, էջ 72-73:

[6] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 2-րդ, Պէյրութ, 1952, էջ 22:

Կրթական գործը և դպրոցները մինչև 1908 թ.

Վանի նահանգի կրթական գործն ամենից մխիթարականն էր, և այդ գործի մեջ առաջնությունը ու համեմատական առավելությունը պատկանում էր հայերին: Վանեցին մեծ ջանքեր էր գործադրում հասարակության մեջ երևալու իբրև զարգացած, ուսումնագետ, կրթասեր և գրասեր անձնավորություն, որը պայմանավորված էր նախ իր տնտեսական վիճակը բարվոքելու ակնկալությամբ և ապա իր իմացական կարողությունը զարգացնելու ցանկությամբ:

Մինչև 1840-ական թվականները Վանում հիմնական դպրոցներ չկային և խոսք անգամ լինել չէր կարող հասարակական լայն կրթության մասին[1], չնայած 1834 թ. վիճակագրության համաձայն՝ Օսմանյան Թուրքիայում (բացի Կ. Պոլսից) գոյություն են ունեցել 114 հայկական դպրոցներ, որոնցից 3-ը՝ Վանում[2]: Վասպուրականցի հայերի ուսուցումը հիմնականում կրում էր անհատական՝ «ոչ դպրոցական» բնույթ[3]:

Վանում՝ ոստայնագործական արհեստանոցներում, գրել, կարդալ և հաշվել էին սովորում միայն տղաները, քանի որ արհեստի այդ ճյուղն ամենից տարածվածն էր Արևմտյան Հայաստանում: Իրենց զավակներին ուսման տալու փափագ ունեցող ծնողներն իրենց երեխաներին ուղարկում էին թաղի որոշակի գիտելիքներ ունեցող «հայագետ ուստայի», ոստայնանկության գործատուի, տիրացուի կամ քահանայի մոտ՝

[1] Կ. Պոլսում առաջին կրթարանների բացումը հայերի և հույների համար պետական հրամանով արտոնվել է 1789 թ.: Տես **Ազատեան Թ.**, Յարիւրամեայ յոբելեան Պեզճճեան մայր վարժարանի ի Գում Գափու 1830-1930,Կ. Պոլիս, 1930, էջ 6:

[2] **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտ. Ա., Կահիրե, 1937, էջ 1096:

[3] **Նազիկյան Գ. Ա.**, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի 50-60-ական թվականները), Երևան, 1960, էջ 119:

ժամանակի նշանավոր գիտություններ՝ ճարտասանություն և բերականություն ուսանելու համար[1]:

Ոմանք էլ աշակերտում էին քիչ թե շատ մտավոր պաշար ձեռք բերած անձանց մոտ՝ Կ. Պոլսի, Երուսաղեմի, Էջմիածնի, կամ Վանի այս կամ այն վանքի դպրոցում, քանի որ «միմիայն մեծ վանքերը կպահէին փոքր «ժառանգաւորաց»-ներ՝ «իբրև պլպլացող կանթեղներ իրենց խաւար չրջապատի համար»[2]:

Վանեցի երեխայի ծնողը պատիվ է համարել իրեն և նրա ամենամեծ փափագն է եղել նաև իրենց զավակներին տեսնել եկեղեցում շապիկ հագած՝ շարականը փոխ տալիս, Ավետարան, Նարեկ, Սաղմոս, կամ այլ գիրք «քաջ և վարժ» կարդալիս, շարական երգելիս կամ պատարագին դպրություն անելիս. կարևոր մի հանգամանք, որ չի ունեցել բիթլիսցին, կարինցին կամ տրապիզոնցին[3]:

Մինչև 1860-ական թվականները «խալիֆայական» («խալֆայական»՝ տեր-թոդիկյան) և նույնիսկ ծխական դպրոցներում, իբրև ընթերցանության գիրք, ծառայում էր միավանկից մինչև 6-7 վանկանոց բառերից կազմված քերականության դասագիրքը կամ այբբենարանը: Դրան հաջորդում էր հեգապանը (վանկ-վանկ Սաղմոսի առաջին կանոնը), ապա ամբողջ Սաղմոսը, Գործ Առաքելոցը, Նարեկը և դրաբարի քերականությունը՝ 10 հոդվածներով:

1840-ական թվականներին Կ. Պոլսում գտնված ժամանակ Ագրիպպաս Տպաղյանը, Մկրտիչ Խրիմյանը, Լիմ անապատի միաբան՝ Հակոբ վարդապետ Թոփուզյանը (Թոփուզը) և Շարան Շարանյանը միտք են հղանում Կ. Պոլսի դպրոցների օրինակով դպրոցներ բացել նաև Վանում: Այդ առիթով նրանք դիմում են Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որի կարգադրությամբ Մ. Խրիմյանն աշխատանքի է անցնում Կ. Պոլսի Խա-

[1] **Ծերուկ**, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 43:

[2] **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ Բ., Ալեքսանդրիա, 1929, էջ 28:

[3] **Ծերուկ**, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 41:

սագյուղի Ներսիսյան վարժարանում՝ իբրև վարժուհու օգնական՝ ուսուցչական գործին ծանոթանալու և Վանում ուսուցչությամբ զբաղվելու հեռանկարով:

Հետագայում՝ 1847 թ., տիրացու Մանվելը Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից նշանակվում է Վանում բացվելիք առաջնորդարանական դպրոցի ուսուցիչ[1]:

Որոշ ժամանակ անց Շարան Շարանյանը և Հակոբ վարդապետը հասնում են Վան և քաղաքի երևելիներից կազմում հոգաբարձական մի մարմին՝ բացելով 5 ուսումնարան. Հիսուսյան վարժարանը՝ Քաղաքամիջում, ս. Մատթեոսյան վարժարանը՝ Արարուց թաղում, ս. Հովհաննես վարժարանը՝ Նորաշեն թաղում, ս. Մարկոսյան վարժարանը՝ Հանկույանների թաղում և ս. Ղուկասյան վարժարանը՝ ս. Հակոբի թաղում[2]: Այդ դպրոցների ընդհանուր տեսուչ է նշանակվում Հակոբ վարդապետ Թոփուզը:

Ահա այսպես հիմնադրվեցին Վանի ծխական կամ թաղային առաջին 5 դպրոցները, որոնց հետագայում ավելացավ նաև Հայկավանի Հայկական ծխական վարժարանը:

Թաղային վարժարանները կառավարվում էին յուրաքանչյուր թաղում կազմված խնամակալներով կամ հոգաբարձուներով:

Այդ դպրոցներին նյութական օժանդակություն էր ցույց տալիս Մոկաց Փութիկու ս. Գևորգ վանքը (որը ուխտատեղի էր ո՛չ միայն հայերի, այլև՝ քրդերի համար), որի տարեկան 15 000 դուրուշի (1 200 ռ.) հասույթը հատկացվում էր նորաբաց վարժարաններին[3]:

Մի քանի տարի անց Մ. Խրիմյանը բողոքում է այդ դրվածքի դեմ և պահանջում, որ յուրաքանչյուր եկեղեցի ինքնուրույն հոգա իր դպրոցական ծախսերը, իսկ Փութիկու վանքի հասույթը հատկացվի մոկացի գյուղացիների կրթությանը:

[1] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 44:

[2] Անդ, էջ 45:

[3] Անդ էջ 45-46:

Եվ ահա Վանի ազդեցիկ անձնավորություններից մեկի՝ Հայրապետ Բեյ-Սապոնջյանի ջանքերով կազմվում է «Արծրունյաց ընկերությունը», և կամաց-կամաց դպրոցների հոգսը պրվում է առանձին եկեղեցիների հոգածության վրա:

Մ. Խրիմյանն իր «Վարագա Ժառանգավորաց» դպրոցով Վանի ծխական դպրոցներին առաջադիմության մղեց: Ինչպես Ս. Վրացյանն է դիպուկ նկատել «Մինչ Դորպատի սերունդը Մոսկուայում և Սահմանադրութեան սերունդը Պոլսում վարում էին վերածնութեան ջահը, Խրիմեան Հայրիկն իր հանճարով լուսաւորում էր Հայաստանի երկնակամարը»[1]:

Շուտով Կ. Պոլսի հայոց պատրիարք դարձած Մ. Խրիմյանը, ներշնչվելով Կ. Պոլսում գտնվող վանեցի վաճառականներ՝ Բաբիկյանի և Գափամաջյանի հորդորներից, կազմում է «ս. Սանդխտյան ընկերությունը», իսկ 1870 թ. օգոստոսի 1-ին Վանում ձեռնարկում է իգական սեռի համար նախատեսված Սանդխտյան վարժարանի սկզբնավորումը: Մ. Խրիմյանի խնդրանքով Մկրտիչ Սանասարյանը 2 000 ռ. է նվիրում Սանդխտյան վարժարանի շենքի կառուցման համար, ապա նույն բարեգործի կողմից կտակվում է 10 000 ռ. անձեռնմխելի գումար, որի տոկոսներն օգտագործվում են դպրոցի կարիքների համար[2]:

1870-1880-ական թվականներին Վանի կրթական գործում ներմուծվում են նոր գաղափարներ, որի արդյունքում կազմվում են զանազան կրթասիրական ընկերություններ:

1878 թ. ստեղծվում է «Խնամատար ընկերություն», որի նպատակն էր հավաքել որբ երեխաներին և կրթել նրանց՝ իբրև ուսուցիչ և հոգևորական:

1879 թ. վերջերին ընկերությունը լուծարվում է, և գործը մնում է ընկերության հիմնադիրներից մեկի՝ Հ. Երամյանի վրա, որը մինչ այդ վարում էր ընկերության առենապետի և

[1] Վրացյան Ս., Կյանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հտ. Գ., Պեյրութ, 1963, էջ 87:

[2] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 47:

դպրոցի ավագ ուսուցչի պաշտոնները: Հ. Երամյանը որբանոցը վանքից փոխադրում է Այգեստան, ավելացնում աշակերտների թիվը և բարեկարգում դպրոցը:

1879 թ. Կ. Պոլսի «Արարատյան (հետագայում՝ Միացյալ) ընկերությունը» Վանի համար օրինավոր ուսուցիչներ պատրաստելու նպատակով Վանում հիմնում է վարժապետանոց, որը, սակայն, գոյատևում է ընդամենը երկու տարի:

Դպրոցի տեսուչ Մ. Փորթուգալյանն իր վրա է վերցնում այդ գործի ընդհանուր պատասխանատվությունը և վարժապետանոցի անունը վերափոխում է «Կենտրոնական»-ի («Կեդրոնական»-ի): «Կենտրոնական»-ը՝ իր հեղհեղուկ վիճակով հանդերձ, կարճ ժամանակում արդյունավետ պտուղներ է տալիս Վանի հասարակությանը: Այս դպրոցն էլ իր գոյությունը պահպանում է մինչև 1885 թ.: Մ. Փորթուգալյանի՝ Վանից հեռանալուց հետո, կառավարության հրամանով այն փակվում է[1]:

19-րդ դարի 80-ական թվականներին Կ. Պոլսի «Միացյալ ընկերությունը»՝ տեղական ուժերի օժանդակությամբ, Վանի գավառում բացեց 80 նոր դպրոցներ, որոնք, սակայն, փակվեցին 1890-ական թվականների սկզբին[2]:

XIX դ. 80-ական թվականներին բացվեց Վանի Հայկազյան վարժարանը, որը որոշ ժամանակ գոյատևելուց հետո փակվեց, իսկ վերաբացումը տեղի ունեցավ 1902 թ.:

19-րդ դարի 80-ական թվականների կեսերին իրենց գործունեությունը սկսեցին Բարաղամյանի, Հունանյանի, Տ. Մկրտչյանի անհատական վարժարանները, որոնցից առաջինն ընդհատումներով գոյատևեց 10 տարի, իսկ մյուսներն՝ ավելի կարճ: 1880-ական թվականներին Քաղաքամիջում բացվեց նաև իգական՝ Շուշանյան ծխական, իսկ Այգեստանի Հանկույներ թաղում՝ Մ. Խրիմյանի տան մեջ, Գայանյան վարժարանները: Սակայն 1896 թ. Վանի աղետի ժամանակ այդ դպրոցները ևս փակվեցին:

[1] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 48:

[2] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, յուլիսի 29/օգոստոսի 11, թիւ 346:

1890-ական թվականներին ամերիկյան «Պորտ» ընկերությունն իր քարոզչությունն առաջ տանելու հույսով, դպրոցներ բացեց Վասպուրականում, որոնք, սակայն, չտվեցին իրական արդյունք՝ դառնալով կրոնական երկպառակությունների պատճառ: Մյուս կողմից, Վասպուրականում գործող 70-ից ավելի վանքեր մնացին կրթության համար անարդյունավետ վիճակում: Միայն մի քանի վանքեր՝ Վարագավանքը, Կարմրավորը, Աղթամարի ս. Խաչը, Նարեկը, Բարդուղիմեոսը, Լիմն ու Կտուցի անապատները, վերածվեցին որբանոցների: Սակայն դրանք փակվեցին 1902 թ.՝ նպաստների դադարեցման պատճառով[1]:

1892 թ. բացվեց մասնավոր մեկ այլ վարժարան, որը գոյատևեց հազիվ 4 տարի[2]:

1903 թ. սեպտեմբերին Հանկույներ եկեղեցուն կից բացվեց իգական վարժարան[3]:

1903 թ. Վանում գործում էին հետևյալ դպրոցները.

Քաղաքամիջում՝ արական սեռի համար՝ Հիսուսյան վարժարանը, իսկ իգական սեռի համար՝ Շուշանյան վարժարանը:

Այգեստանում՝ Արարուց թաղի ս. Թարգմանչաց (նախկին ս. Մատթեոսյան) երկսեռ վարժարանը, Նորաշենի ս. Հովհաննիսյան վարժարանը, Հ. Երամյանի վարժարանը, Սանդխտյան վարժարանը, կաթոլիկ և բողոքական միսիոներների արական ու իգական վարժարանները և Հանկույների իգական վարժարանը[4]:

Վարագավանքը, Բարդուղիմեոսը և Աղթամարն իրենց միջոցներով չարունակեցին պահել դպրոցները մինչև 1904 թ.: Այդ ընթացքում հնարավոր եղավ ո՛չ միայն Աղթամարը վերածել 50-60 աշակերտներով կանոնավոր դպրոցի, այլև Դավաշի, Կարճկանի, Մոկաց, Շատախի և Հայոց Ձորի մեջ

[1] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, յուլիսի 29/օգոստոսի 11, թիւ 346:

[2] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 48:

[3] Անդ, էջ 49:

[4] Անդ, էջ 49:

բացել 60-ից ավելի դպրոցներ՝ 2,185 աշակերտներով (որոնցից 287-ը՝ աղջիկներ էին) և 67 ուսուցիչներով: Վերոհիշյալ 60 դպրոց ունեցող գյուղերի հայ բնակչության թիվը 25, 760 էր, որից 2, 981-ն էր միայն գրագետ[1]:

Ծխական վարժարաններում դասավանդում էին շուրջ 25 առարկաներ, այդ թվում՝ աշխարհաբար, գրաբար, թուրքերեն, ֆրանսերեն, կրոն (հին և նոր ուխտ), ազգային, Վանի, հին Հայաստանի, եկեղեցական, ընդհանուր և բնական (բնագիտություն) պատմություններ, տիեզերագիտություն, բնական աշխարհագրություն (երկրաբանություն), մարդակազմություն, առողջապահություն, փիլիսոփայություն, տարրաբանություն (քիմիա), թվաբանություն, հանրահաշիվ, ազգային և եկեղեցական երգեցողություն, գեղագրություն, գծագրություն, մարմնամարզություն, կենդանաբանություն և իրագիտություն[2]:

Ընդհանուր առմամբ, դպրոցական գործի զարգացման հետ մեկտեղ կային նաև դժվարություններ: Դպրոցական գործի զարգացումը կասեցնում էին 1876 թ. օսմանյան սահմանադրությունից հետո խնամակալների կամ հոգաբարձուների փոխարեն ստեղծված թաղական խորհրդի անդամների կամայականությունները և դպրոցների նյութական աղքատությունը (Վանը ամենաաղքատ դպրոցական բյուջե ունեցող քաղաքն էր Թուրքիայում)[3]:

Բացի այդ, նախքան օսմանյան սահմանադրությունը, կառավարության հետախուզումներն անխուսափելի էին թե՛ դպրոցում դասավանդվող առարկաների և թե՛ ուսուցիչների նկատմամբ: Պարզ է, որ այս տխուր հանգամանքներին ենթակա դպրոցը, նեղ, կաշկանդված ոգով շարունակելով իր աշխատանքը, կարող էր պատճառ դառնալ, որ աշակերտությունը լիներ սեղմ աշխարհայացքով ու մտածելակերպով և «մաշուած գաղափարով, ապրելու սև իրականութեան խեղդող մթնոլորտին մէջ, մտածելու միմիայն իր անձի անձնասիրութեան վրայ»[1]:

[1] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, յուլիսի 29/օգոստոսի 11, թիւ 346:

[2] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 51-52:

[3] Անդ, էջ 50:

Պետական, մասնավոր, վանական, գյուղական և միսիոներական կրթական հաստատությունները

Վան-Վասպուրականում գործում էին պետական, միսիոներական, ազգային ընկերությունների մասնավոր, վանական և գյուղական կրթական հաստատություններ:

1. ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ – Թուրքական կառավարությունը Վանի նահանգի մեջ մահմեդական ազգաբնակչության կրոնական կրթության համար բացել էր եռամյա 17 արական և 3 իգական բարձրագույն նախակրթարաններ, պատրաստելու նպատակով՝ 1 վարժապետանոց (1909 թ.), ինչպես նաև յոթնամյա ծրագրով «Սուլթանիե» կոչված միջնակարգ լիցեյը (1913 թ.) Արտամետում[2]:

1900 թ.-ից նահանգում գործում էր նաև 1 զինվորական դպրոց, որն ավարտելուց հետո սանները իրենց կրթությունը շարունակում էին Երզնկայի միջնակարգ, իսկ հետո նաև՝ Կ. Պոլսի սպայական վարժարանում: Զինվորական դպրոցի ուսումնառության շրջանը քառամյա էր: Պետական այս դպրոցների համար հատկացված տարեկան ծախսը կազմում էր օսմանյան 8, 500 ոսկի: Այնտեղ ուսանում էին 3, 000 աշակերտներ, որոնցից 20-ը հայեր էին, իսկ դասավանդող 117 ուսուցիչների մեջ, նույնպես, կային հայեր[3]:

2. ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ – ա) ԾԽԱԿԱՆՆԵՐ – Ծխական վարժարանները սկզբից ևեթ միշտ էլ ենթակա են եղել ճակատագրի ելևէջներին՝ երբեմն ունեցել են շատ թե քիչ խաղաղ ու բարեկարգ վիճակ, իսկ երբեմն էլ ստացել են

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1912, փետրուարի 14, թիւ 31:

[2] «Կոհակ», Կ. Պոլիս, 1913, նոյեմբերի 6/19, թիւ 69:

[3] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1524:

խառնաշփոթ, անկարգ, անկանոն և քաոսային կերպարանք: Ծխական դպրոցները գործում էին եկեղեցիներին կից: Օրվա դասերի տևողությունը կազմում էր 3-5 ժամ, յուրաքանչյուր դասաժամը՝ 45 րոպե տևողությամբ: Ծխական դպրոցներում գործում էին «ծառայի» (եկեղեցու զանգը քաշողի և վարժուհիներին անից դպրոց առաջնորդողի), «կարգապահի» (դպրոցի զանգը հնչեցնողի), «կարգապետի» (դասից տուն առաջնորդող աշակերտի), «հուշարարի» (դասի ընթացքում զանգակով հասկացնել ուսուցչին, որ 15 րոպե մնաց, պետք է նոր դաս տալ կամ կրկնել) հասարակական պարտականությունները: Աշակերտները նստում էին ամփիփների (բարձերի) վրա: Նրանց հաշվառումը կատարվում էր տոմարում (մատյանում): Դասը բացատրվում էր քարե տախտակի և քարե գրիչի օգնությամբ[1]: Իրենց ծավալով, բովանդակությամբ և ժամանակով ծխական դպրոցների ծրագրերն ընդհանրապես չէին համապատասխանում ներկայացվող պահանջներին: Շատ անգամ է պատահել, որ այս կամ այն դպրոցը տարվա ընթացքում ամիսներով փակ է մնացել թաղական խորհրդի հրաժարման, կամ նույն խորհրդի անդամների միջև ծագած վեճերի պատճառով:

1848 թ.-ից Վանն ունեցել է հնգամյա ուսուցումով ընդհանուր առմամբ 9 երկսեռ ծխական նախակրթարաններ (Քաղաքամեջի Հիսուսյան, Քաղաքամեջի «Ուսումնատարած», Հայկավանք եկեղեցու ս. Ղուկասյան, Արարքի ս. Մարկոսի, Հայնկուլյանների ս. Մատթեոսի, Նորաշենի ս. Հովհաննեսի և ս. Սանդխտյան ու Գայանյան վարժարանները և 1 կենտրոնական միջնակարգ վարժարան՝ քառամյա ուսուցմամբ)[2]: Ծխական վարժարաններն ունեին 1, 321 աշակերտներ և 49 ուսուցիչներ, իսկ բյուջեն կազմում էր՝ 1, 186 օսմանյան ոսկի: Ուսուցիչների տարեթոշակը տատանվում էր 6-60 օսմանյան ոսկու սահմաններում: Ծխական դպրոցների հասույթները

[1] «Նոր դպրոց», Թիֆլիս, 1911, մայիս, թիւ 11-12, էջ 22-26:

[2] Գազանճեան Լ., Վերածնունդ Վան-Վասպուրականի. մշակութային ոսկեդար (1850-1950), Պոսթոն, 1950, էջ 136-137:

գոյանում էին աշակերտների վարձավճարներից, եկեղեցական կալվածքների եկամուտներից և, մասնավորապես, Ննդյան, Զատկի առթիվ եկեղեցում գոյացող «իւղագին» կոչված հասույթներից, որը դարձել էր ուսումնական տուրք[1]:

բ) ԾԽԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ (ՅԻՆ ՀԱՅԿԱՁՅԱՆ) ՎԱՐԺԱՐԱՆ - *հիմնադրվել է 1881 թ. Վանում՝ Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի ջանքերով: Այն գոյատևել է մինչև 1896 թ.*[2]: *Վարժարանը վերահիմնադրվել էր 1902 թ. սեպտեմբերի 1-ին՝ առաջնորդական տեղապահ Հ. Սահակ եպիսկոպոս Բազրևանդյանի նախաձեռնությամբ՝ Վանի 4 ծխական դպրոցների՝ Արարքի, Նորաշենի, Հայնկուլյաների և Քաղաքամեջի «Հիսուսյան» վարժարանի միջնակարգ դասարանների 86 աշակերտների համախմբման միջոցով՝ ի հակադրություն երամյան վարժարանի, քանի որ այն նախատեսված չէր ցածր խավերի համար: Վարժարանը վայելում էր Մ. Խրիմյանի պաշտպանությունն ու հովանավորությունը, և գալիս էր լրացնելու ծխական դպրոցների թողած պակասը*[3]: *Այնտեղ կարող էին սովորել ծխական դպրոցների վեցամյա ուսումը հաջողությամբ ավարտած աշակերտները: Ուսման տևողությունը 6 տարի էր: Այն ուներ 10 ուսուցիչ, 168 աշակերտ. վարժարանի բյուջեն կազմում էր 350 օսմանյան ոսկի: Ուսուցչության տարեթոշակը տատանվում էր 18-84 օսմանյան ոսկու սահմաններում: Հասույթը գոյանում էր ուսանողների թոշակներից, եկեղեցիների մասնավճարներից և օդեսաբնակ Գրիգոր Անտոնի Սերեբրենիկովի 24, 000 ռ. կտակի տարեկան տոկոսից (50 լիրա)*[4]: *Բոլոր դպրոցները միասին վերցրած՝ ունեին 500 կտոր գրականություն*[5]:

[1] «Նոր դպրոց», Թիֆլիս, 1910, մարտ, թիւ 3, էջ 64:

[2] Հայ դպրության և մշակույթի նշանավոր գործիչները, կրթօջախները, պարբերականները, տպարաններն ու հրատարակիչները, Երևան, 2000, էջ 154:

[3] Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի տասնևհինգամեակին առթիւ, 1915-1930, Վենետիկ - Ս.Ղազար, 1930, էջ 201:

[4] «Մշակ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 15, թիւ 254:

[5] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիվ 9-10, էջ 1525, նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1912, նոյեմբերի 6, թիւ 245, նաև՝ «Նոր դպրոց», Թիֆլիս, 1910, մարտ, թիւ

«Կեդրոնական»-ը՝ իր տված կրթությամբ և իր զարգացած ուսուցիչներով, Վանի ամենաառաջնակարգ դպրոցներից էր: Այն իր ծրագրով նման էր ռուսական ռեալական դպրոցներին:

Դպրոցում դասավանդում էին հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, մաթեմատիկա, օտար լեզուներ, հողագործություն, գծագրություն, մարմնամարզություն:

Վարժարանը դավառի և քաղաքի դպրոցների համար կարողացել էր պատրաստել 10 ուսուցիչներ[1]:

1904 թ. եկեղեցիների և վանքերի հասույթներով և ժողովրդական հանգանակությամբ հիմնվեց դպրոցի նոր շենքը՝ իր թատերասրահով:

1908 թ. աշնանը «Կեդրոնական»-ի տեսուչ է նշանակվում Կ. Պոլսից ժամանած ռամկավար կուսակցության անդամ, Կ. Պոլսի «Կեդրոնական» դպրոցի շրջանավարտ բաղիշեցի Հովսեփ Գուլումջյանը, ով երկու տարի պաշտոնավարելուց հետո նորից վերադառնում է Կ. Պոլիս:

գ) ՍԱՆԴԽՏՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ - հիմնադրվել է 1870 թ. Գ. Սրվանձտյանի ջանքերով՝ 5 նախակրթական և 4 միջնակարգ շրջաններով: Օրիորդաց վարժարանում սովորում էին 240 աղջիկներ, դասավանդում էին 12 ուսուցիչներ, իսկ բյուջեն կազմում էր 260 օսմանյան ոսկի: Հասույթի աղբյուրներ էին հանդիսանում աշակերտուհիների վճարները, Գ. Ա. Սերեբրենիկովի (24, 000 ռ. տոկոսները) և Մկրտիչ Սանասարյանի կտակների տոկոսները: Ուսուցիչների տարեթոշակը կազմում էր 5-50 օսմանյան ոսկի: Դպրոցն ուներ 467 գիրք[2]:

դ) ԲՅՈՒԶԱՆԴՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Հիմնադիրներն էին հայր և որդի Բյուզանդյանները: Այն ուներ 150 աշակերտ:

3, էջ 59, նաև՝ «Հովիտ», 1910, թիւ 27, էջ 426-427, նաև «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 11, էջ 26:

[1] «Հայրենիք», Բոստոն, 1908, փետրուարի 15, թիւ 7, նաև՝ **Ա-Դո**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, էջ 19:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1009, թ. 1, «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1525, նաև՝ **Ա-Դո**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 19:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ - ա) ՎԱՆԻ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ - հիմնադրվել է 1910 թ.՝ երկամյա ծրագրով: Այն ուներ 90 սան, 4 ուսուցիչ և դաստիարակ, իսկ բյուջեն կազմում էր 60 օսմանյան ոսկի: Հասույթի աղբյուրներն էին սաների վարձավճարները և ընկերության նպաստը: Ուսուցիչների տարեթոշակը կազմում էր 15-20 ոսկի[1]:

բ) ԵԳԻՊՏՈՍԻ Հ. Բ. Ը. ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՑԸ - հիմնվել է 1911 թ.՝ Մ. Փորթուգալյանի Արարատյան վարժապետանոցի օրինակով՝ քառամյա շրջանո՝ Վանի քաղաքապետ Պետրոս Գափամաճյանի և առաջնորդական տեղապահ Հովսեփ արք. Սարաճյանի ջանքերով՝ Միացյալ ընկերության հետ համաձայնությամբ: 1911 թ. հունվարին Տնօրենների ժողովի անդամներից՝ Հովհաննես Հակոբյանն այցելեց Եգիպտոս և Հ. Բ. Ը. միության Վարիչ մարմնին ներկայացրեց Վանի վարժապետանոցի ծրագիրը, որը նույնությամբ հաստատվեց[2]: Այն ուներ 58 աշակերտ, 11 ուսուցիչ, իսկ բյուջեն կազմում էր 600 օսմանյան ոսկի[3]: Հասույթի աղբյուրներ էին հանդիսանում Բարեգործականի նպաստները և աշակերտների թոշակները: Ուսուցիչների տարեթոշակները կազմում էին 24-200 ոսկի, որն ազգային կրթական հաստատությունների մեջ ամենաբարձրն էր: Վարժապետանոցն ուներ գրադարան և արհեստանոց[4]: Հաբեշահայ վանեցի Հակոբ Բաղդասարյանի 200 ոսկի գումարով վարժապետանոցում բացվում է նաև թանգարան[5]: Վանի մասնաժողովը, վարժապետանոցի գործունեությունը դրացնելու համար, 1911 թ. սկզբներին իր կազմը համալրում է թաղական խորհրդի անդամներով:

[1] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1525:

[2] Միացեալ Ընկերութիւնք Հայոց (1880-1908). Եռամեայ տեղեկագիր 21 օգոստոս 1908-1911 օգոստոս 31, Կ. Պոլիս, 1912, էջ 28:

[3] «Միութիւն», Կահիրե, 1912, թիւ 10, էջ 161, նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 1911, օգոստոսի 2, թիւ 165:

[4] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913 թ., թիւ 9-10, էջ 1526:

[5] **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի. մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 139:

Նույն տարվա հուլիսին կազմվում է նաև հանգանակիչ մասնախումբ, որի աշխատանքներին մասնակցում էին նաև Ռուսաստանի և Ֆրանսիայի հյուպատոսները: Պ. Գափամաճյանի սպանությունից հետո առենապետությունը փոխանցվեց նրա որդուն՝ Սեթ Գափամաճյանին:

Միաժամանակ արմենականները՝ կենտրոնի աջակցությամբ, վարժապետանոցի գործերը կարգավորելու համար, Կ. Պոլսից, որպես տեսուչ, հրավիրեցին Հովսեփ Գույումճյանին[1]:

Ամերիկահայ «Լույս» թերթի հրատարակիչ, քիմիկոս Մ. Մինասյանի տեսչության օրոք վարժապետանոցն ուներ ռամկավար ուղղվածություն[2]: Նրա օրոք արհեստանոց-աշխատանոցում ստացվում էր վառոդ, որը հետագայում կիրառվեց Վանի 1915 թ. ինքնապաշտպանության ժամանակ[3]: Վարժապետանոցը պատրաստում էր ուսուցչական կադրեր: Այդ նպատակն իրականացնելու համար սահմանված էր 4 տարվա դասընթաց՝ երկրորդական կրթության, տեսական ու գործնական մանկավարժության և գյուղատնտեսական կրթության համար[4]:

4. ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆԿԱԽ ԴՊՐՈՑՆԵՐ – ա) ԵՐԱՄՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԱՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - հիմնադրվել է 1878 թ. հուլիսի 13-ին Վանի ս. Հակոբի ծխական վարժարանում՝ ժրաջան, մանկավարժական գործին ծանոթ և հարատև անձնվիրությամբ հայանի Համբարձում Երամյանի[5] ու նրան օժանդակած Տ. Ամիրջանյանի կողմից, որոնք կարողացել էին հա-

[1] Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միության արձաթեա հոբելյան 1906-1931, հտ. Ա., Փարիզ, 1935, էջ 114, նաև՝ **Դարբինյան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն Յուշեր 1890 էն 1940, Փարիզ, 1947, էջ 216:

[2] «Կոհակ», Կ. Պոլիս, 1913, յունիսի 5/8, թիւ 26:

[3] **Ոսկանյան Շ. Բ.**, Ուրվագծեր արևմտահայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության (1850-1920 թթ.) Երևան, 1999, էջ 287:

[4] Միացյալ ընկերություն հայոց, ծրագիր Հ. Բ. Ընդհ. Միության վարժապետանոցի, Կ. Պոլիս, 1914, էջ 3:

[5] Հ. Երամյանը 11 տարեկանում ծաղկահարությունից դարձել էր աչազուրկ, իսկ 14 տարեկանում՝ որբացել:Նա դաստիարակվել ու կրթվել է բանաստեղծ Տիգրան Ամիրջանյանի հայրական խնամքով:

բուստ դասակարգի մեջ սեր ներշնչել առ դպրոցը և համակրություն կրթական հաստատությունների նկատմամբ:

Դպրոցը, որը սկզբում ուներ 30 սաներ, կառավարվում էր «Խնամատար» ընկերության կողմից Վանից, Կ. Պոլսից ու արտասահմանից հայթայթած նպաստներով և չաբաթական ու ամսական վճարներով: 1879 թ. երաշտը և 1880-1881 թթ. սովը Վանում առաջ բերեցին ընդհանուր թանկություն: Այդ նպատակով «Խնամատար» ընկերությունը, ի նպաստ կարոտյալների, հանգանակեց 150 ոսկի և օժանդակության համար դիմեց Թիֆլիսի «Մշակ», «Մեղու Հայաստանի» թերթերին, ինչպես նաև Մկրտիչ Սանասարյանին: 1880 թ. որբերը տեղափոխվում են Վանի Կարմրավոր վանք, ուր և մինչև 1882 թ. գործում է որբանոց՝ Հ. Երամյանի տեսչությամբ: Նման գործելակերպն արժանանում է Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի կոնդակին[1]: 1882 թ. լուծարվում է «Խնամատար»-ը, և գործի չարունակությունը մնում է Հ. Երամյանի վրա, որը, դիչերօթիկ որբանոցը՝ 15 սաներով, տեղափոխելով Վան, այն դարձնում է ցերեկային անհատական վարժարան[2]:

1903-1904 թթ. դպրոցի սաների հանգանակությամբ, որին Վանի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Այվազյանի հրավերով և Մարկոս բեյի նախաձեռնությամբ մասնակցում էին նաև եպիսպատհայերը, Վանի կենտրոնում կառուցվում է երկհարկանի սեփական դպրոցի շենքը, որն իր 1903 թ. մայիսի 30-ի հայրապետական կոնդակով չնորհավորում է Մկրտիչ Խրիմյանը:

Դպրոցը մինչև 1903 թ. կոչվում է «Վանի հայկական որբանոցի վարժարան», իսկ 25-ամյա հոբելյանի առթիվ՝ Երամյան վարժարան[3]:

[1] Վանի Երամեան վարժարանը, Կ. Պոլիս, ա. թ., էջ 4, նաև՝ **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 186:

[2] «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 59:

[3] Վանի Երամեան վարժարանը, էջ 4:

Լինելով «արիստոկրատների դպրոց»՝ այն իր առջև խնդիր էր դրել ազգային ոգով, «աղքատ և որբ ուշիմ մանուկները կրթելով՝ ուսուցիչներ և կղերցուներ պատրաստելու...»[1]:

Ուսման տևողությունը սկզբում 8, ապա 9, իսկ հետո՝ 10 տարի էր: Այն ուներ 4 նախակրթարանական և 8 հիմնական կարգեր: Վարժարանում սովորում էին 400 աշակերտներ, դասավանդում էին 19 ուսուցիչներ, իսկ բյուջեն կազմում էր 1, 200-1, 600 ոսկի (1908 թ.՝ 300-500 ոսկի), որն ազգային և միսիոներական կրթական հաստատությունների մեջ ամենաբարձրն էր[2]: Հաստվքի աղբյուր էին հանդիսանում աշակերտների թոշակները, Նոր Նախիջևանից՝ Իվան Պոպովի կտակի 100 լիրայի 6 տոկոսը ու նվերները: Նյութական սուղ միջոցների ժամանակ Հ. Երամյանը գրավ էր դնում նույնիսկ իր անձնական իրերը կամ հայկական տունն ու պարտեզը: Ուսման վճարը կազմում էր տարեկան 80-600 ղուրուշ: Ուսուցիչների տարեթոշակները կազմում էին 24-120 օսմանյան ոսկի[3]: Սակայն նույնիսկ Հ. Երամյանը բախտ չի ունեցել տարեկան 50 լիրա գումար ստանալու՝ իբրև իր աշխատանքի վարձատրություն:

Վարժարանի ծրագրում մեծ տեղ էր հատկացվում կրոնին, հայերենին, եկեղեցական, ազգային և ընդհանուր պատմությանը, աշխարհագրությանը, բնական ու չափական գիտություններին, քաղաքատնտեսությանը, օսմանյան օրենսգիտությանը, երկրագործության սկզբունքներին, մարմնամարզությանը, թուրքերենին, ֆրանսերենին և ռուսերենին: Ի դեպ, ռուսերենի դասավանդման համար վարժարանը ռուսական կառավարությունից տարեկան ստանում էր 100 ոսկի օգնություն[4]: Վարժարանն ուներ հարուստ գրադարան, բնա-

[1] Վանի Երամեան վարժարանը, էջ 3:

[2] **Տէր-Մկրտչեան Ե.**, Գանձեր Վասպուրականի, հտ. Ա., Պոսթոն, 1967, էջ 431:

[3] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1526, նաև՝ **Ա-Դո**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 19:

[4] «Տարազ», Թիֆլիս, 1914, յունուար, թիվ 1, էջ 15, նաև՝ «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1913, դեկտեմբերի 13, թիւ 279, նաև «Մշակ», Թիֆլիս, 1910, սեպ-

պատմական ճոխ հավաքածու, գիտական գործիքներ, հին և նոր քարտեզներ:

Փոքր-ինչ ուշացումով 1909 թ., Երամյան վարժարանը տոնեց իր գործունեության 30-ամյակը, և այդ առիթով նույն թվականին, հանգանակված գումարներով, Վանում կառուցվեց Երամյան վարժարանի նոր շենքը[1]: 1913 թ. Հ. Երամյանը ուղևորվեց Էջմիածին, Տրապիզոն, Կ. Պոլիս, Կահիրե, իսկ նույն թվականի դեկտեմբերին Թիֆլիսում, Հայոց բարեգործական ընկերության նախաձեռնությամբ, հանդես եկավ դասախոսություններով և, անդրադառնալով Երամյան վարժարանի ուսումնական ու տնտեսական հարցերին, ցանկություն հայտնեց իր վարժարանը լիցեի աստիճանին բարձրացնելու: Նա միաժամանակ հետաքրքրական տեղեկություններ հաղորդեց նաև Վանի դպրոցների և բնակչության մասին:

Իր գոյության 37 տարիների ընթացքում վարժարան են ընդունվել 8,000-ից ավելի աշակերտներ (որոնց 1/4-ը ձրիավարժ)[2], իսկ ավարտել՝ շուրջ 3,000-ը, որոնցից 50-ը (100-ը ?) իրենց ուսումը դյուրությամբ շարունակել են Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Էջմիածնի Գևորգյան և Մոսկվայի Լազարյան ճեմարաններում, ինչպես նաև՝ եվրոպական ու թուրքիական պետական համալսարաններում, իսկ բազմաթիվ թեբավարտներ ընդունվել են Կ. Պոլսի և Կովկասի հայկական բարձրագույն վարժարանների համապատասխան դասարաններ: Ընդհանուր առմամբ, իր գոյության ընթացքում վարժարանը ծախսել էր 12,000 օսմանյան ոսկի և իր ծրագրով ու արդյունքներով ճանաչվել էր իբրև Վանի և շրջակայքի համար բարձրագույն միջնակարգ հաստատություն[3]:

տեմբերի 23, թիւ 209, նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, դեկտեմբերի 11, թիւ 277:

[1] «Զարթօնք», Կահիրե, 1919, թիւ 3-4, էջ 53, նաև՝ **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն Յուշեր 1890 էն 1940, Երևան, 2003, էջ 216:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 200:

[3] «Տարազ», Թիֆլիս, 1914, յունուար, թիւ 1, էջ 15, նաև՝ «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1913, դեկտեմբերի 13, թիւ 279, նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 1910, սեպտեմբերի 23, թիւ 209:

Վերջին ուսումնական տարում դպրոցն ուներ 400 աշակերտ և 17 ուսուցիչ[1]:

Ջնայած դաշնակցական մամուլը ժամանակին թերագնահատել է դպրոցի դերը՝ նշելով, որ այն տալիս է «ոչինչ, իմաստակ, ուռուցիկ ու խայտաճամուկ ընթերցաւարներ, որոնք կորած են մեզ համար, ոչ մէկ օգտակարութիւն ունին»[2], սակայն Երամյան վարժարանը հայկական նշանավոր դպրոցների շարքում լավագույններից էր և մեծապես նպաստել է ազգային դպրոցի ու կրթության զարգացման առաջընթացին[3], իսկ նրա անփոխարինելի տեսուչ Հ. Երամյան ամերիկացի միսիոներ տիկին Գրեյս Քեմբլի կողմից ստացել է «Հայ Պեստալոցի» անունը[4]: Երամյան վարժարանի անկուսակցական անկախ ուղղվածությունը և մատուցած կրթությունը բարձր են գնահատել Արամը և Ուսումնական խորհրդի Ծխական Վարժարանների ընդհանուր տեսուչ՝ դաշնակցական Սարգիս Բարսեղյանը[5]: Այս վարժարանի աշակերտներից էր Վանի քաղաքապետ Ա. Թերզիբաշյանը[6]:

Վարժարանը գոյատևել է 37 տարի՝ մինչև 1915 թ. Վանի ինքնապաշտպանությունը, իսկ շենքը հրկիզվել է 1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ[7]:

Մեծ է եղել այս «մտաց և սրտի լուսատու» հաստատության ազդեցությունը Վասպուրականի մտավոր կյանքի վրա:

բ) ԳՈՆԴԱԿՉՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ - հիմնադրվել է 1908 թ.՝ քույրեր Եղիսաբեթի և Մարինե Գոնդակչյանների կողմից: Այն իննամյա էր (5-ը՝ նախակրթարան, և 4-ը՝ միջնակարգ դասարան): Վարժարանն ուներ 105 աշակերտուհի,

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 200:

[2] «Հայրենիք», Բոստոն, 1908, փետրուարի 15, թիւ 7:

[3] **Ոսկանյան Շ. Բ.**, Ուրվագծեր արևմտահայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության (1850-1920 թթ.), էջ 292:

[4] Վանի Երամեան վարժարանը, Կ. Պոլիս, ա. թ., էջ 7:

[5] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 118-119:

[6] «Մշակ», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 2, թիւ 192:

[7] «Ձարթոնք», Կահիրե, 1919, թիւ 3-4, էջ 53:

10 ուսուցիչ, իսկ բյուջեն կազմում էր 100 օսմանյան ոսկի: Հաստյթները գոյանում էին թոշակներից և նվերներից: Ուսուցիչների տարեթոշակը կազմում էր 10-30 օսմանյան ոսկի: Վարժարանի գրադարանն ուներ 200 կտոր գիրք[1]:

5. ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ - ա) ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ - հիմնադրվել է 1857 թ. երիտասարդ Մ. Խրիմյանի վանահայրության ժամանակ[2]: Այն կոչված էր «Հայակեդրոն Վասպուրականի լոյսի կարօտ չքաւոր հասարակութեան և մասնաւորապէս գիւղական խոշոր հատուածի զաւակներու կրթութեան գործին մէջ կարևոր բաժին ստանձնելու»[3]: Թուրքական նախկին բռնապետության օրոք այն կարողացել էր իր սաներին ներշնչել ժամանակի առաջադիմական ոգին: Այն իր պատկառելի անցյալով տվել է բազմաթիվ վարդապետներ, քահանաներ, ուսուցիչներ և հասարակական գործիչներ: Ժամանակին այս դպրոցում են սովորել Գ. Սրվանձտյանը, Ա. Թոխմախյանը, Տ. Սարգսյանը և ուրիշներ: Այն ուներ հնգամյա միջնակարգ ծրագիր և գյուղատնտեսական ուղղվածություն[4]: Դպրոցի նպատակն էր գյուղական տարրական դպրոցների համար պատրաստել միջնակարգ դպրոցի պաշարով հագեցած գաղափարական ուսուցիչներ: Հետագայում դպրոցը ստացավ գյուղատնտեսական ուղղվածություն[5]: Դպրոցում ուսանում էին 70 աշակերտներ, և դասավանդում էին 6 ուսուցիչներ: Դպրոցի բյուջեն կազմում էր 600 օսմանյան ոսկի, որից 500 օսմանյան լիրան «Իզմիրլեան դրամագլուխն» էր[6]: Հաստյթի աղբյուրներ էին հանդիսանում կաակների տոկոսները, թոշակներն ու վանքի եկամուտները:

[1] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1526, նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1912, նոյեմբերի 6, թիւ 245:

[2] **Գազանճյան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 135:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 11, թիւ 250:

[4] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, ապրիլի 7, թիւ 253:

[5] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն Յուշեր 1890 էն 1940, էջ 224:

[6] «Մշակ», Թիֆլիս, 1911, յունուարի 9, թիւ 3:

Ուսուցիչների տարեթոշակները կազմում էին 2-80 օսմանյան ոսկի: Վարժարանն ուներ գրադարան[1]:

1890-ական թվականներին դպրոցը վերածվեց որբանոցի[2]: 1907 թ., Մ. Խրիմյանի կոնդակի համաձայն, որոշվեց նշել դպրոցի հիանամյակը, սակայն Վանի անցանկալի դեպքերի պատճառով այն իրագործվեց միայն 1910 թ. հունիսի 20-ին[3]:

Վարագավանքի ժառանգավորաց դպրոցի տեսչությունը վերջին 10 տարիներին վարում էր Արտակ Դարբինյանը[4]:

բ) ԼԻՄ ԵՎ ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏՆԵՐՆ ունեին մեկական նախակրթարան՝ մեկական ուսուցիչով, 25-ական աշակերտով և 30-ական ոսկի բյուջեով: Եկամտի աղբյուրներ էին հանդիսանում վանական հասույթները[5]:

6. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ – Վասպուրականի գյուղերի կրթական գործը ղեկավարում էին չորս հաստատություն՝ Աղթամարի կաթողիկոսը, Վանի առաջնորդարանը, Վարագա թեմը և օտար միսիոներությունները: Աղթամարի, Վանի առաջնորդարանի և Վարագա թեմերի մեջ կային 90 նախակրթարաններ՝ քառամյա ուսուցմամբ, որտեղ սովորում էին 4,000 աշակերտներ և դասավանդում էին 200 ուսուցիչներ[6]: Այլ տվյալների համաձայն՝ կար 106 դպրոց, 2,989 աշակերտ և 109 ուսուցիչ[7]: Դպրոցներ կային բացված նաև Վանի, Թիմարի, Արճակի, Հայոց-ձորի, Գռուչի, Կարճկանի, Շատախի, Մոկսի գավառներում[8]: Հայտնի էր Արճակի «Հայրիկյան» դպրոցը[9]: Միայն Վանի Այգեստան թաղամասը

[1] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1526-1527, նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 11, թիւ 250:

[2] «Արեւ», Ալեքսանդրիա, 1908, դեկտեմբերի 5, թիւ 172:

[3] ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 18, թ. 5-8:

[4] **Գազանճյան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 23:

[5] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1527:

[6] Անդ:

[7] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 6, էջ 1110:

[8] «Հայրենիք», Բոստոն, 1908, փետրուարի 29, թիւ 9:

[9] ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 19, թ. 2:

20-րդ դարի սկզբին ուներ արական հինգ ծխական նախակրթարաններ, այդ թվում՝ Արարուց ս. Թարգմանչաց վարժարանը, Նորաշենի վարժարանը, Հանկույս ձորի դպրոցը, ս. Հակոբի, Հայկավանի և Սանդուխտյան իգական վարժարանները[1]: Գյուղական դպրոցներից չատերը հատուկ շենքեր չունեին, իսկ շենքեր ունեցողներն էլ զուրկ էին կանոնավոր դրասեղաններից կամ դպրոցական իրերից: Որոշ տեղերում դպրոցական տարեշրջանը չորս ամսից էլ պակաս էր տևում: Բոլոր դպրոցների բյուջեն կազմում էր 2,000 օսմանյան ոսկի, իսկ ուսուցիչների տարեթոշակները՝ 15-30 օսմանյան ոսկի: Նախակրթարանների հասույթները գոյանում էին գյուղական եկեղեցիների կալվածական եկամուտներից և ժողովրդական նպաստներից: Աղթամարի վանքն իր հասույթներից բավականին գումար էր ծախսում թեմի դպրոցների վրա: Որոշ վարժարաններ ունեին փոքրիկ գրադարաններ:

Կային նաև ամերիկյան, բողոքական, գերմանական և դոմինիկյան որբանոց-դպրոցներ և դոմինիկյան կղերի մայրապետների դպրոց[2]:

7. ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Իրենց դիրքով այս վարժարաններն անկարևոր տեղ էին գրավում, իսկ նրանց վիճակը չարունակ փոփոխության էր ենթարկվում:

ա) ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ 1880-ական թթ.-ից ի վեր Վանում ունեին 11-ամյա 2 արական և 2 իգական միջնակարգ վարժարաններ՝ 6 ընտելարանով (նախապատրաստական փուլ), 4 ուսումնարանով, նախակրթարանով, և երկամյա ընթացքով 2 երկսեռ մանկապարտեզով: Դպրոցի նպատակը բարոյակրթական էր: Բացի այդ, աշակերտներին ծանոթացնում էին ընդհանրացած (հումանիտար) գիտությունների հետ: Դպրոցի տեսուչը Եարոն էր, իսկ օգնականը՝ Ռեյնոլդսը: Դասերի մի մասն ընթանում էր անգլերենով:

[1] «Հայրենիք», Բոստոն, 1908, փետրուարի 15, թիւ 7, նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1912, նոյեմբերի 6, թիւ 245:

[2] Պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժին մատյան (ՆՊ ԲՄ), թիվ 839, արկղ 2, գ. 142, թղթ. 1, թ. 5:

Դասավանդության մեթոդն այնքան էլ զարգացած չէր: Ինչպես ժամանակակիցներից մեկն էր նշում. «Ջահել խեղճ ու կրակ վանեցիների աչքը շլացնելու համար ամէն միջոց գործ են դնում դպրոցը արտաքուստ փայլուն ցոյց տալու, էլ քարտէզներ, էլ գոյնզգոյն ջրաներկ պատկերներ, էլ խորհրդաւոր վերտառութիւններ չմնաց, որ չմտցրին իրանց դպրոցների և ժողովարանի մէջ»[1]:

Ծրագրերը կազմված էին անգլոսաքսոնական հետևողականությամբ՝ հարմարեցված տեղական հանգամանքներին[2]:

Երկսեռ ուսանողների թիվը կազմում էր 1, 300 հոգի, իսկ ուսուցիչներինը՝ 45 հոգի: Վարժարանների տարեկան բյուջեն կազմում էր 1, 000 օսմանյան ոսկի, որն ամենաբարձրն էր: Նահանգի մյուս դպրոցների համեմատությամբ ամերիկյան միսիոներները գյուղերում ունեին 6 դպրոց, որտեղ սովորում էին 600 երկսեռ աշակերտներ և դասավանդում էին 15 ուսուցիչներ, որոնց տարեկան բյուջեն կազմում էր 374 օսմանյան ոսկի: Ամերիկյան միսիոներական վարժարանների ուսուցիչների վարձատրությունն ամենաբարձրն էր, որը տատանվում էր 15-85 օսմանյան ոսկու սահմաններում: Հաստույթների աղբյուր էին հանդիսանում աշակերտների վճարումները և «Պորտ» ամերիկյան ընկերության նպաստները[3]:

Բացի դրանից, «Պորտ» ընկերությունն ուներ նաև երկսեռ ուսումնարան՝ 800 աշակերտներով, որի տնօրենն էր դոկտ. Րևնուան[4]:

Ամերիկյան միսիոներության դպրոցները անվճար կրթություն են տվել հազարավոր չքավոր հայ երեխաների, իսկ դպրոցի բազմաթիվ սաներ հետագայում աշխատանքի են անցել Հայոց ձորի, Գավաշի, Շատախի և Արճեշի դպրոցներում[5]:

[1] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 12, էջ 59:

[2] «Գործ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 4, թիւ 46:

[3] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1524-1525:

[4] «Մշակ», Թիֆլիս, 1913, մարտի 23, թիւ 64:

[5] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 12, էջ 60:

բ) ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ Վանում ունեին 4-9-ամյա 2 արական, 1 երկսեռ և 1 իգական նախակրթարաններ, ինչպես նաև՝ 1 երկսեռ երկամյա մանկապարտեզ: Դոմինիկյան կրոնավորներից և քույրերից զատ, նախակրթարաններում դասավանդում էին 26 ուսուցիչներ: Աշակերտների թիվը հասնում էր 700 հոգու, որոնց մեջ կային 40 երկսեռ պիշերօթիկ որբեր: Նախակրթարանների բյուջեն կազմում էր 600 օսմանյան ոսկի, որն իր կարողությամբ ամենահարուստն էր: Ուսուցիչների վարձատրությունը տատանվում էր 8-30 օսմանյան ոսկու սահմաններում: Նախակրթարանների հաստույթի աղբյուրներ էին հանդիսանում իգական վարժարանի և մանկապարտեզի երեխաների վճարներն ու Դոմինիկյան միաբանության նպաստը: Դպրոցներն ունեին հայերեն և ֆրանսերեն լեզուներով 700 կտոր գիրք[1]:

գ) ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ Վանում ուներ 8-ամյա ծրագրով 1 արական և 1 իգական գիշերօթիկ որբանոց: Այնտեղ ուսանում էին 270 երեխաներ, որոնցից 220-ը որբեր էին: Որբանոցներում դասավանդում էին 18 միսիոներ ուսուցիչներ, որոնց տարեկան վարձատրությունը բավականին բարձր էր և տատանվում էր 18-72 օսմանյան ոսկու սահմաններում: Գերմանական միսիոներները հաճախակի ուսուցիչներ էին ապասարկումքաղաքից դուրս գտնվող 20 գյուղերի դպրոցների համար, որտեղ ուսանում էին 1, 100 երկսեռ աշակերտներ: Գերմանական պաստոր – միսիոներների կողմից պահվող որբանոցների հաստույթները գոյանում էին գերմանացի բարերարների և գերմանական «Հելֆ-Սիւնդ» ընկերության նպաստներից[2]:

դ) ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ դպրոցներ ուներ Բաղաքամեջում: Տիրամոր եկեղեցու մոտ գործում էր «Հիւսուսյան» անունով արական միակ ծխական դպրոցը, որն ուներ 85 աշակերտ և 7 ուսուցիչ:

[1] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1525:

[2] Անդ:

Գործում էր նաև Շուշանյան օրիորդաց վարժարանը, որն ուներ 93 աշակերտուհի և չորս վարժուհի:

Բողոքականները Քաղաքամէջում բացել էին վարժարան, որն ուներ 80 աշակերտուհի և 6 վարժուհի[1]:

Որբանոցները, մանկապարտեզները և ազգային ընկերությունները

Բացի դպրոցներից, Վանի կուսակալության մէջ գործում էին նաև վեց որբանոցներ[2]:

1. ՎԱՐԱԳԻ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՐԲԱՆՈՑԸ – հիմնադրվել է 1857 թ. Մ. Խրիմյանի ձեռքով՝ նախատեսված 100 որբերի համար: Մինչդեռ 1903/04 ուսումնական տարում որբանոցում պահվում էին 10-18 տարեկան՝ 40, իսկ 1910 թ.՝ ընդամենը 10 որբեր[3]:

Հոգաբարձության որոշմամբ որբանոցին կից գործում էր նաև հոգևոր դպրոցի եռամյա մի չրջան՝ միջնակարգ ուսումնական ծրագրով: Որբանոցը պահվում էր Պատրիարքարանից ստացված խղճուկ գումարով, Քարասուլյանի կտակադրամի տոկոսներով և ուխտավորների նվիրատվությամբ[4]:

2. ԿԱՐՄՐԱՎՈՐ ՎԱՆՔԻ ԱՐԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑ – Որբանոցը հիմնադրվել է 1880 թ. Հ. Երամյանի տեսչության օրոք[5]: Կառավարում էր Հոգաբարձությունը՝ Փանոս Գափամաճյանի գլխավորությամբ այն ուներ 18 որբեր, որոնց թիվը չուտով հասավ 40-ի: Որբանոցում դասավանդում էին երկու ուսուցիչ, որոնք Վանի «Կեդրոնական»-ի աշակերտներ էին:

Որբանոցն ուներ երկրագործական ուղղվածություն[6]:

[1] «Հայրենիք», Բոստոն, 1908, փետրուարի 15, թիւ 7:

[2] Անդ, փետրուարի 22, թիւ 8:

[3] ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 11, թ. 5:

[4] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն Յուշեր 1890 Էն 1940, էջ 220:

[5] Վանի Երամեան վարժարանը, էջ 4:

[6] **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 139:

3. ԼԻՄ ԵՎ ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐ – Ունեցել են 20-40 աշակերտներ, որոնք պահվել են վանքերի եկամուտների հաշվին[1]:

4. ԱՐՃԵՇԻ ՄԵԾ ՍԵՎ ՎԱՆՔԻ ԵՎ ԱՂԲԱԿԻ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՎԱՆՔԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐ – ունեցել են 20-40 որբեր:

5. ՆԱՐԵԿԱՎԱՆՔԻ ՈՐԲԱՆՈՑ – Գոյատևել է Հովհաննես վարդապետի հովանավորությամբ և Երամյան դպրոցի ուսուցիչների չնորհիվ[2]:

6. ԱԼՅՈՒՐԻ ՈՐԲԱՆՈՑ – Հիմնադրվել է 1907 թ. Լիմ և Կաուց անապատների և Ալյուրի գյուղի Ս. Աստվածածին վանքերի եկամուտների հաշվին: Այնտեղ օթևանում էին 16 որբեր՝ իրենց երկու ուսուցիչներով:

7. ԱՂԹԱՄԱՐԻ ՈՐԲԱՆՈՑ – Հիմնադրվել է 1904 թ.: Տեղապահ, դավաճան-թրքամոլ Արսեն վարդապետից հետո ընտրվեց հոգաբարձություն, կառուցվեց չենք և հաստատվեց որբանոց: Այն իր կրթական մակարդակով կարող էր մրցել քաղաքի միջնակարգ դպրոցների հետ: Որբանոցն ուներ 52 աշակերտ և չորս ուսուցիչ, 2-ը՝ ճեմարանական, 1-ը՝ Սանասարյան վարժարանի և 1-ը՝ «Կեդրոնական»-ի աշակերտներից: Այն ուներ չորս դասարան: Որբանոցը պահվում էր Աղթամարի թեմի վանքերից ստացվող տարեկան հասույթներից: Գոյատևել է մինչև 1915 թ.:

8. ԳՈՄՍԻ ՈՐԲԱՆՈՑ – Հիմնադրվել է 1906 թ.՝ վահրամ վարդապետի ջանքերով, և գտնվում էր Կարճկան գավառի Գոմս գյուղի մեջ: Որբանոցում պահվում էին 18 որբեր և 1 ուսուցիչ, որոնց ծախսը հոգացվում էր Ս. Գևորգ վանքի և Կարճկանի մյուս վանքերի նպաստներից:

9. ԲԱՇԿԱԼԵԻ ՈՐԲԱՆՈՑ – Գտնվում էր Աղբակ գավառի Բաշկալե գյուղաքաղաքի մեջ: Որբանոցի ծախսը հոգում էր Կ. Պոլսի Պատրիարքարանը:

[1] Անդ:

[2] Անդ, էջ 139-140:

10. ՍԱԼՆԱՊԱՏՈՒ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՈՐԲԱՆՈՑ - *պահվում էին 42 աղջիկ որբեր*[1]:

11. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՐԲԱՆՈՑ - *Ուներ 50-80 որբեր: Ուշադրություն էր դարձվում կարուձևի, ձեռագործի և գորգագործության դասավանդման վրա: Գտնվում էր Աղավնի Մկրյանի հովանավորության տակ*[2]:

12. *Ամերիկյան միսիոներության որբանոց - բացվել է 1895 թ. Ռեյնոլդսի նախաձեռնությամբ, որտեղ հազարից ավելի սաներ՝ իրենց ուսման հետ միասին, սովորում էին մի քանի արհեստներ, այդ թվում՝ ջուլհակություն, կոշկակարություն, մուճակագործություն, փականագործություն և այլն*[3]:

13. *Վանում գործում էր նաև գերմանական մեծ որբանոց՝ 450 որբերով, որը կառավարում էին ամուսիններ Սպերլինեբը, և որի ծախսը հոգում էին գերմանացիները*[4]:

Ի տարբերություն ազգային որբանոցների, որոնք որբերին փրկեցին միայն թշվառության ճիրաններից, բայց լավ ապագա չկարողացան ապահովել բողոքական որբանոցների սաները 3-4 տարի որևէ արհեստ սովորելուց և 1-2 տարի էլ այս ու այն արհեստանոցում աշակերտելուց անմիջապես հետո, մտնում էին Վանի չուկա, տեր դառնում արհեստների և այդպիսով, քիչ թե շատ ապահովում էին իրենց գոյավիճակը:՝

Վանի նահանգապետության ստեղծումից հետո որոշակի միջոցներ են ձեռնարկվում որբերի փրկության և ազատագրման ուղղությամբ:

Մինչև 1915 թ. հուլիսի առաջին տասնօրյակը հավաքագրվում են 200 որբեր, որոնցից 40-ը թեթև հիվանդներ էին և գտնվում էին «Արարուց» դպրոցի մեջ[5]:

[1] «Հայրենիք», Բոստոն, 1908, փետրուարի 15, թիւ 7, նաև՝ «Գործ», Թիֆլիս, 1909, ապրիլի 7, թիւ 70:

[2] «Գործ», Թիֆլիս, 1908, սեպտեմբերի 14, թիւ 4, նաև՝ **Գազանճեան Լ.,** Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 139:

[3] **Ծերուկ,** Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 12, էջ 61:

[4] «Մշակ», Թիֆլիս, 1913, մարտի 23, թիւ 64:

[5] «Աշխատանք», Վան, 1915, յուլիսի 8, թիւ 31-230:

Թուրքական կրոնական դատարանի նամնօրինակությամբ, Ազգային առաջնորդարանի իրավասության տակ էր դրվում մահացածների թողած իրերի ցուցակագրումը, պահպանումը և որբերի չափահաս դառնալուց հետո նրանց հանձնելը[1]:

Բացի դրանից, Վանում, կանանց և օրիորդների նախաձեռնությամբ, գործում էր նաև «Վանի Հայ կանանց Բարեգործական ընկերությանը կից որբախնամ մարմին», որի նպատակն էր գավառներից տեղ հասած որբերի տեղավորումը և խնամքը[2]:

ՀԲՄ Վանի մասնաճյուղը բացվել էր դեռևս 1910 թ. ապրիլի 30-ին՝ նախաձեռնությամբ տեղի Կեդրոնական Հայկազյան Վարժարանի տնօրեն Հովսեփ Գույումճյանի[3]:

Վանի «Հոփսիմյան» մանկապարտեզի հիմնադիրը Մարտիրոս Տեր-Մկրտչյանն էր: Մանկապարտեզը նախատեսված էր հասարակ դասակարգի համար: Այն ուներ երկու տարվա շրջան: Ծրագիրը կազմված էր նորագույն մեթոդներով: Առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում հայոց լեզվին և մանկական գրականությանը[4]:

Այսպիսով, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի անբարեհույս վիճակին, 1908-1918 թթ. նկատվում է վասպուրականի դպրոցական գործի որոշ աշխուժացում և արացում: Շարունակում էին գործել պետական, միսիոներական ազգային ընկերությունների, մասնավոր, վանական և պետական կրթական հաստատությունները: 1914 թ. Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները վտանգի տակ դրեցին Վանի դպրոցներն ու կրթությունը, սակայն Վանի առաջին կառավարության ստեղծումից հետո այն ինչ-որ չափով կարգավորվեց:

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 15:

[2] Անդ, թ. 9, գ. 55, թ. 27, նաև՝ «Արարատ», Էջմիածին, 1909, թիւ 2, էջ 191:

[3] Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միության, արձանագրեալ հոբելյան 1906-1931, հտ. Ա., էջ 113:

[4] «Հովիտ», Թիֆլիս, 1910 թ., թիւ 13, էջ 205-206:

Երիտթուրքական հեղաշրջումը որոշակի աշխուժացում և սրացում մտցրեց կրթական գործի մեջ: Ա. Փոխարյանի հավաստմամբ՝ Վանի նահանգի գրեթե բոլոր գավառներում բացվեցին դպրոցներ՝ իրենց սեփական չենքերով և կրթական հարմարություններով[1]:

1908 թ. հեղաշրջումից հետո Վանի շրջանում կային մոտավորապես 30 դպրոցներ[2], որոնցից 8-ը (որոշ տեղեկություններով՝ 15-ը) գործում էին Վանում: Աշակերտության թիվը տատանվում էր 1, 230 - 4, 000-ի սահմաններում[3]:

Աշակերտներն առանձին դպրոցական համազգեստ չունեին: Ուսումնական պարապմունքներն սկսվում էին սեպտեմբերի 1-ին և ավարտվում հունիսի 1-ին: Դասաժամերի օրական ծանրաբեռնվածությունը կազմում էր 5-6 ժամ: Դասի տևողությունը 45 րոպե էր, իսկ դասամիջոցը՝ 10-15 րոպե: Դպրոցում նշում էին ո՛չ միայն ազգային-եկեղեցական բոլոր տոները, այլև՝ սուլթանի ծննդյան և գահակալման օրը[4]:

Վանի շրջանի ինչպես վանքերը, այնպես էլ դպրոցները՝ իրենց եկամուտներով, գտնվում էին դաշնակցության ձեռքին: Բացառություն էր կազմում Երամյան դպրոցը և Վարագավանքի «Ժառանգավորաց»-ը, որի անօրենն էր Արտակ Դարբինյանը[5]: Սակայն դպրոցական խնդրում երկար վիճաբանություններից հետո դաշնակցությունը պարտվեց, քանի որ միացյալ թաղականությունը կարողացավ «Կեդրոնական» վարժարանի խնամակալությունը վերցնել իր ձեռքը և դպրոցներից արտաքսել մի շարք նորսերնդական ուսուցիչներ[6], որոնք հանդես էին եկել եկեղեցու բարոյականության

[1] Վան-Վասպուրականի հերոսամարտը ,75, Երևան, 1990, էջ14:

[2] «Նոր դպրոց», Թիֆլիս, 1910, մարտ, թիւ 3, էջ 58, նաև՝ Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, էջ 18:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 4, թիւ 73:

[4] «Յովիտ»,Թիֆլիս,1915, նոյեմբերի 8, թիւ 43, էջ 675:

[5] «Մշակ», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 26, թիւ 211:

[6] «Հորիզոն», Թիֆլիս, 1909, օգոստոսի 9, թիւ 7, նաև «Կոհակ», Կ. Պոլիս, 1909, սեպտեմբերի 12, թիւ 16, էջ 188:

ու ընտանեկան սրբությունների դեմ[1]: Բացի այդ, սահմանադիր ռամկավարները, միանալով թաղական խորհուրդներին, որոշում են երիտասարդ ուսուցիչներ չվարձել, որն էլ առաջ է բերում ժողովրդական մեծ հուզում Այգեստանում և Քաղաքամեջում[2]: Արդյունքում անկարգություններ սկսվեցին «հաստագլուխ, հաստավիզ թաղականների», «հնացած, փտած» տեսուչների և ուսուցիչների դեմ, որը, սակայն, աննպաստակ անցավ, իսկ բողոքները մնացին «ճայն բարբառոյ յանապատի»[3]:

Դրանից հետո 1908 թ. աշնանը նորընտիր Ուսումնական խորհուրդը՝ արմենական կուսակցության նյութական օժանդակությամբ դաշնակցական Սարգիս Բարսեղյանի փոխարեն ծխական վարժարանների ընդհանուր տեսուչ կարգեց Կ. Պոլսից հրավիրված, Կ. Պոլսի «Կեդրոնական» վարժարանի շրջանավարտ՝ բաղիշեցի Հովսեփ Գույումճյանին, որը, սակայն, 1911 թ. հետ վերադարձավ Կ. Պոլիս[4]:

Վանական կրթությունը զարգացնելու համար՝ 1909 թ. հոկտեմբերին որոշվում է ընտրել աշխարհական հոգաբարձություն, և ճեմարան բացել Աղթամարում՝ ողջամիտ, ազգանվեր եկեղեցականներ և ուսուցիչներ պատրաստելու նպատակով: Սակայն դաշնակցականներն Աղթամարի թեմի երեսփոխանական ժողովի որոշմամբ փակում են Աղթամարի Կենտրոնական դպրոցը և այդ փողով գավառներում բացում տարրական դպրոցներ, որոնց ծախսերի մի մասը հոգում էր Աղթամարը, իսկ մնացյալը՝ գյուղը: Արդեն առաջին ուս. տարում՝ 1910-1911 թ., թեմում կար 56 տարրական դպրոց[5]: Նախատեսվում էր նաև վանքերին կից հաստատել վարժարաններ՝ իրենց ուրույն ծրագրերով ու տեսուչներով,

[1] Անդ, 23, թիւ 17, էջ 200:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1909, օգոստոսի 23, թիւ 18:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 23, թիւ 208:

[4] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 118-119:

[5] Յուշապատում Հ. Յ.Դաշնակցութեան, 1890-1950, Բոստոն, 1950, էջ 518-519:

և աշխատանքի վերցնել այնպիսի ուսուցիչների, որոնք վկայական ունեին և հավատարիմ կգտնվեին իրենց կոչմանը[1]:

1910 թ. վերջին Վանում հիմնվում է Բարեգործականի վարժապետանոցը՝ մոտ 700 ոսկի բյուջեով: Վարժապետանոցի նոր շենքի կառուցումը սկսվում է 1911 թ. մայիսին և ավարտվում է 1912 թ. դեկտեմբերին, որի կահավորման համար Սեթ Գափամաճյանը ծախսում է 300 ոսկի գումար:

Ըստ Չիթունու՝ մինչև 1911 թ. Վան-Վասպուրականում կար 120 վարժարան, որտեղ սովորում էին 8, 699 աշակերտներ, որոնցից 6, 845-ը՝ տղաներ էին, իսկ 1, 854-ը՝ աղջիկներ[2]:

Վանի դպրոցներն ունեին հետևյալ պատկերը.

		Աշակերտ	Ուսուցիչ
Կենտրոնական վարժարան	արական	100	8
Երամյան	արական	230	10
Թաղային Արարքի	երկսեռ	400	14
Թաղային Նորաշենի	արական	100	6
Թաղային Հայնկույսների	արական	100	6
Թաղային ս. Հակոբի	արական	40	3
Թաղային Հայկավանքի	արական	30	2
Սանդխտյան օրիորդաց	իգական	230	8

Դպրոցական գործի առաջընթացի մասին է վկայում 1912 թ. Վանում հնչակյան կուսակցության ստեղծած Աշակերտական միությունը, որի նպատակն էր՝ իր անդամների մտավոր զարգացումը գիտական համայնավարության հիմունքներով: Այն համարվում էր առաջին կուսակցական միությունը[3]:

Խոսելով Վանում դպրոցական գործի հաջողությունների մասին՝ Վանի ռուսական փոխհյուպատոս Ս. Պ. Օլֆերևը 1912 թ. նոյեմբերին հաղորդում էր, որ «դպրոցական գործը հայերի մոտ... տարեցտարի առաջադիմում էր»[4]:

[1] «Արարատ», Էջմիածին, 1909, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 9-10, էջ 826:

[2] **Չիթունի**, Յուշիկք Հայաստանի (vade=mecum d'Armenie), էջ 67:

[3] ЦГИА РГР., ф. 2, д. 3547, л. 26-29, նաև՝ ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 172, թ. 1-6:

[4] АВПРИ РФ, ф. 1909, оп. 48, л. 69.

Կապված Վանում կրթական գործի առաջադիմության հետ՝ վասպուրականցիներն իրենց զավակների դաստիարակության համար տարեցտարի ավելի մեծ գումարներ էին վճարում: Սակայն արտաքին նպաստների կամ անհատական կտակների ու նվիրատվությունների դերը միշտ մնում էր անհրաժեշտ կարևորություն: Այդ նպատակով 1913 թ. սեպտեմբերին Էջմիածին և Թիֆլիս են մեկնում կրթական գործի 3 ժրաջան մշակները՝ Վարագի Հայրիկյան վարժարանի տեսուչ Արտակ Դարբինյանը, Վանի ամերիկյան միսիոներ Ռևնոլդսը և Երամյան վարժարանի տնօրեն Հ. Երամյանը[1]:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Վանի նահանգում կար 56 դպրոց, որից Վան քաղաքում և շրջաններում՝ 22, Լիմ-Կտուցում՝ 3, Աղթամարի եպիսկոպոսության տակ՝ 31[2]: Ըստ «Биржевые ведомости» պարբերականի թղթակից Օլգերդին Բերեզովսկու, որը 1913 թ. եղել էր Վանում՝ այդ նույն ժամանակաշրջանում Վանի նահանգում կար 136 հայկական դպրոց՝ տարեկան 2,700 օսմանյան լիրա բյուջեով, իսկ Վանում՝ 30 դպրոց՝ տարեկան 5345 օսմանյան լիրա բյուջեով[3]:

Ընդհանուր առմամբ, ժողովրդական կրթության համար Վասպուրականում ծախսվում էր տարեկան 8,045 օսմանյան լիրա, որից 300-ը նվիրում էր ամերիկյան միսիոներությունը, 377 լիրան վճարում էր կառավարությունը (290 լիրա՝ թաղախի, 84 լիրա՝ գյուղական դպրոցների համար): Մնացած գումարը վճարում էր ինքը՝ հայ ազգաբնակչությունը[4]:

Ըստ մեկ այլ վկայության՝ Մեծ Եղեռնի նախօրյակին Վանի դպրոցներն ունեին հետևյալ պատկերը.

Յիսուսեան	արական	վարժարան	3-400	աշակերտ
Անանեան	երկսեռ	վարժարան	50-80	աշակերտ
Շուշանեան	իգական	վարժարան	150-200	աշակերտ
Հայկավանից	երկսեռ	վարժարան	80-100	աշակերտ

[1] «Աշակ», Թիֆլիս, 1913, նոյեմբերի 1, թիւ 243:

[2] Ղազարյան Հ. Գ., Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 225:

[3] «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, յունիս, թիւ 8, էջ 118:

[4] Անդ:

Սանդխտեան	իգական	վարժարան	250-300	աշակերտ
Քօնդաքճեան	իգական	վարժարան	50-80	աշակերտ
Տէր Մկրտչեան	երկսեռ մանկապարտէզ		70-100	աշակերտ
Սուրբ Յակոբի	արական	վարժարան	80-100	աշակերտ
Նորաշէնի	արական	վարժարան	150-200	աշակերտ
Հայնկոյսների	արական	վարժարան	150-200	աշակերտ
Արարուց	երկսեռ	վարժարան	400-500	աշակերտ
Կեդրոնական	արական	վարժարան	150-180	աշակերտ
Երամեան	արական	վարժարան	250-300	աշակերտ
Վարժապետանոց			80-100	աշակերտ
Հայ բողոքականների	երկսեռ	վարժարան	400-500	աշակերտ
Հայ կաթոլիկների	երկսեռ	վարժարան	100-150	աշակերտ
Քաղաքամէջի հայ բողոքական մանկապարտէզ			80-100	աշակերտ
Վարագի Ժառանգաւորաց վարժարան			60-80	աշակերտ
Աղթամարի Ս. Խաչի վարժարան			100-150	աշակերտ[1]

1914 թ. աշնանը նախատեսվում էր բողոքական քոլեջ բացել Վանում: Այդ մասին մենք իմանում ենք Վանի միսիոներության ուղղված «Պորտի» քարտուղար Բարտոնի նամակից: Սակայն համաշխարհային պատերազմի պատճառով այն ձախողվում է[2]:

Վանի վիլայեթի բարձրագույն կրթությունը հիմնականում իրականացնում էին երկու վարժարաններ՝ Սանդխտյան վարժարանը՝ աղջիկների համար, և Հայկազյան Կեդրոնական վարժարանը՝ տղաների համար[3]:

Եթե 1860 թ. Վանում կար ընդամենը 1, 000 դպրոցական աշակերտ, իսկ 20 տարի անց այդ թիվը եռապատկվել էր, ապա 1908-1914 թթ. աշակերտության թիվը հասնում էր 5,000-ի[4]: Ըստ Օլդենին Բերեզովսկու՝ Վանում կար 5,104 աշակերտ, որից 3,200-ը տղա էր, իսկ 1, 904-ը՝ աղջիկ: Իսկ Վանի նահանգի աշակերտության թիվը կազմում էր 6,200, որից 5,500-ը տղա էր, իսկ 700-ը՝ աղջիկ[1]:

Այն պայմանավորված էր ո՛չ այնքան ժողովրդի բնական աճով, որքան ստեղծված ոգեղեն նոր պայմաններով և ձգտումներով: Բոլոր դպրոցները գտնվում էին Առաջնորդարանի և Ուսումնական խորհրդի հսկողության տակ:

Համեմատության համար նշենք, որ, բացի հայերից, Վանի վիլայեթի մեջ ապրում էին նաև 176.000 այլազգիներ՝ թուրքեր, ասորիներ, քրդեր, չերքեզներ, հրեաներ, գնչուներ, որոնք խարխափում էին խորին տգիտության մեջ: Այդ ազգություններից դպրոցներ ունեին միայն թուրքերը, ասորիները և հրեաները:

Թուրքերը մի քանի մզկիթներին կից ունեին մեդրեսեներ, ուր հազիվ կարողանում էին գրեր կարդալ 100-ից 5 էլիֆ-բե (օսմանյան այբուբենը)[2]: Բացի այդ, կային նաև պետական 40 դպրոցներ՝ 2,360 աշակերտներով (որոնցից 135-ը՝ աղջիկ) և տարեկան 3,630 օսմանյան լիրա բյուջեով[3]: Սակայն մահմեդական բնակչության 95%-ն անգրագետ էր[4]:

Ասորիները, որոնք ունեին մի քանի չամաշայական (սարկավագ) և կաշայական (քահանա) դպրոցներ, 1908-1918 թթ. Վանի նահանգի Սարայ գավառի մեջ բացել էին եռամյա կրթությամբ նախակրթարան, որտեղ ուսանում էին 71 աշակերտներ, և դասավանդում էր 1 ուսուցիչ, իսկ բյուջեն կազմում էր 30 օսմանյան ոսկի, որը վճարվում էր կառավարության կողմից:

Եռամյա կրթությամբ Բաշկալեի մեջ նախակրթարան ունեին նաև հրեաները, որտեղ սովորում էին 98 աշակերտներ, դասավանդում էր 1 ուսուցիչ, իսկ բյուջեն կազմում էր 72

[1] **Չիթունի**, Աս ու Լիս Հայաստանի, Կ. Պոլիս, 1920, էջ 92-93:

[2] **Քասունի Հ. Ե.**, Քննական ակնարկ «Միշընների հերլըտ»-ի 1915-1918 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության և վերածննդի մասին արձանագրած վկայագրութիւններուն, Պէյրութ, 2012, էջ 551:

[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1009, թ. 1:

[4] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 99:

[1] «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, յունիս, թիւ 8, էջ 118:

[2] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 29:

[3] «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, յունիս, թիւ 8, էջ 118:

[4] **Թորոսյան Ս.**, Դարդանելից մինչև Պաղեստին, Երևան, 2012, էջ 8:

օսմանյան ոսկի, որը նույնպես վճարվում էր կառավարության կողմից[1]:

Այս ամենից միայն կարելի է դատել, թե հայերը մշակութապես որքան բարձր էին կանգնած օսմանյան ժողովուրդների շարքում:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, Վանի նահանգում, հաշվի մեջ առնելով Խլգան ու Սպարկերտ գավառները և Վան քաղաքը, բայց դուրս թողնելով Հեքիարեի սանջակը, կար շուրջ 135 կրթական հաստատություն, ուր սովորում էին 8,000 աշակերտներ (այլ տվյալներով՝ 5,600 աշակերտներ)[2], դասավանդում էին 180 ուսուցիչներ, իսկ կրթության վրա ծախսվում էր 600,000 դուրուշ դրամով: Թուրքական կառավարությունը նահանգի հայ վարժարանների վրա ծախսում էր տարեկան ընդամենը 540 օսմանյան ոսկի գումար՝ հաշվի չառնելով, որ կրթական տուրքի մեծագույն մասի վճարողները հայեր էին: Եթե բնակչության թիվը հաշվենք 150,000 և այն բաժանենք աշակերտների թվի վրա, ապա կստանանք հետևյալ պատկերը՝ 18 անձից մեկը հաճախում էր դպրոց, յուրաքանչյուր ուսուցչի անձի վրա ծախսվում էր 4 դուրուշ, յուրաքանչյուր աշակերտի վրա՝ 75 դուրուշ, յուրաքանչյուր ուսուցչի վրա՝ 2,140 դուրուշ, իսկ յուրաքանչյուր դպրոցի վրա՝ 4,510 դուրուշ: Վասպուրականի բնակչությունից 40-ը հատակ գրել-կարդալ գիտեր[3]: Վան քաղաքի 25,000 բնակիչներից 5,600-ը սովորել էին թե՛ ազգային և թե՛ օտար դպրոցներում[4]:

Կրթական գործը 1914-1917 թթ.

1914 թ. Կովկասյան ռազմաճակատում սկսված պատերազմական գործողությունները վտանգի տակ դրեցին նաև Վանի դպրոցները:

[1] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 9-10, էջ 1527:

[2] «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1913, դեկտեմբերի 13, թիւ 279:

[3] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիւ 6, էջ 1111:

[4] «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1913, դեկտեմբերի 13, թիւ 279:

Չնայած կառավարությունը Վանի թուրք ուսուցչությանը բանակ էր կանչել, սակայն հայերին, ընդհանրապես, և վանեցիներին, մասնավորապես, սիրաշահելու կեղծ քաղաքականությամբ ընդառաջեց Վանի Առաջնորդարանի դիմումին՝ ժամանակավորապես չզինվորագրել հայ ուսուցչությանը, նրանց համարելով քաղաքապահներ և տալով «վէսիքաներ» (ազատության թուղթ)՝ պայմանով, որ շարունակեն իրենց զինվորական պարապմունքները և շաբաթը երեք անգամ ներկայանան կառավարություն: Այդպես շարունակեցին գործել Վանի և գյուղերի բոլոր ծխական ու ազգային մասնավոր վարժարանները, և 150 ուսուցիչներ ստացան «վէսիքաներ»՝ ընդհուպ մինչև Վան-Վասպուրականում կոտորածների սկիզբը[1]:

Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողություններ սկսելուց հետո թուրքական կառավարությունը հայերի հանդեպ ունեցած բարյացակամության կեղծ դիմակը քիչ-քիչ պատռեց: Շատ անգամ ուսուցիչներին կանչում էին բանակ՝ իբր թե Կովկասյան և Պարսկական սահմանագլուխ ուղարկելու համար: Բայց միշտ կառավարությանը չէր հաջողվում իրականացնել իր նպատակը: Առաջնորդարանը կարուկ հիշեցնում էր կառավարության որոշումը, իսկ վերջինս լռում էր առժամանակ՝ սպասելով հարմար առիթի:

Ա. Վռամյանը Թալեաթին ուղղած՝ 1915 թ. փետրվարի 14-ի իր ծածկագիր հեռագրում առաջարկում էր դպրոցական կյանքին վերաբերող մի շարք փոփոխություններ, այդ թվում՝ հայկական դպրոցները պետք է ունենային թուրքական պետական դպրոցին համահավասար իրավունք, որ հայ համայնքից դուրս գտնվող հայկական առաջնորդարանների կրթական տուրքը (կրթական տասանորդը) պետք է գանձվեր պետության միջոցով և վճարվեր հայ առաջնորդներին[2]:

[1] «Համբաւաբեր», Թիֆլիս 1916, յունիսի 12, թիւ 24, էջ 758:

[2] «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924, ապրիլ, թիւ 6, էջ 101, նաև՝ Մխիթարեան Ո., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 33:

Վանի հայ ուսուցչությունն այսպես դիմացավ մինչև 1914/1915 ուսումնական տարին՝ մինչև ապրիլի 5-ը՝ շաբաթ օրը, երբ գուժ հասավ, թե Իշխանն իր 3 ընկերներով դավադրաբար սպանվել է, իսկ Ա. Վռամյանը դավադրաբար պահվում է Ջևդեթի տանը:

Այդ օրը Վանի «վէսիքաւոր» ուսուցչությունը զենքի կոչվեց, սակայն ոչ թե թուրքական կառավարության բանակում, այլ Վանի հերոսամարտում:

1915 թ. մայիսի 7-ին Վանի առաջին կառավարության ստեղծումից հետո կարգավորվեց նաև դպրոցական գործը, որն իր մեջ ներառում էր ինչպես դասարանների համալրումը, ուսումնական ծրագրերի ստեղծումը, այնպես էլ ուսուցիչների դասակարգումը, աստիճանավորումն ու վարձատրությունը:

Տարրական դպրոցի ուսուցիչները բաժանվեցին չորս աստիճանակարգերի՝ ա) արտոնված օգնական-ուսուցիչ, բ) արտոնված դաստիարակ-ուսուցիչ, գ) վկայված օգնական-ուսուցիչ, դ) վկայված դաստիարակ-ուսուցիչ: Դրանցից յուրաքանչյուրն ուներ աստիճանավորման 3 աստիճան[1], որոնցից գ. աստիճանի վրա գտնվող արտոնված դաստիարակ-ուսուցիչը ստանում էր 350 ռ., բ. աստիճանի վրա գտնվողը՝ 450 ռ., իսկ ա. աստիճանի վրա գտնվողը՝ 600 ռ. տարեթոշակ[2]:

Ուսուցչության և կրթական կարևոր խնդիրների վերաբերյալ խորհրդակցելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար՝ 1915 թ. հուլիսի 2-ին Վանի «Ազատության լույս» դրաշարանում հրավիրվեց Վանի ուսուցչական երկրորդ ժողովը: Դեռևս Վանի ուսուցչական առաջին ժողովի ժամանակ ընտրված հանձնախումբն իր առջև խնդիր էր դրել 1915-1916 ուսումնական տարում վերաբացել դպրոցները, որի մասին տեղեկացվել էր ազգային դպրոցների թաղային խորհուրդներին և հոգաբարձություններին: Դպրոցների վերաբացման գործն ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար՝ ժողովը որոշեց դիմել Վանի առաջին կառավարությանը և խնդրել, որպեսզի դպրոցների համար որոշակի գումարներ հատկացվեն ազգային առաջնորդարանին և զանազան միջոցներով խթանեն կրթական գործի առաջընթացը[1]: Որոշակի միջոցներ ձեռնարկվեցին նաև 60 աշակերտներով Վարագի դպրոցի վերաբացման ուղղությամբ[2]:

1915 թ. Վանում գործում էին 13 ծխական և 6 մասնավոր դպրոցներ, այդ թվում՝ Երամյանը, Կեդրոնականը և Վարժապետանոցը՝ 4,200 - 5,000 աշակերտներով ու 140 ուսուցիչներով[3]: Վերաշինության շրջանում՝ 1916-1917 թթ., ԿՀԲԸ սատանձնում է նաև Վասպուրականի կրթական գործի վերաբացումը: Նախատեսվում էր նախապես բացել 3 դպրոց՝ մեկը քաղաքում, երկրորդը՝ Բերդակում (չատախցիների համար) և երրորդը՝ Թիմարի Ալյուր գյուղում: Հաղիվ էին սկսել Վանի և Ալյուր գյուղի դպրոցների պարապմունքները և նախատեսվում էր բացել Բերդակի դպրոցը, երբ սկսվեց 1916 թ. նոյեմբերյան նահանջը, որի արդյունքում Բերդակի դպրոցը փոխադրվեց Լեսկ:

1916 թ. դեկտեմբերին հրահանգ ստացվեց երկու նոր դպրոցներ բացելու Թիմարի էրերին և Խժիշկ գյուղերում[4]: Արդյունքում՝ հիշյալ ընկերության անունով բացվեցին 5 դպրոցներ, որոնցից 1-ը՝ Վանում, իսկ մյուսները՝ Ալյուրում, Լեսկում, Խժիշկում և Էրերինում[5]:

Այս դպրոցներից բացի, որոնք անմիջականորեն գործում էին ընկերության ղեկավարության ներքո, գոյություն են ունեցել նաև 4 այլ դպրոցներ՝ Խավենցում, Քոչանում, Արտեբում և Ճանիկում[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 24, թ. 7-8:

[2] Անդ, գ. 9, թ. 14:

[1] «Աշխատանք», Վան, 1915, յունիսի 24, թիւ 27-226, նաև՝ յուլիսի 8, թիւ 31-230:

[2] Անդ, յուլիսի 8, թիւ 31-230:

[3] **Գեղամեանց Ե. ա. քն.**, Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում, կամ հայկական հարցի եօթներորդ շրջանը, մաս Բ., Բաքու, 1915-1917, էջ 679:

[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1083, թ. 1:

[5] «Արեւ», Բաքու, 1917, յունուարի 15, թիւ 9:

[6] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1083, թ. 7-9:

Դպրոցները գտնվում էին անմխիթար վիճակում և չունեին գրենական պիտույքներ: Կրթական գործը կազմակերպելու նպատակով՝ Դանիել վարդապետը նշանակվում է Վանի կրթական շրջուն տեսուչ[1]:

1917-1918 ուսումնական տարվա համար Վասպուրականում դպրոցներ բացելու նպատակով Վանի շրջանային վարչությունը 1917 թ. հուլիսին կազմում է Ուսումնական խորհուրդ:

1917 թ. Վանի Շրջանային վարչության հաստատումով՝ թեմական տեսուչ է նշանակվում Ա. Մաքսապետյանը, որի նպատակն էր Շրջանային վարչության տրամադրած միջոցներով դպրոցներ բացելը, ուսուցիչներ պաշտոնի հրավիրելը, գյուղական միջոցներից դպրոցական տուրք հավաքելը և դպրոցական շենքերի պահպանությունները հոգալը: Ուսումնական խորհուրդը կարողացավ դպրոցների մեջ հավաքել բազմաթիվ դպրոցականների, որոնց թիվը հասնում էր մի քանի հազարի: Ուսումնական խորհուրդն աշխատում էր Թիֆլիսի ընկերությունների հետ՝ ընդհանուր համաձայնությամբ՝ դպրոցները ենթարկելով Արևմտահայ Խորհրդի հսկողությանը: Սակայն կային դժվարություններ՝ դասագրքերի և ուսուցիչների հարցում:

1917 թ. Վանի դպրոցներն ունեին հետևյալ պատկերը.

		դպրոց	ուսուցիչ	աշակերտ	ամսական ծախսը
	Այգեստան քաղաք	3	14	464	2020 ռ.
	Շահիբազի	1	3	100	470 ռ.
	Լեսք	1	5	290	770 ռ.
	Այուր	1	5	210	920 ռ.
	Խավենց	1	1	50	120 ռ.
	Քեոչանի	1	2	85	240 ռ.
	Էրերին	1	2	80	360 ռ.
	Խժիշկ	1	2	100	240 ռ.
	Ատեռ	1	1	40	100 ռ.
	Ջանիկ	1	2	60	250 ռ.
	Մարմետ	1	1	50	120 ռ.
	Ամյուկ	1	1	30	120 ռ.
	Կոճ	1	1	35	150 ռ.
	Ատիգոզալ	1	1	50	120 ռ.
	գումարը	16	41	1, 684	6, 000 ռ.[1]

1917 թ. տարեվերջում Վասպուրականի Շրջանային վարչությունը բացեց մոտ 21 դպրոց՝ 41 ուսուցիչներով, որոնք, սակայն, 2 ամիս անց՝ տեղական զորահավաքի պատճառով փակվեցին[2]:

Ուսուցիչները

Վանի ուսուցիչները հիմնականում Վանի դպրոցականներն էին, իսկ նրանց մեծ մասը՝ Վանի ծխական վարժարանների աշակերտներ, որոնք 6-7 տարի որևէ թաղային վարժարանում աշխատելուց հետո սկսում էին պատրաստվել ուսուցչության համար:

Բիչ չէին նաև կենտրոնականում և Երամյան վարժարանում կրթություն ստացած աշակերտները:

Ուսուցչուհիների մեծ մասը Սանդխտյան վարժարանի շրջանավարտներ էին:

1909-1910 ուսումնական տարում Վանի դպրոցներում դասավանդում էին 67 ուսուցիչներ, որոնցից 12-ն ավարտել էին Վարագավանքի դպրոցը, 13-ը՝ Բողոքականների որբանոցը, 6-ը՝ Աղթամարի դպրոցը, 2-ը՝ Կեդրոնականը, իսկ մնացյալները՝ գյուղերի դպրոցները՝ տարեկան 3-12 ոսկի աշխատավարձով[3]:

Ընդհանուր առմամբ, Վանի ուսուցիչները չունեին բարձր պարզացում և բազմակողմանի հմտություն իրենց պաշտոնի

[1] «Արեւ», Բաքու, 1917, յունուարի 25, թիւ 17:

[1] «Աշխատանք», Երևան, 1917, հոկտեմբերի 28, թիւ 50:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 16, թիւ 90:

[3] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, յուլիսի 29/օգոստոսի 11, թիւ 346:

և կոչման մեջ: Վանում չկար ուսուցիչների առաջադիմելու ասպարեզ, քանի որ նրանք իրենց զարգացումը փնտրում էին միայն պոլսական լրագրերի էջերում: Այդուհանդերձ, «Վանն ունի ուսուցիչներ, որոնք իրանց կարողութեամբ գերազանցել կարող են Կովկասի շատ համալսարանական ուսուցիչներին, որոնք պաշտօն են վարում գիմնազիօններում կամ մեր հոգևոր դպրոցներում»[1]:

Համեմատությունը ցույց է տալիս, որ եթե Վանի հայոց դպրոցների ուսուցչական մարմինը բաղկացած էր 210, իսկ գյուղական դպրոցներինը՝ 185 ուսուցիչներից, ապա թուրքական կրթական հաստատությունների ուսուցչության թիվը հասնում էր ընդամենը 73-ի[2]:

Ուսուցիչներն ամսական ստանում էին ամենաբարձրը՝ 250 ղուրուշ (20 ռ.): Մեծամասնությունը ստանում էր տարեկան 3-4 մեջիդ (5-11 ռ.): Սակայն որոշված ամսականը անվանական էր, որովհետև ամիսներով աշխատավարձ չէին ստանում: Ուսուցիչների նյութական անմխիթար կացությունը ստիպում էր նրանց ուսուցչական դիրքերից խոնարհվել և նվաստանալ ու «բարեկամություն» պահպանել թաղային աղաների հետ:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում ուսուցչի բարոյական նկարագրին. Վ. Մալեզյանին ուղղված նամակներից մեկում նշվում է, որ «...Երկարատև ստրկությունը որուն ենթարկվեցան հայրենիքը, մասնավորապես Վանը, Համիդեան և դաշնակցական կրկնակ բռնապետության ներքև, շատ ու շատ այլասերված է հայուն նկարագիրը, մեր ժողովուրդը այժմ պետք ունի առողջ գիտակցությամբ և անաղարտ բարոյական հեղինակությամբ օժտված առաջնորդներու շուտով կազմակերպելու համար, եթե կուզե իբրև ազգ ապրելու հետին հույսեն զրկվելու... Այս անհրաժեշտ պետքը գոհացնել... կարելի է միայն վարժարաններու և ուսուցչության միջոցով մասնավորապես: Ուսուցչի գործիքը, երբ կրնա հաշտեցնել կրթականին հետ հասարակային աշխատությունը, ազգին համար մեծագույն բարիքն է»[1]:

[1] Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 11, էջ 23:

[2] «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, յունիս, թիւ 8, էջ 119:

Գրադարաններ

Մշակութային կյանքի կարևորագույն և առաջնահերթ պահանջներից էր գրադարանների ստեղծման, ազատ գործունեության և պահպանության խնդիրը, որը նպաստեց մի կողմից՝ գրագիտության տարածմանը, մյուս կողմից՝ երիտասարդության ինքնազարգացման ու ընթերցասիրության պահանջի բավարարմանը: Արդյունքը եղավ այն, որ մի քանի ամսվա ընթացքում Վանում բացվեցին վեց գրադարան-ընթերցասրահներ («Ազատութեան լոյս» - դաշնակցական, ծախսը՝ 50-60 օսմ. լիրա, «Մարտիկ» - սահմանադիր հնչակյան, ծախսը՝ 25-30 օսմ. լիրա և «Աւետիսեան» - սահմանադիր ռամկավար, ծախսը՝ 40-50 օսմ. լիրա, «Շահէն», «Հայրիկեան», «Մ. Աւետիսեան»-ի մասնաճյուղը), իսկ Արճակում հիմնադրվեց «Գաւառական կեդրոնական» գրադարանը, որն ուներ ընդամենը 180 կտոր գիրք[2], Մոկսում՝ «Ախպեր», Ագթամարում՝ «Ռաֆայել», ինչպես նաև՝ «Շատախ», «Երկամբ» գրադարանները:

Սարայի հայ արհեստավորների և տեղի ասորիների հանպանակած գումարով Սարայում բացվեց գրադարան-ընթերցարան[3]:

Գրադարանները գոյատևեցին միմիայն քաղաքական կուսակցությունների ջանքերով: Գրադարանների ծախսերը հո-

[1] Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, թիվ 202, թ. 1-1-ի շրջադարձ:

[2] **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 126, նաև՝ **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, (յուշեր 1890-էն 1940), Փարիզ, 1947, էջ 216, նաև՝ Ե. Չարենցի ան. ԳԱԹ-ի արխիւ, ֆ. Ղ. Ալպայեան, թիւ 817, թ. 1, նաև՝ ֆ. Գ. Լևոնեան, թիւ 1835, թ. 1, նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 1909, մարտի 25, թիւ 63, նաև «Մշակ», Թիֆլիս, 1913, յուլիսի 30, թիւ 165:

[3] «Գործ», Թիֆլիս, 1909, մարտի 24, թիւ 62:

գացվում էին ինչպես վիճակախաղով և թատերական ներկայացումներից ստացված հասույթներով, այնպես էլ՝ նպատակահարմար այլ միջոցառումներից ստացված եկամուտներով: Գրադարանները հիմնականում չունեին ո՛չ միայն դպրոցական, այլև ժողովրդական ընթերցանության համար նախատեսված հատուկ ընթերցանության դրքեր: Բոլոր գրադարանների գրքերի ընդհանուր քանակը կազմում էր 2,000-3,000 կտոր[1]:

Այդուհանդերձ, գրադարանների եռանդուն գործունեությունը, ինչպես Ա. Փոխարյանն է արժևորում, «մեկ կենտրոնական նպատակի էին ծառայում՝ պատրաստել ժողովրդի սիրտն ու հոգին և մղել նրան դեպի ցանկալի ազատությունը»[2]:

Պատմահնագիտական, ազգագրական և բանասիրական հետազոտությունները Վանի նահանգում

Աբդուլ-Համիդյան բռնապետության տապալումը և սահմանադրական կարգերի հաստատումը Թուրքիայում բավարար հնարավորություններ ընձեռեցին արևելագետ-հայագետներին՝ պատմահնագիտական, ազգագրական և բանասիրական հետազոտություններ կատարելու Վանի նահանգի տարածքում:

Դեռևս 1906 թ. օգոստոսի 8-ին Աղթամար էր այցելել չվեյցարացի հնագետ և լեզվաբան Լեոպոլդ Ֆավրը[3]:

1910-1911 թթ. Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերության կողմից Վան-Վասպուրական է գործուղվում հայ նշանավոր ազգագրագետ, բանագետ, հնագետ, հայ գիտական ազգագրության հիմնադիր՝ Երվանդ Լալայանը, որը մանրամասն տեղեկություններ է գրանցում տվյալ շրջանի պատմաաշխարհագրական միջավայրի, տնտեսական կյանքի, ամուսնական, հարսանյաց, ծննդյան, թաղման և այլ սովորույթների, ծեսերի, ինչպես նաև հավատալիքների, սնոտիապաշտությունների, ժողովրդական բժշկության և այլնի մասին: Նրա նպատակն էր կազմել մի առանձին հատոր՝ նվիրված Հայաստանի այդ հնագույն նահանգի ազգագրությանը: Միաժամանակ նա ձեռնարկում է գրել առանձին մի ուսումնասիրություն՝ նվիրված Շատախին և Մոկսին: Այդ նպատակով նույն թվականին նա լինում է Հայոց Ձորում, շրջում նահանգի բոլոր գավառներում ու վանքերում և հավաքում մեծ քանակությամբ ազգագրական հարուստ նյութեր[1]: Ե. Լալայանը ուսումնասիրում է նաև հին ճեռագրերը և կազմում դրանց ցուցակները: Ուղևորության վերջում նա Վանի Շամիրամի թաղում կատարում է պեղումներ և հայտնաբերում նախապատմական շրջանի հատուկ հնություններ:

Այն, որ Ե. Լալայանը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում և կարևորում էր Վանի նահանգի պատմամշակութային արժեքների ուսումնասիրումը, երևում է Բաքվի Հայոց բարեգործական ընկերության գրադարանապետ Երվանդ Թադիանոսյանին ուղղված իր նամակից, որտեղ նա նշում է. «Եթե հաջողվի ինձ... այլևս չեմ նստիլ Թիֆլիսում, կերթամ դարձյալ Վասպուրական... Որքա՜ն գործ կա...»[2]:

Ե. Լալայանը Վան-Վասպուրականում կատարած իր գիտական հետազոտությունների ժամանակ մեծ օժանդակություն է ստանում Մոկսի կառավարիչ Մուրթուլա բեկից և նրա եղբորորդի Ալի բեկից, որոնց միջև ստեղծվում են ջերմ բարեկամական կապեր[3]:

Այդ տարիներին Ե. Լալայանը Վան-Վասպուրականի մասին մի շարք արժեքավոր աշխատություններ է տպագրում

---

[1] Ե. Չարենցի անվ. ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Գ. Լևոնյան, թիվ 1835, թ. 1, նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 1913, հուլիսի 30, թիվ 165:

[2] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 15:

[3] Մատենադարան, ֆ. 2, Կյուրեղ Սրապյանի արխիվ, ց. 43, թղթ. 82, վավ. 1018, թ. 1:

[1] Սամվելյան Ա. Ե., Երվանդ Լալայան, «Էջմիածին», 1964, թիվ 12, էջ 7:

[2] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 160, թ. 42:

[3] Տես Չաչանի Կ., Հայ մտավորականության դերը քրդական մշակույթի զարգացման գործում, Երևան, 1987, էջ 14:

«Ազգագրական հանդես»-ում, իսկ այդ ամենի հանրագումարը 1913 թ. հրատարակված նրա «Վասպուրականի ազգագրությունը և նշանավոր վանքերը» վերտառությամբ ուսումնասիրությունն է[1]:

Ընդհանրապես Ե. Լալայանը նախատեսել էր Վասպուրականի մասին աշխատություն հրատարակել մի քանի հատորով, սակայն դա նրան չի հաջողվում: Հրատարակված աշխատությունը բաղկացած էր մի քանի մասերից՝ նվիրված Վասպուրականի ազգագրությանը, բանահյուսությանը, ասորիներին, տնայնագործությանը, և նշանավոր վանքերին: Վանի բարբառով նա հավաքում և գրի է առնում «Սասնա տուն», «Ոստանա տուն և Թլոլ-Դաւիթ», «Ռոստամէ Զալ», «Աղեքսանդրի կռէն», «Ոսկէ կանթեղ», «Ոսկէ ծամ», «Դալի Տօպան», «Խէք», «Նազիկ պատան», «Քաւորանց շունը», «Ըլբուլ կուշ» և բանահյուսական այլ ստեղծագործություններ:

Շատախի բարբառով նա թղթին է հանձնում «Ալօ», «Կատուի կռիւ», «Յուսեփ», «Սմբատ ու Սենեակ թագաւորներ», «Թագաւոր», «Տխմար մարդ», «Քուն-Ըընքաւուս թագաւոր», «Դիքին խրատը», «Պառաւ ու աղուէս» և այլ ստեղծագործություններ: Ե. Լալայանը ձեռնամուխ է լինում Վան-Վասպուրականի շուրջ 28 վանքերի և եկեղեցիների ուսումնասիրմանը: Նա անդրադառնում է ո՛չ միայն վանքերի նկարագրությանը, այլև խոսում է վանական ծեսերի մասին, տալիս է վանքերի և դրանց շրջակա տապանաքարերի վրայի արձանագրությունների վերլուծությունը:

[1] **Լալայեան Ե.**, Վասպուրական, նշանաւոր վանքեր, պրակ Ա., Թիֆլիս, 1912/ Վասպուրական, բանահիւսութիւն Վանի բարբառով, պրակ Ա., Թիֆլիս, 1912, նույնի՝ Վասպուրական, ազգագրութիւն, ասորիներ, Թիֆլիս, 1913, նույնի՝ Վասպուրական, բանահիւսութիւն, Շատախի բարբառով, պրակ Բ., Թիֆլիս, 1914, նույնի՝ Վասպուրական, տնայնագործութիւն, պրակ Ա., Թիֆլիս, 1914, նաև՝ «Ազգագրական հանդէս», Վասպուրականի բանաւոր գրականութիւնից, Ասորիներ, Թիֆլիս, 1913, գիրք 23-րդ, նաև՝ **Նագինեան Ա. Մ.**, Երուանդ Լալայեանը բանահաւաք-բանագէտ, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Տեղեկագիր, Հասարակական գիտութիւններ, 1965, թիվ 8, էջ 65:

Վասպուրականի վերաբերյալ ուսումնասիրությունը մի ամրողջական և արժեքավոր աշխատություն է, որն արդյունք է հեղինակի մի քանի տարիների համառ աշխատանքի[1]:

Հետագայում, երբ Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայության դժնդակ բախտին արժանացան հայ ժողովրդի բազմադարյան հոգևոր մշակույթի գանձերը՝ վանքերը, եկեղեցիները, մատենադարանները և ձեռագիր մատյանները, Թիֆլիսի Հայոց Ազգագրական ընկերությունը 1915 թ. հունիսի 15-ին, լսելով ընկերության քարտուղար Երվանդ Լալայանի զեկուցումը արժեքավոր ձեռագրերի ոչնչացման մասին, նրա իսկ ղեկավարությամբ Վան ուղարկեց պիտական արշավախումբ, որը ձեռնարկեց նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը[2]: Աշխատանքի կազմակերպումը դյուրացնելու և անցանկալի դժվարությունները չրջանցելու համար՝ Ե. Լալայանը 1916 թ. օգոստոսի 9-ին խնդրագրով դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ին, ուր մասնավորապես, ասված է. «Ամենախոնարհ խնդիր. Ձերդ վեհափառության բարձր հովանավորության ներքո ծաղկող Հայոց Ազգագրական ընկերության նախաձեռնությամբ ցանկանալով կազմել Հայոց բոլոր վանքերի մանրամասն նկարագրությունը՝ պատմական հիշատակարանների և արձանագրությունների հետ միասին, ակնածորեն խնդրում եմ Ձերդ վեհափառության բարեհաճել տնօրինել, որ հայ վանահայրերը մասնավորապես և հայ հոգևորականությունն ընդհանրապես աջակցեն ինձ և թույլատրեն նկարագրելու և լուսանկարելու ինչպես վանքերն, այնպես և նրանց մեջ գտնված սրբություններն ու ձեռագրերը: Երվանդ Լալայան»[3]:

Ե. Լալայանի 1916 թ. օգոստոսի 9-ի խնդրագրին կաթողիկոսական դիվանը տալիս է դրական պատասխան և նույն

[1] **Մելիք-Փաշայան Կ. Վ.**, Երվանդ Լալայան (ծննդյան 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1964, թիվ 3, էջ 34:

[2] Տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 26:

[3] ՀԱԱ, ֆ. 53, գ. 45, թ. 1:

թվականի օգոստոսի 12-ին թիվ 1837 գրությամբ Լալայանին արտոնվում է հայկական բոլոր եկեղեցիներում կատարել իր կողմից նախատեսված նկարագրությունները[1]:

Ցանկանալով լրացնել ու կորստից ազատել Վասպուրական նահանգի ազգագրությանը վերաբերող նյութերը՝ Ե. Լալայանը որոշում է ճանապարհորդություն կատարել նաև այն վայրերում, ուր կային այդ ընդարձակ նահանգից դուրս եկած գաղթականական օջախներ: Այդ նպատակով նա լինում է Ալեքսանդրոպոլում, Կարսում, Կաղզվանում, Երևանում և Վաղարշապատում[2]:

Ե. Լալայանից հետո Վան է մեկնում նշանավոր արևելագետ, հնագետ, հասարակական գործիչ և գիտության կազմակերպիչ Հովսեփ Օրբելին:

Հ. Ա. Օրբելին Պետերբուրգի համալսարանի վերջին կուրսի ուսանող էր, երբ 1910 թ. սեպտեմբերի 22-ին Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի պատմա-բանասիրական բաժանմունքի նիստում մեծանուն արևելագետ-հայագետ Ն. Յ. Մառը առաջարկում է Վանի շրջան գործուղել մի մասնագետի, որը կկարողանար զբաղվել այնտեղի հնություններով և ձեռնամուխ լինել բարբառագիտական նյութերի հավաքմանը:

Ն. Մառի կարծիքով՝ այդպիսին կարող էր լինել միայն Հ. Օրբելին, որն ունակ էր կատարել «նախատեսված աշխատանքի մի մասը՝ բարբառագիտականը, պատմաբանասիրականը՝ ըստ սուրբ գրքի տեքստերի, հնագիտականը՝ ըստ քրիստոնեական հնությունների, և հաշվետվություն տալ մնացած մասերի նյութերի վերաբերյալ...»[3]: Ն. Մառի առաջարկությունն ընդունվում է: «1911 թ. ամռանը, - ինչպես Կ. Յուզբաշյանն է նշում, - նա (Հ. Օրբելին, - Ա. Հ.) մի ճանապարհորդություն ձեռնարկեց, որն ամբողջ կյանքում տպավորվեց նրա հիշողության մեջ և ազդեց նրա գիտական հայացքների վրա»[1]:

Հ. Օրբելին առանձնահատուկ պատասխանատվություն էր զգում այդ ուղևորության հանդեպ: Ծնողներին գրած իր՝ 1910 թ. դեկտեմբերի 12-ի նամակում (որը պահվում է Պետերբուրգում՝ Հ. Ա. Օրբելու անձնական արխիվում) նա նշում է. «Իհարկե, ստիպված եմ շատ պարապել և պատրաստվել այդ ուղևորությանը, որովհետև ինչպես իր պայմաններով, այնպես էլ ըստ իր էության՝ դա շատ պատասխանատու աշխատանք է»[2]:

1911 թ. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական և արևելյան լեզուների երկու ֆակուլտետները հաջողությամբ ավարտելուց հետո Հ. Օրբելին, ով ուներ արդեն հրատարակված 9 գիտական աշխատություն, մնում է համալսարանի հայ-վրացական բանահյուսության ամբիոնում:

Նույն՝ 1911 թ. ամռանը Պետերբուրգի Գիտությունների Ակադեմիան Հ. Օրբելուն գործուղում է Արևմտյան Հայաստան, գլխավորապես Վանի վիլայեթ՝ նրա առջև խնդիր դնելով հետազոտել և նկարագրել նահանգի հեթանոսական, քրիստոնեական և մահմեդական ճարտարապետական հուշարձանները, վիմագրությունը, ուսումնասիրել հայկական բարբառներից մեկը և տեղեկություններ հաղորդել վանական մատենադարանների ձեռագրերի վերաբերյալ[3]:

1911 թ. հուլիսի 1-ին Հ. Օրբելին՝ կնոջ հետ միասին (որի ուղևորությանն ի դեպ դեմ էր Ն. Մառը)[4] բաթումից մեկնում է Կ. Պոլիս և Տրապիզոնի, Բայբուրդի, Էրզրումի ու Ադիլջևազի վրայով օգոստոսի 14-ին հասնում Վան, որտեղ էլ վերջնականապես որոշում է կենտրոնանալ Մոկսի հայկական բնակչության բարբառի ուսումնասիրման վրա: Հ. Օր-

[1] ՀԱԱ, ֆ. 53, գ. 45, թ. 2:

[2] **Սամվելյան Ա. Ե.**, Երվանդ Լալայան, «Էջմիածին», 1964, թիվ 12, էջ 7:

[3] «Извлечение из протоколов заседаний Академии. Историко-филологическое отделение. Заседание 22 сентября 1910 г.» ИАН, 1910, с. 1411-1412, նաև՝ **Յուզբաշյան Կ. Ն.**, Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, Երևան, 1971, էջ 35:

[1] **Յուզբաշյան Կ. Ն.**, Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, Երևան, 1971, էջ 34:

[2] Անդ, էջ 35:

[3] **Мегрелидзе И .В.**, Иосиф Орбели, Тбилиси, 1987, с. 29.

[4] **Мегрелидзе И. В.**, с. 157-158.

բելին ձիով ուղևորվում է Մոկս, որտեղ նա հյուրընկալվում է Մուրթուլլա բեկին: Ինչպես նշում է Վանի ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևը, Մուրթուլա բեկի տանը Հ. Օրբելին ընդունվում է ջերմությամբ: Նրա համար ստեղծվում են հնարավոր բոլոր պայմանները, որպեսզի նա կարողանա զբաղվել իր հետազոտությամբ:

Անդրադառնալով հայ-քրդական հարաբերություններին և Մուրթուլա բեկի գործունեությանը՝ Հովսեփ Օրբելին 1911 թ. սեպտեմբերին իր ծնողներին գրած հերթական նամակում նշում է. «Ապրում եմ քրդական բեկերից մեկի տանը, այն մարդու տանը, ով հայկական կոտորածների ժամանակ եղել է հայերի պաշտպանը, նա ունի ռուսական կողմնորոշում: Ես շատ հազվագյուտ եմ հանդիպել մի այդպիսի հաճելի, սիրուն ծերուկի: Գլխավորն այն է, որ նա մեծ քաղաքավարության տեր մարդ է, չնայած որ Վանից այն կողմ չի գնացել: Նա շատ սիրալիր է իմ նկատմամբ»[1]:

Մնալով այնտեղ հինգ շաբաթ՝ Հ. Օրբելին ձեռնամուխ է լինում Մոկսի հայերի բարբառին վերաբերող նյութերի հավաքմանը և բարբառագիտական հատուկ բառարանի կազմմանը: Շատ չուտով Հ. Օրբելին իր համար մշակեց գրառումների որոշակի մեթոդաբանություն: Առաջնահերթ խնդիր դարձավ տառադարձության (տրանսկրիպցիայի) մշակումը՝ տեղական բարբառի առանձնահատկությունները դիպուկ արտացոլելու համար: Նյութեր հավաքելու նպատակով նա լինում է Մոկսի 10 գյուղերում՝ Արինջ, Արնանց, Լյուլենց, Սիպկանց, Կիտրիզ, Կյումիր, Սիպ, Լիչան, Յապանց և Խրեբ:

Բառարանը բաղկացած էր ոչ հավասար երեք մասերից: «Բառարան մտան առօրյա կենցաղի բոլոր այն բառերն ու արտահայտությունները, որոնք վերաբերում էին դաշտային աշխատանքներին, արհեստներին, անասունների ու բույսերի անուններին, մի խոսքով՝ այն ամենին, ինչը կարելի էր տեսնել շուրջը..., - նշում է Հ. Օրբելին և ավելացնում, - ինձ արժեքավոր ծառայություն մատուցեցին երեխաները, որոնք իմ

[1] Юзбашян К.Н., Академик Иосиф Абгарович Орбели, Москва, 1964, с. 33.

աշխատանքը իրենց համար դիտում էին որպես զվարճալիք և ամեն բոպե վազում էին հարցնելու՝ ես գրե՞լ եմ արդյոք այս կամ այն բառը, թե ո՛չ»[1]: Այդ ցուցակում տեղ էին գտել նաև մեծ դժվարությամբ ձեռք բերված, Ողիմ և Արնանց գյուղում գրի առնված շուրջ 200 բառեր լբուտների (թաղիքագործների) և բուրդ գզողների) գաղտնի լեզվից, որոնք ապրում էին Մոկսի մի քանի շրջաններում և ամեն աչուն մեկնում էին արտագնա աշխատանքի: Ընդհանուր առմամբ, Հ. Օրբելուն հաջողվեց հավաքել Մոկսի բարբառի շուրջ 4, 500 բառեր: Նրան հաջողվեց կազմել նաև ավելի քան հարյուր անունների հոլովման հատուկ աղյուսակներ և ավելի քան քառասուն բայերի խոնարհման ցանկեր:

Մոկսի բարբառի բառարանը, հնչույթային և ձևաբանական որոշակի հատկանիշների առանձնացումը, ինչպես նաև բանասիրական, բանագիտական ու այլ կարգի նյութերը հավաքված և ինչ-որ չափով դասակարգված էին երիտասարդական ավյունով լցված ներհուն հետազոտողի, հետագայում համաշխարհային ճանաչում ստացած գիտնականի ձեռքով, որոնք այսօր գրեթե անփոխարինելի և շատ կողմերով վստահելի ավյալներ կարող են տրամադրել ո՛չ միայն ստույգ այդ բարբառի, այլև, առհասարակ, հայերենի բարբառների գիտական ավելի լայն, նոր սկզբունքներով ուսումնասիրության համար[2]:

Այսպես, առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այդ բարբառի ձայնավորների, երկբարբառների և բաղաձայների համակարգերը, որոնք ի հայտ են բերում ոչ միայն հնչյունախոսական, այլև, առհասարակ, հնչյունաբանական որոշակի առանձնահատկություններ՝ կապված, այսպես կոչված, քմայնացման (ավանդական բնութագրությամբ՝ հասկանալի և սովորական, մեկ այլ դեպքում՝ դեռևս

[1] Орбели І., Предварительный отчетъ о командировке въ Азіатскую Турцію въ 1911-1912 гг, Петроград, 1922; Известия Ак. Наукъ, 1912, серия VI, № 15, с. 918.

[2] Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, Ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, խմբ. Պ. Մ. Մուրադյանի, Երևան, 2005, էջ 93:

ոչ այնքան պարզ, ուստի և արտասովոր), տարբերակիչ այլ հատկանիշների պարունակման, արտասանական տարբերակման և այլ երևույթների հետ[1]: Ավելացնենք, որ Հ. Օրբելին ժամանակին կարողացել է ըստ ամենայնի մանրամասն և ճիշտ գրանցել բարբառի հնչյունական-հնչյունաբանական երևույթները՝ արտասանական տարբերությունները, վերջիններիս նրբերանգները և այլն, սակայն այդպես էլ չի կարողացել գիտական վերջնական տեսքի բերել հնչյունական գրանցումների տառադարձման համակարգը, և ինչպես նշում է Մ. Մուրադյանը, «չնայած այս հանգամանքին, ուշադիր գննում կատարելու դեպքում Հ. Օրբելու նրբերանգային գրանցումները խիստ հետաքրքրական և նույնիսկ անսպասելի իրողությունների բացահայտման բանալի են տալիս»[2]:

Հայտնի է, որ Ն. Մառի նախաձեռնությամբ 1914-1915 թթ. երկու անգամ որոշվում է տպագրել այդ բառարանը, սակայն հարցը մնում է անհետևանք: Միայն 2002 թ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտը՝ Պ. Մուրադյանի աշխատասիրությամբ հրատարակում է այդ աշխատանքը[3]:

Հ. Օրբելին միաժամանակ ծանոթանում է Մոկսի հայերի բանահյուսությանը և գրի առնում բազմաթիվ բանահյուսական նյութեր (10 առակ, 32 ծիծաղելի պատմվածք, 10 հեքիաթ, 2 բալլադ, 7 երգ, 5 ոտանավոր, 163 ասույթ, 51 հանելուկ), որոնց մեջ Մոքսի «քաղաքացիները» հումորով (երբեմն նաև բավականին թունոտ) էին արտահայտվում «գյուղացիների» բարքերի մասին[4]:

Հ. Օրբելին հնարավորություն չի ունենում հնագիտական լուրջ պեղումներ կատարելու, քանի որ ո՛չ միջոցներ ուներ և ո՛չ էլ թույլտվություն թուրքական կառավարությունից: Նա միայն հետախուզական աշխատանքներ և ոչ մեծ հնագիտական պեղումներ է իրականացնում Թոփրակ կալեում, որտեղ դրանից ոչ շատ առաջ աշխատել էր գերմանացի հնագետ Վ. Բելքը: Պեղումների ժամանակ նա հայտնաբերում է խճանկար և փորագրված մարմարի փրիզի բեկորներ՝ կենդանիների (ցուլերի) ու ծառերի խմբանկարի պատկերներով[1], որոնք հետագայում Բ. Վ. Ֆարմակովսկուն հնարավորություն տվեցին ենթադրելու, որ գոյություն է ունեցել հնագիտական մշակութային կապ առաջավորասիական՝ խեթա-վանյան աշխարհի և Հյուսիսային Կովկասի ու Հարավային Ռուսաստանի միջև[2]:

Բացի դրանից, Հ. Օրբելին տեղական բնակիչներից և հնավաճառներից՝ «անթիքաջիներից» ձեռք բերեց շատ առարկաներ՝ գրիֆոնի պատկերով փոքրիկ կնիք, սեպաձև արձանագրությամբ կարասի ու քարե արձանիկի բեկորներ, ուրարտական նետերի բրոնզե և երկաթե սլաքներ, ուլունքներ և այլն[3]:

Հովսեփ Օրբելու հետազոտությունները ծառայեցին որպես նյութ Մոկսի տեքստերի՝ Մոկսի ազգագրական ակնարկի հրապարակման առթիվ գրված շատ հետաքրքիր ներածական հոդվածի համար: Երկրամասի բնակչության ազգագրական շատ սովորություններ հնագույն ծագում ունեին: Այսպես, և՛ Մոկս քաղաքում, և՛ Ջևաստան (Ծվստան) գյուղում Հ. Օրբելին կարողացավ դիտել հսկայական սալերից պատրաստված շինություններ. դրանց ներսում միշտ առկա էին կարծր քարից պատրաստված հսկայական անիվներ, որոնց շրջագծի եզրերը գլորվելուց ստացել էին սեղանաձև հատվածի տեսք: Դրանք ձիթհաններ էին, որոնք միևնույն ժամանակ կարող

[1] Այդ բարբառի մասին առավել մանրամասն տես **Մուրադյան Մ. Հ.**, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 114-133, նաև նույնի՝ Մոկսի բարբառի հնչյունա-հնչույթային համակարգի հիմնական առանձնահատկությունները, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1978, սեպտեմբեր, թիվ 9 (429), էջ 20-35:

[2] **Մուրադյան Մ. Հ.**, Շատախի բարբառը, էջ 112:

[3] **Орбели И. А.**, Избранные труды в двух томах, том II, Ереван, 2002, с. 197-358:

[4] Անդ, էջ XII:

[1] «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1912, դեկտեմբերի 29, թիվ 53, նաև՝ Орбели І., Предварительный отчетъ о командировке въ Азіатскую Турцію въ 1911-1912 гг, с. 922-923.

[2] **Орбели И. А.**, Избранные труды, Ереван, 1963, с. XVII.

[3] Տես **Марръ Н.**, Матеріалы по халдской эпиграфике, Изъ командировки І. А. Орбели въ Турецкую Арменію, Петроградъ, 1917, с. 97-124.

էին ծառայել որպես դինգ: Այդպիսի անիվներ հայտնաբերվել էին Անիում և Մրենում, իսկ ավելի ուշ՝ 1936 թ., Հովսեփ Օրբելին դրանցից հայտնաբերեց Ամբերդ ամրոցի պեղումների ժամանակ: Սակայն տարբերությունն այն էր, որ միայն Մոկսում նա դրանք տեսավ իրական գործողության մեջ[1]:

Ձմեռն անցկացնելով Վանում՝ 1912 թ. գարնանը՝ ճանապարհները բացվելուն պես Հ. Օրբելին կրկին ուղևորվեց Մոկս: Հիմնականում ավարտելով Մոկսի բարբառի ուսումնասիրությունը՝ Հ. Օրբելին աղերսներ գտավ այդ բարբառի և քրդերեն լեզվի միջև: Այդ էր պատճառը, որ երկրորդ ուղևորության ժամանակ, որը սկսում է 1912 թ. ապրիլին և տևում 10-ը շաբաթ, Հ. Օրբելին ուսումնասիրում է Մոկսի քրդերի լեզուն ու ազգագրությունը:

Երեք ամիս ապրելով Մուրթուլլա բեկի տանը՝ Հ. Օրբելին հնարավորություն է ունենում հետևել քրդերի ամենօրյա կյանքին, նրանց բարքերին, սովորություններին և ծեսերին: Խոսելով Մուրթուլա բեկի մասին Հ. Օրբելին գրում է. «Մուրթուլա բեկը մի առանձնահատուկ մարդ է, կիրթ, բարի, լայնախոհության տիպար: Նա խոսում է լավ հայերենով և բարեկամական, անշահադիտական կրքով է մոտենում հայերին... Նա բավականին կրթված, շատ կարդացած անձնավորություն է և հետաքրքրվում է բոլոր հարցերով: Նա հազիվ 50 տարեկան կլինի: Նայելով նրան, ես ավելի եմ համոզվում, որ քրդերի ներքին աշխարհը շատ հարուստ է, և եթե կառավարության կողմից մի փոքր հոգատարություն լինի, նա շատ արագ առաջ կընթանա և անտարակույս կանցնի թուրք ֆանատիկից»[2]:

Մուրթուլա բեկի տանը դիտնականը ուշադրություն դարձրեց քառակուսի հարթ բարձերին, որոնք, ըստ էության, փափուկ ներքնակներ էին: Երեկոյան տանտիրոջն էին այցելում շատ հյուրեր՝ քրդեր ու հայեր, և Հ. Օրբելին տեսնում էր, թե ինչպես են այդ բարձերը դրվում հատակին, և ինչպես էին

[1] Յուզբաշյան Կ. Ն., Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, էջ 37:

[2] АВПРИ РФ, «Посольства в Константинополе, 1912, д. 1603, л. 84-85.

պատվավոր հյուրերը նստում դրանց վրա: Առավել մեծանուն կարող էր ստանալ երկրորդ բարձը: Այդ բարձերը դրվում էին մեհմանդարի («հյուրընկալի») կողմից, ընդ որում, մի դեպքում տան տերն էր նշան տալիս, իսկ մյուս դեպքում մեհմանդարն էր բերում բարձերը՝ չսպասելով նշանի: Այն բարձերը, որոնք նախատեսված էին ամենապատվավոր հյուրերի համար, տանտերը մատով շոշափում էր: Հյուրերը հատակին էին նստում՝ ըստ ավագության ու անվանիության, և այն հիշեցնում էր աստիճանակարգության այն սովորությունը, որը գոյություն ուներ ինչպե՛ս պարսկական, այնպե՛ս էլ հայկական թագավորական արքունիքներում[1]:

Հ. Օրբելու գործուղման հիմնական նպատակներից էր ծանոթանալ Մոկսի քրդերի բարբառին, կազմել քուրդ-ռուսերեն բառարան և քրդերեն լեզվի քերականություն: Նա երեք ամիս Մոկսում զբաղվում է այդ հարցերով, սակայն ժամանակի բերումով չի ավարտում այդ աշխատանքը: Այս անգամ Մուրթուլա բեկն իր բարեկամին՝ Ալի աղային, ուղարկում է Վան, որպեսզի տեղում օգնի Հ. Օրբելուն՝ իր քրդագիտական աշխատանքներն ավարտելու գործում: Ազատ տիրապետելով հայերենին և ծանոթ լինելով քրդական ժողովրդական բանահյուսությանը՝ Ալի աղան ամեն կերպ աջակցում է Հ. Օրբելուն, և երբ վերջինս իր կնոջ հետ մեկնում է արձակուրդի, նրանց ուղեկցում է Թիֆլիս և մնում Օրբելու տանը: Այս կապակցությամբ Օրբելին գրում է. «Ես Մոկսում մի քանի մարդկանց անմիջական օգնությամբ զբաղվեցի քրդերենի ուսումնասիրությամբ, հատկապես ինձ օգնել է Ալի աղան՝ Բուսուֆի աղան: Ալի աղան բացարձակ տիրապետում էր տեղի հայկական բարբառին»[2]:

Հ. Օրբելուն հաջողվում է գրառել մի հատված քրդական «Մամ և Զին» պոեմից և կազմել երեք մասից բաղկացած 434 էջանոց քուրդ-ռուսերեն և ռուս-քրդերեն բարբառագիտա-

[1] Յուզբաշյան Կ. Ն., Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, էջ 38:

[2] Չոլոյան Կ., Հայ մտավորականության դերը քրդական մշակույթի զարգացման գործում, Երևան, էջ 14-15:

կան բառարան, որը գիտական լուրջ ուսումնասիրություն-ների արդյունք էր[1]:

Բառարանը կազմելիս Հ. Օրբելին օգտվում է մի շարք աշխատություններից, որի մասին նա գրում է. «Այս բառարանը կազմելիս օգտվել եմ Ժաբայի, Յուստի, Եղիազարովի աշխատություններից...»[2]:

Այսօր էլ Հ. Օրբելու անձնական արխիվում պահվում են անտիպ նյութեր Մոկսի քրդական և հայկական բարբառագիտության վերաբերյալ[3]:

1911-1912 թթ. Հ. Օրբելին զբաղվում է նաև հայ միջնադարյան ճարտարապետության խնդիրներով՝ ուսումնասիրելով Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, նրա գմբեթը[4], բարձրաքանդակները, Արծրունիների արքունական պալատը, Ոստան քաղաքը և այլն[5]:

Այսպիսով, Հ. Օրբելին շուրջ մեկ տարի ուսումնասիրում է Մոկաց երկիրը, Մոկսի հայերի և քրդերի կենդանի բարբառը, բանահյուսությունն ու ազգագրությունը, Վանի բերդը, Թոփրակկալեն, Հայկաբերդը և Աղթամարի ճարտարապետական հուշարձանները: Այդ ամենը հետագայում տեղ են գտնում նրա «Մոկսը և նրա բնակիչները» աշխատության մեջ, որտեղ հեղինակը ներկայացնում է Մոկսի 1911-1912 թթ. բնակավայրերի ցուցակը: Ըստ այդ ցուցակի՝ Մոկսի շրջանում կար 70 բնակավայր: Մոկս քաղաքը, որը բաղկացած էր 5 թաղերից, ուներ 672 տուն հայ և 640 տուն քուրդ

[1] **Орбели И. А.**, Избранные труды, Ереван, 1963, с. 188-195; **Юзбашян К. Н.**, Академик Иосиф Абгарович Орбели, с. 30-35, **Орбели И. А.**, Фольклор и быт Мокса, Москва, 1982, с. 3-8.

[2] **Չաչանյան (Կարլեն Չաչանի) Կ. Ա.**, Հայ մտավորականության ավանդը քրդական մշակույթի և պատմության ուսումնասիրության գործում (1850-1990 թթ.), Երևան, 2004, էջ 117:

[3] **Орбели И. А.**, Избранные труды в двух томах, т. II, с. XV.

[4] **Орбели І. А.**, О первоначальной форме купола Ахтамарскаго храма, Записки Восточнаго Отделенія, т. XXV, б. м. г.

[5] Այդ մասին ավելի հանգամանորեն տես **Орбели И. А.**, Избранные труды в двух томах, т. I, Москва, 1968.

ազգարնակչություն, ինչպես նաև՝ 4-5 տուն գնչու-բոշաներ և 3-4 տուն թուրք պաշտոնյաներ[1]:

Մոկսի ուղևորությունը մեծ ազդեցություն ունեցավ Հ. Օրբելու աշխարհայացքի վրա: Վերադառնալով Ռուսաստան՝ Հ. Օրբելին իր ուղևորության և Վանի շրջանի ուրարտական հուշարձանների ուսումնասիրման վերաբերյալ 1912 թ. հոկտեմբերի 3-ին հանգամանալի մի զեկուցում կարդաց նախ Գիտությունների Ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքում, ապա՝ 1912 թ. դեկտեմբերի 20-ին Ռուսական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի նիստում[2], որտեղ նա ցուցադրեց նաև իր կողմից հայտնաբերված և Վանի հնավաճառներից գնված հնագիտական որոշ իրերի հավաքածուն[3]:

Ներկայացնելով Վանի թագավորության հուշարձանների տեսությունը և, մասնավորապես, Վանի մոտակայքում գտնվող բերդում հնագիտական պեղումներ կատարելու անհրաժեշտությունը՝ Հ. Օրբելին նշում է, որ «այդ հրաշալի և բնորոշ բերդերը, ինչպես օրինակ Հայկաբերդը, բացարձակապես ձեռք չեն տրվել եվրոպացի հետազոտողների կողմից և որ պեղումներից կարելի է սպասել որոշակի արդյունքներ»[4]:

1915 թ. ցեղասպանությունից հետո, երբ Մոկսի տարածքը հայաթափվում է, Հ. Օրբելու ուսումնասիրությունները յուրով ձեռք են բերում հատուկ նշանակություն: Նա առաջին և միակ հետազոտողն էր, ով տեղեկություններ հավաքեց

[1] **Орбели И. А.**, Фольклор и быт Мокса, с. 3, 136.

[2] **Орбели І.**, Предварительный отчетъ о командировке въ Азіатскую Турцію въ 1911-1912 гг., Известия Ак. Наукъ, 1912, серия VI, № 15.

[3] **Орбели И. А.**, Избранные труды в двух томах , т. 1, с. 10, նաև՝ **Марръ Н.**, Матеріалы по халдской эпиграфике. Изъ командировки І. А. Орбели въ Турецкую Арменію, ЗВО, т. XXIV, с. 97, նաև՝ **Орбели І.**, Предварительный отчетъ о командировке въ Азіатскую Турцію въ 1911-1912 гг., Известия Ак. Наукъ, 1912, серия VI, № 15, с. 917-926.

[4] **Марръ Н.**, Орбели І., Археологическая экспедиція 1916 года въ Ванъ, Раскопки двухъ нишь на Ванской сколе и надписи Сардура второго изъ раскопок западной ниши, Петербургъ, 1922, с. 1.

Մոկսի վերաբերյալ հենց Մոկսի տարածքում, դաշտային պայմաններում, իսկ հավաքած նյութերը (250 լուսաթիթեղներ-նեգատիվներ և 62 ձայնագրված գլանիկներ) ձեռք բերեցին գիտական մեծ արժեք՝ քերականության, բառագիտության, հնչյունաբանության, ինչպես նաև ազգագրության ուսումնասիրման գործում: Տարիներ անց, ավարտելով «Մոքսի հայկական տեքստերը» աշխատության ներածականը, Հ. Օրբելին ցավով գրում էր, որ 1915 թ. եղեռնից փրկվեցին միայն մի քանի հայ ընտանիքներ, հայերի ճակատագրից չխուսափեց նաև քուրդ բնակչությունը, որի մի մասը բնաջնջվեց, մի մասը փախուստի դիմեց, և Մոկսը անմարդաբնակ դարձավ. «Իսկ 1911-1912 թթ. երբ ես եղա Մոքսում, - նշում է Հ. Օրբելին, - այնտեղ շատ մարդ էր ապրում, կյանքը աշխատանքային էր, իրավազուրկ, ծանր, բայց և կյանքի փոքր ուրախություններից ոչ բոլորովին զուրկ: Եվ դրա համար էլ առանձնապես ցավալի է գիտակցել, որ այն քիչը, որը ես կարողացա գրառել Մոքսում՝ և՛ տեքստերի այդ փոքր ժողովածուն, և՛ հայկական, և՛ քրդական բառարանները հանդիսանում են հազիվ թե ոչ վերջին վկայությունը հայերի ու քրդերի, երկու ժողովուրդների մի քանի հազար զավակների լեզվի, կացութաձևի, սովորությունների, աշխատանքի և ուրախության մասին»[1]:

***

1911 թ. ամռանը Ասորիքում գերմանական արշավախմբի կողմից կատարված պեղումներն ավարտելուց հետո Վասպուրական է այցելում գերմանացի արժանահիշատակ ճանապարհորդ Վալտեր Բախմանը, որը Մոսուլ-Տրապիզոն-Մոսուլ երթուղիով ձգվող և 1911 թ. հուլիսից մինչև սեպտեմբեր իրականացված նրա պատմաաշխարհագրական ճանապարհորդության մի մասն էր[2]: Ուսումնասիրման նյութը

[1] **Орбели И. А.**, Фольклор и быт Мокса, с. 3, նաև՝ **Կ. Ն. Յուզբաշյան**, Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, էջ 39-40:

[2] Դժբախտաբար, առ այսօր պատշաճ ուշադրության չի արժանացել հեղինակի ինքնությունը, գործունեությունը և ժառանգությունը:

հիմնականում որակյալ չափագրություններով համադրված պատմական Վասպուրական աշխարհի՝ Դատվանի, Վանա լճի հարավային ծովեզերքի, Ախավանքի, Ոստանի, Վանի, Վարագավանքի, Հայկաբերդի, Խոշաբի, Ս. Բարդուղիմեոս վանքի, Բաշկալեի, Վարզահանի, Սալնապատի, Ջուլամերիկի հայկական, նեստորական, բյուզանդական և սելջուկյան միջնադարյան ճարտարապետական ծավալային կոթողների արժեքավոր հետազոտություններն էին, որոնք առաջ են բերում նաև մշակութաբանական ընդհանրության զգացողություն:

Ճիշտ է, Վասպուրականի հուշարձանների տեղագրությունների գործում մինչ այդ անգնահատելի աշխատանք են կատարել պոլսահայ հեղինակներ՝ Ն. Սարգիսյանը[1] և Մ. Միքայելյանը[2], սակայն Վ. Բախմանի հետազոտությունները նորույթ էին ու եղելություն, և քանի որ նրանում նշված մի շարք հայկական հուշարձաններ առաջին անգամ էին մտնում պետական շրջանառության մեջ:

Վ. Բախմանի կողմից Վասպուրականի եկեղեցական հուշարձանների հետազոտումը կարևորվում է նաև այն առումով, որ այն ունի վավերագրական արժեք, քանի որ հուշարձանների մեծ մասը հետագայում արժանացավ իսպառ ավերման անողոք ճակատագրին: Բացի այդ, աշխատանքում տեղ են գտել պատմագիտական կարևորություն ներկայացնող 132 լուսանկարներ և 50 գծագրեր, որոնք էլ ավելի են արժևորում կատարված աշխատանքը: Իր կատարած ողջ հետազոտությունների արդյունքը նա ամփոփել է՝ «Եկեղեցիներ և մզկիթներ Հայաստանում և Քուրդիստանում»[3] կոթողային

[1] **Սարգիսեան Ն. Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 237-239, 250-280:

[2] **Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի. տեղագրութիւնք սարէն և ձորէն, ինէն և նորէն, պիտանի գիտնոյ, մասն Ա., Կ. Պոլիս, 1884, մասն Բ., Կ. Պոլիս, 1885, մասն Գ., Կ. Պոլիս, 1885:

[3] **Բախման Վ.**, Եկեղեցիներ և մզկիթներ Հայաստանում և Քուրդիստանում. գերմաներէն բնագրից թարգմանեց՝ Ռուզան Սալխանեան, մասնագիտական խմբագիր՝ դոկտ. պրոֆ. Դաւիթ Քերթմենջեան, Վենետիկ, Ս. Ղազար, 2006:

աշխատության մեջ, որն իր չարագրանքով ինքնատիպ է և ունի տիպաբանական յուրահատուկ կառուցվածք:

Հայկական բարենորոգումների ամենաբուռն շրջանում՝ 1913 թ. սեպտեմբերի 18-ին, Թավրիզի վրայով Վան ժամանեց Բալկանյան, իսկ հետագայում՝ անգլո-հայկական կոմիտեի նախագահ Նոել Բեքստոնը՝ իր եղբոր Հարոլդ Բեքստոնի և Լոնդոնում հրատարակվող անգլիական «Ararat» ամսագրի խմբագիր-հրատարակիչ, հայ մեծանուն վիպասան Րաֆֆու որդու՝ Արամ Րաֆֆու ուղեկցությամբ[1]: Ն. Բեքստոնի նպատակն էր «ուսումնասիրել հայկական կեանքը և մօտից տեսնելու հայ ժողովրդի տառապանքները»[2]:

Պատվիրակությունը հանդիպեց Վանի նահանգապետ Թահսին բեյին, այցելեց հայոց վարժարանները, եղավ Վարագում, Աղթամարում, իսկ սեպտեմբերի 22-ին էրզրումի և Թիֆլիսի վրայով վերադարձավ Անգլիա[3]:

Ռուսաստան վերադառնալուց հետո Հ. Օրբելու՝ Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի 1912 թ. դեկտեմբերի 20-ի նիստում ներկայացրած Վանի նահանգում իր գործուղման արդյունքների զեկույցը առաջ բերեց Վանում հնագիտական նոր հետազոտություններ կատարելու անհրաժեշտություն:

1913 թ. մարտի 27-ին Ռուսական հնագիտական ընկերության նույն բաժանմունքում Բ. Վ. Ֆարմակովսկու զեկուցումից և Ն. Մառի առաջարկությունից հետո որոշվում է հանձնաժողով ստեղծել՝ Թոփրակ-կալեում հնագիտական պեղումները շարունակելու համար:

1914 թ. ապրիլին Ռուսաստանի հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքում նորից քննարկվում է Վանում հնագիտական պեղումներ կատարելու հարցը: Ն. Մառը, ելնելով այն իրողությունից, որ Վանի թագավորության հուշարձանների բացահայտումը կարևոր է Ռուսաստանի հնավայրերի ուսումնասիրման համար, առաջնահերթ է համարում Վանում հնագիտական ուսումնասիրությունների վերսկսումը[1]:

Արդեն հաջորդ՝ 1914 թ. ապրիլի 24-ի նիստում ներկայացվում է Բ. Ա. Տուրաևի՝ «Վանի և հարակից շրջանների հնությունների մասին» զեկույցը, ըստ այդմ էլ մի փոքր ուշ՝ 1914 թ. նոյեմբերի 27-ին որոշվում է Վան գործուղել Կովկասյան ռազմաճակատի արևելյան հնությունների պահպանության ղեկավար Ն. Մառին (ղեկավար), Հ. Օրբելուն, Ի. Կնյազինյկուն (ճարտարապետ) և Ա. Վրույրին (լուսանկարիչ)՝ հայկական հնություններն ուսումնասիրելու ու փրկելու նպատակով: Նախատեսվում է նաև այդ նպատակով պետական դանձարանից բաց թողնել 7,000 ռ. դումար: Սակայն աշխարհամարտի և ռազմական գործողությունների սկիզբը Կովկասյան ռազմաճակատում պատճառ դարձան, որպեսզի պեղումները հետաձգվեն մինչև 1916 թ.:

1914 թ. նոյեմբերին Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիան քննում է Ն. Մառի զեկուցումը, որը նվիրված էր Վանի նահանգի հնագիտական հուշարձանների ավերման, կողոպուտի և փրկության խնդիրներին: Ելնելով հարցի հրատապությունից՝ Ակադեմիան որոշում է արշավախումբ ուղարկել Վան՝ Ն. Մառի ղեկավարությամբ[2]:

Ռուսաստանի հնագիտական ընկերության՝ 1916 թ. մայիսի 7-ի գրությունից պարզվում է, որ երբ 1915 թ. մայիսին ռուսական զորքերը գրավեցին Վանը, ակադեմիկոս Ն. Մառը և նրա օգնական Հ. Օրբելին թույլտվություն են ստանում իրենց արշավախմբով հնագիտական պեղումներ կատարել Վանի բերդում, Վանի շրջանի Թոփրակ-կալե, Զըմզըմ-Մապարա և Բոլ-Դաղի Հայկաբերդ կոչվող վայրում[3]: Այդ ժա-

[1] «Աշխատանք», Իզմիր, 1913, հոկտեմբերի 30/ նոյեմբերի 12, թիւ 37:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 12, թիւ 226:

[3] Իրենց ճանապարհորդության արդյունքները նրանք ամփոփել են առանձին աշխատության մեջ: Տես **Buxton N., M. P., Buxton H. Rev., Bryce V., Raffi A.**, Travel and politics in Armenia, New York, 1914, p XIII.

[1] **Пиотровский Б. Б.**, Археология Закавказья, Ленинград, 1949, с. 9.

[2] **Եարտրմեան h. S. ծ. վրդ.**, Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Ս. Ղազար, 2001, էջ 66-67:

[3] ЦГВИА РФ, ф. 2100, оп. 1, д. 335, л. 112, նաև՝ «Գաղափար», Թիֆլիս,

մանակներից էլ սկսած ուրարտերենը դառնում է Ն. Մառի հատուկ հետազոտությունների առարկան: Հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվում են մի շարք հնագիտական նյութեր, սեպագիր ու ձեռագիր հուշարձաններ: Վանի միջնաբերդի հյուսիսային փեշին՝ «Համզինե-կապուսի» որմնախորշում Հ. Օրբելին կատարեց հնագիտական մեծ հայտնագործություն և հայտնաբերեց 2 մ բարձրությամբ քարի մեծ հողակոթող՝ Սարդուրի II-ի 265 տողանոց տարեգրությունը, որն իր նշանակությամբ և չափերով կարող էր համեմատվել միայն Վանի բերդի հարավային փեշին փորագրված Արգիշտի I-ի Խորխորյան արձանագրության հետ[1]: Ն. Մառը պատճենավորեց այն, իր հետ տարավ Ռուսաստան և վերծանելուց հետո հրատարակեց առանձին գրքով[2]: Այս հայտնագործությունը մեծ փառք բերեց ռուսական հնագիտական դպրոցին: Միաժամանակ արձանագրության վերջին տողի տակ հայտնաբերվեցին նաև ինչ-որ տառեր: Ոչ մեծ հետախուզական աշխատանքներից հետո պարզվեց, որ հանելուկային այդ տառերը պատկանում էին հայկական արձանագրությանը[3]:

Հնագիտական ուսումնասիրությունները շարունակվեցին նաև հետագայում: Հնագիտական արշավախումբը Ն. Մառի գլխավորությամբ 1916 թ. հունիսի 11 - հուլիսի 16-ը պեղումներ կատարեց Թոփրակ-կալեում, իսկ հունիսի 22 - հուլիսի 16-ը՝ Հ. Օրբելու գլխավորությամբ՝ Վանի բերդում[4]:

1916, սեպտեմբերի 11, թիւ 70, նաև՝. **Пиотровский Б. Б,** Археология Закавказья, с. 9, նաև՝ **Արզումանյան Ա.**, Օրբելի եղբայրներ, գիրք առաջին, Երևան, 1986, էջ 517:

[1] **Орбели И.А.**, Избранные труды в двух томах , т. 1, с. 10. **Ա-Դո,** Իմ հիշողությունները, Երևան, 2015, էջ 328-329:

[2] **Աճառյան Հ.**, Մառը և հայագիտությունը, Գրական թերթ, 2. IV. 1965, նաև՝ Նիկողայոս Յակովլևիչ Մառ (ծննդյան 100-ամյակի առթիվ), Երևան, 1965, էջ 57:

[3] **Յուզբաշյան Կ. Ն.**, Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, էջ 54:

[4] **Марръ Н., Орбели І.**, Археологическая экспедиція 1916 года въ Вань, с. 1-3.

1915-1916 թթ. Կովկասյան թանգարանի տնօրեն գնդապետ Ա. Ն. Կազնակովը թույլտվություն է ստանում հնագիտական պեղումներ և գիտաթանգարանային հետազոտություններ կատարել Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված շրջաններում: Նա Թիֆլիսի Կովկասյան թանգարան է հասցնում ո՛չ միայն լուսանկարներ և էստամպաժներ, այլև՝ սեպագիր 25 արձանագրություններ, որոնցից 18-ը՝ Վան-Վասպուրականից, այդ թվում՝ 3-ը՝ Ծվստանից (Իշպուինի), 8-ը՝ Վանից (5-ը՝ Մենուայի, 2-ը՝ Արգիշտի I-ի, 1-ը՝ Ռուսա I-ի), 1-ը՝ Վարագից (Մենուայի), 4-ը՝ Սղգայից (Մենուայի), 1-ը՝ Կարմրավոր վանքից (Մենուայի), 1-ը՝ Թուխանից (կեղծ արձանագրություն): Փրկվում և Թիֆլիս է տեղափոխվում նաև Վանից հայտնաբերված ուրարտական թագավորի արձանիկ և մի երկան (ջրաղացքար)՝ ընդհանուր առմամբ 20 միավոր[1]: Ա. Կազանովի լուսանկարներն իրականացվում էին Բ.Ն. Շախովսկու կողմից, որոնք 1917 թ. ամբողջությամբ փոխանցվում են Մոսկվայի հնագիտական ընկերությանը[2]:

Վանի թագավորության հուշարձանների լուսանկարներ էր անում նաև Ա. Վ. Լյապովը, որը 1916 թ. ուղեկցում էր Ա. Ա. Բոբրինսկուն[3]: Վերջինիս լուսանկարները (Մենուայի արձանագրությունը Վարագից, Մենուայի արձանագրությունը Ագթամարից, Իշպուինիի և Մենուայի արձանագրությունը Ագթամարից, քարե սալիկների արձանագրությունը Հայկաբերդից և այլն) հետագայում տպագրվեցին Ն. Մառի աշխատության հավելվածում[4]:

[1] **Мещанинов И. И.**, Халдоведение, Баку, 1927, с. 208, նաև՝ **Церетели Г.** В. Урартские памятники музея Грузии, Тбилиси, 1939, с. 33-41, 45-52, 60-64.

[2] **Meščaninov I.**, Die neuen Ergebnisse der chaldischen Forschungen. Archiv für Orientforschung, 1931, VI, Heft 4/5, s. 204, նաև՝ Церетели Г. В., Урартские памятники музея Грузии, с. 12, նաև՝ **Пиотровский Б. Б.**, Ванское царство (Урарту), Москва, 1959, с. 15.

[3] **Пиотровский Б. Б,** Ванское царство (Урарту), с. 15.

[4] **Марръ Н.**, Матеріалы по халдской эпиграфике. Изъ командировки І. А. Орбели въ Турецкую Арменію, ЗВО, т. XXIV, с. 97-124.

Ռուսական հնագիտական ընկերության կողմից ակադեմիկոս Ն. Մառի անմիջական ղեկավարությամբ հնագիտական հետազոտություններ (պեղումներ, նկարագրություն, հատակագծեր, լուսանկարներ, ճարտարապետական հուշարձանների, ամրոցների, քարանձավների, ստորգետնյա անձավների, դամբարանների, արձանագրությունների և այլնի ուսումնասիրում և հավաքագրում) էր կատարում նաև Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի ասիական թանգարանի տնօրեն-գիտնական, հայ նշանավոր հայագետ, հնագետ և պատմաբան, Անդրանիկի գրագիր՝ Աշխարհբեկ Անդրեևիչ (Աղալոյի) Լորիս-Մելիք-Քալանթարը (1884-1942)[1]:

Դեռևս 1915 թ. Ա. Քալանթարը, որն Անդրանիկի գրագիրն էր, մեծ ջանքեր էր գործադրել և Անդրանիկ Օզանյանի հայ կամավորական գնդի ռազմական գործողություններին մասնակցելու թույլտվություն էր ստացել[2]: Մարտերի միջակայքում Ա. Քալանթարը հնարավորություն է ունենում ուսումնասիրել ճանապարհի մոտակայքում գտնվող հայկական պատմական հուշարձանները: Ն. Մառին ուղղված նրա՝ 1915 թ. մայիսի 12-ի նամակում կարդում ենք. «Ամսի երեքին անցանք Վանք գյուղով, որտեղ գտնվում է Սբ. Բարդուղիմեոսի վանքը: Շինության ոճը VII-VIII դարերի է, մուտքը՝ IX-X դարերի: Եկեղեցու հատակագիծը խաչանման է, արձանագրությունները՝ բացառապես ուշ դարերի, կան հետաքրքիր զարդաքանդակներ: Կգրեմ մանրամասն»[3]:

Ըստ ականատեսների վկայությունների՝ մի իրադեպի ընթացքում Անդրանիկը փրկում է գիտնականի կյանքը[4]: 1915 թ. ապրիլին ռուսական զորքերը և հայ կամավորները գտնվում էին Խոյից հարավ: Հանկարծ լուր է ստացվում,

[1] **Քալանթար Ա.**, Հայաստան, քարե դարից միջնադար, Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 31-34:

[2] Չորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը 1914-1917, Օրագրված զորավարին թիկնապահ զինվորեն, Բոստոն, 1924, էջ 30:

[3] **Քալանթար Ա.**, Հայաստան, քարե դարից միջնադար, էջ 17:

[4] **Հովհաննիսյան Վ.**, Դժվարին տարիներ. հուշեր, Երևան, 1988:

թե Աշխարհբեկ Քալանթարը գեներալ Զեռնոզուբովի հրամանով ձերբակալվել է և պետք է գնդակահարվի: Գեներալ Նազարբեկովի և ուրիշների միջնորդությունները՝ գիտնականին ազատ արձակելու վերաբերյալ, որևէ արդյունք չէին տվել: Միայն Անդրանիկի խելամիտ միջամտությունից հետո է նա ազատ արձակվում: Հետագա արշավանքների ընթացքում գեներալներ Զերնոզուբովը, Նազարբեկյանը և Անդրանիկը ժամանակ էին գտնում՝ զրուցելու Ա. Քալանթարի հետ պատմության և պատմական հուշարձանների մասին[1]:

1917 թ. հունիսի 22-ին Աշխարհբեկ Քալանթարը թույլտվություն է ստանում Ն. Մառի անմիջական ղեկավարությամբ մասնակցել Ռուսաստանի Կայսերական Ակադեմիայի ռուսական հնագիտական ընկերության կողմից կազմակերպված Վանի երկրորդ հնագիտական արշավախմբին, որը պեղումներ է կատարում Վանում՝ Թոփրակ-կալեում և Բոլպաղ լեռան վրա գտնվող Հայկաբերդում: Նրան հաջողվում է հայտնաբերել և ուսումնասիրել ուրարտական սեպագիր որոշ արձանագրություններ, որոնց մի մասը նա փրկում է իր հետ բերում է Արևելյան Հայաստան[2]:

Քալանթարը ուսումնասիրում, լուսանկարում, պատճենահանում է շուրջ 50 ուրարտական սեպագիր արձանագրություններ, որոնցից 10-ը՝ նորահայտ[3]: Այդ մասին Աշ. Քալանթարը Թիֆլիս հասնելուն պես հեռագրում է Ն. Մառին՝ Սանկտ Պետերբուրգ.

[1] Չորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը..., էջ 30:

[2] **Առաքելյան Բ. Ն.**, Աշխարհբեկ Քալանթար (ծննդյան 100-ամյակի առթիվ) ՊԲՀ, 1984, թիվ 3 (106), էջ 3:

[3] Ա. Քալանթարի սեպագիր արձանագրությունների ապակյա լուսաթիթեղների (նեգատիվների) հավաքածուն հայտնի է եղել մասնագետների շրջանում, օգտագործվել՝ Ի. Մեշչանինովի կողմից և որոշ հրատարակություններում: Ցավոք, այդ հավաքածուի միայն չնչին մասն է փրկվել: Գիտնականի ձերբակալումից հետո, նրա այրին՝ Թամարան, դրանք հանձնել է Երևանի Պատմության թանգարանին: Տես **Քալանթար Ա.** Հայաստան, քարե դարից միջնադար, Երևան, 2007, էջ 17:

30-го Августа 1917 г.
Тифлис, Судебная, 42

Глубокоуважаемый Николай Яковлевич!

Спешу хотя бы с телеграфной краткостью донести, что наша экспедиция, благополучно закончив работы, вчера – 29-го авг. прибыла в Тифлис. Программа по возможности выполнена вся. Объехали и подробно осмотрели районы Вана (город и окрестность двора, Арчака, Тимара, Беркри и гор. Баязет). Собрано очень много материала везем более 250 негативов. Николай Георгиевич через день-два выезжает, но придет в Петроград с остановкой на пути. В Петроград ехать пока не разрешается, я выеду по первой возможности.

Преданный Вам
Ваш Ашхарбек[1]

1916 թ. էջմիածնից էրզրում և Մուշ է ուղևորվում նաև Ն. Ադոնցը, որը 1917 թ. միանում է ռուսական հնագիտական ընկերությանը և մասնակցում Վանի հնագիտական արշավախմբի կազմակերպած պեղումներին[2]*:*

Վանի՝ 1915 թ. գրավումից անմիջապես հետո, ռուսական բանակը ձեռնամուխ է լինում նաև փրկելու պատմական և հնագիտական կարևոր հուշարձանները: Այսպես, ռուսական կովկասյան բանակի շտաբը հատուկ գրությամբ տեղեկացնում էր գեներալ Զեռնոզուբովին, որ Ուշնուե-Շեյխան-Ռևանդուզ ճանապարհին՝ Քելիշինի լեռնանցքում հայտնաբերվել է քարե հնագույն մի հուշարձան՝ սեպագիր արձանագրությամբ, որը հնագիտական արժեք է ներկայացնում և որը թվագրվում էր մ. թ. ա. IX դ.: Գերմանացիները փորձում են այդ հուշարձանը տեղափոխել եվրոպական որևէ թանգարան: Սակայն Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը հրամայում է, որ ձեռնարկվեն բոլոր միջոցները, որպեսզի այդ հուշարձանը չհայտնվի Բեռլինում, այլ անվնաս և մեծ հոգատարությամբ հասցվի Թիֆլիս, որտեղից էլ այն տեղափոխվի Ռուսաստանի որևէ գիտական հաստատություն[1]*:*

Կովկասյան ճակատի շտաբի պետ գեներալ Բոլխովիտինովին ուղարկած իր պատասխան հեռագրում գեներալ Զեռնոզուբովը տեղեկացնում էր, որ Քելիշին-Ուշնուեի լեռնանցքում 1, 365 սաժեն բարձրության վրա իրոք գտնվում է Վանի թագավորության գահակալ Իշպուինի մ. թ. ա. IX դ. կառուցած հուշարձանը՝ խալդական կամ ասորական գրությամբ: Նույն Զեռնոզուբովի վկայությամբ՝ մեկ այլ հուշարձան էլ հայտնաբերվել էր Սիդեկից ոչ հեռու՝ Թալավուզում, որը կանգնեցրել էր Ռուսա I-ը՝ մ. թ. ա. 714 թ.: Զեռնոզուբովը հայտնում էր նաև, որ դեպի հուշարձաններ տանող կածանները դժվարանցանելի են և հենց առաջին հնարավորության դեպքում՝ մասնավորապես, ապրիլի վերջերին, կարգադրությունը ի կատար կածվի և 30-40 փութ քաշ ունեցող սեպագիր արձանագրության հուշարձանը կտեղափոխվի[2]*:*

Միաժամանակ Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի լուսանկարիչ Ն. Կ. Գլուկեին հանձնարարվում է Կովկասյան բանակի գործողությունների վայրերում կատարել հնությունների և արվեստի հուշարձանների հավաքում ու պահպանում[3]*:*

Ա. Ա. Ֆլորենսկին, լուսանկարներից զատ, Մոսկվա հասցրեց Լեսկից հայտնաբերված սեպագիր մի արձանագրություն, որն այժմ պահպանվում է ՌԴ Ա. Ս. Պուշկինի անվ. կերպարվեստի պետական թանգարանում[4]*:*

Բացի դրանից, ռուսական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ Ա. Ա. Միլլերի ղեկավարությամբ, որի օգնականն էր Պ. Մակինցյանը, կազմակերպվեց նաև ազգագրական արշավախումբ[5]*:*

[1] Ցավոք, Ա. Քալանթարի կողմից հրատարակության պատրաստված Վանի արշավախմբի նյութերը ոչնչանում են Նևայի 1924 թ. վարարման ժամանակ Լենինգրադի Ակադեմիայի տպարանում: Տես **Քալանթար Ա.**, Հայաստան, քարե դարից միջնադար, էջ 18:

[2] **Յուզբաշյան Կ. Ն.**, Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, ՊԲՀ, 1962, թիվ 4, էջ 117:

[1] ЦГВИА РФ, ф. 2100, оп. 1, д. 648, л. 2-3.

[2] ЦГВИА РФ, ф. 2100, оп. 1, д. 648, л. 5.

[3] ЦГВИА РФ, ф. 2100, оп. 1, д. 648, л. 15.

[4] **Марр Н. Я.**, Халдская клинообразная надпись из села Леска Ванского округа, «Известия АН», 1915, с. 1731-1733.

[5] ЦГВИА РФ, ф. 2100, оп. 1, д. 335, л. 3-35.

Վասպուրականի 1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ մեծ չափով վնասվում են վանքերի և եկեղեցիների թանկարժեք եկեղեցական անօթները, իրերն ու ձեռագրերը, իսկ մի մասն էլ ենթարկվում է թալանի ու ոչնչացման: Վեհափառ կաթողիկոսի կարգադրությամբ որոշվում է արժեքավոր իրերն ու ձեռագրերը փոխադրել Էջմիածին: Վանի շրջանի հնությունների պահպանման և կորստից փրկելու գործում հետաքրքրություն է ցուցաբերում նաև Պետերբուրգի Գիտությունների Կայսերական Ակադեմիան, որի հանձնարարությամբ և Կովկասի փոխարքայի հրամանով Կովկասյան (Թիֆլիսի) թանգարանի հնագիտական բաժնի ավագ թանգարանապահ և վերահսկիչ Սմբատ Վ. Տեր-Ավետիսյանը (Ավետիքյանը)[1] Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ 1915 թ. ապրիլին Պետրոգրադից գործուղվում է Կովկասյան ճակատ՝ մշակույթի հուշարձանների հաշվառման համար[2]: Նա լինում է Վանում, Բասենում և Էրզրումում[3]:

Վեհափառի դիվանապետին ուղղված նամակում նա գրում է. «Գիտությեան ճեմարանի որոշման համաձայն և Տ. Փոխարքայի հրամանով երկու օրից ճանապարհուելու եմ Կովկասեան պատերազմաբեմը, առանձնապէս Վանի շրջանը, յատուկ հրահանգ ունենալով զեկուցագիր կազմել պատմական-կուլտուրական յիշատակարանների վիճակի և այն մասին, թէ ինչքան նոքա վնասուել են ու աւերուել ներկա պատերազմի ժամանակ, տեղնուտեղը կարգադրել նոցա պահպանութեան մասին և միջոցներ ձեռք առնել այդ յիշատակարանների գոյութիւնը ապահովելու համար»[4]:

1915 թ նոյեմբերի 15-ից մինչև 1916 թ. հունվարի վերջ նա ուսումնասիրում է Վանի միջնաբերդը, Վարագի, Աղթամարի, Լիմի, Կաուցի վանքերը, կատարում հուշարձանների լուսանկարներ և լուսանկարներ[1]:

Կաթողիկոսի կարգադրությամբ հնագիտական հետազոտությունների և որոնումների ժամանակ եկեղեցու ներկայացուցիչ է նշանակվում Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանը: Նախատեսվում է գտնված հնագիտական իրերը, եկեղեցական-հնագիտական արժեք ունեցող ապաքներն ու զարդերը ցուցակագրել, կնքել ու ապահովել հսկողությամբ, իրերի ցուցակի հետ տեղափոխել Էջմիածին և ոչ թե՝ Թիֆլիս[2]: Նրա անմիջական ջանքերով միայն անխուսափելի կորստից փրկվեցին և Վանից Կովկաս փոխադրվեցին երկու տասնյակից ավելի սեպագիր արձանագրություններ:

1916 թ. ամռանը հետազոտվում է նաև Վանի բերդի պարիսպների ներսում գտնվող քարանձավը[3]:

Թատերական արվեստը

Վասպուրականի մշակութային կյանքի զարգացման ակնառու նվաճումներից էր նաև թատերական արվեստի զարգացումը: 1908 թ. սահմանադրական կարգերի հաստատումից հետո թատերական գործը նոր կենդանություն ապրեց Վանում: Հարստացավ թատերական խաղացանկը: Ի հայտ եկան դերասանական նոր ուժեր: Կազմակերպվեցին սիրողական խմբեր, որոնք հայերեն և թուրքերեն լեզուներով նույնիսկ ձեռնարկեցին գլուխգործոցների բեմադրություններ: Ինամահարթակ բարձրացան ազատասիրական ու հայրենասիրական մի շարք ներկայացումներ, որոնք մերկացնում էին Աբդուլ Համիդի արյունոտ վարչակարգը և քարոզում ժողովրդավարական գաղափարներ: Մնայուն թատերասրահի

[1] **Կարապետյան Ս.,** Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երևան, 2004, էջ27:

[2] ЦГВИА РФ, ф. 2100, оп. 1, д. 648, л. 12, նաև՝ **Марръ Н., Орбели І.,** Археологическая экспедиція 1916 года въ Вань, с. 3:

[3] Մեր անվանի դասախոսները, Երևան, 1970, էջ 229, նաև՝ **Гарибджанян С.,** Смбат Тер-Аветисян, «Эфир», Ереван, 2003, с.16.

[4] «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ ԺԱ-ԺԲ, էջ 861:

[1] «Кавказ»,Тифлис, 1916, № 62.

[2] «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ ԺԱ-ԺԲ, էջ 861-862:

[3] **Казнаков А. Н.,** Пещера с тайниками в Ванской Цитадели, «Известия Кавказского музея», т. 11, вып. 1-2, Тифлис, 1917, с. 28-32.

վերածվեցին Երամյան և Կեդրոնական դպրոցների լսարան-ները[1]:

Սիրողական այդ խմբերը չորս տարվա ընթացքում՝ առա-վել և նվազ հաջողությամբ, մինչև 1912 թ. բեմադրեցին Յուժին-Սումբատովի՝ «Դավաճանություն», Ա. Ահարոնյա-նի՝ «Արցունքի հովիտ», Գ. Սունդուկյանի՝ «Պատվի հա-մար», «Խաթաբալա» և «Պեպո», Ա. Շիրվանզադեի՝ «Եվգի-նե», Վ. Շեքսպիրի՝ «Վենետիկի վաճառականը» և «Օթել-լո», Վ. Հյուգոյի՝ «Էռնանի» և «Կործանվածը», Յ. Շիլլերի՝ «Ավազակներ», Մուրացանի՝ «Ռուզան», Արտաշես Սոլա-յանի՝ «Թորոս աղա», Խ. Նարբեի՝ «Արշակ Բ», ինչպես նաև՝ «Ժան-Րուլ» և ուրիշ մեծ ու փոքր գործեր[2]: Ներկայացում-ներին ներկա էին գոնվում ինչպես հյուպատոսներ և կու-սակալներ, այնպես էլ բնակչության տարբեր սեռի ներկա-յացուցիչներ, որոնց համար թատրոնը կարծես դարձել էր անհրաժեշտություն:

Ներկայացումների համար գինվորական վարչությու-նը զորանոցի հնություններից տրամադրում էր զրահներ, սաղավարտներ, նիզակներ, իսկ պետական նվագախումբը, անհրաժեշտության դեպքում, իր աջակցությունն էր առա-ջարկում: Սիրողական թատերական խմբերում հանդես էին գալիս սկսնակ երիտասարդ մասնակիցներ, որոնցից էր նաև Լեո Կամսարը[3]: Սակայն քիչ չէին դեպքերը, երբ Վանում հանդես էին գալիս նաև պրոֆեսիոնալ դերասաններ: Այս-պես, 1911 թ. ամռանը Վանում, Աղթամարում և Շատախում իր հյուրախաղերով հանդես եկավ հայ նշանավոր դերասան Հ. Զարիֆյանը, որը երկուսուկես ամսվա ընթացքում իր խմբի հետ՝ ռամկավարների և դաշնակցականների համագոր-

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1913, մարտի 8, թիվ 52:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1913, մարտի 8, թիվ 52, նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 1909, դեկտեմբերի 13, թիվ 276, նաև՝ 1912, հունիսի 24, թիվ 136, նաև՝ **Գազանճյան Լ.,** Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկե-դար (1850-1950), էջ 148:

[3] **Սվազլյան Վ.,** Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 142:

ակցությամբ, բեմադրեց 14 ներկայացում, այդ թվում՝ «Ար-ցունքի հովիտը», «Մարվող ճրագներ» և այլ դրամաներ[1]: Այդ մասին հետագայում Հ. Զարիֆյանը հիշում էր. «Զորրորդ որ հասանք Վան: Երկուսուկես ամիս մնացինք և տասն-չորս ներկայացում տվինք Վանի մեջ: Ազատ օրերին չրջում էին՝ հնությունները տեսնելու. Վարագ, Նարեկ, Աղթամար և այլն: Աղթամարի վանքի ձիերը նստած՝ գնում էինք Նա-րեկ, երբ հանկարծ մեր ճանապարհը կտրեցին քրդական հա-գուստներով ութ մարդ: Մենք կանգ առանք. նրանցից մեկը բղաց. «Ո՞վ է ձեր խմբապետը»: Ես լուռ էի... վախենում էի ասել իմ անունը. ընկերներս ինձ էին նայում:

– Ձեզանից ո՞ր մեկն է Զարիֆյանը, – որոտաց անծանոթը.

Թարգմանն այլևս անկարելի է, մտածեցի ես, և գրեթե ակա-մա, հպիվ լսելի ձայնով ասացի. – Ես եմ, ի՞նչ եք կամենում: Անծանոթը սկսեց իր ճառը. ընկերներս չրջապատեցին ինձ:

– Ի՞նչ իրավունքով դուք եկել եք Վան և միայն վանեցի-ների համար ներկայացումներ կտաք, ի՞նչ բարոյական իրա-վունք ունեք մեզ զրկելու, անմասն թողնելու ձեր տված ներ-կայացումներից. չէիք մտածում, որ այս ձորերի մեջ էլ մար-դիկ են ապրում, որոնք նույնպես կարիք ունեն ձեր խրատա-կան խոսքերը տեսնելու և ճաշակելու ձեր արվեստը և այլն:

– Մենք, գյուղացիներս, պահանջում ենք, որ մեզ համար էլ ներկայացումներ տաք, – ավելացրեց նա: – Դրամ կուզեք՝ պատիվ կտանք:

Ես ուրախությամբ խոստացա գնալ և իրենց գյուղում ներ-կայացում տալ ձրիաբար, և խնդրեցի մի փոքրիկ բեմի նման բան պատրաստել իրենց դպրոցներից մեկում: Այդ միջոցին մոտեցան մեր մնացած ընկերները և Աղթամարի վանահայրը:

Դ. վարդապետը երբ լսեց գյուղացիների պահանջը և իմ խոստումը՝ ասաց.

– Գնա, Գալուստ, գյուղացիներին հայտնիր, որ չաբաթ երեկո և կիրակի ցերեկը Աղթամարում ներկայացումներ պի-տի տա պ. Զարիֆյանը, թող ով ուզում է դա տեսնելու:

[1] Բոգեմսկի Ս. (Ջատիկյան), Հովհաննես Զարիֆյան, Երևան, 1966, էջ 75:

Շատախցի Գալուստը և իր ընկերները չնորհակալություն հայտնեցին ու ետ դարձան դեպի գյուղերը. նրանք եկել էին պատգամավոր՝ գյուղացիների կողմից:

Ուրբաթ կեսօրից հետո սկսվեց Հայոց ձորի և շրջակա գյուղացիների զինված ու ճիերով մուտքը: Շարան-շարան գալիս էին դեպի Աղթամար: Այդ պատկերն ինձ հիշեցնում էր ուխտավորների, որոնք գնում են այս կամ այն սրբավայրը՝ իրենց ուխտը կատարելու: Ամբողջ երկու օր ու գիշեր Աղթամարը քեֆի և ուրախության մեջ էր... պար, երգ, նվագ... ցնծում էին գյուղացիները երջանկությունից»[1]:

Թատերական կյանքի տարածման գործում մեծ դեր խաղացին նաև Սանդխտյանը, վանեցի Խոսրով Փափազյանը, վանեցի նշանավոր նկարիչ Վրթանես Ախիկյանը և ուրիշներ:

Թատերական գործը զարգանում էր նաև գավառներում: Այսպես, Արճակում 1909 թ. փետրվարին, ուսուցիչների նախաձեռնությամբ, ղեկավար մասնակցությամբ և տեղական ուժերի օժանդակությամբ, բեմադրվեց ուսուցիչներից մեկի գրած «Հինը և նորը» թատերգությունը, որը պատկերում էր ժամանակի գյուղական կյանքը[2]:

Ներկայացումներին զուգահեռ կազմակերպվում էին նաև երեկույթներ և ցերեկույթներ, որոնց ժամանակ արտասանվում էին Սիամանթոյի, Ադա-Նեգրիի, Շ. Կուրղինյանի, Ա. Իսահակյանի, Հ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Շատուրյանի բանաստեղծությունները: Այդ ամենը նպատակ էր հետապնդում ո՛չ միայն զարգացնել թատերական արվեստը, այլև օգնել գրադարաններին և դպրոցներին[3]:

Երաժշտությունը

Թատերական շարժմանը զուգընթաց զարգացում ապրեց նաև երաժշտությունը: Առաջին անգամ Կոմիտաս վարդապետի ճեմարանական աշակերտներից մեկի՝ վանեցի Խոսրով Փախչանյանի (Փաղչանյանի) կողմից կազմակերպվեցին բազմաձայն երկսեռ համերգներ՝ Վանի ազգային դպրոցների մեջ: Հրավիրված լինելով Հ. Երամյանի կողմից Պետերբուրգից՝ նա միաժամանակ ստանձնեց Երամյան վարժարանի երաժշտության դասերը, և ապա՝ Երամյան, Սանդխտյան ու Կենտրոնական վարժարանների մեջ, Ռուսաստանի փոխհյուպատոս Օլֆերիևի հովանավորությամբ, կազմակերպեց երգչախմբեր և երգահանդեսներ[1]: Երեկույթներից մեկի ժամանակ, առաջին անգամ, Վանում տեղի ունեցան ջութակի և դաշնամուրի համերգներ[2]: 1912 թվականից միացյալ Վարժապետանոցի մեջ բազմաձայն երաժշտության և ջութակի դասեր մատուցեց նաև խարբերդցի Խ. Պուճիքանյանը: Վարժապետանոցը մասնավոր նպաստներով և թատերական ներկայացումների արդյունքներով կազմակերպեց Վանի Ցանգառը, որը 1915 թ. ինքնապաշտպանության կռիվների ժամանակ ոգևորեց ժողովրդին[3]:

Վասպուրականի ժողովրդական երգերը հավաքելու և այն ձայնագրելու գործում մեծ դեր խաղացին Տ. Զիթունին և Կոմիտաս վարդապետը: Նրանք գյուղից գյուղ պտտվելով, մեծ դումարներ ծախսելով՝ կյանքի գնով ու հրաշքով 1909 թ. սեպտեմբերից մինչև 1914 թ. նոյեմբերը գյուղացիներից գրի առան 192 երգ և մի քանի մանր-մունր երգիկներ[4]:

Շարականների հետ երգում էին նաև ազգային-հեղափոխական երգեր, ինչպես օրինակ՝ «Իշխանն եկաւ կողքին մալիզէր»[5]:

Զարգացում արձանագրվեց նաև **գեղանկարչության** բնագավառում: Պետերբուրգի Գեղարվեստների Ակադեմիայում

[1] **Բոգեմսկի Ս.** (Զատիկյան), Յովհաննես Զարիֆյան, էջ 73-75:

[2] «Գործ», Թիֆլիս, 1909, փետրվարի 14, թիւ 32:

[3] «Յորիզոն», Թիֆլիս, 1913, մարտի 8, թիւ 52:

[1] **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 126:

[2] «Յորիզոն», Թիֆլիս, 1913 թ. մարտի 8, թիւ 52:

[3] **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 126:

[4] Ե. Չարենցի անվան ԳԱԹ, ֆ. Տ. **Չիթունի**, թիվ 102, էջ 4-12:

[5] **Վրացյան Ս.**, Կեանքի ուղիներով, Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հտ. Գ., էջ 89:

կրթություն ստացած և բազմաթիվ մրցանակների արժանացած վանեցի նկարիչ Վրթանես Ախիկյանը 1912 թ. վերադառնում է Վան և զբաղվում մանկավարժական գործունեությամբ[1]: Նա ջրաներկով նկարչության դասեր էր անցկացնում Երամյան, Կեդրոնական և Սանդխտյան դպրոցներում[2]. պատրաստվում էր նաև յուղաներկով նկարչություն դասավանդել, սակայն բռնկվեց առաջին աշխարհամարտը[3]:

Մշակութային այլ միջոցառումներ

Վանը, ինչպես նկատել են ոչ վանեցիները, Արևմտյան Հայաստանի բազում հայաբնակ քաղաքներից տարբերվում էր նրանով, որ յուրաքանչյուր շաբաթ և ամիս այնտեղ տեղի էին ունենում երեկույթներ, դասախոսություններ, դպրոցական ու համազգային հանդեսներ, հրապարակային հանրահավաքներ և դաշտային զբոսանքներ: Ինչպես Վահան Փափազյանն է նշում. «Հրապարակային հանդէսներու, դասախօսութիւններու անվերջ շարք և յեղափոխական դէմքերու խանդավառ ելոյթներ ամեն կողմ»[4]:

Նախապատերազմյան շրջանում Հ. Քաջազնունու հատուկտոծով ձեռնարկվում է Վանի ժողովրդական տան շինարարությունը, որի համար Ա. Վռամյանը գումար էր հանգանակել Կովկասում: Հետագայում այն դարձավ Արամի նահանգապետարանի շենքը[5]:

Կուսակալ Բեքիր Սամիի օրոք կազմակերպվեց նահանգային ճարտարվեստի ցուցահանդես, որին մասնակցեցին միայն Վանի հայ արհեստավորները (ոսկերիչներ, դերձակներ, որմնադիրներ, կահագործներ), և որոնցից չատերը ստացան մրցանակներ[1]:

Բեքիր Սամի բեյի և Զավեն առաջնորդի ներկայությամբ տոնվում է Վարագա վանքի դպրոցի 50-ամյակը: Այս տոնակատարությունը պիտի կազմակերպվեր 1907 թ., բայց Մ. Սրիմյանի մահվան առիթով հետաձգվում է մինչև 1910 թ.:

1910 թ. վերջերին և 1911 թ. գարնանը ամերիկահայ գաղութի նախաձեռնությամբ նշվեց «Արմենիա» թերթի խմբագիր, հրապարակագիր, ազգային և կրթական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական գործունեության և «Արմենիա» թերթի հիմնադրության 25-ամյա հոբելյանը[2]: Ամերիկաբնակ վանեցիները սկզբում որոշել էին այն տոնել «Արմենիա» թերթի 25-ամյակի տոնակատարությունների ժամանակ՝ 1912 թ.: Այդ նպատակով Վանում կազմվել էր հանձնաժողով, որը, սակայն, որոշում է տոնակատարությունը տեղափոխել 1913 թ.՝ նշելու համար գործչի հասարակական գործունեության 40-ամյակի հետ միասին: 1913 թ. հունվարին Վանի Երամյան վարժարանում մեծ հանդիսավորությամբ նշվեց այդ հոբելյանը[3]:

Հետագայում, երբ 1914 թ. մայիսին Մ. Փորթուգալյանի տոնակատարությունը նշվեց նաև Կ. Պոլսի, Բրթի-Շանի թատրոնում՝ պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի և Թաղեաթ փաշայի մասնակցությամբ, Վանից, որպես պատվիրակներ, մասնակցեցին Հ. Երամյանը, Հ. և Փ. Թերլեմեզյանները[4]:

1913 թ. հունիսի 9-ին Վարագավանքում կազմակերպվեց սգոհանդես՝ նվիրված 1896 թ. նահատակված վասպուրականցիների հիշատակին, որին մասնակցում էին երեք հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները և քաղաքի բնակչության մեծագույն մասը: Որոշվեց Վարագավանքում կոթող կանգնեցնել զոհվածների հիշատակին[5]:

---

[1] Արվեստի վաստակավոր գործիչ Վրթանես Ախիկյանի նկարների ցուցահանդես, 1872-1936, Երևան, 1937:

[2] **Շիշմանյան Ռ.**, Բնանկարն ու հայ նկարիչները, սկզբից մինչև սովետական շրջանը, Երևան, 1958, էջ 197:

[3] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 127:

[4] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. Բ., էջ 22:

[5] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 86:

[1] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 151:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 74, թ. 1, «Մշակ», Թիֆլիս, 1911, հունվարի 11, թիվ 4:

[3] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 271-272:

[4] Անդ, էջ 272:

[5] «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 23, թիւ 136:

1913 թ. հոկտեմբերի 12-ին և 13-ին Վանում մեծ խանդավառությամբ նշվեց գրերի գյուտի 1500 և հայ գրքի տպագրության 400-ամյա համազգային հոբելյանները[1]: Այդ առիթով բանախոսություններով հանդես եկան Ե. Ռշտունին, Կ. Աճեմյանը, Յ. Կուլօղլյանը, Խ. Լևոնյանը, Հ. Խորոզյանը, Ա. Սոլախյանը, Մ. Թերլեմեզյանը, Մ. Մինասյանը և ուրիշներ:

Տոնակատարությունների ժամանակ 50 հաստատությունների ներկայացուցիչներից բաղկացած 7 հոգանոց հանձնաժողովի կողմից հանգանակվեց գումար, որը տրամադրվեց պատրիարքարանի Համազգային ֆոնդին[2]: Այդ ընթացքում հրատարակվեցին համիդյան վարչակարգը քննադատող բազմաթիվ աշխատություններ: Գիտական կարևոր նորություն էր Ա.-Դոյի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» աշխատության տպագրումը 1912 թ. Թիֆլիսում, որը մեծ պահանջարկ ունեցավ ինչպես Կովկասում, այնպես էլ՝ Վանի շրջանում[3]:

1913 թ. հոկտեմբերի 20-ին Վանի Արարք եկեղեցում Վանի մտավորականության կողմից, առանց կուսակցական խտրության, նշվեց Սիմոն Զավարյանի սգո հանդեսը: Թեև վանեցիները չէին տեսել նրան, սակայն նա տպավորվել էր որպես մաքուր, անձնվեր գործչի և հմուտ գիտնականի տիպար: Ելույթներ ունեցան Ա. Սոլախյանը (Հնչակյան), Ա. Դարբինյանը (ռամկավար), Մ. Թերլեմեզյանը, Իշխանը, Հ. Կուլօղլյանը (ուսուցիչների կողմից), Արամը և ուրիշներ: Նույն օրը լույս տեսավ «Աշխատանք»-ի բացառիկ համարը՝ նվիրված Ս. Զավարյանի հիշատակին[4]:

1913 թ. դեկտեմբերին Վանի Բարեգործական ընկերության դահլիճում Վանի վիլայեթի մասին բանախոսությամբ հանդես եկավ Հ. Երամյանը, որը, զուրկ լինելով տեսողությունից, հիշողությամբ կարողացավ ներկայացնել հարուստ տեղեկություններ Վանի վիլայեթի, և մասնավորապես, Վան քաղաքի ու նրա ազգաբնակչության տեղագրության, թվաքանակի, բնական հարստությունների, անասնապահության, արհեստների, հաղորդակցության, հարկերի, դատարանների, քաղաքապետության գործունեության, բանկերի, հյուպատոսությունների և կրթության մասին[1]:

Տարբեր թեմաներով դասախոսություններ կարդացին նաև «Աշխատանք» թերթի խմբագիր Համայակ Մանուկյանը[2], պաշնակցականներ Քարմենը և Ա. Վռամյանը[3], հնչակյան Ա. Բրուտյանը, ռամկավար Ա. Դարբինյանը[4] և այլոք:

Վան-Վասպուրականի մշակութային-քաղաքական կյանքում խոշոր իրադարձություն էր նաև թուրքերի կողմից Վանի գրավման 400-ամյակի տոնակատարության անցկացումը, որը պաշտոնապես և հանդիսավորությամբ կազմակերպվեց 1914 թ. սեպտեմբերին՝ Վանի նահանգապետ-կուսակալ Թահսին բեյի հովանավորությամբ[5]:

Հայկական նահանգներից Վասպուրականը միշտ էլ բացառիկ նշանակություն է ունեցել՝ իր ընկերություններով և միություններով:

Վասպուրականի, մանավանդ՝ գյուղական շրջանների մշակութային կյանքի զարգացման գործում որոշակի դեր խաղաց Վասպուրականի մշակութային միությունը: Կազմված լինելով Կ. Պոլսում 1912 թ.՝ միության կենտրոնական վարչությունը գտնվում էր Վանում: Այն իր մասնաճյուղերն ուներ Արտամետում, Ալյուրում և Պագվում: Ցավոք, միությունը, կազմված լինելով մի խումբ արհեստավոր և ուսանող երիտասարդների նախաձեռնությամբ, հանդիպում է վանեցի ունևոր դասակարգի անտարբեր վերաբերմունքին: Միաժամանակ, միության կազմվելը ուժգին արձագանք չգտավ վա-

[1] Մատենադարան, ֆ. 2, Կյուրեղ Սրապյանի արխիվ, ց. 43, թղթ. 82, վավ. 1016, թ. 1, նաև՝ «Կոհակ», Կ.Պոլիս, 1913, հոկտեմբերի 27/9, թիւ 66:

[2] «Աշխատանք», Վան, 1913, նոյեմբերի 6/19, թիւ 39:

[3] Պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան (ՆՊ ԲՄ) թիվ 839, արկղ 1, գ. 68, թ. 1:

[4] «Աշխատանք», Իզմիր, 1913, նոյեմբերի 16/29, թիւ 42:

[1] «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1913, դեկտեմբերի 13, թիւ 279:

[2] «Աշխատանք»,Վան, 1915, հունիսի 20, թիվ 26-225, հունիսի 24, թիւ 27-226:

[3] «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հունվարի 10, թիւ 6:

[4] «Կոհակ», Կ. Պոլիս, 1912, ապրիլի 4/17, թիւ 13:

[5] **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ.Բ., էջ 82:

նում: Վասպուրականի գավառային շրջանների բնակիչները՝ մեծ մասամբ թիմարցիներն ու գավաշցիները, չցանկացան անդամագրվել և օժանդակել միության աշխատանքներին[1]:

Այդ ընկերություններից էր Վասպուրականի Հայ կանանց միությունը, որը ստեղծվել էր 1909 թ. մարտին Վանում՝ Միհրան Թերլեմեզյանի նախաձեռնությամբ[2] և Իսկուհի Խրիմյանի ղեկավարությամբ[3]:

Միությանը կարող էին անդամակցել, «առանց դասակարգի, դաւանանքի ու կուսակցութեան խորութեան», 15 տարեկանից բարձր իգական սեռի բոլոր ներկայացուցիչները, որոնք ընդունում էին միության ծրագիրը, այն է՝ ուսում և կրթություն տարածել կանանց շրջանում: Միությունն ուներ 150-ից ավելի անդամներ և 7 հոգուց բաղկացած մի վարչություն, որը վարում էր միության գործերը: Կանանց լուսավորելու նպատակով՝ միությունը կազմակերպում էր տարբեր թեմաներով դասախոսություններ: Միությունը գործեց մինչև 1915 թ. ջարդերը[4] և իր նախկին անդամների ջանքերով 1916 թ. մարտին վերակազմվեց Երևանում՝ միաժամանակ ապահովելով Վասպուրականի հայուհիների տնտեսական, մտավոր և բարոյական զարգացումը: 1916 թ. այն ուներ 65 անդամներ և 168 աշակերտներ, որոնք սովորում էին միության բացած արհեստանոցում:

Միության սկզբնական դրամագլուխը եղել է միության անդամների մուտքի վճարը՝ մեկական ռուբլի, և Եղբայրական օգնության նախագահ Խորեն եպիսկոպոսի հատկացրած 200 ռ. գումարը, որոնցով գնվել են անհրաժեշտ նյութեր և հոգացվել են նախնական ծախսերը: Հետագայում Եղբայրական օգնության կոմիտեն տրամադրում է ևս 800 ռ. գումար[5]:

[1] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1914, հուլիսի 4, թիւ 1552:

[2] Թերլեմեզյանի տոհմ (մի տոհմի պատմություն), Երևան, 2010, էջ 22:

[3] **Գազանճյան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 146:

[4] «Հորիզոն», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 11, թիւ 33:

[5] «Աշխատանք», Երեւան, 1916, նոյեմբերի 16, թիւ 42:

Եթե միության վերակազմության գլխավոր սատարը եղել է Եղբայրական օգնության կոմիտեն, ապա նրանց ձեռնարկներին ուժ ու եռանդ են հաղորդել անգլիացի հայասերները՝ Հարոլդ Պըքսթոնը և Էմ. Ռոբինզոնը, որոնք նվիրել էին 4, 030 ռ. և 3, 200 ռ. գումար[1]: Այս նվիրատվությունների կազմակերպման գործում կարևոր բաժին է ունեցել Արշակ Սափրաստյանը, որը միշտ ջանացել է նրանց ուշադրությունը հրավիրել փախստական հայ կնոջ անմխիթար կացության վրա և, միության ձեռագործներից մի քանի նմուշներ իր հետ Լոնդոն տանելով անգլիացիներին ծանոթացրել է հայ փախստականների շնորհքին:

Միությանը օժանդակել է նաև Մոսկվայի Հայ կանանց ընկերությունը, որը Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսի միջոցով 1916 թ. Վասպուրականի Հայ կանանց միությանն է ուղարկում 100 ռ.[2]:

Միությունը կարողացել է միայն ձեռագործի արհեստանոց բացել Երևանի Գայանյան դպրոցի շենքում և Թիֆլիսում[3]:

Հայկական պատանեկան բարեսիրական ընկերակցությունը ստեղծվել էր 1902 թ. Վանում՝ մի խումբ հայ պատանիների նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով բարելավել դավառների կրթական անմխիթար վիճակը[4]:

Գործում էր նաև «Ազատության լույս» անունով դաշնակցական ակումբը, որը դառնում է կուսակցական և ոչ կուսակցական կենտրոնատեղի՝ երիտասարդության և գավառահայության համար, որտեղ հնարավոր էր «պահ մը ապրելու նրուան հրճուանքը»: Այստեղ էին կատարվում դաշնակցության պաշտոնական ընդունելությունները, ժողովները և խորհրդակցությունները[5]:

[1] «Աշխատանք», Երեւան, 1916, նոյեմբերի 16, թիվ 43:

[2] ՀԱԱ ֆ. 57, ց. 3, գ. 100, թ. 1:

[3] «Աշխատանք», Երեւան, 1916, նոյեմբերի 19, թիւ 43:

[4] ՀԱԱ ֆ. 227, ց. 1, գ. 700, թ. 35:

[5] **Չափազյան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 2-րդ, Պէյրութ, 1952, էջ 21:

1.2. Նորսերնդական շարժումը Վանում և Հայ Եկեղեցին

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և հաստատված հարաբերական «ազատությունը» որոշ աչխուժացում, միաժամանակ՝ սրացում մտցրեցին Վանի նահանգի ինչպես քաղաքական գործունեության, այնպես էլ հասարակական ընթացիկ հարաբերությունների մեջ:

Բանն այն էր, որ հեղաշրջման նախօրյակին Վանում տարածում էր գտել «դաշնակցութեան ձեռքով պատրաստուած» և իր բնույթով համայնավարական նորսերնդական շարժումը, որն օգտագործվում էր արևմտահայ հասարակության ավանդապահության և հայ հոգևորականության դեմ պայքարում[1] *և, որը «կը կացինահարեր մեր բարի ժողովրդին ընկերային ու բարոյական կեանքը»*[2]*:*

Շարժումն այդպես էր կոչվում, որովհետև նրա գաղափարակից «խելակորոյս գպրոցական պատանիները»-ը հետևում էին 1906 թ. նոյեմբերից մինչև 1908 թ. Վանում հրատարակվող «Նոր սերունդ»[3] *երկշաբաթյա խմորատիպ թերթի գաղափարներին, որը լույս տեսավ ընդամենը 15 ամիս: Այն իր ժամանակին մեծ աղմուկ հանեց, քանի որ այն, ըստ նախկին նորսերնդական Գալուստ Էյնաթյանի, «անխնայ կը խարազանէր հայ ժողովրդի մէջ արմատացած յոռի սովորութիւնները, ընտանեկան սեղմումները և մասնաւորապէս գպրոցներու մէջ տիրող բռնութիւններն ու կաշկանդումները»*[4]*:*

[1] **Համբարյան Ա.**, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը, Երևան, 1979, էջ 615:

[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 153:

[3] Համանուն թերթ է հրատարակվել նաև Թիֆլիսում 1917 թ. ապրիլից մինչև դեկտեմբեր, որը հանդիսացել է Կովկասյան ընդհանուր աշակերտական միության հայկական բաժանմունքի պաշտոնաթերթը: Այն պայքարել է Կովկասի բազմազգ աշակերտության միասնության համար՝ ընդդեմ ազգայնականության և շովինիզմի: Թերթի շուրջը համախմբված աշակերտներից շատերը հետագայում գործել են Թիֆլիսի և Երևանի «Սպարտակ» կազմակերպությունում: Տես **Խանջյան Ա.**, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1963, էջ 462:

[4] **Էյնաթեան Գ.**, Հ.Յ.Դ. Վանի երիտասարդութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1951, թիւ 5, էջ 28:

«Նորսերնդական» շարժումը Վ. Փափազյանի (Կոմսի) կարծիքով հետևանք էր դաշնակցականներ՝ Սարգիս Բարսեղյանի (Նիկոլ, Պողոս Օդաբաշյան) և Արամ Մանուկյանի նորամուծության[1]*:*

Սակայն, ըստ դաշնակցական այլ սկզբնաղբյուրների[2]*, շարժումը սկզբնավորվել էր 1906 թ. աշնանը՝ Վան ժամանած երիտասարդ դաշնակցականներ Վազգենի և Զավենի (Լորդ) կողմից, որոնց մասին Արամը գրում էր, որ «դեռ կաթը բերաններին էր»*[3]*: Միաժամանակ, նորսերնդականներին նա անվանում էր հեղափոխության համար «վստահելի», «լավ տղաներ» և «...մեր հաջորդներ», որոնց վրա կարելի էր հույս դնել*[4]*: Այդպիսի «լավ» տղաներից էր Տաճատ Թերլեմեզյանը, որն ավելին արեց, քան՝ փորձառու ահաբեկիչներն ու դիվանական խմբերը, և 1908 թ. սպանեց մատնիչ Դավոյին*[5]*:*

Նրանցից Սարգիսը՝ իրեն հատուկ եռանդով, ձեռնամուխ էր եղել քարոզչական աշխատանքի կազմակերպմանը: Ռուսական հեղափոխության և ձեռք բերած չվեյցարական կրթության ազդեցության տակ, նա պարբերաբար դասախոսություններ էր կարդում հասարակական, պատմական և կենկերվարական գիտություններից[6]*:*

Վազգենն առանձնանում էր իր կծու և անվախ քննադատությամբ, իսկ Զավենը (Լորդ)՝ իր բուռն, անկեղծ, խելացի խառնվածքով և պատրաստվածությամբ. ըստ Արամի՝ Երևանից Սալմաստի վրայով անցնելով Վան՝ մեծ դեր էր կատարել Վանի երիտասարդության շրջանում[7]*:*

[1] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. Ի-ին, Պոսթըն, 1950, էջ 358, 485-486:

[2] **Տէր-Մինասեան Ռ.**, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Ե., Տարօնէն Թիֆլիս (1908-1909), Լօս Անճէլըս, 1951, էջ 299 և 51:

[3] Արամը մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 374:

[4] **Տէր-Մինասեան Ռ.**, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), Պեյրութ, 2004, էջ 240, 243:

[5] Անդ, էջ 243:

[6] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. Ի-ին էջ 481:

[7] Արամը մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 376:

Այն բանից հետո, երբ նորսերնդականների հացը չընդունվեց Լահեի (Համագայի) կոնֆերանսում, նրանք երդվեցին վրեժխնդիր լինել իրենց երկրում արմատավորված «եվրոպական» բարքերից: Նրանց գլխավոր նպատակն էր՝ սեփական ազգի միջից ջնջել Աստծո և կրոնական յուրաքանչյուր գաղափար, որը կխանգարեր հեղափոխության իրականացմանը:

Այդ էր պատճառը, որ 1907 թ. դեկտեմբերին նրանք վերջնագիր-նամակ ուղղեցին Վանի միսիոներական դպրոցի ղեկավարությանը, իսկ 1908 թ. հունվարի 17-ին կոտրեցին դպրոցի պատուհանները, որի համար Վանի ֆրանսիական հյուպատոսը բողոք ներկայացրեց Վանի նահանգապետին[1]:

«Նորսերնդական» շարժման տարածումը զուգադիպեց Կովկասում լույս տեսած և երկիր ներմուծված ընկերվարական-հեղափոխական առատ գրականության տարածման, թերուս երիտասարդների չրջանում մտավորականների և ուսանողների կողմից կազմակերպված դասախոսությունների անցկացման հետ: «Մեր տրամադրութեան տակն էր Հ. Յ. Դ. հարուստ գրադարանը, որ ունէր 5000-է աւելի գիրքեր, - վերհիշում է Գալուստ Էյնաթյանը: - Ամէն չաբթու ալ կանոնաւորաբար արտասահմանէն կը հասնէին թերթեր և նոր հրատարակութիւններ: Այդ գրականութիւնը կը բաժնէինք կանոնաւոր կերպով: Այնպէս որ, երիտասարդութիւնը յեղափոխական գրականութեան ընթերցումով և պարբերական դասախօսութիւններով կը դաստիարակուէր՝ դառնալու համար մեր յեղափոխական գործունէութեան ապագայ ղեկավարներ և գործիչներ»[2]:

Այդ նույն չրջանում էր, որ էջմիածնի ճեմարանում ուսանող և ոգևորված, եռանդով լեցուն ու հայրենիքին ծառայելու ցանկությամբ տոգորված տասնյակ վասպուրականցի երիտասարդներ, որոնց թվում էին Համազասպ Բաղեչցյանը, Ղևոնդ Մելոյանը, Արտակ Դարբինյանը, Հայրապետ Պանիրյանը, Թոխմախյան եղբայրները, Համբարձում Հացագործյանը, Հայկակ Կոսոյանը, Միհրան Թերլեմեզյանը, Վարազդատ Տերոյանը, Արմենակ Մաքսապետյանը, վերադարձան Վան և լծվեցին նրա կրթական-հեղափոխական կենսական գործի կազմակերպմանը, քանի որ «մտածումներու վրայ առաջ եկած յեղափոխութիւնը նոյնքան ուժեղ եղաւ, որքան զէնքին ծառայելու հաւատամքը»[1]: Ինչպես Ա. Փոխարյանն է նշում. «...պրոպագանդի համար գործադրված զանազան ձեռնարկումներ, թատրոն-ներկայացում, ժողով, օրակարգ, կարծիքների փոխանակություն և այլն, ծառայում էին հասունացնելու և խորացնելու հեղափոխական գիտակցությունն ու դաստիարակությունը հայ ժողովրդի մեջ»[2]:

Գաղափարական քարոզչությանը նպաստեց նաև վանեցու որոնող, հարցամոլ, հափշտակվող և ծայրահեղությունների գնացող բնավորությունը[3]: Դպրոցն ու հեղափոխությունը՝ մեկը մյուսին լրացնելով, ձևավորեցին մի սերունդ, որը որոշակի գիտակցություն ու ըմբռնում ուներ կրթական, հանրային, քաղաքական, տնտեսական, ընկերային-հեղափոխական հարցերի մասին:

Նորսերնդականները, որոնց թիվը Վանում չէր անցնում 30-ը, երկու-երեք տարվա ընթացքում ավեցին երեք սերունդ, որոնցից առաջինը՝ 18-20 տարեկաններն էին, երկրորդը՝ 16-18, իսկ երրորդը՝ 14-16[4]:

Նրանց մեջ էին Վանի Երամյան և Կեդրոնական վարժարաններն ավարտած նորահաս երիտասարդներ՝ Հմայակ Խոոդյան-Մանուկյանը (խմբագիր), Մանվել և Բարունակ Կապուտիկյանները, Գալուստ Էյնաթյանը, Արամ Սաֆրաստյանը, Խոսրով Խանջյանը, ավելի կրտսեր սերնդի ներկայա-

[1] A cura di Georges-Henri Ruyssen SJ, La questione Armenia, vol. III, 1908-1925, Documenti dell' Archivio della longregazione per le Chiese Orientali, (ACO), Roma, 2014, p. 23.

[2] **Էյնաթեան Գ.**, Յ.Յ.Դ. Վանի երիտասարդութիւնը, էջ 28:

[1] Յիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն, Յիւս. Ամերիկա, 1945, էջ 40:

[2] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 14:

[3] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 486:

[4] Յիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն, էջ 40:

ցուցիչներ՝ Ներսես Պասյանը, Պարգև Պանիրյանը, Մանուկ Ասլանյանը, Տիգրան Զրբաշյանը, Արտաշես Հացագործյան-Վանարյանը և ուրիշներ[1]: Նրանք հպարտությամբ նշում էին, որ հասարակությունը «կը բիւրեղացնենք»[2]:

Նորսերնդականությունը Վանը բաժանել էր երկու մասի և իր արմատներն էր գցել Վանի, մասամբ նաև՝ Շատախի և Աղթամարի արտադպրոցական՝ «գրոց-բրոց» պատանեկության, և Երամյան ու Կեդրոնական միջնակարգ դպրոցների նորահաս աշակերտության շրջանում, որոնք կարիք ունեին մտավոր ու հոգևոր աննդի, ազատական գաղափարների և պահանջ էին զգում՝ իրենց մտքերը, համոզմունքներն ու տեսակետներն արտահայտելու, քանի որ հեղափոխական գործնական ձեռնարկները չէին կարող հագուրդ տալ նրանց երիտասարդական հախուռն ձգտումներին և որոնումներին:

Արդյունքում՝ Վանում, Աղթամարում ու Շատախում նրանք սկսեցին հրատարակել «Կռիվ», «Տիգրիս», «Ծովակ», «Հայացք», «Կոչնակ», «Երկունք», «Ձգտում» և «Գավառի ձայն» խմորատիպ թերթերը, որոնց բոլորի նպատակը, Ա. Փոխարյանի համոզմամբ, «մի ուժեղ հեղաշրջում առաջ բերել իր շրջապատի քարացած համոզումների, նախապաշարմունքների ու հետադիմական խավարի մեջ»[3]:

Կովկասյան հեղափոխական իրադարձությունների ազդեցության տակ գտնվող, գրքային պատկերացումներով առաջնորդվող և տեսական որոշակի հայացքներով զինված այդ գործիչներն իրենց ապագային բնույթ կրող ծայրահեղ ու անհեթեթության հասնող սոցիալ-անիշխանական դավանանքը, համայնավարական և հակակրոնական ողջ գաղափարներն ու պատգամները փորձում էին տարածել արևմտահայ իրականության մեջ՝ ներարկելով պահպանողականության դեմ պայքարի ոգի: Նրանք ցանկանում էին ձերբազատվել «պայմանագրական յետամնաց կեանքէն», նահապետական-

[1] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 486:

[2] **Տէր-Մինասեան Ռ.**, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 242:

[3] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 14:

ավանդական ըմբռնումներից, ազգային սովորույթներից և նախապաշարմունքներից. մի բան, որը չէր համապատասխանում ո՛չ իրականությանը, և ո՛չ էլ Վանի հասարակական-քաղաքական պայմաններին: Արդյունքում՝ «կովկասահայ յեղափոխական գրականութիւնը արթնացուցած ու ելեքտրականացուցած էր վանեցի երիտասարդութիւնն ու պատանեկութիւնը» և Վանի աշակերտությունը եվրոպական ուսանողության «չափանիշներով» «գաղափարի փոթրիկներու ենթարկուեցաւ»[1]:

Նորսերնդականները, որոնք 1909 թ. հրատարակում էին «Հորիզանք» թերթը, հասարակական կյանքի խթանիչներ էին համարում սոցիալ-տնտեսական գործոնները, և գտնում էին, որ «հեղափոխութիւնն առանց նպատակի և հեղինակութեան» կարգախոսը և հեղափոխական ձեռնարկումները պետք է ծառայեին համամարդկային նպատակներին:

Ըստ նորսերնդականների՝ ընկերային և տնտեսական գործոններն էին, որ տիրապետում էին մարդկության կյանքի ընթացքի վրա, որոնք անհրաժեշտ էր փոխել: Քաղաքական նպատակներն ու հեղափոխական ձեռնարկները միջոցներ էին միայն՝ հասնելու համամարդկային բարձր նպատակին[2]:

Նորսերնդականներն այսպես էին ներկայացնում իրենց պաղափարախոսության համառոտ էությունը. «Այն, որ կանգնած է և անկարող շարժուելու ժամանակի պահանջը ըմբռնելով, ան հին սերունդ է, անկախ իր տարիքէն և ծառայութիւններէն. ան որ առանց կաշկանդումի, առանց նախապաշարումներու առաջ կ'երթայ, այդ Նոր Սերունդն է: Այդ սերունդին ուրեմն կրնան անդամ համարուիլ և տարիքաւորները»:

«Ով էլ որ լինի, երբ մեռաւ, կը թաղեն և քար կը քաշեն վրան. այդ անշարժ քարին այլևս չեն կապուիր, քանի որ պէտք է առաջ գնալ»:

[1] Յիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտին, էջ 40:

[2] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 486:

«Մեղրը, կաթը անհրաժեշտութիւն են մեր աճման համար, բայց երբ անոնք հատնին, այլևս դատարկ ամանները աղբանոց կը նետեն»[1]:

Նրանք հանդես էին գալիս կրոնի, եկեղեցու, բարոյականության, ընտանեկան ավանդույթների, բարքերի, ծնողների, հարուստների, ուսուցիչների դեմ՝ կոչ անելով անսահմանափակ ազատություն, ընտանիքի վերացում, և «ազատ սեր»[2]: Նորսերնդականների կարծիքով՝ պետական, կրոնական, դասակարգային և ընտանեկան սահմանները մարդկությանը կաշկանդող շղթաներ էին, որոնք պետք էր ոչնչացնել[3]: Ըստ նրանց՝ կրոնը, եկեղեցական ավանդույթները անդամալուծող նախապաշարումներ էին, իսկ կղերականները՝ ձրիակեր պորտաբույծներ:

Ծնողներին մատուցած հարգանքը հատուկ է ստրուկներին, քանի որ մարդն անկաշկանդ է, իսկ նրա ազատությունը՝ անսահման:

Նորսերնդական «անբարոյական խառնակիչներ»-ը գտնում էին, որ պետք էր անկաշկանդ թողնել սիրո գաղափարը՝ արհամարհելով ինչպես արյունակցական, այնպես էլ՝ ազգակցական կապերը: Բանը հասավ այնտեղ, որ նորսերնդականներին համախոհ Ղ. Մելոյանը գրեց «Մայրը» խորագրով «ախտաբանական մանրավէպ»-ը, որտեղ տղան սիրահարվում է իր մորը[4]:

Կարծում ենք, որ սիրո ազատության հարցում նորսերնդական գաղափարները կարծես թե հարում էին 4-5-րդ դդ. Հայաստանում տարածված մծղնեական աղանդավորական չարժմանը և գրեթե ամբողջությամբ կրկնում էին այն: Նրանք՝ Ա. Եկարյանի համոզմամբ, «կատարեալ այլասերած անիշխանականներ» էին, որոնց մոտ չէին պահպանվել, ինչպես ծնողի և զավակի, այնպես էլ քույր ու եղբոր հարաբերությունները ու «անբարոյ կենակցութիւնները յաճախակ դարձեր էին անոնց միջև...»[1]:

Կոմսը և Հ. Երամյանը ևս անբարոյականություն էին համարում ազատությունը՝ սիրո բնագավառում, և սեռական կրքերի սանձարձակությունը՝ առանց արյունակցականության և այլ պայմանականություններ հաշվի առնելու[2]: Սակայն Մուրինը, որը հաճախ հիանում էր նորսերնդականներով, գտնում էր, որ նորսերնդականները «ազատ սէր ըսելով՝ կը հասկնային անհատներու ազատ կամքով դաշնակցութիւնը, հաւատարմութեամբ միացումը իրենց ազնիւ խօսքի վրայ»[3]:

Նորսերնդականները կարողացան թափանցել երիտասարդ արհեստավորների մեջ՝ առաջ քաշելով Վանում արհեստակցական միություններ ստեղծելու անհրաժեշտությունը և չհամագործողների դեմ պայքարելու պահանջը[4] կոչ անելով ոչնչացնել հին և «կեղեքող» դասերն ու հեղինակությունները:

Նորսերնդականները դպրոցական կարգապահությունը համարում էին բռնատիրություն: Նրանք ցույցեր էին կազմակերպում դպրոցներում և ձեռք բարձրացնում իրենց ուսուցիչների ու տնօրենների վրա: Այդպիսի ուսուցիչներից էին Գրիգոր Աճեմյանը և Հովհաննես Գուլողյանը, որոնցից առաջինը սպանվեց նորսերնդականների կողմից[5]: Արճակում նրանք բռնությամբ ներխուժեցին դպրոց և իրականացրեցին իրենց քարոզչությունը:

Ի՞նչ ազատության՝ այդ հոսանքի ներկայացուցիչները հաճախ ընկնում էին ծայրահեղությունների մեջ և վիրավորում էին ժողովրդի կրոնական զգացմունք-

[1] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 242-243:

[2] Տէր-Մինասեան Ռ., Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Դ., էջ 241-242:

[3] Անդ, էջ 242:

[4] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 489:

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 154:

[2] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հտ 1-ին, էջ 486, նաև՝ Երամյան Հ., Յուշարձան, հտ. Բ., էջ 61:

[3] Տէր-Մինասեան Ռ., Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Դ., էջ 243:

[4] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 486, նաև՝ Երամյան Հ., Յուշարձան, հտ. Բ., էջ 490:

[5] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 153-154:

ները՝ փորձելով ոտնատակ անել նրա ավանդական բարքերն ու սովորույթները:

Վանում տիրող անկրոն և անբարո այս վիճակի դեմ բողոքում էին թեմականները, որի մասին Վանի առաջնորդական տեղապահ Զավեն ծայրագույն վարդապետ Տեր-Եղիյանը հիշում է. «Շրջեցէ՛ք գիւղ և քաղաք և տեսէք մեր երիտասարդութեան թեթևսոլիկութիւնը և մանաւանդ բարոյականին անկումը, տեսէք մեր դպրոցական անմեղուկ տղոց մտքին ու զգացմանց ապականումը, հնազանդութեան և կարգապահութեան ոգիին վերացումը, ամօթխածութեան ջնջումը, տեսէք թէ ինչպէ՞ս փոքրիկ մանուկը, կարհամարհէ ծնողաց և դաստիարակաց ամէն հրաման... ինչպէս կ՛անսաստէ անիկայ ծնողքին և հրապարակաւ կը ծեծէ իր դաստիարակը ...»[1]:

Կամ ինչպես Ա. Եկարյանն է մատնանշում. «իմ նախկին ընկերներէս մին, վերջէն քահանայցած և վերակոչուած Գէորգ քհնյ. Շաքարեան, օր մը հետևեալը ըսաւ, այս մասին. - Բարեկա՛մ, Վանը առաջուանը չէ մնացած, չա՛տ է փոխուած, այլանդակուած: Արարք թաղամասի մայրերն ու մեծ մայրերը, որպէսզի իրենց եկեղեցիին քահանաներէն չճանչցուին, ինձի եկան խոստովանելու իրենց նորատի աղջկանց գործած մեղքերու մասին - ապօրէն կենակցութեան և վիժուումի դէպքեր, թիւով 120 կարճ ատենի մը մէջ: Իբրև քահանայ, շարունակեց Տէր Հայրը , մեղանչում մըն է այս մասին խօսիլը, բայց քեզի կ՛ըսեմ ասիկա, որ ճար մը խորհիլք... Ես մնացի ափ ի բերան: Թշնամիին ընկել չկրցածը՝ մեր ընտանեկան դրութեան հիմը քանդելու համար, մե՞նք պիտի ընէինք: Ալ ինչո՞վ մեղաւոր էր ծանօթ Մուսա Պէկը...»[2]:

Բռնության չնորհիվ նորսերնդականները ստիպեցին, որպեսզի Կ. Պոլսի Հայոց պատրիարքին կից գործող խորհուրդը թուլյատրի եկեղեցիներում ժողովներ ու ցույցեր գումարել, անցկացնել դասախոսություններ, համերգներ և թատերական ներկայացումները՝ պայմանով, որ նրանք այլևս հանդես

[1] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 12/25, թիւ 1449, նաև՝ «Ծիածան», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 15/28, թիւ 12:

[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 154:

չպան հայ լուսավորչական եկեղեցու և կրոնի դեմ: Սակայն նորսերնդականները հաճախ խախտում էին իրենց խոստումը և վիրավորում ժողովրդի կրոնական զգացմունքները: Նորսերնդականներից մեկի մասին Ա. Դարբինյանը հիշում է. «Ասոնցմէ մէկը՝ Վազգէն, կիրակի օր մը, երբ ես Վարագէն քաղաք իջած էի, գացեր էր այնտեղ, իր հրաշագործութիւնն այնտեղ ալ ցուցնելու: Վերակացու Պ. Պետրոսի առաջնորդութեամբ վանքին մէջ իր պաշտոներն ընելէ յետոյ Վազգէն եկեղեցին կը մտնէ և սեղանին վրայ բարձրանալով՝ սկիհը կը վերցնէ իբր խաղալիք մը աշակերտներուն ցուցնելու: Պ. Պետրոս, այդ ծայրաստիճան պաղարիւն մարդը, մէկէն բորբոքով՝ նոյնպէս սեղան կը բարձրանայ և զօրաւոր ապտակ մը կ՛իջեցնէ իմաստակին երեսին: Վազգէն խայտառակուած, մէկ շունչով մինչև քաղաք կը փախչի»[1]:

1909 թ. փետրվարի 15-ին Վանի կենտրոնական վարժարանի «Ազատության լույս» ընթերցատան մեջ Հայ կոմիտեի կողմից կազմակերպված՝ «Ազգային սահմանադրությունը և ներքին կուլտուրական ավտոնոմիան» թեմայով դասախոսությունը դիտվեց որպես «անաստվածության» քարոզ և պատճառ դարձավ, որպեսզի Վանում, նախկին վարչակարգի ուժերի սադրանքով, տարերային պայքար հրահրվի կրոնի անարգանքի պատրվակով մեղադրվող «անաստված» «նորսերնդական» շարժման երիտասարդ անդամների դեմ: Հայ կոմիտեի ներկայացուցիչներին մի կերպ հաջողվում է սպառնալիքներով ցրել ժողովրդին, որոնք, «ի խաչ հան զդա...» վանկարկելով, հետապնդում էին երկու ատենախոսներին: Դրությունն այնքան է լարվում, որ թուրքական իշխանությունները ապահովության համար քաղաք են բերում «զապթիաներ»՝ թուրք ոստիկաններ: Հաջորդ օրը Վանում հալածանք սկսվեց «նորսերնդական» երիտասարդների և պատանիների դեմ: Ժամանակի մամուլի բնորոշմամբ՝ «կաթոլիկական ինկվիզիցիան յանկարծ կարծես յարութիւն առաւ»,

[1] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890 էն 1940, էջ 169:

փողոցներում կանգնեցնելով բոլոր կասկածյալ պատանիներին՝ հարցնում էին. «Աստուած կա՞յ, թէ՝ չէ՛», «ինչէն յայտնի է, որ կը կհաւատաս», «խաչ հան» և այլն: Բավական էր մի փոքր ուշացում այս հարցումների պատասխանին, որ «բռունցքների և փայտերի տակ փրռուէր պատանին»[1]: Այս ձևով տասնյակ պատանիներ և երիտասարդներ Վանում ծեծի ենթարկվեցին:

Բացի այդ, ժողովուրդը հավաքվում է Դաշնակցության՝ Վանի ակումբի առաջ՝ աղաղակելով՝ «կլուբը անաստուածութեան բոյն է, թէ գրքերը պէտք է վառենք»[2]: Ա. Վռամյանի և Ծուռ Դավիթի (Դավիթ Թումանյան) հորդորներն ու սպառնալիքները զուր են անցնում՝ ժողովրդին ցրելու համար: Վրա հասած ոստիկանությունը ցրում է ժողովրդին, մի քանիսին ձերբակալում, իսկ գործը հանձնում է Հայոց առաջնորդարանին:

Նույն օրը ժողովուրդը հավաքվեց Ս. Նշան եկեղեցում և ժողով գումարելով ընտրեց յոթ հոգուց բաղկացած, մի հանձնաժողով, որը պետք է պատժեր երեք «անհավատ» ուսուցիչներին: «Տեսարանը, - գրում է Արամը, - յիշեցնում է Հռոմի մէջ 1,600 թուին տեղի ունեցած Ջօրդանօ Բրունօի դատը: Խեղճ վանեցի պատանիները, առանց Բրունօ լինելու, նրա պէս անմահացան այդ օրը...»[3]: Հանձնաժողովի պահանջով Առաջնորդարանը երեք ուսուցիչներին զրկեց ազգային իրավունքից և ազատեց աշխատանքից՝ մինչև համապատասխան քննություն անցկացումը:

Հակակրոնական այս շարժումը չսահմանափակվեց միայն քաղաքով: Այն տարածվեց նաև գավառներում: Այսպես, այս դեպքերի ազդեցության տակ Արճակի գյուղացիները խուժում են իրենց դպրոց, ծեծում ներսեսյանավարտ ուսուցիչներին և փակում դպրոցը[4]:

[1] «Գործ», Թիֆլիս, 1909, մարտի 26, թիւ 64:

[2] «Դրօշակ», Ժնև, 1909, յունիս, թիւ 6, էջ 151:

[3] Անդ:

[4] «Գործ», Թիֆլիս, 1909, մարտի 26, թիւ 64:

Դեռ ավելին, կրոնական բողոքի այդ ալիքը փոխանցվեց նաև Թուրքերին, որի գլխավոր հրահրողը Վանի իթթիհատական կոմիտեն էր. վերջինս հարաբերությունները դյուրին չէին տեղի դաշնակցական կոմիտեի հետ: Վերջինիս դեմ սկսած շարժմանը դիմակայելու համար էր, որ 1909 թ. փետրվարի 22-ին Վանի Նորաշենի եկեղեցում հրավիրված հանրահավաքի ժամանակ բանախոսները՝ Ա. Վռամյանը, Արամը և Մ. Թերլեմեզյանը ժողովրդին բացատրեցին, որ, ըստ էության, հրահրվել է հայ և թուրք ժողովուրդների անգիտակից անհատների կրոնամոլական բնազդները և «վտանգվել է երկու դրացի ժողովուրդների բարեշահված հարաբերությունները»: Հետևաբար, «յանուն ընդհանուր հայրենիքի (խոսքը՝ Օսմանյան կայսրության մասին է, - Ա. Հ.) բարօրութեան», կոչ արվեց ամրապնդել համերաշխությունը երկու ժողովուրդների միջև[1]:

1909 թ. ապրիլին նորսերնդականները Աղթամարում արգելեցին քահանաների ձեռնադրումը՝ հայտարարելով, որ «մեզի ո՛չ եկեղեցի և ո՛չ եկեղեցական պետք է»: Ապա ծաղրուծանակի ենթարկեցին եպիսկոպոսին, որը «չըկարողանալով անոնց դիմացն առնել, լալով իր խուցը քաշված է և ընծայացուներն առանց ձեռնադրվելու քաղաք եկած են»[2]:

Նորսերնդականները դժգոհ էին նաև իրենց հարազատ ՀՅԴ-ից, քանի որ կուսակցությունը ճնշում էր իրենց ազատ գործելակերպը, արգելում էր աշակերտներին մտնել կուսակցության մեջ և պաշտպանում էր ժողովրդական ավանդույթները:

Նորսերնդականները գործում էին հախուռն և բիրտ եղանակով, «անոր գործը եղաւ... փայտ ու բռունցք»[3]: Ահա թե ինչպես է ներկայացնում նորսերնդականների գործելաոճը նորսերնդական Արսենը. «Կաթոլիկ Քոյրերու դպրոցին մէջ «մեր աղջիկներուն» արտաքսումի խօ՞սք ըրած են, գիշերը

[1] «Գործ», Թիֆլիս, 1909, մարտի 26, թիւ 64:

[2] «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1909, ապրիլի 6, թիւ 3798:

[3] Յիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն, էջ 40:

Քոյրերու և Հայրերու դպրոցներու ապակիները ջարդ ու փշուր կ'ըլլային: Ուսուցիչ Գրիգոր Ահէմեան մեր «տղոց-աղջիկներուն» սպառնագին լեզո՞ւ գործածած է. իրիկուն մը հեղիկ Տաճատի տփոցին կ'ենթարկուէր, որ կը գրաւէր նահանոր գրպանի Սմիթ ատրճանակը»[1]:

Նորսերնդականների հայացքների մեջ նկատվում էր էջմիածնի Գևորգյան ճեմարանի, Թիֆլիսի, Բաքվի և Մոսկվայի երիտասարդության միտիկ ոգին՝ «պատճառների պատճառը» գտնելու մղումը, որը որևէ առնչություն չուներ իսկական ազատության ու առաջադիմության հետ: Հանդես գալով փրփրած ճառերով, վեճերով և Մ. Գորկու ու Լ. Տոլստոյի ձևերով (հագուստը կապկելով)՝ նրանց բնորոշ էր աշխատելու, որոնելու և ուսումնասիրելու կամքն ու տենչանքը: Նրանց մեջ քարացած և մարմնավորված էին իրենց ուսուցիչ Համազասպի «ինչո՞ւ, ինչո՞ւ»-ները: Նրանք կարդացել և լսել էին այն ամենը, ինչ որ խոսում էին՝ մեջբերելով փիլիսոփաներից, պատմաբաններից և հեղինակներից (Մարքսից, Էնգելսից, Նեչաևից, Բակունինից, Ժորեսից, Պիեռ Քիառից): Նրանք կուզեին ամեն ինչ հասկնալ, «թէև հասկնալու կարողութիւնը անոնց կը պակսէր իրենց մակերեսային ծանօթութեանց պատճառով...: Պարզ էր որ անոնց համար բոլոր հեղինակութիւնները առ ոչինչ էին»: Ինչպես Ռուբենն է հիշում. - Մոքիս մէջ կ'ըսեի՝ վա՛յ քեզի, Արամ»[2]:

Չնայած Ա. Ասրյանը փորձում է արդարացնել Արամի ծայրահեղականությունը նորսերնդականության հայացքների պաշտպանության հարցում[3], սակայն իրողություն է, որ նորսերնդականներին ընդունում էին միայն Արամը, Սարգիսը և Ղ. Մելոյանը[4]: Այն բանից հետո, երբ Թիմարի չրջանի

[1] Յիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն, էջ 40-41:

[2] **Տէր-Մինասեան Ռ.**, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Դ., էջ 242:

[3] **Ասրյան Ա.**, Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2005, էջ 50:

[4] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 489, 508:

գյուղերից մեկում երիտասարդ Մարգարը նորսերնդականության աղդեցության տակ սպանում է իր հորը, նա ստանում է Արամի օժանդականությունը և խուսափում պատասխանատվությունից: Ա. Թերզիբաշյանը հայրասպանության համար հանդիմանում է Արամին՝ նշելով, որ «անհատական հանդամանքը. միշտ ալ դուք իբր միջոց գործածած էք չարիքները սքօղելու համար...»[1]:

Այդուհանդերձ, Արամը Զավենին զգուշացնում էր, որ համայնավարությունը արևմտահայ իրականության մեջ ամբողջովին ներդնելու համար անհրաժեշտ էին համապատասխան պայմաններ: Միաժամանակ նա գտնում էր, որ հասարակական մեծ ակտիվություն դրսևորող, հեղափոխական գործին նվիրված նորսերնդականների ծայրահեղ հայացքները ժամանակի ընթացքում կհարթվեին, և նրանք կդառնային հեղափոխությանը պիտանի տարրեր[2]: Փորձելով գնահատել նորսերնդականների հետ ունեցած հանդիպումից ստացված իր առաջին տպավորությունը՝ Եփրեմ Սարգսյանը վկայում է. «Վատ բան չէի տեսնում, համաձայն էի, երիտասարդութիւնը ամէն տեղ արժանի է քաջալերանքի և գնահատութեան»[3]: Հետագայում դաշնակցական մամուլը կնշեր, որ «պայքար մը, որ իր աչք ծակող թերութիւններով մէկտեղ, Վանի կուսակցական լաւագոյն փոքրամասնութիւնը ստեղծեց»[4]:

Ռուբենը նորսերնդականներին անվանում էր «անսանձ բուռակներու երամ»[5]: Իսկ Վ. Փափազյանն էլ ստիպված խոստովանում էր, թե Վասպուրականի դաշնակցական ղեկավար գործիչները՝ Մալխասը, Տիգրանը նույնիսկ «արհամարհական և խորթ աչքով կը նայէին անոնց... և որքան բացասական և խորն էր, նորսերնդական չարժման և մանաւանդ, Վազգէնի և Զաւէնի կողմէ հրահրուած և ծայրայեղութեան

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 157:

[2] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 486, նաև՝ **Տէր-Մինասեան Ռ.**, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, էջ 248:

[3] Արամը, մահուան Յիսնամեակին առթիւ, էջ 446:

[4] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 508:

[5] **Տէր-Մինասեան Ռ.**, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Դ., էջ 243:

հասցուած գաղափարներու բացասական ազդեցութիւնը ժողովուրդի և մեր համեստ և կենդանի գործին մօտ կանգնած ընկերներու վրայ»[1]:

Կար նաև մտածողության մի ինչ-որ թև՝ հանձին Մելիքսեդեկ Էյնաթյանի, որը փորձում էր համադրել երկու բևեռները: Նրանք «իրենց զգացումներով կը մօտենային առաջիններուն, իսկ բնազդօրէն կամ գիտակցութեամբ՝ վերջիններուն»[2]:

Նորսերնդականության խնդիրը Վ. Փափազյանի կողմից քննարկվեց նաև 1906 թ. ձմռանը հրավիրված դաշնակցության՝ Վանի կենտրոնական կոմիտեի ժողովի ժամանակ, որին մասնակցում էին Սարգիսը, Տիգրանը, Մալխասը, Ղ. Մելոյանը, Թեոսը, Ալեսը, Արմենակը և Գ. Ճիտեջյանը: Որոշվեց չափավորել և բնական հունի մեջ վերցնել «ափերէն դուրս հոսող ընկերվարական-քաղաքական քարոզչութեան փրփրացող յորձանքը»[3] և վերադառնալ նախկին գաղտնիության ու գործունեության խոհեմ և զգուշավոր ձևերին:

Երիտասարդության երկու հատվածների միջև առաջ եկած գաղափարական տարբերությունները և ապարդյուն խարխափումները մեղմելու և չափավորելու համար՝ Վանի դաշնակցության կենտրոնական կոմիտեն նպատակահարմար գտավ հրատարակել «Երկունք» անունով խմորատիպ ամսաթերթերը՝ Ղ. Մելոյանի խմբագրությամբ: Թերթին զուգընթաց, պարբերաբար հրատարակվեցին նաև թռուցիկներ և «տեղեկատուներ»:

Դրան հակառակ հակադարձվեց «Նոր սերունդ» ամսաթերթերը: Սակայն երիտասարդության «գրչակռիվը» դրանով չդադարեց: Ավանդապահ երիտասարդությունը սկսեց հրատարակել «Հայացք» թերթը[4]:

[1] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 508:

[2] **Անդ,** էջ 487:

[3] Անդ, էջ 483:

[4] **Տէր-Մինասեան Ռ.**, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հտ. Ե., Տարօնէն Թիֆլիս (1908-1909), Պէյրութ, 2004, էջ 484:

Վասպուրականի հայությունը նյութական և բարոյական չահերի պաշտպանության ու ապահովության համար համազգային պայքար և հալածանք ծավալեց նորսերնդականների դեմ: Նույնիսկ կոչ արեց կառավարությանը, որպեսզի նրանց դեմ գործադրվի «դատարկապորտների մասին» պետական օրենքը[1]:

Նորսերնդականների ապականիչ հորձանքի դեմ հանդես եկան Վանի ավելի հասուն և տարիքով ավագ երիտասարդությունը՝ իրենց սուր բանավեճերով և «Հայացք» թերթով: «Յեղափոխական կոչուած խաչագողներու» այդ հակաշարժման գլուխ կանգնեցին Գրիգոր Խլղաթյանը (Սեյրադ), Մկրտիչ Մնուշյանը, Դավիթ Փափազյանը, ալյուրցի Նազարեթը, Արմենակ Մաղաքյանը, Աշչյանը, Արսեն Հացագործյանը, Օնիկ Վարդանյանը և ուրիշներ[2], քանի որ նրանց գործունեությունը կարող էր ունենալ անդառնալի ծանր հետևանքներ: Դեռ ավելին, այն առաջ էր բերում ազգային, կրոնական, ընտանեկան, կենցաղային երկպառակություններ, որը մեծ վտանգ էր ներկայացնում Վասպուրականի հայության համար: Այն «...կը կացինահարեր մեր բարի ժողովուրդին ընկերային ու բարոյական կեանքը»[3]: Օտարամուտ անբարո գաղափարների ներթափանցման ոչ հանդարտ իրավիճակը լի էր մահմեդականների մոլեռանդ կրքերը բորբոքելու վտանգով: Այդ էր պատճառը, որ այդ շարժման դեմ, որպես անխորտակելի պատնեշներ, մնացին Վանի նշանավոր մանկավարժներ՝ Համբարձում Երամյանը, Արտակ Դարբինյանը, Հովսեփ Գույումճյանը և Միքայել Մինասյանը:

Ազգի ղեկավարությունն իր ձեռքում պահելու նպատակով՝ արևմտահայ հոգևորականությունը դիմակայում էր դաշնակցությանը և պայքարում նորսերնդականության դեմ: Դեռ 1909 թ. սեպտեմբերին պատրիարքի ցուցումով Կ. Պոլսի 40 քահանաներ հավաքվեցին խորհրդակցության, և

[1] «Ծիածան», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 15/28, թիւ 12:

[2] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 487:

[3] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 153:

միջոցառումներ մշակեցին՝ այդ կուսակցության հակակրոնական քարոզչության դեմ պայքարելու համար, իսկ նոյեմբերին որոշվեց հակակրոնական հոսանքի դեմ պայքարելու նպատակով «կրոնաթերթ մը հրատարակել»[1]:

Մատթեոս Իզմիրլյանի 1910 թ. նոյեմբերի 11-ի կոնդակով արգելվեց կուսակցականների հանրահավաքներն ու ժողովները եկեղեցիներում կամ վանքերում[2]: Պատրիարքարանի հրահանգում նշվում էր. «Փակել եկեղեցիներն ամեն կարգի հավաքումներու և բանախոսություններու դեմ, ինչպես փակված են իսլամ և հրեա աղոթատեղիները, լատին և հույն եկեղեցիները, ամեն կարգի բողոքական եկեղեցիները, և եկեղեցին հատկացնել և ճանաչել միմիայն իբրև աղոթատեղի, ուր կրոնական պաշտամունք միայն տեղի կունենա»[3]:

Նորսերնդականության գաղափարների դեմ էին նույնիսկ բոլշևիկները: Ս. Սպանդարյանը (Իզգոյ) «Новая Речь» թերթի 1910 թ. ապրիլի 7-ի թիվ 78-րդ համարում հրատարակած իր «Ուրվագրեր հայկական կյանքից» հոդվածում գրում էր, թե «Մենք ամենաջերմ ու ամենահետևողական կողմնակիցներն ենք ժողովների և խոսքի ազատության և ամեն կերպ պիտի ողջունենք այդ և աջակցենք դրա կենսագործմանը: Սակայն բողոքելու ենք այդ ազատության կենսագործման այնպիսի միջոցների դեմ, որոնք վիրավորում են բնակչության մեծ մասի զգացմունքները, որոնք ժողովների և խոսքի ազատության մասին չիտակ պատկերացումներ չեն ստեղծում, այլ, ընդհակառակը, մութ ուժերին հնարավորություն են տալիս սևհարյուրակային ագիտացիա մղելու ժողովրդական լայն զանգվածներում: Եթե ամերիկական եկեղեցիներում ժամասացությունից հետո միտինգներ և նույնիսկ պարահանդեսներ են կազմակերպվում, ապա ամերիկական կրոնական համայնքների պատմությունը, նրանց զարգացումը, նրանց սովորույթները և առհասարակ ամերիկական կյանքի բոլոր

[1] «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1909, դեկտեմբերի 10, թիւ 3993:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 17, թ. 3:

[3] «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1910, յուլիսի 14, թիւ 4171:

պայմանները լիովին համապատասխանում են այդ երևույթին: Մեզ մոտ, Արևելքում, եկեղեցին սրբազան մի վայր է հանդիսանում, և ամեն ոք, ով եկեղեցի է մտնում, պետք է միաժամանակ հրաժարվի այն ամենից, ինչ որ աշխարհիկ է: Հետևաբար՝ ներխուժելով եկեղեցին և «հեղափոխական» մեթոդներով վերածելով այն մի սովորական ժողովասրահի, «ազատության այդ կողմնակիցները» վիրավորում են բնակչության ահագին մեծամասնության զգացմունքները:

Այդպիսի միջոցներով մասսաների մեջ ոչ թե սեր է արմատավորվում դեպի ազատությունը, այլ՝ ընդհակառակը, դժվանք դեպի այն:

Կարելի է անհավատ լինել, կարելի է չընդունել եկեղեցին, սակայն հարկավոր չէ, վնասակար և անտակտ բան է բռնանալ հավատացյալների կամքի և զգացմունքների վրա:

Հեղափոխական այնպիսի խոշոր կազմակերպություն, ինչպիսին գերմանական սոցիալ-դեմոկրատիան է, որը պայքարի, ագիտացիայի և պրոպագանդայի բազմամյա փորձ ունի, շատ զգույշ է վարվում կրոնական զգացմունքների հետ՝ ընդունելով իբրև կանոն թե՛ իր ծրագրում և թե՛ իր տակտիկայում, որ կրոնը մասնավոր գործ է (Priwat sache):

Սրանով մենք չենք ուզում ասել, թե չի կարելի գիտական պայքար մղել կրոնական սիստեմների դեմ և այլն: Սակայն, սրանով մենք ուզում ենք ընդգծել, որ հարկավոր է զգույշ լինել կրոնական հարցերում: Իսկ առավել ևս խղճի հարցերում անթույլատրելի և ուղղակի խայտառակ ու ամոթալի են կազմակերպված փոքրամասնության բռնությունները անկազմակերպ մեծամասնության վրա... Նման փաստերը միայն մի բան են վկայում, որ հայ հասարակության այն խավերը, որոնք այդպիսի անթույլատրելի եղանակով «ազատություններ» են արմատավորում հայ ժողովրդի մեջ, - դեռևս իրենք չեն հասունացել այդ «ազատություններն» ըմբռնելու համար: Մի՞թե ողջ սահմանադրական կոստանդնուպոլսում չէր կարող մի տեղ գտնվել ժողովների համար, այլ հարկավոր էր դրանք կազմակերպել եկեղեցիներում: Եկեղեցին պետք է

մնա մի կողմ. կարիք չկա քաղաքական ելույթների ասպարեզի վերածելու այն: Հարձակվեցեք նրա վրա, եթե այդ ձեզ հաճելի է, բայց նրա պատերից դուրս, նրա տաճարը - հավատացյալների համար սրբազան համարվող վայրը – չդարձնելով հռետորական ամբիոն, և մի՛ զայրացեք, երբ հավատացյալները դիմադրություն են ցույց տալիս ձեզ, պայքարում են իրենց իրավունքների համար, մի՛ ճչացեք «կղերականության», «խավարապաշտության» և այլ սարսափելի բառերի մասին, որովհետև ձեր արարքները շատ քիչ առնչություն ունեն իսկական ազատության և պրոգրեսի հետ և ավելի շուտ սահմանակից են «խուլիգանության»[1]:

Հետագայում նորսերնդականությունը քննադատության ենթարկվեց նաև Անդրանիկի կողմից[2]:

Շուտով նորսերնդականների առաջնորդները որպես «անառակ ըմբոստներ»[3], *և «այլանդակ, պորտաբույծ արարածներ»*[4], *չկարողանալով ներգործել հասարակական լայն զանգվածների վրա՝ հեռացվեցին Վանից: Զավենն ուղարկվեց Տարոն, իսկ Վազգենը վերադարձավ Կովկաս*[5]:

Ճիշտ է, նորսերնդականներն իրենց վերջին «ժողով»-ը գումարեցին 1908 թ. մարտի 9-ին[6], *սակայն այդ հոսանքը դոյատևեց մինչև 1909 թ. և, Ա. Համբարյանի իրավացի դիտարկմամբ՝ այն չկարողացավ ձևավորվել որպես ինքնուրույն կուսակցություն և իր հետևից տանել որոշակի զանգված*[7]: *Ինչպես Վ. Փափազյանն է նշում, ժամանակավրեպ այդ շարժումը «հասնող դպրոցական սերունդի հոգիներու մէջ ան լեցուց յախուռն ազատական գաղափարներ, որոնք իւրացուեցան, բայց չմարսուեցան դպրոցական և նորահաս երիտասարդութեան կողմէ»*[1]:

Այդուհանդերձ, նույն Վ. Փափազյանի համոզմամբ, հակառակ նորսերնդականների ըմբոստ և գաղափարական ծայրահեղություններին, նրանք չարունակեցին մնալ դաշնակցության «մաքուր, պարկեշտ և նուիրուած նախանձախնդիր տարրերը»... «այս կամիր բալիկները... մեր աչ բազուկներն էին յեղափոխական յանդըգնութիւն պահանջող բոլոր մարտերուն մէջ... տեսական հայեացքով և գործօն կեանքով յափշտակուած սերունդ մը»[2]: *Այդ սերունդը դարձավ Վանի ուժը և հետագայում մեծ դեր կատարեց Վասպուրականի 1915 թ. դիմադրական կռիվներում և Երևանի (Հայաստանի առաջին) հանրապետության ճակատագրում:*

Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջման արդյունքում սկզբնավորվեց հասարակական-կրթական և հակակրոնական, հակաեկեղեցական օտարամուտ մի շարժում, որն ուղղված էր ազգի, կրոնի, եկեղեցու, ընտանեկան ու կենցաղային ավանդույթների դեմ և իր բնույթով մեծ վտանգ էր ներկայացնում Վանի նահանգի հայության անվտանգության համար:

1.3. Հոգևոր-կրոնական հարաբերությունները, եկեղեցական կյանքը և Աղթամարի կաթողիկոսության կողոպտման խնդիրը

Օսմանյան սահմանադրության հռչակումը նոր իրավիճակ ստեղծեց Վանի նահանգի հոգևոր-կրոնական հարաբերությունների ոլորտում:

1908 թ. ամռանը, հիվանդության պատճառով, իր զբաղեցրած պաշտոնից հրաժարվեց Վանի նահանգի հոգևոր

[1] **Սուրեն Սպանդարյան,** Ընտիր երկեր, Երևան, 1982, էջ 481:

[2] Զօր. Անդրանիկ կը խօսի, Բարիզ, 1927, էջ 44-45:

[3] **Փափազեան Վ.,** Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 484:

[4] «Ճիաձան», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 15/28, թիւ 12:

[5] Տարոնի հայկական և քրդական գյուղերում Զավենը հանդես եկավ հայ-քրդական համագործակցության գաղափարներով: Սակայն շուտով նշանավոր հայդուկներ Սեյտոյի և Ջնդիի հետ նա զոհ գնաց Մուսա բեկի եղբայր Գասըմ բեյի կազմակերպած դավադրությանը, որը Գևորգ Չավուշի օրոք դաշնակցականների «ընկերն» էր: Իսկ Վազգենն էլ Կովկասում ինքնասպան եղավ: Տես **Փափազեան Վ.,** Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 490:

[6] Ձիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն, էջ 41:

[7] **Փափազեան Վ.,** Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 116:

[1] **Փափազեան Վ.,** Իմ Յուշերը, հտ. 1-ին, էջ 485, 489-487:

[2] Անդ:

առաջնորդ Ներսես վարդապետ Խապայանը, որի փոխարեն Կ. Պոլսից Վանի առաջնորդական նոր տեղապահ նշանակվեց Էրզրում նահանգի հոգևոր նախկին առաջնորդ՝ Զավեն ծայրագույն վարդապետ Տեր-Եղիյանը: Սկզբում իր «դեչ ընթացքին պատճառաւ» ժողովրդի կողմից արգելվում է Զավեն վարդապետի՝ որպես հոգևոր առաջնորդի մուտքը Արճեշից Վան[1]: Սակայն հետագայում կարգավորվում են անցանկալի փոխհարաբերությունները, և նա բարեհաջող ժամանում է իր նոր նստավայրը:

Տեր Զավենի առաջնորդության շրջանը զուգադիպում է օսմանյան հեղափոխության առաջ բերած խանդաբորբ ոգևորության առաջին միամյակին, երբ ժամանակակիցներից մեկի՝ Վանի հասարակական և մշակութային նշանավոր գործիչ Հ. Երամյանի բնութագրմամբ՝ «անկեղծ հաւատացեալներէն զատ նաև սկեպտիկներս կը տարուէինք ոսկեղէն անուրջներով օրօրուելու»[2]: Նա իր ուղղակի և անուղղակի մասնակցությունն է բերում Վանում կատարվող քաղաքական ու կրոնական ընդհանուր բոլոր անցուդարձերին և կարողանում է ազգային համընդհանուր գործի մեջ իրեն համար անձնուրաց գործակիցներ դարձնել նույնիսկ իր հակառակորդներին: Այս հարցում նրան մեծապես օժանդակում է Վան այցելած Էրզրումի հոգևոր առաջնորդ Տեր Սմբատ եպիսկոպոս Սահատեթյանը, որը Վանի առաջնորդի արմատական դպրոցակիցն էր:

Զավեն ծ. վրդ. Տեր-Եղիյանն իր պաշտոնավարման կարճատև շրջանում Աղթամարի վանքի հասույթներով իրականացնում է Վանի դպրոցների՝ մասնավորապես, Վանի Ս. Գրիգոր վանքի իգական որբանոց-դպրոցի խնամատարությունը:

Նրա պաշտոնավարման շրջանում Վանում ընտրվեց Ազգային գավառական ժողով, որն իր հերթին կազմեց Քաղաքային և Տեսչական խորհուրդներ: Միաժամանակ Աղթամարի թեմում կրոնի և եկեղեցու նկատմամբ եղած սերը ընդարձակելու նպատակով՝ որոշվեց վանքերի միաբաններից կազմել Կրոնական ժողով[1]: Վարչական նոր կազմը, որը, մեծ մասամբ, բաղկացած էր դաշնակցականներից, սկզբից ևեթ անհամակիր վերաբերմունք ցույց տվեց դեպի հոգևոր առաջնորդը: Սակայն ինչպես կուսակցության ներսում, այնպես էլ դրսում, նա իր լուրջ պաշտպաններն ուներ: Դաշնակցականների հակադրությունը Զավեն ծ. վրդ.-ի նկատմամբ ավելի որոշակի է դառնում, երբ նա Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթում տպագրում է մի նամակ՝ եգիպտաբնակ վանեցի Գարեգին Իսագուլյանի հասցեին[2]: Նա տեղեկացնում էր, որ իսպառ թալանվել էին Աղթամարի վանքի եկեղեցական խաչերը, սկիհները, զարդեր ու արծաթյա թանկարժեք անօթները: Կորել էին նույնիսկ արժեքավոր հնություններն ու անասունները: Ինչպես ականատեսներից մեկն էր նշում՝ «անբարեխիղճ ձեռքերը փչացրել են այս ամենը, և հիմա կաթողիկոսական տեղապահ ծերունի Հովսեփ եպիսկոպոսը մի սիրհ էլ չի գտնում պատարագ մատուցելու համար»[3]:

Զավեն ծ. վրդ. Տեր-Եղիյանն իր նամակներից մեկում նշում էր. «Եկէ՛ք, մտէք անգամ մը Վասպուրական և տեսէք այս սուրբ և հոյակապ մենաստանները, որոնք բռնապետութեան ամէն փոթորիկ արհամարհելով՝ իրենց գոյութիւնը պահպանեցին ցարդ, ինչպէ՛ս կողոպտուած հիմա իրենց բոլոր զարդերէն՝ հետզհետէ դէպի կործանումը կը դիմեն և այն ալ ոչ թէ Թուրքի կամ Քուրդի ձեռամբ, այլ անարժան հայորդիներու կործանարար ձեռքերով: Մտէք Աղթամար և տեսէք խաչ մը մնացե՞ր է հոն՝ բարեպաշտ Հայուն արցունքներն ընդունելու համար...»[4]: Իսկ Կահիրեում բնակվող իր բարեկամին ուղղված նամակում նա հայտնում էր, որ «վանքերը կողոպտուած, մերկացած են իրանց սրբութիւններից, Աղթամարի վանքը դարձել է թռչունների բոյն, և այն եկեղեցին, որ տոկացել է

[1] «Արեւ», Ալեքսանդրիա, 1908, հոկտեմբերի 9, թիւ 130:

[2] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 120:

[1] «Արարատ», Էջմիածին, 1909, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 9-10, էջ 826:

[2] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ, էջ 118:

[3] «Մշակ» Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 27, թիւ 212:

[4] «Ծիածան», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 15/28, թիւ 12, նաև՝ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, հոկտեմբերի 15/28, թիւ 1502:

դարերի բռնութիւններին, այժմ քայքայւում է հայորդիների ձեռքով, իսկ հայ ընտանեկան սրբութիւնը, հայ կուսի պատիւը... այժմ ընկնում են ներքին բռնաւորների ձեռքով...»[1]:

Աղթամարն իր հնութիւններով և հարստութիւններով ամենևին էլ չէր տարբերվում Երուսաղեմից: Նրա վերահսկողության տակ էր գտնվում 15 վանք, որոնցից ամենափոքրն անգամ տարեկան 300 ոսկի հասույթ էր ստանում[2]:

Աղթամարի աթոռի կողոպտման հարցը, որ հրապարակի վրա դրվեց Վանի հոգևոր առաջնորդ Ջավեն ծ. վրդ. Տեր-Եղիայանի մերկացումներով, այնքան մեծ հուզմունք առաջ բերեց արևմտահայության մեջ, որ Ազգային ժողովը ստիպված էր զբաղվել այդ հարցով[3]:

Հարցը խորությամբ քննարկելու համար՝ կազմվեց մասնաժողով՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի, Արսեն վարդապետի, Հ. Գորյան էֆենդիի և Մ. Շիրինյանի անդամակցությամբ: «Իշխանական» սպառնալիքների պատճառով վանքի միաբանությունը չէր համարձակվում որևէ բողոք ներկայացնել և որևէ ճիչ բարձրացնել: Դանիել վրդ. Զատոյանն ու Աղթամարի կաթողիկոսական տեղապահի փոխանորդ Հովսեփ եպիսկոպոսը կազմում են տեղեկագիր, որը Վանի խառը ժողովն ուղարկում է պատրիարքարան: Այդ տեղեկագրից տեղեկանում ենք, որ 1908 թ. դեկտեմբերին ընտրված և պաշտոնավարող ժողովականները «որևէ խաչ, սպասք կամ արծաթ վաճառած չեն»[4]: Հանձնաժողովի տեղեկագրի համաձայն՝ նախկինում արծաթների վաճառման դեպքեր գրանցված են եղել միայն 1891 թ. (Խաչատուր կաթողիկոսի կողմից), 1905 թ. (խառը ժողովի որոշմամբ), և 1908 թ. (Պողոս վրդ. Կարապետյանի կողմից):

Միաժամանակ պատրիարքարանին ուղղված Հովսեփ եպիսկոպոսի 1909 թ. մայիսի 13-ի տեղեկագրում նշվում էր,

[1] «Մշակ», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 23, թիւ 208:

[2] Անդ, թիւ 211:

[3] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 25 /սեպտեմբերի 7, թիւ 1459:

[4] Անդ, սեպտեմբերի 17/30, թիւ 1478:

որ Աղթամարի սպասքների մեծագույն մասը կողոպտվել են թուրքական զորքերի կողմից[1]:

Սակայն ի՞նչ էր կատարվել իրականում: Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում, այդ թվում՝ Վանում, դաշնակցականները հոգևորականներին հեռացնում էին ներքաղաքական ասպարեզից և իրենց ձեռքը վերցնում ժողովրդի կառավարման ղեկը: Վանի տեղական վարչությունը, որն արդեն գտնվում էր դաշնակցականների վերահսկողության ներքո, թվարկության միջոցով որոշում է փակել Աղթամարի վանքի վարժարանը, դադարեցնել հոգագործական աշխատանքները, բռնագրավել վանքի գույքը, աճուրդի հանել վանքի ողջ ունեցվածքը, տիրանալ վանքապատկան կալվածքներին, դրանք տալ վարձակալության և յուրացնել եկամուտը[2]: Մուշեղ արքեպիսկոպոսի հավաստմամբ՝ դաշնակցությունը «իր մէկ ձեռքով ազգային իշխանութիւնները կահաբեկէր, միւս ձեռքով լաւ կարենալ կողոպտելու համար Աղթամարն ու վանը»[3]: Հասույթը պետք է հատկացվեր «դպրոցաշինութեանը»: Այդ նպատակով աճուրդի են հանվում հարյուրավոր եզներ, ոչխարներ, արտեր, աշխատանքային գործիքներ (րահ, բրիչ և այլն) և այն ամենը, ինչ արժեք ուներ: Միայն անասունների արժեքը կազմում էր 400-500 ոսկի[4]: «Կոհակ» պարբերականի հավաստմամբ «որոշում տուողներ եղած են Իշխանի բարեկամ ա՛յն ժողովականները՝ որք մէկ մէկ փառաւոր անցեալ ունին, ինչպէս նաև Յովսէփ Խլղաթեան... (Բաղաքական ժողովի քարտուղար, -Ա. Հ.)»[5]: Արդյունքում՝ 1907 թ. վանքն ամբողջովին թալանվեց: Վանքից դուրս հանվեց ամբողջ ոսկին և արծաթը[6]:

[1] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 25 /սեպտեմբերի 17/30, թիւ 1478:

[2] «Աշխատանք», Վան, 1912, թիւ 7-54, էջ 8, թիւ 8-55, էջ 11:

[3] **Մուշեղ արքեպիսկոպոս,** Հայկական մղձաւանջը. քննական վերլուծումներ, Պոստոն, 1916, էջ 96:

[4] «Մշակ», Թիֆլիս, 1909, դեկտեմբերի 11, թիւ 274:

[5] «Կոհակ», Կ. Պոլիս, 1909, նոյեմբերի 18, թիւ 23, էջ 256:

[6] **Свящ. Р. Бекгульянц,** По Турецкой Арменіи, Впечатленія отъ поездки летомъ въ 1914 году, Ростовъ на Дону, 1914, с. 22.

Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Հովսեփ եպիսկոպոս Սարաջյանին հաջողվում է կողոպուտից փրկել 1 մեծ և 4 փոքր խաչեր, կոտրված 2 սկիհի ավազան, 2 թագ, 9 ժամարարի գոտի, 2 քչոց, 2 բուրվառ և մանր-մունր արծաթեներ[1]:

Այդ ամենը, ինչպես նշում էին ժամանակակիցները, և որի մասին տեղյակ էին թուրքերն ու քրդերը, կատարվել էր Իշխանի աչքի առաջ, որը 1904 թ. դարձել էր Գավաշի շրջանի Հ.Յ.Դ.-ն ղեկավար: Ըստ Ա. Եկարյանի՝ դաշնակցականները, Կարմրավորի և Ս. Գրիգորի վանքերն իրենց ազդեցության ներքո առնելուց հետո, նպատակահարմար գտան նաև տիրանալ Աղթամարին: Այդ մասին նրանք տեղեկացրին Արսեն վարդապետին և հայտնեցին, որ Աղթամարն «իր կենտրոնական ապահով դիրքովը, շատ յարմար էր իրենց գործունեութեան»[2]: Արսեն վարդապետը կռահելով, որ դաշնակցականների նպատակը վանքի հարստություններին տիրանալն էր հակառակվում է նրանց մտադրությանը, քանի որ այն պատճառ պիտի դառնար կառավարությունում՝ վանքի հանդեպ կասկածամիտ վերաբերմունքի խորացմանը: Արդյունքում՝ Իշխանի 12 հոգանոց խմբի ճեռքով խողխողվում է Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Արսեն վարդապետ Մարգարյանը, նրա քարտուղար Միհրան Գևորգյանը (որը խուսափելով կառավարության հետապնդումներից՝ ապաստանել էր Աղթամարում) և վերջինիս 12 տարեկան որդին: Այդ մասին Փ. Թերլեմեզյանը հիշում է. «...1904-ին Դաշնակցության «հերոս» Իշխանը իր խմբով դիշեր ժամանակ խուժում է այդ հաստատությունը... սպանում է կաթողիկոսի փոխանորդ Արսեն վարդապետին, նրա գրագրին ու գրագրի տասներկու տարեկան զավակին և գրավում է այդ բոլոր ազգային հարստությունները: Հետո կղզին մտնելով՝ կողոպտում է նախնիքներից մնացած արծաթյա և ոսկյա զարդերը, որոնց մեջ թանկարժեք քանդակներով շատ իրեր կային և քանդակազարդ տասներկու հատ ոսկյա և փղոսկրյա կաթողիկոսական գավազաններ, որոնք Վան փոխադրելով, Դաշնակցության կոմիտեն հանձնում է Կռկե Տիգրան կոչեցյալ ոսկերչին՝ արծաթյա և ոսկյա իրերը հալեցնելու և նրանց արժեքներով չաղացնելու իրենց տղերքին: Այս մի պերճախոս նմուշ էր դաշնակցական հակահեղափոխական բանդիտային գործունեության»[1]:

Կրկնակի ոճիրների պատճառը Աղթամարի վանքի հարստություններն էին: Իշխանը Աղթամարի կաթողիկոսի վեհարանն իր համար դարձրել էր ամառանոց և իր մոտ երկու անառակ կին էր պահում:

Չնայած Մ. Էպլիղաթյանը նշում է, որ «ոչ-Դաշնակցական մամուլը կ՛ամբաստանէր զայն, իբր վանքի հասոյթները իւրացնող»[2]: Իսկ Վահան Թեքեյանի հանրագրության մեջ նշվում էր, որ արտասահմանից եկած հեղափոխական կուսակցության անդամներն էին վերոհիշյալ արարքների հեղինակները[3]:

Սակայն ի՞նչ բացատրություն տվեցին Իշխանը և դաշնակցական կոմիտեն այս ոճրի մասին: Այն, որ Աղթամարը կործանվել էր, խոստովանում է նույնիսկ «Ազատամարտ»-ը, նշելով, որ «մենք ի հարկէ չենք կարող պնդել, որ Աղթամարը կործանած չէ, ատիկա մեր կողմէն գեղծում մը պիտի ըլլար և սոսկալի գեղծում»[4]:

Սակայն կործանման պատճառը ըստ դաշնակցականների՝ «վարձկան» մարմինն էր, որը բաղկացած էր ազգակցական և խնամիական կապերով իրար հետ կապված, շահերով իրար հետ մոտիկ վաչխառու աղաներից և ռեսներից, որոնք «կը քամէին հաստատութիւնը»[5]:

Սակայն, ըստ նրանց՝ «Արսէն վարդապետի մատնութեան հետևանքով էր, որ Իշխանի խումբը Նարեկ գիւղին մօտ

[1] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, դեկտեմբերի 18, թիւ 1537:

[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 146:

[1] Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը, Երևան, 2017, էջ 295-296:

[2] Էպլիղաթեան Մ. Մ., Կեանք մը ազգիս կեանքին մէջ. ականատեսի եւ մասնակցողի վկայութիւններ 1903-1923, Անթիլիաս, 1987, էջ 63:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 26, թիւ 214:

[4] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, հոկտեմբերի 17/30, թիւ 109:

[5] Անդ:

պաշարուած էր Խուրշիտի Քիւրտերէն, և բազմաթիւ Հայեր սպանուած էին... Անդրանիկ, երբ Սասունէն հեռանալէ եաք Աղթամար անցաւ հանգստանալու և Վան փոխադրուելու համար, Արսէն վարդապետ այս մասին հեռագրով տեղեկութիւն տուաւ կառավարութեան: Սակայն ոչ ոք չհաւատաց այդ հերիւրանքին: Դաշնակցականները տեսնելով, որ այս առասպելին ալ հաւատացող մը չկար, ընդհակառակն՝ գայթակղութիւնը կ՛աւելնար ժողովուրդին մէջ, ստիպուեցան թռուցիկով մը յայտարարել, թէ Արսէն վարդապետին և իր դրագրին սպանութիւնները ցաւալի թիւրիմացութեան մը արդիւնքն էին»[1]:

Չնայած դրան, դաշնակցութիւնը հայտարարում է, որ տեղեկութիւն չունի կատարված դեպքերի առնչութեամբ և որ անբարեխիղճների կողմից չարաչար ձևով չահարկվել են դաշնակցութեան անունը և նույնիսկ կնիքը: 1921 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթում հրատարակված Մ. Ասլանյանի հոդվածում արդարացվում էր դաշնակցութեան գործելակերպը և նշվում, որ «Աղթամարի հարուստ Վանքը մաքրելէ յետոյ մակաբոյծ տարրերէ, հոն հաստատեց նախակրթարան-ուսուցչանոց մը, որ մտաւորական վառարանը եղաւ Վասպուրականի ամբողջ շրջանին: Անկէ դուրս եկան այն երիտասարդ ուսուցիչները, որ ցրուած գիւղերու մէջ. մէկ կողմէ հայ մանուկին սորվեցուցին գրել և կարդալ, միւս կողմէ ալ հայ գիւղացիին մէջ զրին զէնքի և կռուի պաշտամունքը: Կրթութիւնը պարտաւորիչ էր, ամէն գեղ առանց այլ և այլի ունենալու էր իր սեփական դպրոցը: Վայ եկած էր այն գիւղին, որ կը թերանար այս պարտականութեան մէջ»[2]:

«Բոլոր այս տարաճայնութիւններու աղբիւրը, - ինչպես ժամանակի դաշնակցական մամուլն է նշում, - պէտք է փնտռել այն հանգամանքին մէջ, որ կարգ մը անճնաւորութիւններ, որոնք տիրող նոր կարգերու չնորհիւ անկարող են

[1] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. յուշեր 1890 էն 1940, էջ 163-164:

[2] «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, ապրիլի 24, թիւ 740-2561, նաև՝ Յուշապատում Յ. Յ. Դաշնակցության 1890-1950, Բոստոն, 1950, էջ 390:

այլևս չհագործել ըստ առաջնոյն, վանքի հողերը և հասոյթները ծառայեցնել ըստ հաճոյս, այս կարգի զրպարտութիւններ կը յօրինեն վարկաբեկելու համար ներկայ ժողովականներ. այն յուսով, որ թերևս յաջողին զզուեցնել և հեռացնեն պանոնք և Աթոռիս մատակարարութիւնը վերստին ձգելով իրենց ագահ ձեռքերու մէջ»[1]:

Սակայն Ազգային երեսփոխանական ժողովի քննիչ հանձնաժողովը, որը 1909 թ. սեպտեմբերի 9-ից քննարկման առարկա է դարձնում Աղթամարի վանքի կողոպտման խնդիրը[2], իր՝ 1909 թ. հոկտեմբերի 23-ի տեղեկագրում նշում է, որ «ստոյգ է, որ յափշտակութիւններ տեղի ունեցած են և թէ առնք կատարուած են Ռուսահայ Իշխան անուն անձին, ինչպէս նաև Արամ կամ փաշա անուամբ երկու հոգւոյ նախաձեռնութեամբ»[3]: Մասնավորապես նշվում էր նաև Հովսեփ եպիսկոպոսի անկարողությունը և առաջարկվում էր նոր և կարող տեղապահի ընտրության անցկացում, ինչպես նաև ազգի վստահությունը վայելող մի եկեղեցական և մի աշխարհական ուղարկել Վան՝ տեղում խնդիրը քննելու համար և «վանքն ազատել բռնաւորների ձեռքերից»[4]:

Իսկ Օսմանյան Թուրքիայի դավանությունների արդարադատության նախարար Նէջմեդդին ուղղված Աղթամարի հափշտակությունների՝ քննիչ հանձնաժողովի տեղեկագրում, որը ստորագրել էին Հմայակ արքեպիսկոպոսը, Գարեգին վարդապետը և Մ. Շիրիրյանը, մասնավորապես նշվում էր՝ «Աղթամարի կաթող. տեղապահ Արսէն վարդ.-ի սպանութենէն ի վեր անպատասխանատու վիճակ մը տիրեր է Աթոռին մէջ: Աթոռին իրաւասութեան ենթարկուած 26 վանքեր աւարի և կողոպուտի ենթարկուեր են կուսակցականներու կողմէ, գլխաւորութեամբ Իշխան կոչուած ռուսահայու

[1] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, սեպտեմբերի 17/30, թիւ 1478:

[2] Ալպոյաճեան Ա. Ա., Անհետացող դէմքեր. Գրիգոր Զօհրապ (իր կեանքը և իր գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 213:

[3] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, 24 հոկտեմբերի/6 նոյեմբերի, թիւ 1510:

[4] Անդ:

մը և իր մարդոց: Վանքերը գայթակղութեան և հակակրերական շարժման կեդրոն եղած են: Ասոնց պարագլուխը Իշխան ըլլալով, իրեն գործակից գտնուած է գանճակեցի Փաշա մականուանեալ մէկը, և Յովսէփ եպսկ. յակամայս այս դաշնակցականներուն տրամադրութեան ներքև գտնուած է առանց համարձակութիւն ունենալու զեղծումները մատնանշելու: Իշխան իբրև իր ապարանքը գործածած է այս Աթոռը, անխոստովանելի արարքներու տեղի տալով»[1]:

Ի վերջո, հանճնաժողովը, լսելով իրազեկ անձանց տեղեկութիւնները և քննելով իրեն հասցեագրված բողոքները, որոշում է ստեղծել եկեղեցական ու աշխարհիկ անձերից բաղկացած քննիչ հանձնախումբ, Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանի գլխավորությամբ: Սակայն վերջինս հրաժարվում է ստանձնել իր պարտականությունները[2]: Միաժամանակ կարևորվում է կենտրոնական կառավարության օժանդակությունը[3]: Վանական հաստատությունները բռնություններից զերծ պահելու համար՝ ընտրվում է հոգաբարձություն՝ վանքերի վրա հսկողություն հաստատելու համար:

Ընդհանուր լարված իրավիճակի հետևանքը լինում է այն, որ Վարագավանքի միաբան Դանիել վարդապետ Զատոյանը, բողոքելու համար, Վանում սրախողխող է լինում[4], իսկ թանկարժեք անոթները, եպիսկոպոսական ականակուռ և ասեղնագործ թագերը, սկիհները, գավազաններն առևանգվում են[5]:

[1] «Արարատ», Էջմիածին, 1909 ,սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 9-10, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 825-826:

[2] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, վերաբացում 1909-10 շրջանի երեսփոխանական վերակազմութենէն ետքը, նիստ ԺԶ., 11 յունիս 1910, Կ. Պոլիս, 1910, էջ 286:

[3] **Զօհրապ Գ.**, Երկերի ժողովածու. Յաւելեալ հատոր (Ե.), գիրք առաջին, աշխատասիրութեամբ՝ Ալբերտ Շարուրեանի, Երևան, 2004, էջ 277:

[4] **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 23:

[5] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ., Երևան, 2004, էջ 116:

Ավելի ուշ սպանվեց դաշնակցական կարճկանցի Մանուկը, ով, կրթություն ստանալով Կ. Պոլսում և Իտալիայում, վերադարձել էր Հայրենիք և, համաձայնության գալով պատրիարքի ու Քաղաքական ժողովի անդամների հետ իր առջև նպատակ էր դրել Աղթամարում գիշերօթիկ վարժարան բացելով՝ զարկ տալ Կարճկանի, Շատախի, Գավաշի և Մոկսի կրթական գործին:

Սակայն նա ականատես է լինում, որ հինավուրց ու հարուստ Աղթամարը կողոպտվել և «այր աւազակաց» էր դարձել: Նա, ընդհարվելով Իշխանի հետ, որն այդ սրբապղծության հեղինակն էր, իր առջև նպատակ է դնում՝ Առաջնորդարանի միջոցով վանքն ազատել «դաշնակցութեան ճանկերէն»: Մանուկը մանրամասն տեղեկագիր է ներկայացնում դաշնակցության տեղական կոմիտեին, բայց պատասխան չի ստանում: Դաշնակցությունը Մանուկին սպանելու որոշում է կայացնում: Յոթ հոգանոց խումբը՝ Սուրուճի Դավիթի ղեկավարությամբ, որի մեջ էր նաև Սարգիս Շատախցյանը, ահաբեկում է Մանուկին և նրա ընկերոջը՝ Անուշավան Տեր-Մկրտչյանին: Փոխհրաձգության արդյունքում սպանվում են Մանուկը և Դավիթը, իսկ Անուշավան Տեր-Մկրտչյանն ու Սարգիս Շատախցյանը վիրավորվում: Դաշնակցությունն իր «եղբայրական» կապերի շնորհիվ կարողանում է փակել խնդիրը, իսկ Անուշավանն ու Սարգիսը բանտարկվում են: Հետագայում՝ բանտարկությունից հետո Անուշավանը, դաշնակցության հետապնդումներից ազատվելու համար, տեղափոխվում է ԱՄՆ:

Աղթամարի կողոպուտը Ա. Եկարյանը համարում է դաշնակցության ամենաազետալի և ամոթալի գործերից մեկը, ոճիրների գլուխգործոցը[1]:

Իսկ ի՞նչ եղան վանքի հարստությունները: Ա. Դարբինյանի հավաստմամբ՝ «այդ գաղտնիքին մէկ մասը դաշնակցական Կոմիտէին և աւելի մեծ մասը Իշխանին քով մնաց, այսինքն կողոպուտին մէկ մասը Կոմիտէի տրամադրութեան

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 165-166:

տակ դրուեցաւ, իսկ ըստ ժողովուրդին բացատրութեանը՝ մեծագոյն մասը Իշխան իրեն սեփականացուց»[1]:

Ա. Եկարյանը հավաստում է, որ «վանքին մատանիներէն չատերը մինչև Կովկաս տարուելով դաշնակցական հայուհիներու մատներուն վրայ փայլեցան...»[2]:

***

Տեր Զավենի առաջնորդության շրջանը համընկավ նաև 1908 թ. հոկտեմբերի 30-ի էջմիածնում կաթողիկոսական ընտրության շրջանի հետ, որին մասնակցելու համար Վանի թեմից աչխարհական պատգամավոր է ընտրվում Վանի քաղաքապետ Պետրոս Գափամաճյանը, իսկ թեմի առաջնորդի կողմից առաջնորդական ներկայացուցիչ է նշանակվում Արարքի եկեղեցու հոգևորական Մեսրոպ ավագ քահանա Ճանիկյանը[3]:

Միաժամանակ, Մատթեոս Իզմիրլյան կաթողիկոսի ընտրության կապակցությամբ չնորհավորական նամակներ են ուղարկվում էջմիածին Լիմ անապատի փոխվանահայր Մակար վրդ. Հովհաննիսյանի[4], Վանի քաղաքապետ Պետրոս Գափամաճյանի[5], Վանի առաջնորդական տեղապահ Զավեն վրդ. Տեր-Եղիյանի և ուրիշների կողմից[6]:

***

Վանի նահանգում գործում էին նաև հաստատված փոխհարաբերություններ այլ եկեղեցիների հետ: Այսպես, Անգլիկան եկեղեցու առաջնորդ՝ Բենթըբերիի արքեպիսկոպոսը Վանի քաղաքապետ և Վանի առաջնակարգ առևտրական տան ներկայացուցիչ Պետրոս Գափամաճյանին է նվիրում մի

[1] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890-էն 1940, էջ 165:

[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 146:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1908 , հոկտեմբերի 28, թիւ 238, նաև՝ **Տէր-Մկրտիչեան Ե.**, Գանձեր Վասպուրականի, էջ 298:

[4] Մատենադարան, Մատթեւոս Իզմիրլյան կաթողիկոսի արխիվ, g. 34, թղթ. 14, վավ. 527:

[5] Անդ, վավ. 552:

[6] Անդ, վավ. 528:

քանի եկեղեցական-գեղարվեստական անոթներ՝ «Ի հաւատարիմ նրա մատուցած անկեղծ բարեկամութեան՝ արքեպիսկոպոսութեան ատորի միսիոնարութեան» մակագրությամբ[1]:

***

Ընդամենը 14 ամիս (1908 թ. օգոստոսից մինչև 1909 թ. հոկտեմբերը) պաշտոնավարելուց հետո Տեր Զավեն Եղիյանն ընտրվում է Տիգրանակերտի առաջնորդ:

Նրա մեկնումից հետո տեղապահի պաշտոնը վարում է Մեսրոպ ավագ քահանա Ճանիկյանը, ով իր համակրելի բնավորության շնորհիվ բարյացակամ ընդունելություն է գտնում կառավարության, ինչպես նաև հայ ու թուրք շրջանակների կողմից: 1910 թ. հուլիսին Վանի առաջնորդ է նշանակվում Թավրիզի և Ամերիկայի երբեմնի առաջնորդ, պոլսեցի Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանը[2], ով անխոնջ կերպով գործում է մինչև 1913 թ. հոկտեմբեր ամիսը և աչքի ընկնում իր փորձառությամբ ու հայրական անբիծ նկարագրով[3]: Նա բանդել է տալիս շուկայում գտնվող «Հայոց զորանոց» կոչվող ընդարձակ կալվածքը, որի հասույթները պատկանում էին առաջնորդարանին: Նոր նախագծով նա երկհարկանի նոր շենք է կառուցում, որին նվիրում է իր անձնական ողջ կարողությունը՝ 300 օսմանյան ոսկի: Նրա օրոք Վանի «Ջոջերը»՝ Մ. Ճիտեջյանը, Միրզախանյանը, Պ. Գափամաճյանը, Ա. Թերզիբաշյանը և այլք, աստիճանաբար հեռացվում են ազգային գործերից, և նրանց տեղը գրավում են երիտասարդները՝ հատկապես դաշնակցականները, որոնք կառավարչական գործերի մեջ վարժ չէին:

[1] «Մշակ», Թիֆլիս, 1911, յունուարի 11, թիւ 4:

[2] Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանը ծնվել է 1849 թ. Կ. Պոլսում: Վարդապետ ձեռնադրվելուց հետո՝ 1890 թ., որպես հոգևոր հովիվ մեկնում է Ամերիկա: 1896 թ. նշանակվել է Թավրիզի հոգևոր առաջնորդ: 1900 թ. կրկին մեկնում է Ամերիկա, որտեղ 1904 թ. ընդգրկվում է Մ. Խրիմյանի առաջարկությամբ Եվրոպա մեկնած հայկական հարցի պատվիրակության մեջ: Տես «Աշխատանք» Իզմիր, 1913 թ. հոկտեմբերի 30 /նոյեմբերի 12, թիւ 37:

[3] **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 94:

***

Վանի նահանգում ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդական ազգաբնակչության չրջանում պատկառելի ակնածանք ու հարգանք էր վայելում սուրբ Գեղարդը: Այդ մասին Հ. Երամյանը հիշում է. «Ամէն անգամ, երբ մարախ կամ որևէ համաճարակ կուգար, Հոգեաց վանքէն Գեղարդը քաղաք փոխադրելով՝ կրօնական հանդիսաւորութեամբ եկեղեցիները կը պտըտցնէին: Հաւատաւոր ժողովուրդը անխտիր կը դիմէր ի համբոյր Գեղարդին և համաճարակը կը մեղմանար ու կ՛անհետանար: Արդ, երբ Նորաշէնու եկեղեցիէն Գեղարդը հանդիսաւոր թափորով Յայնկոյսներու եկեղեցին կը փոխադրուէր, Պողպատէդարի կամ Համուտաղենց զօրանոցի հրամանատարն ընդ առաջ ելլելով թափորին, խնդրեց որ Գեղարդը զօրանոցին մէջ ալ հանուի կամ բացուի: Հայ զինուորներու օրինակով նաև շատ մը իսլամներ երկիւղածութեամբ և հաւատքով կը համբուրեն մասունքը և՝ իրենց իսկ թուրքերու վկայութեամբ՝ այդ օրէն հիւանդութիւնը կը կորսնցնէ իր թափը և քանի մը օրէն կ՛անհետի զօրանոցէն: Այսպէս նաև շատ անգամ հաւատաւոր թուրքերը կը դիմէին հայ քահանային և աւետարան կարդալ կուտային իրենց հիւանդներուն վրայ: Շատերը ևս մերազնէից հաւատքով կը դիմէին հայոց նշանաւոր ուխտատեղիները և բուժուած ետ կը դառնային՝ իրենց իսկ խոստովանութեամբ: Այդ հաւատքն ու խոստովանութիւնը չպիտի արգիլէին սակայն առհասարակ բոլոր իսլամները՝ վերջին պատերազմի առեն մեր բոլոր սրբութիւնները պղծելէ և ուխտատեղիները քար ու քանդ ընելէ՝ առանց խղճահարութեան»[1]:

***

1910 թ. դեկտեմբերի 11-ին մահացավ Ամենայն Հայոց Հայրապետ Մատթեոս Բ կաթողիկոսը՝ «Երկաթէ Պատրիարքը»[2]:

[1] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 154:

[2] Костандян Э. А., Царское правительство и выборы католикосов всех армян, «Լրաբեր» Հասարակական Գիտությունների», 1991, թիվ 3, էջ 158:

Նրա անակնկալ մահվան գուժը Վան հասավ 1910 թ. դեկտեմբերի 17-ին և սաստիկ հուզում ու մեծ ցավ առաջացրեց նահանգում: Մահվան առիթով ընդհատվեցին Վարագի դպրոցի դասերը:

1910 թ. դեկտեմբերի 19-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքի պատվերով Վանի բոլոր եկեղեցիներում կատարվեցին հոգեհանգստյան աղոթքներ, իսկ Արարք թաղի եկեղեցում տեղի ունեցավ պաշտոնական սգո հանդես, որին ներկա էր խուռն բազմություն, կուսակալի փոխանորդը՝ ոստիկանապետը, ռուսական հյուպատոսի թարգմանը, ամերիկյան և գերմանական միսիոներները: Մատուցված հանդիսավոր պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ, որից հետո ելույթ ունեցողներից՝ ուսուցիչ Արտաշես Սոլախյանը դրվատանքի խոսքեր ուղղեց հանգուցյալ վեհափառին: Առաջնորդական փոխանորդ Մեսրոպ ավագ քահ. Ճանիկյանը հատկանշեց նրա գործեղ անհատականությունը, տոկուն կամքը և հայրենասիրությունը[1]:

***

Ներքաղաքական լարվածությունը Վանում այն աստիճան սրվեց, որ Վանի առաջնորդական փոխանորդ Տ. Հովսեփ արք. Սարաճյանը 1913 թ. սեպտեմբերի 16-ին տնից եկեղեցի գնալու ժամանակ ենթարկվում է երկու անծանոթների հարձակմանն ու ծեծին, որի շարժառիթը Արարուց թաղական խորհրդի անդամ ընտրված մի հայի մասին եղած ամբաստանության քննության գործն էր[2]: Հ. արք. Սարաճյանը մահանում է 1913 թ. հոկտեմբերի 2-ին՝ Վանի Ամերիկյան հիվանդանոցում, և համարվում է Վանի թեմի վերջին հաստնտիր առաջնորդը: Ազգային վարչության ջանքերով հոկտեմբերի 5-ին Վանի Նորաշեն եկեղեցում կազմակերպվեց «չքեղ թաղում», որին ներկա էին Վանի կուսակալ՝ Գոլ Օրդու Գու-

[1] «Մշակ», Թիֆլիս, 1911, յունուարի 9, թիւ 3, յունուարի 11, թիւ 4:

[2] Անդ, հոկտեմբերի 12, թիւ 226:

մանտանը, կառավարական պաշտոնյաներ, Վանի հյուպատոսությունների ներկայացուցիչները և ժողովուրդը[1]:

Այսպիսով, մի կողմից երիտթուրքական հեղաշրջումը և օսմանյան սահմանադրության հաստատումը նոր իրավիճակ ստեղծեցին Վանի նահանգի հոգևոր-կրոնական հարաբերությունների ոլորտում, մյուս կողմից սրվեցին ներքաղաքական հակասությունները ու հրապարակի վրա դրվեց Աղթամարի վանքի կողոպտման հարցը:

Եկեղեցական կյանքը

Վան-Վասպուրականի տարածքը հայտնի էր իր եկեղեցիներով և վանքերով, որոնք տեղաբաշխված էին հետևյալ կերպ.

Վանի սանջակ	- 130 եկեղեցի և 25 վանք
Լիմ-Կոտուց	- 32 եկեղեցի
Աղբակ (Բաշկալե)	- 23 եկեղեցի և 7 վանք
Աղթամարի կաթողիկոսություն	- 263 եկեղեցի և 6 վանք
Խիզան	- 69 եկեղեցի և 16 վանք
Ընդամենը՝	457 եկեղեցի[2]

Հ. Ոսկյանի հաշվարկներով՝ Վան-Վասպուրականի վանքերն ու եկեղեցիներն ունեին հետևյալ պատկերը՝ Ռշտունիք - 32 վանք և եկեղեցի, Վան-Տոսպ - 14[3], Գնունեաց և Առբերանի - 14, Վանա լճի կղզիներ - 5, Արճիշահովիտ, Քաջբերունի և Արծկե - 17, Արտազ - 1, Նախճավան - 4, Գողթն - 14, Անձևացյաց, Բոդունիք և Երվանդունիք - 20, Աղբակ - 6, Մոկք, Խիզան և Շատախ - 42, Սալնաճոր - 3: Ընդամենը՝ 172[4]:

[1] «Կոհակ», Կ. Պոլիս, 1913, հոկտեմբերի 27/9, թիւ 66, էջ 580-581:

[2] **Ղազարեան Յ. Գ.**, Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 215-216:

[3] 20-րդ դ. սկզբին միայն Վան քաղաքն ուներ 12 եկեղեցի, որոնցից 5-ը՝ Այգեստանում, 7-ը՝ Քաղաքամիջում : Տես «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիվ 12, էջ 40:

[4] **Ոսկեան Յ.**, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա., Վիեննա, 1940, էջ 139-379, մաս Բ., Վիեննա, 1942, էջ 385-571, 673-738, մաս Գ., Վիեննա, 1947, էջ 745-918:

Ըստ այլ հաշվարկների՝ Վանի նահանգում կար 537 վանք-եկեղեցի[1]:

Ներկայացնենք որոշ վանքերի վիճակը[2]:

Աղթամարը Էջմիածնի Մայր Աթոռի բարոյական իրավասությանը ենթակա կաթողիկոսական աթոռներից մեկն էր, որը հաստատվել էր 1114 թ., և ունեցել 57 կաթողիկոսներ:

Ըստ Մ. Օրմանյանի՝ Աղթամարի կաթողիկոսությունը բաղկացած էր երկու առաջնորդարաններից՝ Աղթամարի և Խիզանի եպիսկոպոսություններից: Աղթամարի կաթողիկոսական աթոռին էին ենթարկվում Գավաշի, Շատախի և Կարճկանի կազաները: Այն ուներ 130 թաղ, 203 եկեղեցի, 70, 000 հայ և 500 բողոքական բնակչություն[3]: Ըստ Զիթունու՝ Աղթամարին էին ենթարկվում 193 եկեղեցիներ և 40 վանքեր: Աղթամարի աթոռի մաս կազմող Խիզանի եպիսկոպոսությունն ընդգրկում էր Խիզանի կազան և ուներ 64 թաղ, 69 եկեղեցի և 2, 500 հայ բնակչություն: Ըստ Զիթունու՝ այն ուներ 109 եկեղեցիներ և 16 վանքեր[4]:

Ա. Սաֆրաստյանը, նկատի ունենալով, որ Վանի վիլայեթն ուներ հոծ հայ ազգաբնակչություն, ենթադրում է, որ այնտեղ եկեղեցիների թիվը պակաս չէր կարող լինել Էրզրումի վիլայեթում եղած մոտ 250 վանքերից և եկեղեցիներից[5]: Իսկ Զիթունու հավաստմամբ՝ Աղթամարի կաթողիկոսության տակ էր գտնվում 358 եկեղեցի և վանք[6]: Աղթամարի Ս.

[1] **Կարապետյան Ա.**, Հայ մշակութային արժեքների Եղեռնը Արևմտյան Հայաստանում, Երևան, 2004, էջ 5:

[2] Վանի որոշ վանքերի նկարագրությունը տես **Պալեան եպիսկոպոս Տ.**, Հայ Վանորայք, Ս. Էջմիածին 2008, էջ 262-269:

[3] **Օրմանեան Մ.** արքեպիսկոպոս, Հայոց Եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ. Պոլիս, 1912, էջ 208:

[4] **Չիթունի**, Յուշիկք Հայաստանի (vade-mecum d'Armenie), էջ 64-65:

[5] **Սաֆրաստյան Ա. Խ.**, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիները (1912-1913 թթ.), Էջմիածին, 1965, թիվ Ա., հունվար, էջ 42:

[6] **Չիթունի** Տ., Յուշիկք Հայաստանի (vade-mecum d'Armenie), էջ 64-65:

Խաչ վանքը Վասպուրականի ամենահարուստ վանքերից էր: Այն աչքի էր ընկնում իր եկեղեցական բազմատեսակ թանկարժեք սպասքներով և անոթներով, գոհարեղեններով ու ոսկեղեններով, կաթողիկոսական ականակուռ թագերով, արծաթե գավազաններով, ոսկյա, արծաթե սկիհներով, ոսկեհյուս շուրջառներով, ոսկեքանդակ գոտիներով, կաշեկազմ ձեռագրերով, տպագրված թանկագին Մաշտոցներով, Նարեկներով, Ավետարաններով, ժամագրքերով, որոնց կողքերը զարդարված էին գույնզգույն գոհարեղեններով և արծաթաքանդակ նկարներով:

Նրա կաթողիկոսների իրավասությունը տարածվում էր բազում գավառների, քաղաքների, գյուղերի և վանքերի վրա: Այն ուներ մշակելի դաշտեր, անդաստաններ, մեծ քանակությամբ չարժական և անշարժ գույք[1]: Վանքն ուներ 5-6 աղորիներ (ջրաղացներ), 3-4 անմշակ մնացած այգիներ, 11 արտեր, մի քանի մարգագետիններ, 200 գլուխ ոչխարներ: Աղթամարն ուներ նաև իրեն ենթակա բազմաթիվ վանքեր, որոնցից տարեկան ստանում էր 50 դուրուշից մինչև 10 ոսկի տուրք՝ մուքաթա[2]: Այդ վանքերից էին՝ Նարեկա վանքը, Ոստան գավառի Ս. Նշան և Սպիտակ (Սևակու) գմբեթավոր վանքը և այլն:

Վանքերից զատ Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա էին նաև Հայոց Ձորի և Ռշտունյաց գավառի մոտ 40 գյուղեր[3]: Տարբեր առիթներով վանքը ստացել էր թանկարժեք սպասքներ, անոթներ, ձեռագրեր և եկամուտներ: Վանքի ուխտագնացության օրը Խաչվերացի տոնն էր, երբ բազմաթիվ ուխտավորներ այնտեղ էին հավաքվում՝ իրենց ուխտն անելու և նվերներ ընծայելու[4]:

[1] «Փորձ», Թիֆլիս, 1879, թիվ IV, ապրիլ, էջ 62, նաև «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, նոյեմբերի 13/26, թիւ 132:

[2] Անդ:

[3] Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, ֆ. 508, ց. 1, գ.2 68, թ. 12:

[4] **Շէրենց Գ.**, Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից և ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 121, նաև **Սրուանձտեանց Գ.**, Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 398:

1895 թ., երբ Վանի բոլոր վանքերը կողոպտվեցին, բացառություն կազմեց միայն Աղթամարը: Քրդերը չհամարձակվեցին կողոպտել այս վանքը, քանի որ «ուխտի կու գային այնտեղ և նուէրներ կը բերէին»[1]:

1895 թ., հասարակական կարծիքների և էջմիածնի ճնշման տակ, Աղթամարի կաթողիկոսությունը կորցրեց իր նշանակությունը, և այնտեղ նշանակվեցին կաթողիկոսական գահի տեղապահներ նախ՝ եպիսկոպոսական, իսկ ավելի ուշ՝ նույնիսկ վարդապետական աստիճանով: Վերջին տեղապահը Արսեն վարդապետ Մարգարայանն էր՝ կաթողիկոսական փոխանորդի տիտղոսով, որը վերաչինեց եկեղեցին ու վերաբացեց պարոցը[2]:

ՀԿԸՄ Կենտրոնը 1914 թ. աշնանը ցանկանում էր վերանորոգել Աղթամարի տաճարի փլատակ գանգակատունը և Նարեկացու գերեզմանը, սակայն սկիզբ առած պատերազմական գործողությունները ի չիք դարձրեցին այդ նպատակները[3]:

Ի դեպ, Ե. Լալայանը Մ. Մաքսուդյանին գրած իր նամակներից մեկում հայտնում էր, որ ինքը 1915 թ. Վանում գտնված ժամանակ մի ձեռագրից ընդօրինակել էր Աղթամարի կաթողիկոսության պատմությունը[4]:

Վարագա վանքը մեծ ժողովրդականություն էր վայելում՝ սկսած 1855 թ.-ից, երբ Մկրտիչ Խրիմյան վարդապետը վանքի մեջ սկսում է իր անդրանիկ մշակութային գործունեությունը: Ազգային պատրիարքարանը Վարագա վանքը հանում է Վանի Ազգային առաջնորդարանի իրավասությունից, որի «երևելիները»... վանքը իրենց համար ամարանոց

[1] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն յուշեր 1890-էն 1940, էջ 164-165:

[2] ՅԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 18, թ. 9, նաև՝ **Ակինեան Հ. Ն. վ.**, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1920, էջ 192:

[3] Ոսկեմատեան, հայկական բարեգործական ընդհանուր միութեան Արծաթեա Յոբելեան 1906-1931, հտ. Ա., էջ 116:

[4] **Ադամյան Ա. Յ.**, Երվանդ Լալայանի անտիպ նամակներից, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների, 1965, թիվ 8, էջ 71-77:

դարձուցած էին» և այն ուղղակիորեն ենթարկում Ազգային պատրիարքարանի իրավասությանը՝ դրանով նրա գործունեությունը զերծ պահելով կամայականություններից: Այն «միակն էր, որուն «խնամակալութեան» Հ.Յ. Դաշնակցութիւնը «տենչալով տենչայր... բայց պիտի չկարենար իրագործել իր այդ տենչը»[1]:

Մ. Խրիմյանն «այդ խեղճ գնարանի մէջ» կենդանի շարժում ստեղծեց իր հիմնած տպարանով, հրատարակած «Արծուի Վասպուրականի»-ով, իր բացած ժառանգավորաց (հետագայում՝ «Երկրագործական») վարժարանով: Այդ վանքում էր, որ Մ. Խրիմյանը դաստիարակեց ժողովրդին նվիրված մի ընտիր սերունդ, որոնք, իբրև քարոզիչ, մատենագիր, վարդապետ, քահանա և ուսուցիչ, մտան ժողովրդի մեջ: Դրանց թվում էին՝ Գ. Սրվանձտյանը, Ա. Թոխմախյանը, Տևկանցը, Փիրղալեմյանը, Դանիել վարդապետը, Ա. Միրաքորյանը, Անանյանը, Ա. Աղվանյանը և ուրիշներ:

Սակայն 1885 թ. Մ. Խրիմյանն աքսորվեց, որից հետո կառավարությունը փակեց տպարանը, վարժարանը, բռնագրավեց մամուլը և թուրքերենով սկսեց հրատարակել «Վան» պաշտոնաթերթը: Վարդապետներից շատերը բանտարկվեցին, իսկ մյուսները հեռացան Վանից:

1896 թ. այրվեցին Վարագի Ս. Խաչի և Ս. Գրիգորի վանքերը, և դրանց կից գործող դպրոցները: Կոտրատվեցին բոլոր խաչքարերն ու պատկերները, իսկ շարժական սրբություննեը՝ սկիհը, խաչը, եկեղեցական զգեստները, թալանվեցին[2]:

Վանի դեպքերից հետո՝ սկսած 1896 թ.-ից մինչև 1915 թ., Պատրիարքարանի ցուցումով վանքը կառավարվում էր 5 հոգաբարձուների միջոցով[3]: 1909 թ. մայիսին Վանի գավառի Ազգային վարչությունը, հակառակ օսմանյան սահմանադրության, կազմալուծելով հոգեբարձուների հին կազմը՝ ընտրում է նորը, որի երկու անդամները նշանակվում են Քաղաքային ժողովի անդամներից[1]:

Վարագա վանքը զբաղվում էր երկրագործությամբ, տավարաբուծությամբ, չերամապահությամբ, մեղվաբուծությամբ, թռչնապահությամբ, ոչխարաբուծությամբ և ծառաստանների մշակությամբ: Միայն 1909 թ. տնկվել էր 6, 000 թթենի[2]:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Վարագա վանք են այցելում Վանի նորանշանակ վալի (նահանգապետ) Բեքիր Սամին, որը հաշվի առնելով վանքի առաջադիմությունը, վանքին նվիրում է նույնիսկ ինկուբատոր[3]:

Իր հերթին, ծագումով նախիջևանցի ազնվական հայազգի կարապետովը, վանքի հետագա բարգավաճումն ապահովելու համար, վանքին է նվիրաբերում մեծ գումար[4]:

1915 թ. քրդերը հրկիզում են Վարագա վանքը և հրո ճարակ դարձնում վանքի նշանավոր 300 ձեռագրերը, որոնց ցուցակը կազմել էր Երվանդ Լալայանը[5]:

Բարեբախտաբար, 1915 թ. հուլիսյան մեծ գաղթի ժամանակ հաջողվեց փրկել Վարագա վանքի հարստությունների հիմնական մասը: Այդ մասին Ա. Եկարյանը հիշում է. «Պատրաստուեցայ մեկնելու, ինձմէ առաջ էջմիածին ճամբայ հանելով Վարագայ վանուց մատենադարանը, եկեղեցական անօթները ու վանքին վերաբերող բոլորն արժէքաւոր առարկաները՝ կանոնաւորապէս ցուցակագրուած և անտուկներու մէջ տեղաւորուած, ուղիղ ֆուրկօններով, Վանի առժամանակեայ հոգևոր հովիւ Օհաննէս վրդ.-ի պատասխանատուութեամբ և վստահելի դիւնուորներու պաշտպանութեամբ: Այս առարկաներուն

[1] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն յուշեր 1890-էն 1940, էջ 219:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 184, թ. 56-57:

[3] Տարբեր տարիներին հոգաբարձուներ են եղել՝ Պետրոս Գափամաճյանը, Ա. Աղվանյանը, Ռ. Շատվորյանը, Ա. Թերզիբաշյանը, Ի. Հյուսյանը, Մ. Ճիտեչյանը, Մ. Երամյանը և Հ. Ժամագործյանը: Տես Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն յուշեր, էջ 220:

[1] ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 18, թ. 1-2:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 11, թիւ 199:

[3] **Свящ. Р. Бекгульянц,** По Турецкой Арменіи, Впечатленія отъ поездки летомъ въ 1914 году, с. 18-19.

[4] Անդ, էջ.20.

[5] Պատկերագիրք. Պատասխան 100 տարի անց, Երևան, 2015, էջ 150:

մէկ հատը հաւաքած էր Արամը, իր կարճատև մուտքին ի Վան, բայց ռուսական յանկարծական նահանջին պատճառաւ չկրնալով հետը տանիլ, ձգել տուած էր ջրհորի մը մէջ և մենք պատահաբար գտած ու դուրս հանած էինք...»[1]:

Անկայուն վիճակ էր տիրում նաև Ս. Բարդուղեմեոս վանքում, որը հեռու էր գտնվում Վանի ազգային վարչության ուշադրությունից[2]:

Լիմը ենթակա էր Էջմիածնի կաթողիկոսությանը և ուներ բազմանդամ միաբանություն: Այն իր տրամադրության տակ ուներ 16 գյուղեր[3], այդ թվում՝ Ջանիկը, Տառապեքը, Նորշենը, Հատըռը, Նորավանցը, Գոմսը, Շահկելտին, Խժիկը, Համուկը, Բերգարիպը[4]: Նրա գերիշխանության տակ էին գտնվում Տիրամոր, Աստվածածնի և Էջմիածնի Ս. Սահակի վանքերը[5]: Լիմն ուներ ընդարձակ հողեր, դաշտեր, անտառներ, այգիներ, 4 ջրանցք և խանութներ: Այն օգտվում էր այլ և այլ (կաթի, պսակի) տուրքերից[6]: Իր հերթին, Լիմը ենթարկվում էր պետական ծանր հարկատվության, որը կազմում էր տարեկան 1,000, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 2,000 դուրուշ: Եվ քանի որ այդ գումարն այնքան էլ հեշտ չէր վճարել, շատ վանահայրեր կա՛մ ենթարկվում էին տանջանքների, կա՛մ էլ իրենց պաշտոններից զրկվում էին իբրև հեստողներ[7]:

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 270:

[2] ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 11, թ. 8:

[3] «Արարատ», Էջմիածին, 1898, սեպտեմբեր, թիւ 9, էջ 400:

[4] «Արձագանք», Թիֆլիս, 1882, յուլիսի 4, թիւ 20, էջ 312-313:

[5] **Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի. տեղագրութիւնք սարէն և ձորէն, հնէն և նորէն« պիտանի գիտնոյ, մասն Ա., Կ. Պոլիս, 1884, էջ 280, նաև «Արևելք», Կ. Պոլիս, 1901, նոյեմբերի 6/19, թիւ 4785:

[6] «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912, գիրք XXII, թիւ 1, էջ 91-92, նաև **Շէրենց Գ.**, Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից և ուսումնարանաց, էջ 13, 78, նաև «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1911, թիւ 4366-4368, նաև «Փորձ», Թիֆլիս, 1879, թիւ IV, ապրիլ, էջ 62-63, նաև «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, թիւ 24, էջ 369:

[7] **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն առաջին. Ասիա, հտ. Ա. (Նոր Հայաստան), Վենետիկ, 1806, էջ 155-156:

Լիմը բոլոր ժամանակներում համարվում էր անապատ, որի պատճառով էլ կղզու միաբաններն ազգային կյանքով և դպրականությամբ այնքան էլ չէին հետաքրքրվում[1]: Հ. Սարգիսյանը խոսելով Լիմի միաբանների մասին՝ գրում է. «Սակայնիկ կղզեացդ նորաչէն են, որ աւելի քան զերկերիւր ամաց, և տաճարաւորք երկոքեան և նմանաձեւք իրերաց...: Ետ՛վառք խորանացն ոսկեզօծք և փառահեղք և ամենայն սպասքն մաքուրք և վայելուչք և կարգ աստուածային պաշտամանցն անթերի և անխափան, նա և առաւելութեամբ իսկ, զորոյ գնմանն չէ ուրեք տեսանել 'ի Հայաստան աշխարհի: Կարգ սաղմոսերգութեանցն որպէս կարգեալ սահմանեցաւ 'ի հինանեաց 'ի սոսա անթերի կատարի, եօթնիցս յաւուրն պաշտել անխափան զժամերգութիւն և գութ կանոնս սաղմոսացն բաժանեալ 'ի նոսա, իսկ յուրբաթու ինն կանոն և զգիշերային հսկմունսն տէրունական տօնից ըստ ցուցակին անխափան կատարեալ առանց իրիք նուազութեան և անճանճրոյթ: Եւ ըստ յաւելեալ սակաւ ժամուց առ երկարաձիգ ժամերգութեանն՝ առանձնանան 'ի սենեակս իւրաքանչիւր յընթերցումն հոգևոր մատենից...»[2]: Իսկ Հ. Ոսկյանն էլ ավելացնում է՝ «ոչ անոնց մէջ քիչ չէին անհատներ, որոնք անգամ մը ինքզինքնին կղզիին կամաւոր կալանաւորեալներ հռչակած, այն տեղ ապրած ու հոն մեռած էին առանց դիմացի երկրին հողին վրայ ոտք կոխելու»[3]:

Նրանք հրաժարվել էին մսեղեն կերակուրներից և ըմպելիքներից, բավարարվելով միայն կանաչեղենով ու ջրով, չուներին մահճակալ ու փափուկ անկողին, իսկ նրանց ղեկասը խոշոր էր, անպաճույճ և ցփսեա:

Կանանց մուտքը Լիմ անապատ խստիվ արգելված էր: Նույնիսկ անմորուս պատանիները չէին կարող այնտեղ

[1] **Ակինեան Ն. Ղ. վ.**, Մովսէս Տաթեւացի, Հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 189

[2] **Սարգիսեան Ի. Ղ.**, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, էջ 278-279:

[3] **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա., էջ 51:

մտնել: Ինչպես Հ. Ոսկյանն է մատնանշում. «Անոնք պէտք էին կղզիին դիմաց գտնուող «Դրսի տան» մէջ մնալ մինչև որ անոնց կղակը մազով պատուէր: Ապա կը մտնէին կղզին, ուր երիցագոյններու առաջնորդութեան տակ կրօնաւորական կեանքի սկզբունքները կը սորվէին և ժամասացութեան, գիտութեան ու գրչագրութեան արուեստին մէջ կը հրահանգուէին»[1]:

1916 թ. ռուսական մամուլի մէջ հաղորդումներ են հրապարակվում, որոնց համաձայն՝ թուրքերի կողմից կողոպտվում են Լիմ անապատի 300 մագաղաթե ձեռագրերը և 800 կտոր պղնձե հին առարկաները:

Կտուց անապատը ժամանակին ենթարկվում էր Աղթամարի, իսկ հետո՝ Էջմիածնի կաթողիկոսությանը: Այն չուներ Լիմի չափ բազմանդամ միաբանություն, սակայն սակավաթիվ էլ չի եղել (40-50 ճգնավոր)[2]: Չնայած միաբանները գրական և ժողովրդական ցայտուն գործունեություն չեն ծավալել, սակայն իրենց անբասիր վարքով և կենցաղով արժանացել են հայ ժողովրդի համակրանքին:

Կտուցի թեմի մեջ էին մտնում Մարմետ, Խավենց, Ամենաշատ, Եկմալ, Ջիրաչեն, Ալիւր, Դուլաչեն և Աննավանք գյուղերը[3]:

Այն իր շուրջն ուներ 1,500-2,000 օրավար մշակելի հող, 200 կալվածներ, Ավանցի մեջ 40 ճաշկ[4] ջուր, անտառ, այգի, արոտատեղի, ձիթհանք, ջրաղաց, Վանի, Էդիրնեի, Ռոտոսթոյի և Թիֆլիսի մեջ՝ տներ, պանդոկներ, խանութներ, անասնապահական տնտեսություն, 300 գլուխ ոչխար, 108 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, ձիեր և էշեր: Վանքի ընդհանուր եկամուտը կազմում էր 300 օսմանյան լիրա (2,600 ռուբ.)[5]:

[1] Ոսկեան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա., էջ 51:

[2] «Փորձ», Տփխիս, 1879, ապրիլ, թիւ IV, էջ 62, նաև «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1911, գիրք XXI, էջ 93:

[3] «Արձագանք», Թիֆլիս, 1882, յուլիսի 4, թիւ 20, էջ 313:

[4] Այգին ջրելու ժամանակամիջոց (Վանի բրբ.):

[5] «Աշխատանք», Վան, 1911, թիւ 50, էջ 734-735:

Վանքը դրամական և նյութական այլ և այլ տեսակի նպաստներ էր ստանում տոնական օրերին և հավատացյալների ներիզնությամբ: Հավաքված գումարներով և նպաստներով հոգացվում էին միաբանների պետքերը, վերանորոգվում էին շինքերը, վճարվում էին տուրքերը և հետ բերվում թալանված իրերը[1]: Կանանց մուտքը կղզի բացարձակապես արգելված էր:

19-րդ դարի ընթացքում (1848, 1896 թթ.) Կտուցը ենթարկվել էր քրդերի հափշտակություններին և կողոպուտին[2]:

Ի տարբերություն Ալյուր վանքի, Կտուց անապատն ուներ հաստատուն միաբանություն և աշխույժ հոգևոր-մշակութային կյանք: Այնտեղ գործում էր դպրոց՝ 14 աշակերտով[3]: 1915 թ. ջարդերի ժամանակ եկեղեցու ունեցվածքի ամենաընտիր մասը՝ եկեղեցական բոլոր հնություններով և սրբություններով, բաժին հասավ թուրքերին, ինչպես Հ. Վ. Հյուսյանն է նկատում՝ «չնորհիւ նոյն անապատի միաբան, անհեռատես և կամակոր Ստեփան աբեղային...»[4]:

Հայոց Առաջնորդարանի տվյալներով՝ Վանի 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի նախօրյակին Վանի նահանգում գործում էր ընդամենը 35 վանք ու եկեղեցի, որից 16-ը՝ Վան քաղաքում, 5-ը՝ Թիմարի, 1-ը՝ Արճակի, 1-ը՝ Բերկրիի, 4-ը՝ Արճեշի, 2-ը՝ Ալջավազի, 5-ը՝ Կարճկանի և 1-ը՝ Աղբակի գավառներում[5]: Թեմի հոգևոր-եկեղեցական հաստա-

[1] Ոսկեան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Ա մաս, էջ 83:

[2] Շէրենց Գ., Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից և ուսումնարանաց, էջ 73, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912 , գիրք XXII, թիւ 1, էջ 87, նաև Սարգիսեան Հ. Ն., Տեղագրութիւնք, ի Փոքր և ի Մեծ Հայս, էջ 278, նաև Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն առաջին. Ասիա հտ. Ա., (Նոր Հայաստան), էջ 155, նույնի՝ Ստորագրութիւն, Հին Հայաստանեայց... ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց, հանեալ ի գրոց մերոց նախնեաց և այլոց ազգաց... Մեծ Հայք (Հին Հայաստան), Վենետիկ, 1822, էջ 227, «Գեղունի», Վենետիկ-Ս.Ղազար, 1905, թիւ 1-10, էջ 69:

[3] ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 14, թ. 10-14:

[4] Տէր-Վարդանեան Գ., Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ., Երևան, 2004, էջ 114:

[5] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 25, թ. 31, նաև՝ ֆ. 421, ց. 4, գ. 23, թ. 1-6:

տությունները՝ Կաուց անապատը և Ալյուրի վանքը, վանական համալիրներ էին:

Վանի ապրիլյան հերոսամարտի օրերին այրվեցին, թալանվեցին նահանգի գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները, սպանվեցին վարդապետների և քահանաների առավել քան կեսը[1]: Պղծված բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների թվում էին Վարագա լեռան Ս. Գրիգորը, Ս. Կարմրավորը, Վանի Ս. Խաչը (Ղուրուբաշը), Մեծոփի Ս. Աքանչելագործը և Քաջբերունյաց գավառի Արծվաբերի վանքը[2]: Ինչպես Մ. Օրմանյանն էր նշում ժամանակին. «Վանք չէ եղած, որ անձեռնմխելի մնացած ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կա՛մ քանդուած, կա՛մ պղծուած և կա՛մ մզկիթի փոխարկուած չըլլայ... Մահմետական խուժանը իր կատաղութիւնը ամէնէն աւելի թափեց հայ վանորէից, եկեղեցեաց, դպրոցաց և մատենադարանաց վրայ»[3]: Մեծապես տուժեց, հատկապես, Վարագա վանքը, որն աչքի էր ընկնում իր հարստություններով[4]: Միայն ապրիլյան կռիվների ժամանակ կողոպտվեց մոտ 80 000 ռ. արժողությամբ չարժական գույք[5]:

Անլուր չարչարանքներով 1915 թ. ապրիլին սպանվեցին Կարճկանի Ուրանից վանքի վանահայր Մատթեոս վրդ. Խաչատուրյանը, Խիզանի Ս. Խաչ վանքի վանահայր Պետրոս վրդ. Գրիգորյանը, Ռշտունյաց Ս. Թովմա վանքի վանահայր Հովսեփ վրդ. Թովմասյանը, Ռշտունյաց Զարեհան Ս. Նշան վանքի վանահայր Երեմիա վրդ. Խաչատուրյանը, Աղթամարի Ս. Խաչ վանքի միաբան Պողոս վրդ. Տեր Կարապետյանը, Խիզանի Յոթ Խորան վանքի վանահայր Ղևոնդ վրդ. Հովհաննիսյանը, Կաուց Անապատի լուսարարապետ Եղիա վրդ.-ը, Հակոբյան միաբան Պողոսը, Ներսես սարկավագը, Ալշավազի Ս. Աքանչելագործ վանքի վանահայր Եղիշե վրդ. Մոկացյան, Վարագայ վանքի վանահայր Վրթանես վրդ. Տեր Սարգիսյանը, Վարագա վանքի միաբան Արիստակես վրդ. Մանուկյանը, Վարագա վանքի վերջին միաբան Դանիել վարդապետը, Բերկրիի Արգելանից վանքի վանահայր Մանվել քահանան,[1] Արճեշի առաջնորդական փոխանորդ Տեր Եղիշեն և Նորդուզի Ս. Հոգոց վանքի վանահայր Տեր Վահանը:

Հիշատակության արժանի են նաև 1915 թ. գաղթի ժամանակ Երևանում և Էջմիածնում մահացած Վանի քահանաները – Վանի երբեմնի առաջնորդական փոխանորդ, Մ. Խրիմյանի աշակերտ, Հայանի Հայաբան, գավառային գրող, Խրիմյան Հայրիկին ձոնված ժողովրդական «Հայրի՛կ Հայրի՛կ» երգի հեղինակ Մեսրոպ ավագ քահանա Ջանիկյանը, Հուսիկ քահանա Փեհրիզյանը, Ղևոնդ քահանա Սաֆրաստյանը, Նորաշենի Խորեն քահանան:

Վասպուրականի կուսակրոն հոգևորականներից կոտորածների ժամանակ փրկվում են Աղթամարի կաթողիկոսական նախորդ փոխանորդ, Վանի առաջնորդական տեղապահ Սղնիկ ծ. վրդ. Ներկարարյանը, Աղթամարի միաբան, արմատական վանահայր Դանիել ծ. վրդ. Զաղոյանը, Լիմ Անապատի միաբան Սահակ վրդ. Ատոմյանը, Լիմ Անապատի միաբան Մատթեոս վրդ. Աճեմյանը, Կաուց Անապատի միաբան Պետրոս վարդապետը, Կաուց Անապատի միաբան Ստեփան վարդապետը և Վանի Ս. Կարմրավոր վանքի վանահայր Եղիշե վրդ. Խերանյանը: Վանը 1915 թ. մայիսի 6-ին ազատագրելուց հետո, հոգևոր բարձրագույն իշխանության կարգադրությամբ, «եկեղեցիներում մաղթանքներ կատարուեցան և բեմբասութիւններ ու ճառախօսութիւններ տեղի ունեցան»[2]:

Առանձնահատուկ ուշադրություն էր պահանջում նահանգի հոգևոր-եկեղեցական կյանքը, որը գտնվում էր անմ-

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 21:

[2] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ., Երևան, 2004, էջ 116

[3] **Օրմանեան Մ.**, Ազատապատում, հտ. Գ., Երուսաղէմ, 1927, էջ 5029-5030:

[4] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 1-3:

[5] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1063, թ. 1:

[1] **Օրմանեան Մ. արք.**, Թիւրքահայ աղէտը. Պատմական փաստաթուղթեր, Ա. Տեղեկագիր, Ս. Էջմիածին, 1919, էջ 30-31, նաև՝ **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ., Երևան, 2004, էջ 115:

[2] **Գեղամյանց Ե. ա. քահ.**, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ հայկական հարցի եօթներորդ շրջանը, (մասն երկրորդ), էջ 636:

խիթար վիճակում: Անկերպարան և արգահատելի վիճակում էր գտնվում հատկապես Աղթամարի վանքը: «Կոհակ» պարբերականի բնորոշմամբ՝ «Ազգ. վարչութիւններ երեւի կամովին կուզեն միջոցներ տալ կողոպտիչներու, որպեսզի անոնք կարողանան հիմնայատակ կործանել վանքը: Թեմականները՝ որքան կը լսենք, կը պատրաստուին ազգու բողոք մըն ալ տալ յառաջ քան ծայրայեղութեանց դիմելը»[1]:

Նահանգի հոգևոր-եկեղեցական կյանքը վերականգնելու համար՝ հարկավոր էր իրականացնել որոշակի խնդիրներ: Ավերված և կողոպտված վանքերի ու եկեղեցիների վերականգնումը չուտափույթ դարձնելու համար 1915 թ. ընթացքում նահանգի բոլոր հոգևոր հաստատություններն ազատվեցին պետական տուրքերից: Թեև Վարագա վանքը վերականգնելու նպատակով ազգային, հոգևոր և քաղաքական իշխանությունների կողմից նախնական ջանքեր եղան, Վայոց ձորեցի Տ. Գրիգոր ավագ քահանա Ավագյանն էլ փոխվանահայրության պաշտոնով Վարագա վանք հրավիրվեց, սակայն վանքը վերստին ենթարկվեց լքման և ամայացման: Վանքի հափշտակություններին մասնակցում էին նույնիսկ ռուսական զորքերը, որոնք շարունակ բարձրանում էին վանք[2]: Այդուհանդերձ, 1916 թ. դեկտեմբերին Էջմիածնի Սինոդը 699 ռ. 63 կոպ. գումար է ուղարկում Վարագա վանք՝ անհրաժեշտ պահանջները բավարարելու համար[3]: Միաժամանակ, արձագանքելով Վանի Նորաշեն թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցուն օգնություն ցույց տալու՝ 1915 թ. մայիսի 20-ի խնդրանքին՝ նահանգապետությունը եկեղեցուն հատկացրեց նոր գերեզմանատեղի և 200 ծառ[4]:

Վանի ապրիլյան հերոսամարտից հետո ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, երբ զգացվում էր ո՛չ միայն կրոնական-եկեղեցական գործի բարեկարգման անհրաժեշտությունը, այլև՝ ազգեցիկ հոգևորականների պակաս: Չնայած Վանում, Կաուց և Լիմ անապատներում կենտրոնացել էր մեծ թվով ժողովուրդ, սակայն «հոգևորական պակաս լինելու համար զուրկ կը մնան կրօնական մխիթարութենէն»[1]: Արամ Մանուկյանը Գևորգ V կաթողիկոսին ուղղած 1915 թ. մայիսի 26-ի թիվ 350 գրության մեջ նշում էր, որ «պիտի խնդրէի նոյնպէս, Վեհափառ Տէր, որ անմիջապէս թելադրէք Այվազեան սրբազանին, որ փութար Աղթամարի կողոպտուած վանքը հասնելու դրամական օժանդակութիւններով, և վարէր Աղթամարի կաթողիկոսական տեղապահի պաշտօնը, որը թափուր կը մնայ այժմ»[2]:

Այդ նպատակով 1915 թ. հունիսի 20-ին Վան ժամանեց Սահակ արքեպիսկոպոս Այվազյանը, որն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմից նշանակվել էր Աղթամարի կաթողիկոսական տեղապահ և Էջմիածնի «Եղբայրական օգնության կենտրոնական հանձնաժողովի» ներկայացուցիչ: Սրբազանի նախագահությամբ կազմակերպվում է «Վասպուրականի Եղբայրական օգնության հանձնաժողով», որը պիտում է կաթողիկոսին՝ խնդրելով օժանդակել 55 հիվանդների համար հիվանդանոց հիմնել[3]:

Շատ տեղերում նշանակվեցին հոգևոր նոր առաջնորդներ, իսկ որոշ տեղերում էլ վերականգնվեցին հները: Այսպես, Առաջնորդարանը Ալջավազի թեմական առաջնորդ է նշանակում Կաուց անապատի նախկին միաբան Սահակ վրդ. Ատոմյանին[4]:

Օգտվելով Առաջին աշխարհամարտի և Մեծ Եղեռնի ընձեռած բարձրթռիչ հնարավորությունից 1916 թ. օգոստոսի 1-ին (2 հունիս 1334/19 հուլիս 1332) Բարձր Դուռը հրապարակեց հայկական կաթողիկոսության և պատրիարքության

[1] «Կոհակ», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 29, թիւ 14, էջ 164:

[2] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14[1բ], թ. 92-94:

[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1063, թ. 52:

[4] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 4:

[1] «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր, դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 864:

[2] «Արարատ», Էջմիածին, 1915, յունիս, թիւ 2, էջ 640, նաև՝ Գեղամեան Եղ., Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ հայկական հարցի եօթներորդ շրջանը, էջ 640:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, յուլիսի 3, թիւ 142:

[4] «Աշխատանք», Վան, 1915, յունիսի 17, թիւ 25-224, էջ 180:

մասին օրենքը, որը հրատարակվեց թուրքական կայսերական՝ «Թաքվիմի Վաքայի» թերթի 1916 թ. օգոստոսի 10-ի թիվ 2611 համարում[1]:

Ըստ այդ օրենքի՝ Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները միավորվում էին համապատասխանաբար Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքություններին, ու դառնում էր մի աստիճան՝ «կաթողիկոս-պատրիարք» տիտղոսով՝ որպես օսմանյան հայերի հոգևոր առաջնորդ, իսկ հայրապետի նստավայրն էլ տեղափոխվում էր Երուսաղեմ՝ Ս. Հակոբի վանք, վերացվում էր աստիճանակարգային (հիերարխիական) և այլ կապերն ու հարաբերությունները Էջմիածնի կաթողիկոսի հետ: Հայ կաթողիկոսի տիտղոսն ու աստիճանը համապատասխանեցվում էր Հույն Ուղղափառ Եկեղեցու պատրիարքի տիտղոսին ու աստիճանին: Աղթամարի և Սսի կաթողիկոսությունների ու երկու պատրիարքությունների միաձուլման արդյունքում Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարքն իրավունք էր ստանում եպիսկոպոսներ ձեռնադրել Թուրքիայում և դառնում էր անկախ: Էջմիածնի հետ բոլոր տեսակի կապերի խզումը հետագայում այն հետևանքն ունեցավ, որ արևմտահայերը զրկվեցին Էջմիածնի կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու իրավունքից:

Անվիճելի էր Բարձր Դռան քաղաքական շահը՝ վերացնել այն երկակի հարաբերությունները, ըստ որի՝ Կ. Պոլսի պատրիարքը ենթարկվում էր թուրքական կառավարությանը և Ռուսաստանից կախյալ Էջմիածնի կաթողիկոսին: Օսմանյան այս օրենքը հակասում էր Բեռլինի պայմանագրի դրույթներին (հոդված 62, կետ 4-րդ), ըստ որի՝ ոչ մի արգելք չէր կարող խանգարել տարբեր համայնքների աստիճանակարգային կազմակերպությունների և նրանց հոգևոր առաջնորդների հարաբերություններին:

[1] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2008, էջ 86-87:

1.4 Կաթոլիկական և բողոքական քարոզչությունը Վանում

Սկսած 14-րդ դարից եվրոպացի կաթոլիկ ու բողոքական միսիոներները մուտք գործեցին Օսմանյան Թուրքիա և սկսեցին քրիստոնյաների՝ մասնավորապես, հայերի ծանր վիճակն օգտագործել իրենց կրոնաքաղաքական նպատակների ու շահերի իրականացման համար[1]: Ի տարբերություն այլ ազդությունների ներկայացուցիչների, այդ նոր վարդապետության քարոզչությունը գրկաբաց ընդունվեց հիմնականում հայության կողմից, որը պայմանավորված էր Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական, և հոգևոր դժգույն իրավիճակով: Հենց միսիոներներն էին, որ առաջին անգամ հայերի շրջանում հուսադրեցին այն գաղափարը, որ Եվրոպան և Հռոմի պապը կարող էին օժանդակել Հայաստանի ազատագրության գործին, սակայն միայն կաթոլիկության ընդունելու պայմանով: Նրանց անմիջական ազդեցությամբ էր, որ հայ կաթողիկոսները 16-17-րդ դդ. ձեռնունայն հանապարհորդություններ կատարեցին դեպի եվրոպական մի շարք երկրներ:

Բողոքական միսիոներներն այն համոզմանն էին, որ Հայ Եկեղեցին գործում էր «կռապաշտական» համակարգով[2]: Սակայն արևմտահայ իրականության մեջ ժողովրդի հետ երկար շփումներից հետո, կամաց-կամաց փոխվեց նրանց թյուր կարծիքը, և նրանք ավելի մերձեցան Հայ Առաքելական Եկեղեցուն:

Բողոքական քարոզիչները Կ. Պոլսում հաստատվելուց հետո սկսած 14-րդ դ. վերջից փորձեցին հիմնավորվել նաև Վանի նահանգում[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 93, թ. 18:

[2] **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 293:

[3] Այդ մասին ավելի հանգամանորեն տես **Յարությունյան Վ.**, Արևմտյան Հայաստանում բողոքական միսիոներության քարոզչական գործունեության պատմությունից (19-րդդարիվերջ - 20-րդ դարի սկիզբ),Պատմություն և հասարակագիտություն, Տարեգիրք 2-րդ, Երևան, 2016, էջ 142-151:

Միսիոներների կարողություններն օգտագործելու նպատակադրությամբ էր, որ Արամ Մանուկյանն իր 1913 թ. սեպտեմբերի 6-ի նամակում Ս. Վրացյանից խնդրում էր աջակցել ԱՄՆ անցած դոկտոր Ռեյնոլդսին՝ Վանում ամերիկյան քոլեջ բացելու նպատակով հանգանակություն կատարելու գործում[1]:

Գերմանական միսիոներություն

Պատերազմն ու աքսորը Վանում կասեցրին միսիոներական աշխատանքները: Սակայն ինչպես գերմանացի միսիոներ Էմմա Ջոմմերն է նշում՝ «առանձնապես մեծացավ և կարևորվեց 22 տարի առաջ մեզ Արևելք տանող կանչի նշանակությունը: Որովհետև խոսքն այստեղ միայն մարդասիրական բարեգործության մասին չէ»[2]: Թուրքական կառավարությունը՝ հավատարիմ իր գործելակերպին, ամենուրեք, ուր հնարավոր էր, քրիստոնեական եկեղեցիները վերածում էր մահմեդական մզկիթների: Այսպիսի պայմաններում գերմանացի միսիոներների աշխատանքն էլ ավելի էր կարևորվում:

Դեռևս 1914 թ. դեկտեմբերից օրիորդ Մաքֆարլենը և գերմանական որբանոցի քույր Մարթան վիրավորներն էին խնամում թուրքական զինվորական հիվանդանոցում[3]: Գերմանական կառավարության ճնշման չնորհիվ նրանք հասան այն բանին, որ իրենց օժանդակության ներքո աշխատող բոլոր հայ քրիստոնյաները ցուցակներում գրանցվեցին որպես գերմանական առաքելության ներկայացուցիչներ և խուսափեցին աքսորի կործանարար հետևանքներից[4]:

Հետաքրքրական և արժեքավոր են հատկապես գերմանական միսիոներների տեղեկությունները Վանի ինքնապաշտպանության վերաբերյալ: Այդ մասին Արևելքում քրիստոնեական բարեգործական գերմանական օժանդակության միության ղեկավար, ծագումով շվեյցարացի, քարոզիչ Յ. Շպյորին, որը նաև Վանի գերմանական որբանոցի տնօրենն էր, Յ. Լեփսիուսին ուղղած իր՝ 1916 թ. հոկտեմբերի 7-ի զեկուցագրում հայտնում էր հետևյալը. «Երբ 20.4.1915 թ. իմ աչքի առաջ սկսվեցին մարտերը և մեր վրա սոսկալի կրակում էին, ես ստիպված էի գրել վալիին: Ես նրան պատմեցի, թե ինչպես են սկսվել մարտերը, տեղեկացրի, մեզ վրա պնդակների անձրև է տեղում և խնդրեցի կասեցնել նման գործողությունները, քանի որ, իմ կարծիքով, անհնար է, որ նման բան կարող է վայրի ցանկությամբ լինել: Նաև խնդրեցի վճռերը հարթել խաղաղ ճանապարհով: Իմ գրությամբ պնացի դոկտոր Ուշերի մոտ (ճանապարհը շատ վտանգավոր էր, քանի որ անընդհատ կրակում էին), ընթերցեցի նրան իմ գրությունը և խնդրեցի նույնը անել: Ջևդեթի ապրիլի 23-ի նամակը մեր գրությունների պատասխանն էր: Բացի այդ, ինքնապաշտպաններին խնդրեցի ետ քաշվել մեր կայանի ճակատից, որպեսզի կրակը մեզ վրա չհրավիրեն: Ի գոհունակություն ինձ, իմ խնդրանքը կատարվեց: Սակայն դրանից հետո էլ մեր դեմ կրակը չդադարեց»[1]:

Ամերիկյան միսիոներություն

Ըստ Յ. Լեփսիուսի՝ ամերիկյան միսիոներական առաքելությունը գտնվում էր Այդեստանի կենտրոնական մասի հարավարևելյան բարձունքին և բաղկացած էր մեկ եկեղեցուց, դպրոցական երկու մեծ ու երկու փոքր նոր շենքերից, մեկ դպրոց-արհեստանոցից, հիվանդանոցից, կլինիկայից և միսիոներների համար նախատեսված չորս կացարաններից: Ամերիկյան առաքելության անդամներն էին՝ տիկին Ռեյնոլդսը (դոկտոր Ռեյնոլդսը գտնվում էր Ամերիկայում), հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ըշըրը, արհեստանոցի տնօրեն

[1] Վրացյան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 36:

[2] Ջոմմեր Է., Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մարկարյան, Երևան, 2002, էջ 52:

[3] Knapp G., The tragedy of Bitlis, New York, Chicago, London, Edinburg, 1919, p. 21-28.

[4] Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920, էջ 38:

[1] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 308:

տիկին Հչըրը, տղաների դպրոցի տնօրեններ տեր և տիկին Յարոուները, աղջիկների դպրոցի տնօրեն օրիորդ Ռոջերսը, նախակրթարանի տնօրեն օրիորդ Սիլիմանը, երաժշտության ուսուցչուհի օրիորդ Հչըրը, հիվանդանոցի ավագ քույր օրիորդ Բոնդը և միսիոներուհի Քլարենը: Վանում էր գտնվում նաև օրիորդ Քնապը, որը հյուր էր եկել Բիթլիսից[1]:

Ամերիկյան միսիոներները շատ դիպուկ և կարևոր դիտարկումներ են կատարել ցեղասպանության պատճառների ու բնույթի մասին: Այսպես, 1917 թ. մարտին ամերիկյան միսիոներ Ք. Հչըրը գրում է, որ Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության ոչնչացումը ծրագրված է եղել Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց շատ ավելի առաջ: Ըստ նրա՝ «Նրանցում (խոսքը ջարդերի մասին է, - Ա. Հ.) կրոնական մոլեռանդությունը հպանցիկ դեր է ունեցել, այն էլ՝ կոտորածները սկսելուց հետո միայն՝ իրականում այդ ծրագրի հետ կապ չունենալով»[2]:

Առավել կարևոր են ամերիկյան միսիոներների տեղեկությունները Վանի նահանգի կոտորածների, ինքնապաշտպանական կռիվների և Վանի 1915 թ. հերոսամարտի վերաբերյալ, որը անմիջական պատկերացում է տալիս տիրող մահասարսուռ իրավիճակի և հայ բնակչության տառապանքների մասին, մասնավորապես՝ 1915 թ. ապրիլին Վանի կռիվների ժամանակ:

Վանի հերոսամարտի ժամանակ ամերիկյան առաքելության անդամները հայտնվել են թուրքական և հայկական ինքնապաշտպանության դիրքերի միջև, և անմիջականորեն շփվել են թե՛ Վանի նահանգապետ Ջևդեթ բեյի և թե՛ ինքնապաշտպանության հայ ղեկավարների հետ: Եթե հաշվի առնենք, որ, Վանը դեպքերի բերումով, փաստորեն, մեկուսացել էր արտաքին աշխարհից, ապա միսիոներների հաղորդած տեղեկություններն առաջիններից էին, որ մանավանդ ԱՄՆ-ում օգնեցին պարզելու Վանում հայերի մտացածին «ապստամբության» իրական պատկերը[1]:

Ամերիկացի միսիոներ, բժիշկ Ք. Հչըրի հավաստիացմամբ՝ Վանի վալի Ջևդեթը ծրագրել էր Վանի նահանգի քաղաքի հայերի համընդհանուր կոտորած: Սակայն նրա մտահղացումը քաղաքի մասով ի դերև եղավ՝ մասամբ այն պատճառով, որ ամերիկյան միսիոներներն ամեն կերպ ընդդիմացան Ջևդեթի պահանջ-սպառնալիքներին՝ թույլ չտալով ռազմավարական կարևորագույն դիրք զբաղեցնող ամերիկյան առաքելության տարածքում «միսիոներների պաշտպանության նպատակով» տեղակայել թուրքական զինվորներ[2]:

Բավականին արժեքավոր են 18 տարի Վանում ապրած Հչըրի տեղեկությունները Վանի ապրիլյան հերոսամարտի մասին: ԱՄՆ-ի Փուլթաքեթ քաղաքում Վանի հերոսամարտին նվիրված ելույթի ժամանակ նա նշում է. «Հայ ժողովուրդին չարչարանքները ներկայացնելու համար ամբողջ շաբաթներ պէտք է խօսիլ անընդհատ: Բայց ես կ'ուզեմ ձեզ ներկայացնել անոր հերոսներուն հայրենասիրութիւնը՝ քանի մը գծերու մէջ, ցոյց տալու համար, թէ տակաւին այս ցեղը ապրելու յոյս կը ներշնչէ և պիտի ապրի: Երբ Խարբերդի, Տիգրանակերտի, Մալաթիայի և ուրիշ վայրերու տեղահանութեան լուրերը կը հասնէին, Վասպուրականի հերոսները գործի վրայ էին: Վանի կուսակալը (Ճէվտէդ) հրաման արձակեց, որպէսզի պատրաստ բլլան գաղթելու: Վանի ժողովուրդը, փախան գաղթի պատրաստութեան, ինքնապաշտպանութեան դրօշը պարզեց յաջորդ օրը... Թրքական կանոնաւոր զօրքը, ղեկավարութեամբ գերման սպաներու, ամբողջ ամիս մը կռուելէ

[1] Պրայս Ճ. Դերկոմս., Անգլիական կառավարութեան կապոյտ գիրք հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Կ. Պոլիս, 1919, էջ 56-57, նաև՝ Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 304:

[2] Somakian M. J., Empires in Conflict; Armenia and the Great Powers, 1895-1920, London, New York, 1995, pp. 76-77.

[1] Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. հայոց ցեղասպանության մասին, կազմող և ներածության հեղինակ՝ Տիգրան Զաքարյան, Երևան, 2002, էջ 6:

[2] Clarence Douglas. Ussher, M. D., Grace H. Knapp, An American Physician in Turkey: A Narrative of Adventures In Peace and in War, Boston and New York, 1917 (November), pp. 236, 239-240, 242-243, 261.

յետոյ, չարաչար կերպով պարտուեցաւ և քաղաքը թողուց Արամներու և ուրիշ հերոսներու: Ասոնք այն հերոսներն են, որ այս ինքնապաշտպանութեան փառաւոր յաղթանակին գործը կազմակերպեցին... Հապա Իչխանը... այդպիսի հերոս քիչ անգամ կը գտնուի ազգերու հերոսացանկին մէջ: Վանի այս փառաւոր յաղթանակը եղակի պիտի մնայ հայ պատմութեան մէջ: Այսպէս եղած է պատկերը նաև ներքին չատ մը գաւառներու մէջ, որոնք դիմադրեցին թուրք բարբարոս բանակին և սուղ ծախեցին իրենց կեանքը, բայց արտաքին օգնութիւն չի կրնալով ստանալ, ընկճուեցան վերջապէս»[1]:

Իր հերթին, Ըշըրի կինը Վանի ամերիկյան միսիոներութեան ղեկավար Ռեյնոլդսին ուղղված իր նամակում ներկայացնում է վանեցիների «հրաշալի տաղանդը» և կորովը քաղաքում ապաստանած 20, 000 թշվառներին և կարոտյալներին օգնելու գործում[2]:

Բացի այդ, ինչպես վկայում էր Վանում ամերիկյան առաքելութեան մասին հուշերի հեղինակներից մեկը (ամենայն հավանականութեամբ՝ բժիշկ Ըշըրն է), ինքն անձամբ լսել էր, թե ինչպես հավանաբար 1915 թ. ապրիլի 17-ին (տեքստում հստակ չի մատնանշվում), երբ Շատախում տեղական հայ բնակչութեան ընդդիմացել էր մի ուսուցչի անօրինական ձերբակալմանը, Ջևդեթն իր մոտ է կանչել «քեսաբ թաբուրի» (մսագործների դունդ) կոչված գնդի հրամանատարին և բառացիորեն հրամայել՝ գնալ Շատախ ու «ջնջել տեղի բնակչութեանը»: Ապա դառնալով ամերիկացի միսիոներին ասել է. «չեմ թողնի թեկուզ մեկին այսքանից մեծ» և ձեռքով ցույց է տվել իր ծունկը[3]:

Առաջին միսիոներական կազմակերպութիւններն էին, որ հոգ տարան Այգեստանից իրենց մոտ ապաստանած չուրջ

[1] «Յուսաբեր», Կահիրե, 1916, դեկտեմբերի 24:

[2] **Երամեան Հ.**, Վան-Վասպուրական/ «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, հունիս, թիւ 8, էջ 120:

[3] **Clarence D. Ussher, M. D., Grace H. Knapp,** An American Physician in Turkey: A Narrative of Adventures In Peace and in War, pp. 237-238:

4,000 վանեցիների պաշտպանութեան հարցը: Այդ մասին ամերիկացի միսիոները հիշում է. «Կիրակի օրը՝ 25-ին, քաղաք մտավ փախստականների առաջին խումբը՝ իրենց վիրավորներով: Մեր հիվանդանոցը, որտեղ սովորաբար 50 մահճակալ է տեղավորվում, ստիպված էր 142 հիվանդների համար տեղ պատրաստել: Փոխառնվեց սպիտակեղեն, և ամենուրեք հատակին անկողիններ պատրաստվեցին: Ամեն օր վիրակապում էինք թեթև վիրավորներին: Այգեստանից 4,000 մարդ իր ունեցվածքով տեղափոխվեց քաղաք: Նրանք տեղավորվեցին մեր եկեղեցում, դպրոցական շենքերում և մեր առաքելութեան տների բոլոր ազատ տարածութիւններում: Մի կին տիկին Սիլիմանին ասաց. «Ի՞նչ էինք անելու, եթե միսիոներները չլինեին: Սա արդեն երրորդ կոտորածն է, որի ժամանակ ես ապաստան եմ գտնում այստեղ»[1]:

Միսիոներների ուշադրութեան կենտրոնում էին նաև բնակչութեան սննդի և առողջապահութեան խնդիրները, որոնք լուծելու համար կպահանջվեր կենցաղավարութեան և վարչական կարողութեան մեծ հնարավորութիւններ[2]: «Այս մարդկանց մեծ մասին պետք էր կերակրել, որովհետև նրանք այնքան աղքատ էին, որ իրենց հացը ամեն օր գնում էին հացթուխից, իսկ հիմա այդ հնարավորութիւնը չկար: Հայերը, մեծ մասամբ, իրենք են թխում իրենց հացը և հոգ տանում, որպեսզի ամբողջ տարվա անհրաժեշտ ցորենի պաշար ունենան: Այսքան չատ մարդկանց տեղավորելը, նրանց առողջութեան, սննդի և կարգապահութեան համար հոգ տանելը խնդիրներ էին, որոնք ամբողջովին կլանել էին մեզ: Պարոն Յարոուն այս գործի համար կոմիտեներ կազմակերպեց: Ամեն մի փոքրիչատե ընդունակ մարդու մի դեր հանձնարարվեց: Բոլորը հիանալի նախաձեռնութիւն և անձնուրացութիւն ցուցաբերեցին: Մի մարդ տվեց իր ունեցած ողջ ցորենը՝ իր ընտանիքի համար թողնելով միայն մեկ ամսվա պաշար: Հիմ-

[1] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 309:

[2] **Պրայս Ճ. Դերկոմս**, Անգլիական կառավարութեան կապոյտ գիրք հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), էջ 61:

նեցին հանրային փուռ՝ բաշխելու համար ցորեն և ալյուր գնվեց, տրվեցին հացի կտրոններ, իսկ ավելի ուշ բացվեց մի ճաշարան: Օրիորդ Ռոջերսը և օրիորդ Սիլիմանը ապահովեցին անհրաժեշտ օրաբաժին կաթը, իրենց դպրոցի աղջիկներին հանձնարարեցին եփել այդ կաթը և բաժանել փոքրիկներին: Այս ձևով անվում էին 190 հոգի»[1]:

Ըստ ամենայնի, Վանում ամերիկացիների «անհարմար» ներկայությունն այնքան զայրացուցիչ է եղել Ջևդեթի համար, որ վերջինս քաղաքի պաշարման ժամանակ, համաձայն օսմանյան բանակում ծառայած վենեսուելացի սպա Ռաֆայել դե Նոգալեսի վկայության, հրամայել է հրետակոծության ենթարկել քաղաքի ամերիկյան առաքելությունը[2]:

Ամերիկյան միսիոներների վկայությունները պատկերացում են տալիս թուրք բժիշկների անմարդկային վերաբերմունքի և հայերի ֆիզիկական տառապանքների մասին: Այսպես, ըստ գիժության քույր, գերմանուհի Մարթայի հաղորդման՝ երբ Ռ. դե Նոգալեսը 1915 թ. մայիսի 1-ին շրջայց էր կատարում նրանց զինվորական հոսպիտալում, նա տեղեկացնում է, որ գլխավոր բժիշկ Իզզեթ բեյն «ազատվել» էր բոլոր հայերից, ովքեր աշխատում կամ բուժվում էին հոսպիտալում: Ըստ նրա՝ Իզզեթ բեյը վիրահատություններն իրականացնում էր առանց վիրաբուժական գործիքների ախտահարման, որի արդյունքում չատերը մահացել էին փտախտից[3]:

Վանի ապրիլյան հերոսամարտի ժամանակ բժիշկ Քլարենս Ընդերը հրաժարվում է ամերիկյան հիվանդանոցի դեղատունը հանձնել իշխանություններին և իր կնոջ՝ Էլիզաբեթի հետ, ո՛չ միայն դեղորայք է բաժանում հայերին, այլ վիրահատում և բժշկում է վիրավորներին ու հիվանդներին[4]:

Թուրքական իշխանություններն ամեն ինչ անում էին, որպեսզի ամերիկացի միսիոներներն ականատես չլինեն զանգվածային սպանություններին: Այդ նպատակով, նախևառաջ, նրանց արգելվում էր աքսորյալ հայերի հետ որևէ շփում՝ բնդհուպ մինչև ամերիկյան չինուհյունների մուտքերի մոտ դինված պահակների տեղակայումը՝ խոչընդոտելով հայերին՝ օժանդակության համար դիմել ամերիկացի միսիոներներին:

Հաշվի առնելով Վանում անհրաժեշտ ուտելիքի հոգածության անհրաժեշտությունը և բարձր գները՝ ամերիկացի միսիոներներ՝ Էռնեստ Յարրոուն և Քլարենս Ընդերը Արամին ուղղված՝ 1915 թ. հունիսի 8-ի իրենց նամակում խնդրում էին Անդրանիկի կողմից բռնագրավված հազարավոր ոչխարներից Վանում գտնվող հոսպիտալի հայ կամավորականների և ուուս զինվորների համար տրամադրել օրը 1 ոչխար, իսկ միսիոներական կացարանում ապաստանած 1, 000 մահմեդական գաղթականների համար՝ օրը 5 կամ ամսական 150 ոչխար: Այդ նպատակով նախնական հոգածության համար նրանք պահանջում էին 100-200 ոչխար:[1]

1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ Ընդերը և մյուս միսիոներները տեղափոխվեցին Արևելյան Հայաստան:

Միսիոներների հաղորդած տեղեկություններն ուշագրավ են հատկապես Վանի 1915-1917 թթ. պատմության լուսաբանման առումով, քանի որ նրանք որոշակի ներդրում են ունեցել Վան-Վասպուրականի վերաշինության և գաղթականների օգնության կազմակերպման գործում: Ամերիկյան միսիոներները որոշակի դեր են խաղացել՝ Վանում հայերին ու ասորիներին տնտեսական բազմատեսակ օգնություն կազմակերպելու և բարեգործական աշխատանքներ կատարելու գործում: Այդ մասին է վկայում Թիֆլիսի ամերիկյան հյուպատոսության բժիշկ Ֆ. Ու. Մաքելլըմի զեկուցագիրը՝ ուղղված ԱՄՆ-ի պետական քարտուղարին[2]:

Վանում 1916 թ. ապրիլի 15-ից մայիսի 15-ը միսիոներների կատարած բարեգործական աշխատանքների մասին պատ-

[1] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 309-310:

[2] **Де Ногалес Р.**, Четыре года под полумесяцем, Москва, 2006, с. 66:

[3] **Անդ**, էջ 74:

[4] Ե. Չարենցի անվ. ԳԱԹ-ի արխիվ, Հ. Ավազյանի ֆ., գ. 8, թ. 6:

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 34, թ. 1:

[2] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 274-278:

մող գեկուցագրի համաձայն՝ Գրեյսին, Ուիլսոնը և Ֆ. Մաքալլումը ձեռնամուխ են լինում գաղթականների օգնության կազմակերպման գործին: 1916 թ. ապրիլի 15-ին Գրեյսին և Մաքալլըմը Պարսկաստանից ժամանում են Վան, իսկ Ուիլսոնը մնում է Խոյում՝ Վանի բնակչության համար եղներ, կովեր, սերմացու գնելու և ուղարկելու գործով[1]:

Ռուսական քաղաքացիական և զինվորական իշխանությունները չափազանց բարյացակամ էին տրամադրված միսիոներների հանդեպ և ստեղծում էին բոլոր հնարավորությունները աշխատանքները հաջողությամբ ի կատար ածելու համար: Միսիոներական գործունեությանը մեծապես նպաստում են նաև նրանցից առաջ գործունեություն ծավալած հայկական և ռուսական բարեգործական այլ ընկերությունները, որոնք հիմնադրել էին որբանոց, հիվանդանոց, սննդամթերքի պահեստ[2]:

Ամենահրատապ խնդիրը եզների, գութանների ու սերմացուի ապահովումն էր, քանի որ բանակի կարիքների պատճառով Վանի նահանգում արգելված էր անասուն և սերմացու գնելը: Հայոց Ձորի շրջանում միսիոներներին հաջողվեց գոմեշներ գնելու թույլտվություն ստանալ, քանի որ դրանք որպես սննդամթերք չէին օգտագործում: Արդյունքում՝ դոկտոր Գրահամ Ուիլսոնի միջոցով միսիոներները Պարսկաստանից, նախարապաններից մեծ քանակությամբ եզներ, կովեր և գոմեշներ գնեցին: Գրեյսիի և նրա թիկնապահ ամերիկացի մի հայ կամավորի կողմից բաժանված չեքերի դիմաց յուրաքանչյուր երեք ընտանիքի տրվում էր մի զույգ եզ: Ընդ որում, խմբում ընդգրկված էին միայն այն ընտանիքները, ովքեր կաշխատեին համաձայնեցված ձևով: Սակայն անասունները տրվում էին ոչ թե որպես նվեր, այլ յուրաքանչյուր ստացող տալիս էր գրություն, ըստ որի՝ նա խոստանում էր, որ սկսած 1917 թ. նոյեմբերի 1-ից տարեկան եռակի մուծումով կոմիտեին, կամ ներկայացուցչին վճարել ստացած կենդանու իրական արժեքի 25-50%-ը, քանի որ այդ ժամանակ եղները 3-6 անգամ ավելի թանկ էին[1]:

Կովերը բաժանվում էին հիմնականում որբերին, այրիներին և այն ընտանիքներին, որտեղ փոքր երեխաներ կային: Բացի այդ, նահանգապետի և գլխավոր հրամանատարի կողմից անասուն ստացողներին տրվեց պաշտոնական մի փաստաթուղթ, որը հաստատում էր անասունների պատկանելիությունը և արգելում դրանց օգտագործումն այլ նպատակներով:

Նշված ժամանակահատվածում 600 ընտանիքի տրվեց 400 եզ, 200 այրիների, որբերի, հաշմանդամների ու մանուկների՝ 100 կով, 75 ընտանիքի՝ 50 գոմեշ: Նախատեսվում էր միջին հաշվով հատկացնել 150 ռ.՝ գոմեշներ, 120 ռ.՝ եզներ, և 80 ռ.՝ կովեր ձեռք բերելու համար[2]:

Քանի որ անհնարին եղավ Պարսկաստանից ձեռք բերել մեծ քանակով սերմացու հացահատիկ, միսիոներները որոշակի պրոմիսյունների դիմաց ֆերմերներին գումար տրամադրեցին՝ շրջակա գյուղերից սերմացու գնելու և բերքահավաքին այն վերադարձնելու պայմանով: Արդյունքում՝ 10,000 ռ. դիմաց Խոյից ձեռք է բերվում 3,000-4,000 բուշել ցորեն ու գարի: Վանի շրջանի գյուղացիներին տրվում է նաև բավարար քանակով կարտոֆիլի, լոբու, ոսպի, եգիպտացորենի և տարբեր տեսակի բանջարեղենների սերմեր[3]: Խոյից հացահատիկի, հագուստի և այլ իրերի տեղափոխումը կազմակերպելու համար՝ միսիոներները ձեռք են բերում եղասայլեր և ավանակներ[4]:

Քանի որ Վանի պաղատու և խաղողի այգիների մի մասը պատկանում էին թուրքերին, որոնք չէին կարողանում վերադառնալ, և հայերին, ովքեր չէին վերադարձել կամ մահացել էին, միսիոներները յուրաքանչյուր այգուց կառավարութ-

[1] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 275:

[2] Անդ:

[1] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 276:

[2] Անդ, էջ 276-277:

[3] Անդ, էջ 277:

[4] Անդ, էջ 278:

յանը տրվելիք 2-5 ռուբլի նոմինալ վարձի դիմաց իրակա-
նացնում են Ճվստանի ու Արտամետի պտղատու և խաղողի
այգիների խնամքը[1]:

Միսիոներներն ամերիկյան միսիայի շենքում աշխատան-
քի են տեղավորում բազմաթիվ մարդկանց՝ ավերակները
մաքրելու, այգիներ փորելու, տնկելու և այլ գործերի համար:
Նահանգապետի համաձայնությամբ՝ 50 հոգու նշանակում
են փողոցները կարգի բերելու և ջրային ուղիներ մաքրելու
համար[2]: Վան է գործուղվում բուժակ Կարապետ Թորգոմյա-
նը: Նա պետք է քաղաքում կազմակերպեր բուժական գործը
և միաժամանակ լիներ միսիոներների ներկայացուցիչը:

Մինչև 1916 թ. հունիսի սկիզբը Վանի 60 գյուղերում մի-
սիոներները գյուղացիներին են բաժանում 1,700 գլուխ անա-
սուն, 2, 176 փութ ցորեն, 3, 298 փութ գարի, 4, 914 փութ
տարեկան և 258 փութ կորեկ, մեծ քանակությամբ զանազան
բանջարեղենի սերմ, 470-ական խոփ և բահ, 400 մանգաղ[3]:

Միաժամանակ Կովկասից բերվեց և բաժանվեց 30,000
կտոր անկողին ու հագուստ[4]:

1917 թ. սեպտեմբերի 23-ին Պարսկաստանից Վան են ժա-
մանում երկու ամերիկացիներ Dr. M. I. Elis և Charter E.
Beury, որոնց ընկերակցում էր Գրեյսին[5]: Հայանի լրագրող
Elis-ը, որն աշխատակցում էր բազմաթիվ ամերիկյան թեր-
թերին, գործուղված էր Ամերիկյան կառավարության կող-
մից՝ մոտիկից ծանոթանալու Ռուսաստանի գործերին, ռու-
սական զորքերին և ռազմաճակատում տիրող կացությանը:

[1] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 277-278:

[2] Անդ, էջ 278:

[3] «Աշխատանք», Երեւան, 1916, սեպտեմբերի 14, թիվ 39:

[4] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918 թթ.). Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու, կազմող, առաջաբանի հեղինակ՝ պատ. գիտ. դոկտոր Լ. Բարսեղյան, հ. 2-րդ, Երևան, 2011, էջ 373:

[5] «Արեւ», Բաքու, 1917, հոկտեմբերի 7, թիւ 211:

Երկրորդ հյուրը՝ փաստաբան Beury-ն էր, որը սերում էր
ամերիկյան հարուստ գերդաստանից, և նույնպես, նպատակ
ուներ ծանոթանալ Ռուսաստանին ու հայկական գործերին:

Վանի «Ազատության լույս» գրադարան-ընթերցարանում
կայացավ հանդիպում ամերիկացի հյուրերի հետ, որտեղ
նրանք իրենց սերն ու համակրանքն արտահայտեցին հայերի
նկատմամբ:

Հյուրերը եղան նաև Դատավանում:

Այդուհանդերձ, ժամանակակիցների աչքից չի վրիպել
նաև ամերիկյան միսիոներների հակահայկական և սուտ
մարդասիրական կեցվածքը: Այսպես, դեպքերի ականատես
և ժամանակակից Եղիշե Բուգանյանը հայտնում է, որ իր հի-
շողության մեջ երբեք չի մոռանա մի հանգամանք, մի ցա-
վալի իրողություն, որ կատարվեց Վանի ահավոր կռիվների
ընթացքում, երբ թուրքական թնդանոթները որոտում էին
հայկական ընտանիքների գլխին: Հայ կանայք, երեխաները,
թողած իրենց կայքը, սարսափահար դիմում էին ամերիկյան
չրջանակ՝ ապաստան գտնելու, Ամերիկյան միսիոները՝ այդ
այծամորուք հրեշը՝ դոկտոր Ռեյնոլդսը, որ մարդասիրութ-
յուն էր քարոզում, անդթաբար վռնդում էր իր չրջանակից՝
առանց խղճի խայթ զգալու: Նույնը կատարեցին անգլիա-
կան և գերմանական կոնսուլները, բացառությամբ միայն
ռուսական կոնսուլի, որն իր դրոշակի տակ առավ մեծ բազ-
մություն մինչև կռիվների վերջը[1]:

Ֆրանսիական միսիոներություն

Վանում Իտալիայի հյուպատոսական գործակալ Ժ. Սպոր-
ոնի 1915 թ. մայիսին 30-ի նամակը՝ ուղղված Պետրոգրադի
ֆրանսիական դեսպանին լույս է սփռում 1914 թ. օգոստոսից
մինչև 1915 թ. մայիս ընկած ժամանակահատվածում Վանում
ֆրանսիական Դոմինիկյան միաբանության վիճակի վրա:

[1] **Բուրանյան Ե.**, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, Երևան, 2013, էջ 26:

Վանի ֆրանսիական դերհյուպատոս Սանֆոռը 1914 թ. նոյեմբերի 8-ին Վանից մեկնելու ժամանակ, քաղաքում ամրրիկյան հյուպատոսության բացակայության պատճառով, ֆրանսիական շահերի պաշտպանությունը հանձնում է իտալացի հյուպատոս Ժ. Սպորտոնին, որի մասին նա տեղեկացնում է Կ. Պոլսի ԱՄՆ-ի դեսպանին և Վանի նահանգապետին: Սակայն, պատերազմը սկսվելուն պես, Ժ. Սպորտոնը, ճանապարհների անապահովության պատճառով անկարող լինում այդ մասին տեղյակ պահել ինչպես Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանին, այնպես էլ՝ Տրապիզոնի իտալական հյուպատոսին[1]:

Ըստ Ժ. Սպորտոնի վկայության՝ Վանի կուսակալության քարտուղարը և հանրային կրթության տնօրենը ոստիկանական պաշտոնյաների հետ՝ առանց ֆրանսիական հյուպատոսության գործակալության ներկայացուցչի, Սանֆոռի մեկնումից մեկ շաբաթ անց՝ 1914 թ. նոյեմբերի 15-ին ներկայանում են Վանի Դոմինիկյան միաբանություն (որի մի մասը գտնվում էր Վանի հայկական, մյուս մասը՝ մահմեդական թաղամասում) և պահանջում իսկույն Օսմանյան կառավարությանը հանձնել միաբանության վանքերը, դպրոցները, բարեգործական հաստատությունները և հեռանալ Վանից: Ֆրանսիայի միսիոներների արտաքսումը կատարվեց 1914 թ. նոյեմբերի 20-ին՝ Բաղեշ-Տիգրանակերտ-Հալեպ-Մերսին ճանապարհով:

Հիվանդության պատճառով Վանում մնաց միայն միաբանության ղեկավար Հ. Բեռնար Կորթմաղթիզը:

Ֆրանսիական միսիոներների հեռանալուց հետո դոմինիկյան հայրերի և քույրերի չենքերը բռնազավթեցին, թալանեցին ու վերածվեցին համապատասխանաբար, արական և իգական մեդրեսեների[2]:

Վանի ապրիլյան հերոսամարտի ժամանակ Դոմինիկյան հայրերի չենքը դարձավ թուրքական, իսկ դոմինիկյան քույրերի չենքը՝ հայկական դիրք: Ինչպես Ժ. Սպորտոնն է վկայում. «Մէկ ամսուան իրենց բնակութեան միջոցին, թուրք և բիւրտ պաշրպօզուքները, որոնք Տոմինիկեաններու չէնքին մէջ դիրք բռնած էին, թալլեցին ինչ որ խուսափած էր թուրք պաշտօնատարներու աւարէն, և երբ Հայերը յաջողեցան հոն մտնել, այնտեղ գտան միայն մէկ քանի կարասիներու խլեակները: Քոյրերու հաստատութիւնները, Հայերու հսկողութեան ներքև ըլլալով, գերծ մնացին թալանէ»[1]:

Ռուսական զորքերի և հայ կամավորների կողմից Վանի պրավումից հետո Դոմինիկյան քույրերի չենքը դարձավ Վանի նահանգապետության կառավարչատուն:

Անշուշտ հարց է առաջանում, թե բողոքական միսիոներությունը Վանում ավելի շատ վնաս, թե օգտակարություն է ունեցել:

Եթե բողոքականության գործունեությանը նայենք Հայ Եկեղեցու բարոյական չենքի նախանձախնդրության տեսանկյունից, նկատվում է, որ մեր Եկեղեցին վնասվել է նրանց գործունեությունից, քանի որ առաջացել էր դավանական պառակտում: Նոր դավանանքի հետևորդները, ներկայանալով իբրև «վերանորոգուած, սրբացած և երկնքի յաւիտենական թագաւորութեան փառքը վայելելու միակ արժանիք ունեցողներ», իրենց «անուղղայ, խաւարի մէջ խարխափող, ամբարիշտ» հայրենակիցների վրա նայում էին իբրև «գեհենի արժանի ժառանգների վրա»[2]:

Կռիվների ավարտին կաթոլիկ կղերը և բողոքական միսիոներներն իրենց կեղծ մարդասիրական անվան տակ, հանգամանքներից օգտվելով, որպես «դավանանքի գող որսորդներ»՝ ուզեցին օգտվել ղրամանակ օժանդակության անվան տակ և դրավել այն ընտանիքներին, որոնք կորցրել էին իրենց ընտանիքները, տունը, կայքը և կարոտ էին օգնության: Եվ կաթոլիկ կղերները, լեշի սովոր ուրուրների նման, թափառում

[1] **Պառպի Ղ.**, Սարսափի երկրին մէջ, Նահատակ Հայաստան, էջ 150-151:

[2] Անդ:

[1] **Պառպի Ղ.**, Սարսափի երկրին մէջ, Նահատակ Հայաստան, էջ 152:

[2] **Ծերուկ**, Վանի նահանգը ներկայումս, XXV, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 12, էջ 61:

էին հայկական գյուղերում: Կաթոլիկ դավանանքի կոչ էին անում նրանց, ովքեր կարող էին կարիքի: Գտնվեցին չաղ գյուղացի ընտանիքներ, որոնք ընդունեցին կեղծ կաթոլիկ կրոնը կարիքից դրդված, բայց երբ սկսեցին իրենց նյութական դրությունը բարելավել, հեռացան կաթոլիկ եկեղեցուց և իրենց նախնյաց լուսավորչական եկեղեցուն դիմեցին:

Կաթոլիկ անամոթ կղերները սրամտած ասում էին՝ «Փարա վար, կաթոլիկ վար, փարա յոխ, կաթոլիկ յոխ»: Եվ ասած վաճք էր դարձել հայերի մոտ. «Փարա [փող] կա, կաթոլիկ կա, փարա չկա, կաթոլիկ չկա»: Նույնը և կատարվում էր բողոքականության մեջ: Եվ այդ անամոթ վարդապետները փողով որսում էին հայ չքավոր, արյունաքամ ժողովրդին՝ առանց ամոթի ու խայտառակության[1]:

Բացի այդ, միսիոներները հանդես էին գալիս որպես լրտեսներ՝ արժեքավոր տեղեկություններ հաղորդելով իրենց երկիրներին: Այսպես, ցարական հետախուզությունը Փարիզից ուղարկված 1916 թ. հունիսի 1/14-ի միանգամայն գաղտնի № 583 հեռագրում տեղեկացնում էր, որ Ցյուրիխում բնակվող, գերմանական ծագումով չվեյցարահպատակ միսիոներ Սպուրին, որը Վանի միսիոներական դպրոցի նախկին վարիչն էր և Ֆրանկֆուրտում գտնվող «Դեոյչ-Արմենիե Վեյզենհաուզեն» միսիոներական ընկերության գործակալը, մտադրվել էր մեկնել Վան: Ընկերության ղեկավար պաստեոր Լոմանը 1916 թ. մայիսին Ցյուրիխում գերմանական կառավարության հանձնարարությամբ կազմակերպել էր միսիոներների ջոկատ՝ ռուսական զորքերի կողմից գրավված Վանի, Թիֆլիսի, Էրզրումի, Տրապիզոնի շրջաններում քարոզչական գործունեություն ծավալելու նպատակով: Սակայն ջոկատի բուն նպատակը հայ բնակչության մեջ հօգուտ Գերմանիայի գաղափարական աշխատանք կատարելն էր[2]:

[1] Բուրանյան Ե., Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, էջ 25-26:

[2] «Ազդակ» շաբաթաթերթ, Բեյրութ, 1980, ապրիլի 27, թիվ 15, էջ 323-324:

Միսիոներության մասին հետաքրքրական է դեռևս 1908 թ. Ալթամ Մանուկյանի արտահայտած տեսակետը: Վեր հանելով ամերիկյան միսիոներության գործունեության միայն լավ կողմերը, որ «անոնք արեան ու արցունքի օրերին փոպոյներից հաւաքելով անտէր մանուկներ ապաստանարան տուին», միաժամանակ մատնանշում է նաև նրանց զզվելի դրսևորումները. «Ի հարկէ, երբէք չէ կարելի մոռանալ միսիոնարների այն ստրկացուցիչ և ոչակցիօն դերը, որ խաղային աղատ երկրների ստրուկ ներկայացուցիչներ մեր թշուառ երկրին մէջ. ամբողջ սերունդներ անոնք ստրկացուցին, քանկին անոնցից այն՝ ինչ կենսունակ էր ու հիւթոտ և միայն կմախք թողուցին, ըմբոստ ուժերն հալածեցին, վռնդեցին, և սուլթանեան պաշտամունքը հաստատեցին. ազատ և ուժեղ խոսքը բռնաբարեցին և աղաչանք ու լացը միայն թողին»[1]:

Միսիոներների գործունեությունն իրավամբ ճիշտ է գնահատել միսիոներական պաշտոնաթերթ «Աւետաբերը»: Խոսելով միսիոներության ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումների մասին՝ պարբերականը գրում է. «Ահա մինչ ասկէ 20-30 տարի առաջ Ամերիկ-միսիոնարները սուտ աստաքեալներու և Բողոքականութիւնը անաստուածութեան արմէք ունէին յաչս Վանի Հայ ժողովրդեան մէկ ստուարապոյն մասին, այսօր, չնորհիւ ուսման և կրթութեան պարգևած լուսաւորութեան, այն հին համոզումներն ու ըմբռնումները խոպառ տեղի տուած են նոր գաղափարներու առջև, ինչպէս վկայէրես նոյն ժողովրդի կողմէն եղած պատուի ու երախտապիտական ցոյցերով ապացուցուեցաւ Հանդէպ Վանի երեք լսպմարդիւն միսիոնարներու»[2]:

Չնայած միսիոներները ներդրեցին նյութական, հոգևոր և բարոյական զգալի միջոցներ և բացեցին կրթական հաստատություններ, նրանց այդպես էլ չհաջողվեց Վանում ձեռք բերել անհրաժեշտ համակիրներ:

[1] «Ալիք», Թիֆլիս, 1908, սեպտեմբերի 23, թիվ 10:

[2] «Աւետաբեր, Կ. Պոլիս, 1912, նոյեմբերի 16, թիվ 46:

1.5. Վասպուրականի ձեռագրական հարստությունները, կորուստները և փրկության գործը Մեծ Եղեռնի տարիներին

Մեր նախնիների համոզմամբ՝ գիրքը՝ կրոնական, բարեպաշտական և դաստիարակչական տեսանկյունից, մշակութային ամենաթանկարժեք ընծաներից մեկն է: Այդպիսի ըմռնմանան անմիջական հետևանք է այն, որ չնայած մեր ժողովրդի նկատմամբ կիրառված հալածանքներին, հափշտակություններին, դարեր շարունակ կրկնվող արշավանքներին և ավերի ենթարկված պայմաններին, մեզ են հասել բազմաթիվ ձեռագրեր[1]:

Ձեռագրերը բավականին հետաքրքրական և թանկագին անակնկալներ են պարունակում հնախոսական, մատենագրական, բանասիրական և լեզվաբանական տեսանկյունից[2]:

Վասպուրականը եղել է հայ ձեռագրական մշակույթի ամենախոշոր և հարուստ կենտրոններից մեկը: Այստեղ էին պահվում Արևմտյան Հայաստանի ամենակարևոր գրչագրերը[3]: *Վասպուրականում էին գտնվում հազարավոր ձեռագրերով հարուստ մատենադարանները, որտեղ ժամանակին գրվել են ժամագրքեր, Ավետարաններ, Հայսմավուրքներ և Ճաշոցներ: Վասպուրականում ձեռագրերի ստեղծման գործում իրենց ավանդն են ներդրել հարյուրավոր ժրաջան և անձնազոհ գրիչներ, ծաղկողներ և կազմողներ, այդ թվում՝ Զաքարիան, Կարապետը, Աստվածատուրը, Ղազարը, Գրիգոր Խլաթեցին, Թուման, Մինասենց Թուման, Վարդանը, Խաչատուրը, Ստեփանոսը, Հովհաննեսը, Ատոմը, Սիմեոնը և ուրիշներ, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրել են ձեռագրական արվեստի գործին*[4]: *Վասպուրականցի հայ գրիչներից լավագույնը և ամենաբեղմնավորը եղել է արճիշեցի Հովհաննես Մանկասարենցը (1418-1505 թթ.), որը 14 տարեկանից մինչև 86 տարեկան հասակը, 72 տարի շարունակ, նվիրվել է հայ գրչության զարգացման գործին և ընօրինակել է 132 մեծ ու փոքր ձեռագրեր*[1]:

Ձեռագրերի ընդօրինակման նշանավոր վայրեր էին Հաղպիսանում կառուցի, Լիմի, Վարագի, Մեծոփի, Մոկաց սարի Ս. Գևորգի և Աղթամարի վանքերը[2]:

Ըստ Լիմ անապատի միաբան Մակար վրդ. Տեր-Հովհաննիսյանի՝ Լիմում էին պահվում Ս. Գևորգի մասունքները և Սահակ Պարթևի աջը[3]: *13-15-րդ դդ. Լիմում են ստեղծագործել Խաչիկ, Մովսես, Աբրահամ, Մանվել, Հովհաննես, Մկրտիչ, Հերապետ, Հովհաննես Մանկասարենց, Իգնատիոս, Ղազար գրիչները*[4] *և հայ միջնադարյան առակագիր Վարդան Լմնեցին*[5]: *Լիմում է ավարտվել Սքանչելագործ վանքում սկսված Գրիգորի Ավետարանը:*

Միայն Լիմում 1693 թ. կային 3124 (Վճիդ) անուն ձեռագրեր, որոնք չարակարգված էին առարկայորեն և գետեղված վանքի հատկապես 22 պահարանների մեջ[6]: *Ըստ «Արարատ» ամսագրի տվյալների՝ Լիմ անապատում 1898 թ. մնացել էին 300 ձեռագրեր (ըստ Հովհաննես վրդ. Հյուսյանի՝ 550 կոր)*[7] *և 3000 տպագիր գրքեր*[8]:

---

[1] **Խաչիկյան Լ. Ս.**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, (1401-1450 թթ.), Երևան, 1955:

[2] Արեւելք, Կ. Պոլիս, 1901, փետրվարի 28/13, թիւ 4571:

[3] **Rohrbach P.**, Vom Kaukasus zum Mittelmeer: Eine Bochzeits-und Studienreisa durch Armenien, Leipzig und Berlin, 1903, s.72.

[4] **Խաչիկյան Լ. Ս.**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, (1401-1450 թթ.), էջ LIX:

[1] **Լալայեան Ե.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, պրակ առաջին, էջ 619-620, նաև **Տէր-Մկրտիչեան Ե.**,Գանձեր Վասպուրականի, հատոր առաջին, Պոսթոն, 1967, էջ 76-78:

[2] **Մաթևոսյան Ա.**, Մոկաց Սարի Ս.Գեորգ վանքի գրչության կենտրոնը XIV-XV դարերում, Բանբեր Մատենադարանի, Երևան, 1962, թիվ 6, էջ 197-217, նաև նույնի, Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ-ԺԵ դարերում, «Էջմիածին», 1966, թիվ 2, էջ 48-55:

[3] «Բիւզանդիոն»,Կ. Պոլիս, 1911, փետրուար 21/6 մարտ, թիւ 4366:

[4] **Մաթևոսյան Ա.**, Լիմ Անապատի գրչության կենտրոնը ԺԳ-ԺԵ դարերում, Էջմիածին, 1966, թիվ 2, էջ 49-53:

[5] **Տաշեան Հ.**, Մայր ցուցակ, էջ 480:

[6] **Գարեգին Ա կաթողիկոս,** Մատենադարանները հին հայոց մէջ, «Պայքար» (բացառիկ), Բոստոն, 1946, էջ 13:

[7] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 4 ա:

[8] «Արարատ», Էջմիածին, 1898, թիւ Թ էջ 400 և 1915 ԺԱ-ԺԲ, էջ 836, նաև

Կտուց անապատն էլ ճոխ ու փարթամ էր եկեղեցական հնություններով: Այն ուներ մոտ 500 կտոր ձեռագիր մատյաններ[1]: Ըստ արխիվային մի տեղեկության, այնտեղ պահվում էին 270 ձեռագրեր (այդ թվում՝ 6-ը՝ Ավետարան, 2-ը՝ Շարական) և 450 կտոր տպագիր գրականություն[2]:

Վարագա վանքն ուներ 500 կտորից ավելի ձեռագրեր[3]: Իսկ ըստ Վարագա վանքի վարժարանի տեսուչ Արտակ Դարբինյանի՝ այն ուներ 200 ձեռագրեր և 1000-ի չափ տպագրված հին գրքեր[4]:

Կտուց անապատի և Վարագա վանքի ձեռագրեր՝ սրբազան անոթների հետ միասին, պահվում էին եկեղեցու տարբեր թաքստոցներում:

Աղթամարը, հակառակ իր կաթողիկոսական ճոխության և հարստության, բարոյական և գրական մեծ ազդեցություն չի ունեցել Վասպուրականի վրա: Գրական միակ խոշոր ներկայացուցիչը Գրիգորիս Աղթամարցին էր: Սակայն Աղթամարը մեծ նվաճումների էր հասել ձեռագրեր գրելու գործում, որի արդյունքում այնտեղ ստեղծվեց գրչագրության կենտրոն և այնտեղ կենտրոնացան փութաջան գրիչները: Պատահական չէ, որ գերմանացի հայագետ Պաուլ Ռոհրբախը 1902 թ. օգոստոսին այցելում է հենց Աղթամար՝ Ավետարանի հայկական հնագույն օրինակներն ուսումնասիրելու համար[5]:

Վասպուրականի Էջմիածնի վանքի կարևոր ձեռագրերն, ըստ Հովհաննես վարդապետ Հյուսյանի հաղորդման, նախապես տեղափոխվել էին Լիմ անապատ: Մնացել էին միայն մի քանի գրչագիր Ավետարաններ[6]:

Գեորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 111:

[1] Անդ, էջ 114:

[2] ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 14, թ. 10-14:

[3] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 115:

[4] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1063, թ 1-2:

[5] **Rohrbach P.**, Vom Kaukasus zum Mittelmeer: Eine Bochzeits-und Studienreisa durch Armenien, s. 70-73.

[6] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի

Հարյուրավոր գրչագրեր կային նաև Սալնապատի Ս. Գրիգորի, Շուշանց (Ս. Կարմրավոր), Կուռուբաշի (Ս.Խաչի), Խլու, Արգելանից (Ապատհուսական որդվո), Ընծայից (Ս. Աստվածածնի), Մեծովբա և Սքանչելագործ վանքերում: Մեծոփում էր պահվում Հովհան Ոսկնակեր վարդապետի՝ Մեռելահարույց հրաշակերտ Ավետարանը, որը 19-րդ դ. վերջին ապահովության նպատակով Լիմ անապատի վանահայր Հակոբ եպիսկոպոս Թոփուզյանի ջանքերով տեղափոխվում է Լիմ[1]:

1896 թ. Վանի կոտորածների ժամանակ, վասպուրականցին կարողացել էր իր ձեռագրերի մեծ մասը թաքցնել եկեղեցիների գաղտնի պահարաններում, որտեղ դրանք 14 տարի շարունակ անճեռնմխելի մնալով բորբոսնել, փչացել, իսկ թերթերն էլ իրար էին կպել:

Երբ հայ նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը 1910-1911 թ. գործուղվում է Վան, նա թաքստոցներից հանել է տալիս շուրջ 1565 ձեռագրեր և արևի տակ չորացնելով, մաքրելով ու ցուցակագրելով՝ դրանք փրկում է կորստից[2]:

Միաժամանակ, Ե. Լալայանը տալիս է Վասպուրականի տարբեր անկյուններից հայտնաբերված այդ ձեռագրերի նկարագրությունները, դրանց հիշատակարանների և ծանոթագրությունների լիակատար ընդօրինակությունները և կազմում մանրամասն տեղեկություններ ձեռագրերի հնության, քանակի, որակի, գրիչների, ծաղկողների և կազմողների մասին:

Այդ մասին Ն. Մառին ուղղված իր նամակում Ե.Լալայանը գրում է. «Մեծարգո պարոն. Ամառվանս ընթացքում ճանապարհորդելով Վանի վիլայեթում, կազմեցի Վանի, Վարագի, Լիմ, Կտուց և Աղթամար վանքերի ձեռագրերի մանրամասն ցուցակը ըստ Տաշյանի մոտ 1500 օրինակի, որոնց մեջ կան նաև բավականաչափ մատենագիրներ: Հիշատակարանները չափազանց հարուստ են պատմական նյութերով: Հանված

համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 113:

[1] Անդ, էջ 116-118:

[2] Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, ց. 40, թղթ. 76, վավ. 17, նաև **Սամվելյան Ա. Ե.**, Երվանդ Լալայան, «Էջմիածին», 1964թ, թիվ 12, էջ 8:

են նաև մոտ 40 նկարներ ձեռագիրներից: Ամբողջ ցուցակը կկազմե հավանորեն Հ. Տաշյանի ցուցակի նման մի ստվար հատոր: Արդ՝ ցանկանալով առաջարկել Դիտութ[յան] Ճեմարանիդ հրատարակելու այս ցուցակը, դիմում եմ Ձեզ և խնդրում Ձեր թե՛ խորհուրդը և թե՛ միջնորդությունը»[1]:

Հետագայում այդ ամենը տեղ են գտնում Ե.Լալայանի՝ «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի» երեք հատորներից բաղկացած աշխատության մեջ: Աշխատությունն իր որոշ թերացումներով հանդերձ (առաջաբանի և հատուկ անունների ցանկի բացակայությունը, հիշատակարանների ընդօրինակումը բազմաթիվ ուղղագրական փոփոխություններով և այլն)[2] ունի ինչպես մատենագրական, այնպես էլ լեզվաբանական, պատմական, հնագիտական, աղգագրական և գեղարվեստական մեծ նշանակություն[3]:

Դժբախտաբար, լույս է տեսել այդ ժողովածուի միայն առաջին պրակը՝ «Ս.Գրոց վերաբերեալք» խորագրով, որն ընդգրկում է 11-18-դ դդ. 480 ձեռագրերի (այդ թվում 4 Աստվածաչունչ, 24 Սաղմոսարան, 4 Առակք և Երգ Երգոց Սողոմոնի, 2 Հին Կտակարանի հատվածներ, 8 Մարգարեություններ-Թղթեր և 438 Ավետարան) նկարագրությունը: Դրանցից ամենահինը՝ Կղավտո Տալաշա վանքում պահվող 1018 թ. գրված երկսթագիր Ավետարանն է[4]:

Սակայն, 1915 թ. հայոնի իրադարձությունների և 1915 թ. հուլիսյան աղետաբեր նահանջի ժամանակ, կորստի մատնվեցին, փչացան և անհետ ոչնչացան նաև ժողովրդի մշակույթի անգին գանձերն ու գոհարները՝ հազարավոր ձեռագրեր-գրչագրեր[1]: Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանցի[2] և Վան-Վասպուրականի վանքերի պատմության հմուտ գիտակ Հ. Համազասպ Ոսկյանի[3] կարծիքով՝ Վասպուրականի ձեռագրերի մի փոքր մասն է հնարավոր լինում միայն փրկել: Դրանց մեծ մասը կողոպտվեցին և հրդեհվեցին: Այդ մասին Հ. Ոսկյանը գրում է. «Թեև 1895-1896 դեպքերու շրջանին կարելի կըլլա անոնցմե (ձեռագրերի) կարևոր մաս մը թաքստոցներու մեջ պահել, սակայն մեծ եղեռնիատեն անոնցմե միայն փոքրիկ մաս մը հնարավոր կըլլա փրկել ու պտծուցանել. մնացածը թալանի ու կրակի կենթարկվի»[4]:

Սուրեն Քոլանջյանի համոզմամբ՝ Վասպուրականում մեր ձեռագրական կորուստների թիվը, հավանաբար, հասնում է առնվազն մի քանի հազար գրչագրի[5]: Իսկ Գևորգ Տեր-Վարպանյանն Արևմտյան Հայաստանում այդ թիվը հասցնում է 31000-ի[6]:

Անհետ կորած ձեռագրերի թվում կային հայ հնագրության և հայ գրչության պատմության համար մի շարք մեծարժեք ձեռագրեր: Իր պատկառելի հնությամբ նշանավոր էր Վանի Քոչար գյուղի երկսթագիր մագաղաթյա Ավետարանը՝ գրված 1055 թ., որը մինչև 1915 թ. պահվում էր հիշյալ գյուղի եկեղեցում, փաթաթված էր բազմաթիվ թաշկինակների մեջ և մեծ սրբություն էր համարվում: Կորած ձեռագրերից է նաև Վանի Հայնկույսներ եկեղեցում պահվող և 1188 թ. Կարինում և 1193 թ. Սեբաստիայում գրված Ավետարանները[7]:

---

[1] **Սարգսյան Ա.**,Երվանդ Լալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստաթղթեր, ԲՅԱ, 1963, թիվ 1, էջ 135:

[2] «Արարատ», Էջմիածին, 1915, թիվ 11-12, էջ 516-519:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1915, թիվ 86, նաև «Արարատ», Էջմիածին, 1915, թիվ 6, էջ 501-502:

[4] **Լալայեան Ե.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, նույնի՝ Տեղեկագիր հայոց ազգագրական ընկերութեան գործունէութեան՝ սկսած 1914 թ. մինչև 1917թ., Թիֆլիս, 1917, նույնի՝ Երվանդ Լալայան, Երկեր հինգ հատորով, հատ I, Երևան, 1983, էջ 29:

[1] **Եարտըմեան Ի. Տ. Ծ. վրդ.**, Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներուն, Վենետիկ, Ս. Ղազար, 2001, էջ 84:

[2] «Հասկ», Անթիլիաս, 1949, թիւ Բ, էջ 7-9:

[3] **Ոսկեան Յ. Ի.**, Վան-Վասպուրականի վանքերը, հ. Գ, էջ 1086:

[4] **Անդ:**

[5] **Քոլանջյան Ս.**, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, Էջմիածին, 1965, թիվ Ե-Զ-Է, էջ 144:

[6] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 108:

[7] **Լալայեան Ե.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, թիւ 44, 45, 46:

Ընդհանրապես, 13-րդ դարից մեզ հասած սակավաթիվ ձեռագրերի համար ծանր կորուստ են նաև Ամկու Նոր Գյուղում պահված և 1280 թ. Այուենյաց Քարատնիս վանքում արտագրված Ավետարանը, Լիմ անապատում գտնվող Սողոմոն Իմաստունի առակների և Երգ-երգոցի ժողովածուն՝ գրված 1287 Սիսում, Կուռուբաշի Ս. Խաչում պահված և 1292 թ. Բագավանի անապատում ընդօրինակված Ավետարանը, 1293 թ. Անարզաբայի դղյակում գրված և Ս. Հակոբի վանքում պահված արծաթապատ Ավետարանը, Ջուլամերիկի Փոկան գյուղի եկեղեցու 1298 Կյուղուց վանքում գրված Ավետարանը և այլ ձեռագրեր[1]:

Ե. Լալայանի կողմից հրատարակված Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակի միակ՝ առաջին պրակում նկարագրված 480 ձեռագրերից այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է միայն 281 ձեռագիր: Եթե նկատի ունենանք, որ հիշյալ ձեռագրերից երկուսը (Ե. Լալայան, № 4, 82, կամ Լիմ № 32, 76), գտնվում են բանասեր Հարություն Քյուրքյանի ձեռագրական հավաքածուում (Վիչիտա, Կանզաս, ԱՄՆ), իսկ մեկն էլ (Ե. Լալայան, № 33, կամ Կուռ № 230) Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտի Պետերբուրգի բաժանմունքում (№ 87), Լալայանի միայն հրատարակված ցուցակից մինչև այժմ անհետ կորած ձեռագրերի թիվը կլինի 196[2]: Իսկ անտիպ մնացած 481-1565 համարների շարքից չեն պահպանվել մոտ 450-ը: Այսինքն՝ 1565-ից 650-ը կորսվել է[3]:

Վասպուրականի ձեռագրական կորուստների մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հովհաննես վարդապետ Հյուսյանը: Նկարագրելով Լիմ, Ս. Էջմիածին (Բագեշից անապատ), Ս. Սահակ, Ս. Աբեկանից, Կուռ, Ս. Կարապետ, Ալյուրի Ս. Աստվածածին, Անանավանքի, Վարագա, Ս. Գրիգոր, Կարմրավի, Ս. Խաչ, Խլու, Արգելանից, Ընձայից Ս. Աստվածածին, Մեծոբի և Սքանչելագործ վանքերը, եկեղեցիները և անապատները՝ նա նշում է, որ թալանվեցին, հրկիզվեցին և կորսցան մատնվեցին բազմաթիվ ձեռագրեր[1]:

Մեծ վնաս կրեցին հատկապես Լիմ և Կուռ անապատների[2], Վարագա վանքի և Աղթամարի մատենադարանները[3]:

Վենեսուելացի զորավար, Վանի 1915 թ. ինքնապաշտպանության ժամանակ թուրքական բանակի հրետանու պահակազորի պետ՝ Ռաֆայել դե Նոգալեսն իր հուշերում գրում է, որ երբ հայերը լքեցին Վարագա վանքը, թուրքերի ձեռքը թողեցին հազարամյա վանքն իր գրադարանով, որը թուրքերն այրեցին[4]:

Պատմական հուշարձանների պաշտպանության դիրքերից հանդես եկող կազմակերպության բացակայությունը անպաշտպան վիճակում թողեց երկրամասի ձեռագրերի հավաքածուները, որոնք դարձան բոլոր ցանկացողների և «տգետ պիշատիչների» բաժինը:

Ձեռագրերի մի մասը, որոնք եզակի օրինակներ էին, զարդարված էին մանրանկարներով ու բովանդակությամբ մեծ մասամբ Ավետարաններ էին, թուրք և այլազգի սպաները կամ ոչնչացրեցին, կամ էլ տեղափոխեցին Եվրոպա՝ վաճառելու:

Ն. Մառը, հիմք ընդունելով ականատեսների պատմությունները, 1915 թ. հոկտեմբերին Ահազանգում էր, որ Վանից մինչև Բիթլիս ձեռագրերը հենց այնպես թափված են[5]:

---

[1] **Լալայեան Ե.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, թիւ 56, 30, 60, 62, 66:

[2] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, Երևան 1965, էջ 102:

[3] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 108:

[1] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 109:

[2] Այս մասին առավել հանգամանորեն տես Թումանյան Լ. Լիմ և Կտուց մենաստանները Մեծ Եղեռնի օրերին, «Էջմիածին», 2013, Դ, էջ 96-107:

[3] **Քոլանջյան Ս.**, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական նորուստները,«Էջմիածին», 1965, թիվ Ե-Զ-Է, էջ 137:

[4] **Де Ногалес Р.**, Четыре года под полумесяцем, с. 67.

[5] Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների մասին», «Անի», Երևան, 1992, թիվ 2, էջ 3:

Վանի նահանգի սանիտարական ջոկատի հրամանատար Ա. Ֆլորենսկին տեսել էր, թե ինչպես Վանի փողոցներում թափթփված էին ձեռագրերի կտորտանքները և թե ինչպես անդրբայկալյան կոզակները Աղթամարի ձեռագրերով իրենց համար թեյ էին եփում: Վանում նրան առաջարկում են գնել Հեթում թագավորին պատկանող մագաղաթյա ձեռագիր Ավետարանը, զարդարված բազում մանրանկարներով, որը, սակայն, չի հաջողվել գնել չափազանց բարձր գնի պատճառով[1]:

Ս. Քոլանջյանի հավաստմամբ «Մեր անգին գրչագրերով խուժանը անխնա կերպով բաղնիքները տաքացրեց և կամ չուկաներում իբրև մթերքները փաթաթելու ծրար օգտագործեց»[2]:

Սակայն, ի հեճուկս այդ ամենին՝ ձեռագրական կենտրոններից ամենից բախտավորը լինում է Վասպուրականը, քանի որ հայերի ինքնապաշտպանական կռիվների, ռուսական զորքերի ու հայ կամավորների ջանքերով, կաթողիկոսի արտոնությամբ և Վանի Երկրապահ գնդի հրամանատար Արմենակ Եկարյանի օժանդակությամբ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ձեռագիր հնությունների փրկությանը և հայ ազգաբնակչության հետ անխուսափելի կորստից և ոչնչացումից փրկվում են նաև կարևոր ձեռագրերը, որոնց մի զգալի մասը հնարավոր է լինում փոխադրել Էջմիածին:

Փ. Թերլեմեզյանը ցավով է խոսում Վանի նահանգապետ Արամ Մանուկյանի՝ ձեռագրերի նկատմամբ տածած բացարձակ անտարբեր վերաբերմունքի մասին՝ ակնարկելով հետևյալը. «Իմ հուզումնալից վերաբերմունքը զայրույթի փոխվեց, և երբ մենք ճաշի հրավիրվեցինք, ուր սեղանին մասնակից էր «փաշա» մականվանյալ Դաշնակցության լիդեր Արամը: Ես չատ խիստ արտահայտվեցի և պահանջեցի, որ այդ թանկագին ձեռագրերը Էջմիածին փոխադրվեն իբրև ավելի ապահով մի տեղ: Արամը, որ միամտություն ուներ կարծելու, թե ինձ նման անկուսակցական մի նկարչի հեշտ է իրենց փարախը մտցնել, սիրալիր էր դեպի ինձ: Բացի դրանից, նա համոզվեց, որ ազգային բարձր կուլտուրայի այդ գանձերը պետք է փրկել և խոստացավ չուտով Էջմիածին ուղարկել: Ինչպես չատ գործերում՝ այս անգամ էլ նա իր խոստումը չկատարեց[1]:

Արամի մասին բացասաբար է արձագանքում նաև Ն. Մառը «Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրացման մասին» զեկուցագրում, որտեղ խոսելով Աղթամարի ձեռագրերի փրկության մասին՝ նշում է, որ երբ Ա. Քալանթարն անձամբ դիմում է Վանի նահանգապետին օժանդակություն ստանալու ակնկալիքով, հանդիպում է վերջինիս անտարբերությանը. «...Արամին..., ինչպես լսել եմ նաև նրան լավ ճանաչողներից, բոլորովին չէին զբաղեցնում հնությունները և նման հոգսերը նրան չէին անհագստացնում»[2]:

«Վասպուրականի ինչպես չեն եղած բոլոր վանքերու մեջ, նույնպես բոլոր եկեղեցիներու մեջ չկար եկեղեցի մը, կամ պյուղ մը, ուր 10-20-30 կտոր ձեռագրեր չգտնվեին, նույնիսկ անհատներու քով իրենց տուներու մեջը փաթաթված իբրև նվիրական սրբություն կհարգվեին կպահպանվեին»[3]:

Վասպուրականի ձեռագիր հուշարձանների փրկության նախաձեռնությունը պատկանում էր Գևորգ Ե կաթողիկոսին՝ Լիմ անապատի վերջին վանահայր Հովհաննես վարպապետ Հյուսյանի մասնակցությամբ: Վերջինն իր գործունեությունն ամփոփել է իր մի աշխատության մեջ[4]:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանը հանձնարարում է նաև Ս. Տեր-Ավետիսյանին Վանում պատմա-

[1] Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների մասին, «Անի», Երևան, 1992, թիվ 2, էջ 3, 5:

[2] **Քոլանջյան Ս.**, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, Էջմիածին, 1965, թիվ Ե-Զ, էջ 144:

[1] **Թերլեմեզյան Փ.**, Կյանքիս հուշերը, էջ 298:

[2] Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին, «Անի», Երևան, 1992, թիվ 2 էջ 3:

[3] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 6ա:

[4] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, նաև ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.4002 թ. 1-17:

կան-մշակութային հիշատակարանների վիճակը ստուգելու, դրանց պահպանման համար միջոցներ ձեռք առնելու[1], հավաքելու և այդ ամենը հատուկ արկղերով Էջմիածին տեղափոխելու նպատակով [2]:

1915 թ նոյեմբերի 15-ից մինչև 1916 թ. հունվարի վերջ նա հավաքում է շուրջ 1000 հայերեն և մի քանի տասնյակ արաբերեն և թուրքերեն ձեռագրեր[3]:

Որոնողական աշխատանքների արդյունքում՝ Ն. Մառի ղեկավարությամբ ինչպես Բիթլիսի, Մուշի, Բասենի, Էրզրումի, այնպես էլ Վանի շրջաններից փրկվեցին արժեքավոր 4000 ձեռագրեր[4], որոնք հետագայում հանձնվեցին Էջմիածնի մատենադարանին, Պետերբուրգի Ասիական և Թիֆլիսի Կովկասյան թանգարաններին:

Այսպես Վանի 1915 թ. գաղթի ժամանակ փրկվում է Լիմ անապատի հազվագյուտ մի ձեռագրի մասին ուսումնասիրություն, որի հեղինակը Սահակ Ամատունին էր և որի մեջ ամփոփված էին Սահակի և Մեսրոպի հոգևոր երգերը՝ «Երգ Հոգեվորքը»[5]:

Պատահմամբ փրկվել է նաև Վարագա վանքի ձեռագրերի մի մասը, որի պահպանությունը հոգ էր տանում Դհերցի Պետրոսը[6]: Հովհաննես վարդապետ Հյուսյանը, Գևորգ Ե կաթողիկոսին գրած նամակում հայտնում էր, որ «Վարագա վանք գացինք, ճիշտ Լիմ Անապատի վիճակն ունէր, եկեղեցւոյ պատեր, յատակներ քանդուած ու կողոպտուած էր, բարեբաղդաբար գրադարանի վերածուած եկեղեցւոյն մէջ,

[1] ՀՀ ԳԱԱ-ի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 6:

[2] Доклад Х. И. Кучукь-Іоаннессова,«Армянский вестник», Москва, 1916, 6 марта, № 6, с. 21.

[3] «Кавказ», Тифлис,1916, № 62.

[4] **Տեր-Ավետիսյան Ս. Վ.**, Հայագիտական հետազոտություններ, Երևան 2010, էջ 11-12:

[5] Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, ց. 40, թղթ. 74բ, վավ. 77:

[6] **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), Պոսթոն, 1950, էջ 23:

պահարան մը նկատի լինելով միանգամայն՝ քանդիչներու աճքերէն վրիպած էր, ուր պահուած կային ձեռագիր և տպագիր մատեաններ և կարգ մը եկեղեցական իրեր»[1]:

Իր հայրենի բնօրրանում Վասպուրականի ձեռագրերի փրկության գործում անգնահատելի և հայրենանվեր գործ է կատարում նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Դեռ Ախավանքում նա իր անհետաձգելի պարտքը համարեց գտնել և կործանումից փրկել մագաղաթյա ձեռագրերը: Եղնիկ վրդ. Ներկարարյանի ուղեկցությամբ նա մտնում է այնտեղի եկեղեցու՝ նախկինում որպես հավաքուն ծառայած խցերը, որտեղ թափթփված էին խոնավությունից խունացած և մգլոտած ձեռագրերը: Այդ մասին նա հիշում է. «Ես դեռ Ախավանք չեկած շատ էի մտահոգ Աղթամարի ձեռագիրների մասին: Դրսի տունը հասնելուս պես հարցրի, թե ձեռագրերը կղզիում են, թե դուրսը: Եղնիկ վարդապետը, որ կաթողիկոսական տեղապահի պաշտոն էր կատարում, ինձ պատմեց, որ ձեռագրերը մի միջոց լեցված էին զանգակատանը, ուր, չորս կողմից բաց լինելով, անձրև էր գալում վրանին և քամին էլ պոկոտում էր նրանց թերթերը: Այդ պատճառով բերինք դուրս ու թափեցինք այն փոքր սենյակը... Առաջարկեցի, որ անմիջապես ինձ թույլատրվի տեսնել նրանք: Եղնիկ վարդապետը, որի անվան վերջին «նիկ» վանկը սխալմամբ էր պահված, ինձ ընկերացավ, և մենք միասին տեսանք թանձր փոշիների մեջ իրար վրա թափթփված պատվական ձեռագրերը: Այդ բոլորովին փոքր խուցին կից կար մի ուրիշը, որի մեջ լեցված էին աշակերտների այբբենարանները: Այդ երկու խուցերն էլ առաջ հավի բուն էին եղած: Ես մոտեցա և վերցրի այբբենարաններից մի քանիսը և թափ տալով փոշիները բաց արի, տեսա նրանց բոլորի երեսների վրա փակցված էին մագաղաթներից մկրատված նկարներ»[2]:

[1] «Արարատ», Էջմիածին, 1915թ., նոյեմբեր-դեկտեմբեր, թիվ ԺԱ-ԺԲ, էջ 863-864:

[2] **Թերլեմեզյան Փ.**, Կյանքիս հուշերը, էջ 298:

Պարզվում է, որ Աղթամարից առաջին անգամ բերված 201 ձեռագրերից 34-ը հայտնաբերվել էին Աղթամարի միաբան Դանիել վրդ. Զադոյանի սնդուկից[1], որոնք նա նպատակ էր ունեցել յուրացնելու: Հուլիսյան գաղթի ժամանակ Ախավանքի ձեռագրերը սնդուկների մեջ առագաստանավով տեղափոխում են Ավանց: Սակայն այնտեղից հաջողվում է միայն երեք սնդուկ ուղարկել Էջմիածին, իսկ երկու սնդուկն էլ գցում են լիճը թուրքերի ձեռքը չընկնելու նպատակով: Ըստ մի տեղեկության, Զադոյանը երեք սնդուկներից մեկի պարունակած ձեռագրերը ծովն է թափել և իր շորերն ու անկողինը տեղավորել[2]: Մնացած 169 ձեռագրերը ունեցել են Աշոտ Հախումյանի ձեռքով կազմված և ստորագրված մի ցուցակ[3]:

Փ. Թերլեմեզյանը ընդօրինակում և իր մոտ է պահում 9 լավագույն ձեռագրերի նկարները և լուսանցքային զարդերը՝ փրկելով դրանք կորստից: Այդ մասին նա տեղեկացնում է. «Գաղթից հետո, երբ մի կերպ Թիֆլիս հասա և երբ ոչ հագուստ ունեի վրաս և ոչ փող գրպանումս, այդ ձեռագրերի ընդօրինակությունները տարա Հայոց ազգագրական միության գրասենյակը, ուր ընկ. Լալայանը վերցրեց այդ կոպիները իրենց վարչական ժողովին ներկայացնելու: Բայց որովհետև շատ հավանեց, հանեց երեք ռուբլի փող տվեց և մի էշի բեռ էլ խոստում, որ իբր թե իրենց վարչությունը շատ լավ պիտի գնահատի ու հետո փողեր պիտի ստանամ: Իհարկե, ձգձգումի պատճառով ես հեռացա և փող չկարողացա ստանալ: Այժմ իմ այդ իննը ընդօրինակություններից միայն երեք հատ տեսած եմ մեր Պետական թանգարանում, իսկ մյուսները անհետացած են»[4]:

Աղթամարից մատենագիր-ձեռագրերի տեղափոխման գործում մեծ դեր են խաղում Սիրական Տիգրանյանը, Ա-Դոն[5] և Ա. Ա. Ֆլորենսկին[1]: Այդ մասին Ա. Ա. Ֆլորենսկին հիշում է. «...երեկոյան ոտքով հասա Ավանց, որտեղ լաստանավ ճարեցի: Հենց այստեղ, նավամատույցում կանգնած էր մի լաստանավ Ախթամարի վանքի գույքով ու գնդակներով: Նրա պահակներ՝ աշխարհազորայիններ Սարգիսը (Անդրանիկի ջոկատից) ու Արմենակը (Համազասպի ջոկատից) անմիջապես սկսեցին խնդրել ինձ վերցնելու իրենց ու գույքը, քանի որ ռազմական իշխանությունների հրամանով Ավանցում մնացած բոլոր լաստանավերը, այդ թվում նաև բեռնվածները (Ախթամարի վանքի ձեռագրերն էլ) պետք է ջրի հատակը իջնեին: Որոշ տատանումներից հետո ես համաձայնեցի, չնայած զգում էի, թե որքան վտանգավոր է հայկական եկեղեցու գույքի հետ գործ ունենալը: Կամավորների ու բոլոր փախստականների ներկայությամբ այդ առարկաները բեռնվեցին լաստանավ: Գործից չհասկացող փախստականների հետ լճով այս ու այն կողմ լողալը այն էլ չհենթակվող գերբեռնված լաստի վրա ու թուրքական հրետանակոծության տակ (վերջում) նման էր մղձավանջի, ու ես համարյա ոչ մի մանրամասն չեմ հիշում: Ճիշտն ասած, քարտեզ չունենալով, ես չեմ կարող հիշել, թե վանքերից որն էր Լիմը, որը Կուց անապատը: Նրանցից մեկում ամեն ինչ կարգին էր, իսկ ծեր վանականն ու ... չէին հեռացել: Վանականը մեկ մեզ խնդրում էր իրերը մեզ հետ տանել, մեկ ինքն էր որոշում մնալ»[2]:

Վերջինը 1916 թ. աշնանը Մոսկվա է հասցնում ձեռագիր մի Ավետարան, որն իր ազգականուհի է. Պ. Մելիք-Բեգլյարովայի միջոցով փոխանցում է տեղի Խաչվերաց եկեղեցուն[3]:

Հովհաննես վարդապետ Հյուսյանը գրում է, որ այդ ժամանակ նա Գևորգ Ե կաթողիկոսին է հանձնում Լիմի անապատի ազգային եկեղեցական բոլոր սրբություններըՙ այդ

[1] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 4(դ):

[2] **Էշատիրաւացի**, Վասպուրականի գրչագրերը, «Արծուի Վասպուրական», Բոստոն, 1944, սեպտեմբեր, թիվ 9, էջ 5:

[3] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 41 (դ):

[4] **Թերլեմեզյան Փ.**, Կյանքիս հուշերը, էջ 299:

[5] «Արարատ», Էջմիածին, 1917, յունուար, թիւ Ա, Էջ 7,10:

[1] Պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան, № 839, արկղ 7, գ. 198, տետր 12, թ. 3:

[2] Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին, էջ 6:

[3] **Кучукъ-Іоаннесовъ Х.**, Старинная армянская рукопись изъ Вана, «Армянский вестник», Москва, 1917, №8, с. 2.

թվում 17 կտոր գրչագիր սրբազան մատյաններ՝ իբրև գրչի գեղարվեստի գոհարներ և հրաշալիքներ, որոնցից 7-8 կտորները՝ մագաղաթյա էին[1]:

Կտուց անապատի ձեռագրերի փրկության մասին թեմական առաջնորդ Եղնիկի տվյալները կցկտուր են, սակայն ավելի մանրամասն են նկարիչ Փանոս Թերլեմեզյանի տեղեկությունները: 1915 թ. հուլիսի 22-ին նա եղել էր Կտուց մենաստանում, որտեղ գբաղվել էր ձեռագրերից նկարներ քաղելով: Այդ մասին Փ. Թերլեմեզյանը Ն. Մառին տեղեկացնում է, որ «դեռևս հուլիսի 20-ին Կտուց մենաստանից փախան քահանաները, նախօրոք թաքցնելով որոշ եկեղեցական առարկաներ ու ձեռագրեր, բայց անտեր թողնելով հարյուրավոր այլ ձեռագրեր, ֆիրմաններ, գնդակներ և այլ: Հուլիսի 22-ին կղզի՝ Կտուց մենաստան ժամանեց պր-ն Ֆլորենսկին և առաջարկեց իրեն հանձնել եկեղեցու առարկաները ու ձեռագրերը: Ես բացատրեցի, որ ես մենաստանի վանահայրը չեմ, այլ հյուր եմ, և որ ավելի անվտանգ կլինի եթե ձեռագրերը կղզու վրա մնան: Այդ ժամանակ պր-ն Ֆլորենսկին վերցրեց սուլթանական ֆիրմանները, (կաթողիկոսական) կոնդակները, «մի երկու» ձեռագիր ու նավակներով ուղղվեց Լիմի անապատ»[2]:

1915 թ. հուլիսին Վասպուրականի մեծ գաղթի ժամանակ մի շարք եկեղեցական ու թանգարանային արժեքների հետ միասին էջմիածին են տեղափոխվում 284 (ըստ Գարեգին Ա կաթողիկոսի՝ 1500)[3] ձեռագրեր, այդ թվում Աղթամարից՝ 201, Վանից և նրա շրջակայքից՝ 61, Լիմից՝ 22: Մնացած

[1] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 4 ա, նաև Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, ց. 40, թղթ. 74բ, վավ. 77, նաև **Ս.Քոլանջյան,** Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիվ Ե-Զ-Է, էջ 139, նաև **Գէորգ Տէր-Վարդանեան,** Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևազալ», Բ, Երևան 2004, էջ 111:

[2] Ակադեմիկոս Ն.Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին, էջ 4:

[3] **Գարեգին Ա կաթողիկոս**, «Մատենադարանները հին հայոց մէջ», «Պայքար», (բացառիկ), Բոստոն, 1946, էջ 13:

ձեռագրերը խնամքով թաքցվում են առանձին թաքստոցներում[1]:

Գևորգ Ե կաթողիկոսը գործի է դնում բոլոր միջոցները Վասպուրականում մնացած մշակութային մյուս նչխարները փրկելու ուղղությամբ: 1915 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1689 կարգադրությամբ կաթողիկոսը հանձնարարում է Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանին՝ Կտուց անապատի վանահայր Ստեփան վարդապետի հետ «վերադառնալ հայրենիք և ժողովելով անապատների բոլոր ձեռագրերը և թանկարժեք հնություններ, կանոնավորապես ցուցակագրել և ապահով ճանապարհով բերել Ս.Էջմիածին, այնտեղ անկորուստ պահպանելու համար»[2]:

Կաթողիկոսին ուղղված 1915 թ. նոյեմբերի 2-ի իր նամակում Ս. Տեր-Ավետիսյանն առաջարկում էր «...որպէսզի եկեղեցու իրաւունքները իբրև սեպհականատիրոջ խախտուած չլինին, ես կարծում եմ, ցանկալի կը լինէր, որ Վան գնացած վարդապետներից մեկին վեհափառը լիազօրէր ու նշանակէր իբրև ներկայացուցիչ հոգևոր իշխանութեան, որի հետ միասին իրերը ցուցակագրելուց յետոյ կարելի կը լինէր ուղարկել էջմիածին կամ Թիֆլիզի առաջնորդարան, որտեղ որ ապահով կը համարէք»[3]: Ընդառաջելով Ս. Տեր-Ավետիսյանի նամակին՝ կաթողիկոսը նրան իբրև հոգևոր իշխանության ներկայացուցիչ է կցում Լիմ անապատի վերջին վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանին, որը հոկտեմբերից պանվում էր Վանում: Այդ մասին Հովհաննես վարդապետ Հյուսյանը հիշում է. «Նոյն՝ 1915 թուականի Հոկտեմբերին, երբ Վան արդէն վերստին Ռուսական բանակի կողմէ գրաւուած էր, Տ. Գէորգ Ե. կաթողիկոսը կանչեց ինձ Վեհարան

[1] Պատմության թանգարան, Նոր պատմության բաժին, **Ա-Դո**, Իմ հիշողությունները, ք.մ. 839/196 (գ), էջ 210, նաև «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ ԺԱ-ԺԲ, էջ 865, նաև «Հովիտ», Թիֆլիս, 1915, օգոստոսի 30, թիւ 33, էջ 508:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1060, թ. 4, նաև «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ ԺԱ-ԺԲ, էջ 811:

[3] «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ ԺԱ-ԺԲ, էջ 861:

և առաջարկեց. «Հա՛յր Յովհաննէս, կուզեմ մէկն ղրկել Վան՝ Վասպուրականի ձեռագիրներն հաւաքելու բերելու. և յարմար Ձեզ դատած եմ, Ձեզի կը վստահիմ այս գործը, որդի՛ս, քանի որ Դուք գործնականապէս ապացուցիք Ձեր հաւատարմութիւնը Ազգ. հնութիւններու և սրբութիւններու հանդէպ, ինչպէս որ հաւատարմաբար և առանց կորստեան բերիք և յանձնեցիք Էջմիածնին Լիմ անապատի դարաւոր և թանգարժէք հիւթիւններն, սրբութիւնները: Ուրեմն Ձեզ կը վստահիմ և Ձեզ կը յանձնարարեմ այս կարևոր գործն ալ կարգադրելու...»[1]: Վեհափառը միաժամանակ հանձնարարում, որ «որոնած և գտած հնագիտական բոլոր իրեղէնները, մեծ ու փոքր ձեռագրերը, եկեղեցական հնագիտական արժէք ունեցող սպասներն ու զարդերը մանրամասն ցուցակագրուին և ցուցակագրելուց յետո կնքուին հոգևոր իշխանութեան ներկայացուցչի և Ձեր (իմա՝ Սմբ. Տեր Ավետիսյան) կնիքներով և պահակների ապահով հսկողութեան տակ փոխադրուին ուղղակի Ս. Էջմիածին և Տփխիս»[2]:

Սակայն, միաժամանակ Հովհաննես վարդապետ Հյուսյանը 1915 թ. նոյեմբերի 10-ին կաթողիկոսին ուղղված իր գրութեան մէջ տեղեկացնում էր Վասպուրականի հնությունների անհուսալի վիճակի մասին. «Եկեղեցւոյ և ամբողջ սենեկաց դռները խորտակուած, ձեռագիրներու ընտիր մասը վերցուած է, կը մնան ճառընտիր-յայսմաւուրքներ և մաս մը անարժէք ձեռագրեր: Ժողովուրդէն կը տեղեկանանք, որ անապատներն այս տխուր վիճակին հասցնող առաջին անգամ եղած են ..., որոնք մեր կղզիէն հեռանալէն զկնի, նաւով ներս կը մտնեն և եկեղեցւոյն ու սենեկաց դռները խորտակելով՝ շատ մը բաներ կը վերցնեն»[3]: Այնուհետև, հայտնում էր, որ Վարագա վանքի ձեռագրերը պատահաբար փրկվել են:

[1] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 111:

[2] «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ ԺԱ-ԺԲ, էջ 860-862:

[3] Անդ, էջ 863:

Վեհափառը, տեղեկանալով այդ մասին, նույն թվականի նոյեմբերի 21-ի կոնդակով Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետին, պատվիրում է «մնացորդ ձեռագիրների ամբողջական ցուցակը ուղարկել Նորին Վեհափառութեան՝ ապա յափշտակութիւնից ազատուած անխտիր բոլոր ձեռագիրներն և միւս եկեղեցական հնութիւնները ապահով կերպով փոխադրել Ս. Էջմիածին յանուն Դիւանիս»[1]: Նա միաժամանակ հանձնարարում է տեղեկություններ հավաքել, թե «ո՞ւր են տարուած աւարած ձեռագիրներն ու հնութիւնները... և ճշտել հնախոյզի անուն ազգանունը»: Թե ովքե՞ր են եղել հափշտակողները և ո՞վ է այդ «հնախոյզը», դժբախտաբար մեզ հայտնի չէ, որովհետև չի պահպանվել Հովհաննես վարդապետ Հյուսյանի վերոհիշյալ գրության ընդարձակ բովանդակությունը: Միայն հայտնի է, որ Էջմիածնի կաթողիկոսության դիվանի դիվանապետ Բաբգեն վարդապետը գտնում է, որ թանկարժեք պատմական հիշատակությունների և հնությունների ոչնչացումն իրականացվել է «բարեկամ կարծեցեալ անարժան մարդկանց ձեռքով»[2]:

Մինչև 1915 թ. դեկտեմբեր, երկու ամսվա ընթացքում Հ. վրդ. Հյուսյանին հաջողվում է հավաքել 1410 կտոր գրչագիր մատյաններ, որից 400-ը՝ Լիմ անապատից, 360-ը՝ Վարագա վանքից, 300-ը՝ (320 նույն հոդվ. էջ. 114) Կտուց անապատից, 350-ը՝ Վանի և Այգեստանի Ս. Նշան, Ս. Ծիրանավոր, Ս. Սահակ, Ս. Վարդան, Ս. Պողոս, Ս. Աստվածածին, Հայկավանքի, Հանկույսների և Նորաշենի եկեղեցիներից[3]:

Ձեռագրի մեծ, ամենաընտիր մասը, մնացին և բաժին հասան թուրքերին՝ Կտուց անապատի միաբան Ստեփան աբեղայի և Վարագա վանքի գործակալ Պետրոսի անհեռատեսության և կամակորության շնորհիվ[4]: Այդ մասին Հ. վրդ. Հյուսյանը նշում է. «1918 թուին Վան վերադարձող ժողովր-

[1] Անդ, էջ 865:

[2] «Արարատ», Էջմիածին, 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ ԺԱ-ԺԲ, էջ 865:

[3] **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ., Երևան 2004, էջ 111-112:

[4] **Անդ:**

դեան երկրորդ նահանջին 10-12.000 գերի մնացողներէն ողջ մնացող 400 անձեր, երբ Խորհրդային կառավարութեան համաձայնութեամբ ղրկուեցան Հայաստան, նոցա պատմութեամբ, որոնք ականատես եղած են և այժմ ողջ կան ի Հայաստան, թիւրքեր մտնելով կղզիներ, կը խուզարկեն և կը գտնեն պահարանները թէ՛ Կտուց անապատին ամբողջապէս և թէ՛ Վարագայ այն պահարանը, որը չուզեց յայտնել Պետրոսը, և եղած ամբողջ հարստութիւններն ու ձեռագրերն կամբարեն Վան, գերի մնացող հայերէն Արսէն Կիրակոսեանի և մի քանի ուրիշներու կը կանչեն իմանալու, քննելու, թէ ի՛նչ գրքեր են ատոնք, որոնք կիսագրագէտ ըլլալով, միայն այսքան կը հասկացնեն, թէ՝ Այս գրքերը ձեռքով գրուած են, հին գրքեր են, տպուած չեն որ մենք կարենանք կարդալ և ձեզ հասկացնել և այլն: Այս եղելութիւնը պատմողներու համեմատ, ամբարուած այդ հնութիւններն և ձեռագրերը փոխադրուած են, բայց իրենք չեն կրցած իմանալ՝ ո՞ւր արդեօք՝ Անկիւրի՛, թէ՝ ուրիշ քաղաք մը»[1]... Հովհաննես Հյուսյանը երկու օր պրպտելուց հետո հազիվ կարողացել է գտնել Վարագավանքի թաքստոցներից մեկը, ուր զետեղված էին եկեղեցական հասարակ զգեստները և անոթները և 360 կտոր ձեռագրեր: «Իսկ այն գաղտնարանը, - գրում է Հյուսյանը, - որու մէջ պահված էին թանկարժէք սուրբ անոթները, եպիսկոպոսական ականակուռ և ասեղնագործ թագերը, չուրջառները, ծածկոցները, խաչերը, սկիհները, գավազանները և այլն, որոնց հետ նաև 150 կտոր, ոսկեզօծ մագաղաթի և ընտիր ձեռագիր մատեանները, հակառակ թափված բոլոր ջանքերուս, չկարողացա գտնել»: Վանքի գործակալ Պետրոսը թաքստոցի տեղը հայտնելուց հրաժարվեց:[2] «Երբ տակաւին էջմիածնէն չէի վերադարձած Վան, Վարագայ գործակալ պ. Պետրոսը կը գտնուէր էջմիածին, չատ խնդրեցի իրմէ յայտնել ինձ պահարանն՝ որ եկեղեցւոյ մէջ ըլլալը, յամառեցայ և չուզեց յայտնել, պատասխան տալով ինձ, թէ Աւելորդ է պահարանին տե-

[1] Տէր-Վարդանեան Գ., Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ., Երևան 2004, էջ 114:

[2] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 12բ:

ղը յայտնել, որովհետև նա՛ այնպիսի ապահով և անյայտ տեղ է, որ ո՛չ ոք՝ ո՛չ հայ, ո՛չ թուրք չի կարող գտնել, թող մնայ այն՝ գուցէ կարգադրութիւնը մը ըլլայ, վերադառնանք մեր երկիրը, այն ատեն մենք մեր պապերու մեզ թողած ժառանգութիւնէն իսպառ ղրկուած չենք ըլլար»[1]:

«320 կտոր միայն հաջողեցայ ինձ բերելու էջմիածին, իսկ մնացածը՝ ամենաքնտիր մասը, եկեղեցական բոլոր հնութեանց և սրբութեանց հետ մնացին և բաժին եղան թուրքերուն չնորհիվ նույն անապատի միաբան, անհետաքրքիր և կամակոր Մատթիան աբեղային, որուն դարձյալ նման Վարագա գործակալ Պետրոսին, չատ խնդրեցի ցուցանել իրենց պահարանը և հանձնել էջմիածին փոխադրելու, սակայն չլսեց և չհամաձայնեցավ»[2]:

Հ. Հյուսյան վարդապետը թուրքերի ձեռքը գերի ընկած և ապա ազատված հայերից լսել էր, որ թուրքերը, մտնելով կղզիները, խուզարկելով գտել են, ինչպես Կտուց անապատի, այնպես էլ Վարագի այն պահարանը, որի տեղը չէր հայտնել հիշյալ Պետրոսը և ողջ հարստությունը և ձեռագրերը հավաքելով Վանում, տեղափոխում են այլ քաղաք:

Ողբերգական ճակատագրի են արժանացել նաև կարևոր այլ ձեռագրեր: Այսպես, Հ. Հյուսյանը, խոսելով Ալյուր գյուղի Ս. Աստվածածին (Ս. Գրիգոր Նարեկացի) վանքի հարստությունների մասին, գրում է, որ «Վանքին գրչագրերը նույնպես Կտուց անապատ էին տարված, կմնային միայն 8-10 կտոր Ավետարաններ և երկու արծաթապատ Նարեկներ, որոնցմե մինը մագաղաթի էր 10-րդ դարու գրված էր իր իսկ Ս. Գրիգոր Նարեկացու մատներով», որը հրաշագործ էր համարվում: «Սույն անգին գանձն ալ... վանքին մեջ մնացածներու հետ կորսյան մատնվեցավ»[3]:

[1] Տէր-Վարդանեան Գ., Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ Երևան 2004, էջ 116:

[2] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 4ա, 9բ-10ա:

[3] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 11 ա-բ:

Այդ ձեռագրերը, ինչպես նաև Վանի նոր նահանգապետ Ա. Տերմենի մոտ պահվող Վանի Ս. Նշան եկեղեցու մի քանի ձեռագրեր ևս հանձնվում են Հովհաննես վարդապետ Հյուսյանին, որն էլ դրանք նույն Ա. Տերմենի օժանդակությամբ փոխադրում է Վան: Այնտեղ ձեռագրերը Արմենակ Եկարյանի, Ռուբեն Հովնանյանի[1] գիտությամբ ու ներկայությամբ ցուցակագրվում են և պահվում արկղերում: Երկրորդ անգամ բերված ձեռագրերի ցուցակը կազմել է Դանիել վրդ. Զադոյանը Վանում՝ 1916 թ. հունվարի 3-ին: Ըստ այդ ցուցակի, երկրորդ անգամ Աղթամարից բերվել են 84 հայերեն ձեռագրեր, 6 հմայիլներ, 4 արաբատառ ձեռագրեր, 1 կոնդակ, տպագիր 1 գիրք, ընդամենը՝ 96 միավոր[2]:

Այս բոլոր 87 ձեռագրերը (67-ը հայերեն և 20-ը՝ այլ լեզուներով) գնահատելով առանձին արկղերի մեջ՝ Հյուսյանն անձամբ 1916 թ. հունվարի 7-ին Ջուլֆայի վրայով տանում է Էջմիածին[3] և կաթողիկոսական դիվանի թիվ 200 գրությամբ անմիջապես հանձնում է Էջմիածնի մատենադարանապետ Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանին[4]:

Տեղական ուժերի օգնությամբ Ս. Տեր-Ավետիսյանը և Հովհաննես վարդապետ Հյուսյանը, կարճ ժամանակում, Վանի շրջանի վանքերից և եկեղեցիներից փրկեցին և Էջմիածնի Մատենադարանին հանձնեցին 1082 մեծ ու փոքր ձեռագրեր, այդ թվում Աղթամարից՝ 84, Վանից՝ 173, Կաուցից՝ 187, Լիմից՝ 281, Վարագից՝ 357: Այդ մասին է փաստում հենց ինքը՝ Սմբ. Տեր Ավետիսյանը[5]: Սույն 1082 ձեռագրերի ստացման վերաբերյալ կաթողիկոսական դիվանի 1916 թ. մարտի 23-ի թիվ 681, 682, 683, 684 գրություններով տեղեկություն է հայտնվում Աղթամարի միաբան Դանիել վրդ. Զադոյանին, Կաուց անապատի վանահայր Ստեփան վարդապետին և Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանին[1]:

Այդ ամենը 1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ բերված 284 ձեռագրերի հետ կազմում են 1366 ձեռագիր (ընագրում սխալմամբ ձեռագրերի ընդհանուր թիվը նշված է 1326), որից 285-ը՝ Աղթամարից, 234-ը՝ Վանից, 303-ը՝ Լիմից, 187-ը՝ Կաուցից, 357-ը՝ Վարագից[2]:

Այս ամենը հաստատում է նաև ոմն «Էշատիրաւացին», իր՝ «Վասպուրականի դրչագրերը» հոդվածում, ըստ որի փրկված ընդհանուր ձեռագրերի թիվը կազմում է 1365, որից 288-ը՝ Աղթամարից, 236-ը՝ Վանից, 297-ը՝ Լիմից, 187-ը՝ Կաուցից և 357-ը՝ Վարագից[3]:

Ձեռագրերի ստացման համար մտահոգ էր նաև Ե. Լալայանը, որը 1916 թ. փետրվարի 17-ին Էջմիածնի Մատենադարանի նախկին անօրեն Սենեքերիմ Տեր-Հակոբյանին գրած իր նամակում ցանկանում էր ճշտել ուղարկված ձեռագրերի ճակատագիրը, որպեսզի դրանք համեմատեր նախապես իր կազմած ցուցակի հետ[4]:Վասպուրականից բերած բոլոր ձեռագրերը նկարագրված են Էջմիածնի Մատենադարանի պրքապահ Գագրիկ Ներսիսյանի կազմած այսպես կոչված «Գագրիկյան» ցուցակում[5]: Ըստ այդ ցուցակի՝ Վասպուրականի ձեռագրերի քանակը հավասար է 1376-ի, այդ թվում

[1] **Գազանճեան Գ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 142:

[2] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 41(գ):

[3] «Արարատ», Էջմիածին, 1916, ապրիլ, թիվ Դ, էջ 344:

[4] «Արարատ», Էջմիածին, 1916, յունուար-փետրուար, թիվ Ա-Բ, էջ 26, նաև՝ **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան 2004, էջ 112:

[5] ՀՀ ԳԱԱ-ի արխիվ ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 17, նաև «Գեղարուեստ», 1917, թիւ 6, էջ 268:

[1] «Արարատ», Էջմիածին, 1916, ապրիլ, թիվ Դ, էջ 195:

[2] Անդ, էջ 46-47: Ըստ Ն. Ազգունու տվյալների 355-ը՝ Վարագից, 29-ը՝ Ս. Նշան եկեղեցուց, 47-ը՝ Ս. Սահակից, 20-ը՝ Ծիրանավորից, 31-ը՝ Ս. Պողոս-Պետրոսից, 42-ը՝ Ս. Վարդանից: Տես «Հովիտ», Թիֆլիս, 1916, փետրվարի 21, թիւ 7, էջ 109:

[3] **Էշատիրաւացի**, Վասպուրականի գրչագրերը, «Արծուի Վասպուրական», Բոստոն, 1944, սեպտեմբեր, թիւ 9, էջ 5:

[4] Ե. Լալայանը այդ ձեռագրերի թվաքանակը ներկայացնում է 1118: Տես Մատենադարան, ֆ. Ս. Տեր-Հակոբյանի արխիվը, ց. 40, թղթ. 76, վավ. 17, նաև **Ա. Յ. Ադամյան**, Երվանդ Լալայանի անտիպ նամակներից, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1965, թիվ 8, էջ 78:

[5] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 18:

Աղթամարից՝ 271, Վանից՝ 235, Լիմից՝ 305, Կոուցից՝ 200, Վարագից՝ 343 և մեզ անհայտ վայրերից՝ 15 ձեռագիր: Այդ 1376 ձեռագրերից 9 միավոր եղել է տպագիր, մեկը՝ այլևայլ թղթեր, իսկ երեքը՝ արաբերեն: Հետևապես, Վասպուրականից էջմիածին բերված միայն հայերեն ձեռագրերի քանակը, ըստ այդ ցուցակի, հավասար է 1363-ի, կամ ավելի ճիշտ՝ 1359-ի, որովհետև այդ ցուցակից չորս ձեռագրեր (թիվ 817, 1391, 292, 204, որոնք Մատենադարանի ձեռագրերի Մայր մատյանում գրանցված են եղել 4678, 4821, 4835, 4751 համարների տակ), հանդիսանալով նույն ցուցակի այլ չորս ձեռագրերից (թիվ 813, 1183, 296, 1352, արդի թվերը՝ 4676, 4723, 4736, 4739) անջատված և թյուրիմացաբար ինքնուրույն միավորներ համարված ձեռագրեր, նորից միացված են իրար (թիվ 817 և 813, 1391 և 1183, 292 և 296, 204 և 1352):

Հետագա բոլոր տեղեկությունները հաստատում են, որ Վասպուրականից էջմիածին տեղափոխված ձեռագրերի քանակը չի անցնում վերը նշված քանակից (1376):

«Ներկայումս... Մատենադարանում գտնվող ձեռագրերը, - գրում է «Արարատ»-ի խմբագիրը, - բերվել են Տաճկահայաստանից. այս ձեռագրերը ունին մի ցուցակ՝ կազմված մի քանի տարբեր անձերի ձեռքով, որի միայն առաջին մասը (մոտ 300 ձեռագրերի) կանոնավոր կազմված է, իսկ մնացյալ մեծագույն մասը կազմվել է շատ անխնամ: Ցուցակի վերջին №-ն է 1526, կան քիչ թվով ցուցակ չմտած ձեռագրեր»[1]:

Այստեղ խոսքը վերաբերում է «Գազրիկյան» ցուցակին, որի մեջ նկարագրված 1526 (փաստորեն՝ 1531) ձեռագրերից 155-ը՝ բերված են Մուշից, իսկ 1376-ը (փաստորեն՝ 1359)՝ Վասպուրականից:

Նույն բանը հաստատում է նաև 1917 թ. դեկտեմբերի 29-ին կազմված ընկալա-հանձնողական մի արձանագրությամբ, երբ նախկին մատենադարանապետ Գևորգ Զորեքյանը հանձնում, իսկ նոր նշանակված մատենադարանապետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը ընդունում էր Մատենադարանը:

[1] «Արարատ», Էջմիածին, 1917, յուլիս-յուլիս, թիւ Զ-Է, էջ 571:

Այստեղ նշված է, որ Տաճկահայաստանից բերված ձեռագրերի քանակն ըստ ցուցակի հավասար է 1526-ի (փաստորեն՝ 1531, այդ թվում՝ Վասպուրականից՝ 1376, Մուշից՝ 155): Բացի դրանից, եղել է նաև 40 ձեռագիր՝ բերված այլևայլ վայրերից, բայց չցուցակագրված: Ուստի ստացված է ընդամենը՝ 1566 ձեռագիր[1]:

Այս փաստերը ցույց են տալիս, որ Վասպուրականից՝ 1915 թ. հուլիսից և 1916 թ. հունվարից հետո, կարծես, այլևս ձեռագրեր չեն բերվել:

Սակայն, այս տեղեկությունները չեն համապատասխանում Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանի հաղորդած տվյալներին, որոնք զետեղված են նրա «Համառոտ նկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանավոր վանքերու...» աշխատության մեջ: Ըստ Հովհ. վարդապետ Հյուսյանի տվյալների 1915 թ. հուլիսին և 1916 թ. հունվարին Վասպուրականից հավաքված ձեռագրերի թիվը հասնում է 1410-ի, որից 400-ը՝ Լիմից, 360-ը՝ Վարագա վանքից, 300-ը՝ Կոուց անապատից, իսկ 350-ը՝ «Վանա և Այգեստանյայց Ս. Նշան, Ս. Ծիրանավոր, Ս. Սահակ, Ս. Վարդան, Ս. Պողոս, Ս. Աստվածածին, Հայկավանքի, Հայնկույսներու և Նորաշենաց եկեղեցիներեն հողերու և մոխիրներու տակեն, կամավորներեն այս ու այն անհատներեն»[2]:

Ինչպես երևում է՝ այստեղ բացակայում է Աղթամարի վանքը, ապա բերված ձեռագրերի քանակը ցույց է տրված 54 միավորով ավելի: Հավանաբար, նա Աղթամարից բերված ձեռագրերը թյուրիմացաբար միացրել է Լիմից և Կոուցից բերված ձեռագրերին, իսկ ձեռագրերի քանակի հարցում՝ սխալվել:

1916 թ. մայիսին, երբ Հ. Հյուսյանը կաթողիկոսի կարգադրությամբ հոգևոր հովիվի պաշտոնով կրկին Վան էր վերադարձել, էջմիածին է ուղարկում ևս 660 կտոր ձեռագիր, որից 400-ը՝ կապիտան Զանկալյանի, իսկ 260-ը՝ Խժիշկ գյուղի բնակիչ Սահակ Գարագոչյանի միջոցով: Հյուսյանը

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ֆ.239, վավ.96:

[2] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիւ 92, էջ 5ա:

նշում է, որ Զանկալյանը Ամերիկա վերադառնալուց առաջ, պիտի գնար Էջմիածին և ներկայանար Գևորգ Ե կաթողիկոսին: Ըստ Հյուսյանի, Զանկալյանին հանձնված ձեռագրերը անկորուստ բերվել և հանձնվել են կաթողիկոսին[1]:

Այսպիսով, Վասպուրականից Էջմիածին տեղափոխված ձեռագրերի ընդհանուր թիվը հասնում է 2070 հատ[2]:

Վերը բերված բոլոր փաստերը ցույց են տալիս որ 29.12.1917 թվականի դրությամբ Էջմիածնի Մատենադարանում եղել է ընդամենը 1566 ձեռագիր, այդ թվում՝ Վասպուրականից՝ 1376, Մուշից՝ 155 և այլևայլ վայրերից՝ 40: Իսկ դա նշանակում է, որ Զանկալյանի միջոցով ուղարկված 400 և Սահակ Գարագոշյանի միջոցով առաքված 260 կոտոր ձեռագրերը մինչև 29.12.1917 թ. Էջմիածին մուտք չեն գործել: Գո՞ւցե այդ ձեռագրերը տեղ են հասել այդ թվականից հետո: Այդ մասին ոչ մի տեղեկություն չկա ո՛չ Մատենադարանի գործերում և ո՛չ էլ Կաթողիկոսական դիվանի գրություններում: Բացի այդ, եթե երբևիցե այդ 660 ձեռագրերը մուտք գործած լինեին Մատենադարան, ապա որևէ կերպ պիտի դրանք իրենց արտահայտությունը գտնեին մատենադարանի ձեռագրական ֆոնդում, որը նույնպես փաստերով չի հաստատվում:

Ի՞նչ եղան այդ 660 ձեռագրերը:

Ըստ Օ. Եգանյանի միգուցե Հովհ. վրդ. Հյուսյանը թյուրիմացության մեջ է եղել և ոչ մի ձեռագիր էլ չի ուղարկել: Սակայն «Արարատ»-ի 1916 թ. մայիսի և հունիսի միացյալ համարից տեղեկանում ենք, որ Հյուսյանը Վանի շրջակայքից հավաքած բավական ձեռագրեր է ուղարկել Ջուլֆայի վրայով, սակայն մաքսային վարչությունը թույլ չի տվել առանց մաքս վճարելու անցկացնել նշված ձեռագրերը: Այդ կապակցությամբ Գևորգ Ե կաթողիկոսը դիմել է Կովկասի փոխարքայի օգնական իշխան Օրլովին, իսկ վերջինս ընդառաջել է կաթողիկոսին, և ձեռագրերը (թվով 87, որից 20-ը այլ լեզուներով) առանց մաքս վճարելու 1916 թ. հունիսի 3-ին հասել են Էջմիածին: Ինչ-ինչ պատճառներով, սակայն, այդ ձեռագրերը չեն ցուցակագրվել և երկար ժամանակ պահվել են ոչ թե Մատենադարանում, այլ՝ Վեհարանում[3]:

Սակայն, իրականում հիշյալ 660 ձեռագրերից տեղ են հասել միայն 87-ը, որը կարելի է համարել Զանկալյանի և Գարագոշյանի միջոցով առաքված ձեռագրերի մի մասը: Մնացած 573 ձեռագրերի ճակատագիրը պարզ չէ:

Ժամանակին Հ. Քյուրքյանը մատնանշում էր, որ կորած ձեռագրերի հայտնաբերման գործում լույս կարող են սփռել Զանկալյանի և Գարագոշյանի անձնական թղթերը: Ինքն անձամբ կորած ձեռագրեր էր ձեռք բերել ֆրանսահայ հայագետներ՝ Հ. Պերպերյանից և Ե. Ալեանաքյանից: Նա ենթադրում էր, որ կորած ձեռագրերը միգուցե տեղափոխել են Պարսկաստան[2]:

Իսկ Հ. վրդ. Հյուսյանը հիմք ընդունելով Վան-Վասպուրականի 1918թ. մարտյան գաղթի ժամանակ Լիմ կղզում թուրքական բանակին գերի ընկած 10-12000 հայերից Հայաստանի Հանրապետություն ուղարկված 400 փրկվածների վկայությունները նշում է, որ նահանգի դատարկումից հետո թուրքերը հայտնաբերելով պահված հարստությունները և ձեռագրերը, դրանք անբարում են Վանում, իսկ այնտեղից էլ հավանաբար տեղափոխում Անկյուրի:

Ձեռագրագետ Գ. Տեր-Վարդանյանը ոչ հրապարակային խոսակցություններից պարզել է, որ Անկարայի գրադարաններում և գիտական հաստատություններում կան փակի տակ պահվող հայերեն հազարավոր ձեռագրեր[3]: Միգուցե հենց դրանց մեջ են Վասպուրականի կորած ձեռագրերը:

[1] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա., էջ 98:

[2] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 18 , էջ 6ա:

[1] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա., էջ 98:

[2] Քիւրտեան Յ., Վասպուրականի անհետացած 660 ձեռագիրները, «Յառաջ», Փարիզ, 1972, ապրիլի 2, թիւ 12382:

[3] Գօլանճեան Ս., Հիւսեան վարդապետ Յ., Կիւլէսէրեան Բ. աթոռակից, Տէր-Վարդանեան Գ., Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 2015, էջ 253-255:

1916-1917 թթ. Թիֆլիսում Մ. վարդապետ Մաքսուդյանի, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, Ստեփան Կանայանի ջանքերով, Վասպուրականի գաղթականներից ձեռք է բերվել 15 ձեռագիր, իսկ 1924-1960 թթ. վասպուրականցիներից Մատենադարանում ստացվել է ևս 18 ձեռագիր:

Ամփոփելով բոլոր տվյալները՝ Օ. Եգանյանը պարզում է, որ Վասպուրականից էջմիածին է բերվել.

1915 թ. հուլիսին	- 284 ձեռագիր
1916 թ. հունվարին	- 1082 ձեռագիր
1916 թ. հունիսին	- 87 ձեռագիր
1916-1917 թթ. գաղթականներից ձեռք է բերվել	- 15 ձեռագիր
1924-1960 թթ. գնվել, կամ նվեր է ստացվել	- 18 ձեռագիր
ընդամենը՝	- 1486 ձեռագիր

Նշված 1486 միավորից 9-ը եղել է տպագիր, 1-ը՝ այլևայլ թղթեր, որը հնարավոր չէ պարզել, 4-ը՝ լինելով այլ ձեռագրերի մասեր, միացված են իրար: 9 միավոր Լիմ անապատի ձեռագրերից 1916 թ. փետրվարի 24-ին Գևորգ Ե կաթողիկոսի կարգադրությամբ վերադարձված է Հովհ. վրդ. Հյուսյանին, որը հոգևոր հովվի պաշտոնով վասպուրական վերադառնալու ժամանակ հետը տարել է հայրենիք՝ եկեղեցական պետքերի համար: Ձեռագրերի հանձնման և ընդունման առթիվ կազմված արձանագրությունը ստորագրել են մատենադարանապետ Հուսիկ արքեպս. Մովսիսյանը, գրապահ Գագրիկ Ներսիսյանը և Լիմ անապատի վանահայր Հովհ. վրդ. Հյուսյանը[1]: Թե ինչ եղան այդ 9 ձեռագրերը՝ հայտնի չէ: Դուրս բերելով վերոհիշյալ 23 միավորը (տպագիր՝ 9, թղթեր՝ 1, միացված՝ 4, վերադարձված՝ 9) ըստ Օննիկ Եգանյանի վերջնական հաշվումների, մինչև 1960 թ. Վասպուրականից փրկվել և Մատենադարան է մուտք գործել 1473 ձեռագիր, որից հայերեն ձեռագրեր 1435, հայերեն ձեռագրերի պատառիկներ՝ 7, հայերեն համայիլներ՝ 8, իսկ 23 ձեռագիր էլ արաբատառ: Ձեռագրերը բերված են Աղթամարից՝ 285 (2-ը՝ արաբատառ), Լիմից՝ 306 (1-ը՝ արաբատառ), Վարագից՝ 345, Կտուցից՝ 202, Վանից և շրջակայքից (Ս. Վարդան եկ., Ս. Պողոս-Պետրոս եկ., Ս. Սահակ եկ., Ս. Նշան եկ., Ս. Ծիրանավոր եկ., Արարուց եկ., Նորաշենի եկ., Հայկավանուց եկ., Միքողեկ եկ., Շուշանց եկ., Վանի առաջնորդարան, Վանի կենտրոնական վարժարան, Լեզք գյուղի եկ., Ոմն Վարդան, Բագրեւանդի Ս. Հովհաննես եկ., Վանեցի գաղթականներից, Վանից (պատկանելիությունն անորոշ) 335 (20-ը՝ արաբատառ)[1]:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Մատենադարանի ձեռագրերը ժամանակավորապես պահվում են Մոսկվայում: Ձեռագրերի անվտանգ պահպանությամբ հատկապես մտահոգվում է ՌԽՖՍՀ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին առընթեր Հայկական գործերի կոմիսարիատը, որը այն վերցնում է իր վերահսկողության տակ և հաճախակի ստուգում ձեռագրերը բովանդակող սնդուկների անձեռնմխելիությունը: Այդպիսի ստուգումներից մեկի մասին է խոսում 1918 թ. օգոստոսի 23-ին կազմված № 566 ա?րձանագրությունը:

Ռուսերեն արձանագրության մեջ նշվում էր, որ «Հայկական գործերի կոմիսարի տեղակալը (Պ. Մակինցյան) և Հայկական գործերի կոմիսարիատի կոլեգիայի անդամը (Ս. Նազարբեկով), քահանա Ս. Աղբալյանցի, քահանա Ա. Սիմոնյանցի, Ն. Պ. Արզումանյանի, Մ. Ղոնդաղսազյանի, Ն. Ի. Ժամհարյանի, Ն. Տեր-Մանվելյանի, Ն. Տերյանի և Գ. Պոպովի ներկայությամբ, ստուգեցին Հայոց Վերացման Ս. Խաչի եկեղեցու մուտքի մոտ գտնվող խուցը, որտեղ պահվում են 79 արկղ և բեմին խուցը, որտեղ պահվում են 61 արկղ, ընդամենը 140 արկղ հայերեն ձեռագրեր և այլ արժեքներ. դրանք պատկանում են հայ ժողովրդին և պատերազմի հետևանքով

[1] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 25 ա, թերթ 12 բ:

[1] Ցուցակ ձեռագրաց Մուշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա., էջ 99-105:

առաջացած անապահովության պատճառով 1915 թվականին ժամանակավորապես Մոսկվա են տեղափոխված ի պահպանություն»[1]:

1921 թ. Մատենադարանում պահվում էին 1730 ձեռագրեր, որոնցից 1545-ը՝ միայն 1915 թ. Վասպուրականից՝ Վանից, Կռուցից, Աղթամարից և այլ վայրերից բերված ձեռագրեր[2]:

[1] Մատենադարանի ձեռագրատան արձանագրությունների ֆոնդ, թղթ. 1, նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա., էջ 92:

[2] **Խաչիկյան Լ.**, Մատենադարանը անցյալում և Սովետական իշխնության տարիներին, Բանբեր Մատենադարանի, 1958, թիվ 4, էջ 11:

ԳԼՈՒԽ Բ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՓՈՐՁԸ ՎԱՆՈՒՄ (1917-1918 ԹԹ.)

2.1. 1917 թ. Ռուսական Փետրվարյան հեղափոխության արձագանքները Վան-Վասպուրականում և Վանի Շրջանային վարչության գործունեությունը (1917 թ. մարտ-նոյեմբեր)

Ռուսական Կովկասյան բանակի գլխավոր ուժերը, որոնք կուտակվել էին Խնուսի, Էրզրումի, Երզնկայի և Պարսկաստանի ճակատներում նախապատրաստվում էին 1917 թ. մարտի սկզբներին հարձակողական գործողություններ սկսել Երզնկա-Խարբերդ-Սեբաստիա, Խնուս-Տիգրանակերտ և Վան-Մոսուլ ուղղություններով՝ նպատակ ունենալով միանալ անգլիական բանակին[1]: *Բայց վրա հասած Փետրվարյան հեղափոխությունը ի չիք դարձրեց բոլոր ծրագրերը:*

Անցնելով իշխանության գլուխ՝ Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունն իր տարածքային սեփականությունը հռչակեց Կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով Օսմանյան կայսրությունից գրավված շրջանները, ուստի և գերադասեց դրանց անմիջական կառավարումը հանձնել իր տեղական իշխանությանը՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեին, որը պետք է կարգ հաստատեր «ոչ միայն Անդրկովկասում, այլև տնօրիներ այդ վայրերի քաղաքացիական կառավարումը»[2]:

[1] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 125-126:

[2] Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы,

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում ցարիզմի հալածանքներից տառապած հայության մոտ այն հույսերն արթնացրեց, որ ռուսական բանակի Կովկասյան ճակատի հետադիմական սպայակույտը նոր խարդավանքների չի ենթարկի ազգային կյանքով ապրող գրավված վայրերի արևմտահայությանը: Երբ Փետրվարյան հեղափոխության արձագանքները հասան Վան, հայերի հույսերը գալիք հաջողությունների մասին ավելի բոցավառվեցին, քանի որ «արևմտահայության մեջ նկատվում էին Փետրվարյան հեղափոխության միջոցով ազգային և սոցիալական ազատագրման հույսի նոր ուղիներ տեսնելու միտումներ»[1]:

Աստիճանաբար վերանում է ցարական նախկին պաշտոնյաների թշնամական վերաբերմունքը արևմտահայության նկատմամբ: Ասպարեզից չքանում են կառավարության լավ ու վատ զորավարները և կառավարիչները՝ իրենց Զեռնոզուբովներով, Մղիվանիներով և Վարանովներով, «որովհետև ըստ իրենց ասածին իրենց հացը կտրած է...»[2]: «Վան-Տոսպ»-ը հավաստում էր, որ նախկինում Վանի... չրջանային կառավարչներ էին նշանակվել այնպիսի մարդիկ, որոնք իրենց վայրագությամբ տեղական ազգաբնակչության մեջ արթնացրել էին զզվանքի զգացում[3]:

Սակայն այդ փոփոխությունները տեղի էին ունենում շատ դանդաղ: Կ. Սասունու վկայությամբ «Բնական է մէկ քանի ամսուայ ընթացքին կարելի չէր մաքրել Տաճկահայաստանը օտարազգի կառավարիչներէ, որոնք ռուսական տիրապետութեան հետ մէկտեղ հոն հաստատուած էին, և յեղափոխութեան հռչակման օրերէն սկսած, յեղափոխական բանակի կողմն անցած էին... որևէ յեղափոխական կուսակցութեան անունն իրենց վրայ առնելով: Սակայն կամաց կամաց անոնք

Тбилиси, 1958, с. 8.

[1] **Մելիքյան Վ. Հ.**, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (Մարտ 1917թ.), ԲՀԱ, 1987, թիվ 3, էջ 131:

[2] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 2, թիւ 67:

[3] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1917, մարտի 19, թիւ 17:

սկսած էին տեղի տալ, և Տաճկահայաստանի կառավարական վարչութիւնը ամբողջովին կը հայանար: Վասպուրականի և Տարօնի նահանգներու մէջ, գրեթէ, որևէ օտար պաշտօնեայ գոյութիւն չունէր»[1]: Վանի վիլայեթի Բայազետի օկրուգի հայ բնակչության ներկայացուցիչները 1917 թ. մարտին Անդրկովկասյան հատուկ կոմիտեին ուղղված իրենց դիմումագրում նշում էին, որ «Ռուսաստանի ներքին կյանքում տեղի ունեցած հեղաշրջումը վարչական ու իրավական ոչ մի փոփոխություն չմտցրեց մեր օկրուգում... մեզ մոտ դեռ շարունակվում է գործել հին վարչակարգը, որը ղեկավարվում է հին կառավարության ավերիչ հրահանգներով, անթիվ վնասներ է պատճառում բնակչությանը, ամեն ձևով ահաբեկման է ենթարկում տեղական բնակիչներին և ճնշում է գործադրում այն անմեղ մարդկանց վրա, որոնք կցանկանային իրենց համակրանքն արտահայտել նոր վարչաձևի նկատմամբ»[2]:

Ջանքերի գնով Պետրոգրադի կենտրոնական իշխանության հսկողության տակ հաջողվեց կազմել Հայաստանի համար մասնավոր մի վարչություն, որի կենտրոնն էր Թիֆլիսը: Մինչև 1917 թ. օգոստոս այն իր մասնաճյուղերն ուներ Վանում, Կարինում, Երզնկայում, Բայազետում և Տրապիզոնում[3]:

Տեղում համապատասխան աշխատանքներ ծավալելու և կազմակերպչական ձեռնարկումներ իրականացնելու նպատակով Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո Վան են ժամանում ճանաչված գործիչներ Համայակ Մանուկյանը և Հայկ Խսոյանը: Առաջինը մնում է Վանում, իսկ երկրորդը շուտով վերադառնում է Երևան՝ ամուր պահելու համար Վան-Երևան գործակցությունը[4]:

[1] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, էջ 142:

[2] Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. Сборник документов, Ереван, 1957, с. 18.

[3] **Թեոդիկ**, Ամենուն Տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, Կ. Պոլիս, 1920, էջ 109:

[4] Վասպուրական. 1915-1930, էջ 102:

Վանի քաղաքապետարանի աշխատանքներն ուժեղացնելու և այն Վասպուրականի ժողովրդի կամքն արտահայտող հաստատություն դարձնելու համար 1917 թ. մարտի 23-ին, 24-ին և 26-ին Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Վանի պաշտոնատան մեջ (Խաչ-փողոցի վրա, Նալբանդյանների տուն) տեղի ունեցան հասարակական խորհրդակցական ժողովներ, որոնց խնդիրն էր ճշտել իրենց դիրքն ու անելիքը Փետրվարյան հեղափոխության և մանավանդ ռուսական բանակի «դամո՛յ» կարգախոսի հանդեպ[1]: Ժողովի մասնակիցներն ուրախությամբ միանում են իշխանափոխության նոր ձևի հետ և որոշում են լծվել հեղափոխության ամրապնդման գործին, քանի որ հեղափոխությունը կարող էր անակնկալներ ծնել, որոնց դիմագրավելու համար նախապատրաստված լինելը կարող էր մեծ օգուտներ ունենալ: Այդ պատճառով ժողովականները որոշում են շատ զգույշ կերպով իրենց ձեռքը վերցնել երկրի կառավարման գործընթացը: Իսկ ժողովուրդն ընկերություններին վստահեցնում է, որ ամեն բան կանի և կընթանա հեղափոխության գծած ուղիով:

1917 թ. մարտի 27-ին ստեղծվեց գուտ հայկական ժամանակավոր ղեկավար վարչական մի մարմին, որը, կառավարական ֆունկցիաներ կատարելով հանդերձ, չէր կրում «հայկական իշխանություն» պիտակը, որը կարող էր ավելորդ գլխացավանք պատճառել հայերին և գրգռել «հեղափոխական Իշխաններին»: Այն սկզբում կոչվեց ղեկավար կամ քաղաքապետական մարմին[2]:

Փետրվարյան հեղափոխության անմիջական ազդեցությամբ և Վասպուրականի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ, Վանի «Ազատության լույս» գրադարանում 1917 թ. ապրիլի 7-ին նախ նշվեց 1915 թ. Ապրիլյան կոիվների տարեդարձը, ապա ապրիլի 9-ին, կիրակի օրը, Վա-

[1] Վալադեան Վ., Վասպուրականի Կոստին, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1962, թիւ 5, էջ 66:

[2] Մանուկեան Յ., Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1, էջ 61:

նի Նորաշեն եկեղեցու գերեզմանատան մեջ, Դանիել վարդապետի նախագահությամբ, կատարվեց Հայոց ազատամարտի 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի նահատակների հոգեհանգիստը: Զինվորական երաժշտության ուղեկցությամբ, թափորը շարժվեց դեպի Արարուց գերեզմանատուն, ուր ամփոփված էին ազատագրական պայքարի նահատակների՝ Վազգենի (Տիգրան Տերոյան), Մուքոյի, Արշակի, Հրաչիգ Ռուբենի, Խափայելի, Հարությունի, Իշխանի (Նիկոլ Պողոսյան), Խեչոյի (Խաչատուր Ամիրյան) և ուրիշների աճյունները[1]:

1917 թ. ապրիլի 23-ին գումարվեց ՀՅԴ Վասպուրականի Շրջանային ժողովը, որին մասնակցում էին 180 պատգամավորներ: Կազմակերպչական մի շարք հարցերի հետ մեկտեղ, քննարկվում է նաև Վասպուրականում գործող կազմակերպությունների, հայ-քրդական հարաբերությունների, ինքնապաշտպանության, ոստիկանության, ներգաղթի և տեղավորման հարցերը[2]:

Ռուսական ժամանակավոր կառավարության գլուխ կանգնած նախագահ-նախարար իշխան Գ.Ե. Լվովը, արտաքին գործերի նախարար Մ. Տերեշչենկոյի հետ միասին 1917 թ. մայիսի 15-ին մշակում է Արևմտյան Հայաստանի պատերազմի իրավունքով գրավված շրջանների գերագույն կոմիսարի լիազորություններին վերաբերող ղեկավար հրահանգներ, որոնցում մասնավորապես նշվում էր, որ «ժամանակավոր կառավարությունն այժմ պատերազմի իրավունքով գրավված Ասիական Թուրքիայի մարզերից բնիկ հայկական է ճանաչում Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգները»[3]: Բանակի և մարզերի միջև եղած սահմանագիծն անցնում էր Սյուրմենե,

[1] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 3, թիւ 89:

[2] Մանուկեան Յ., Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1, էջ 61:

[3] АВПРИ РФ, ф. Политархив, 1915-1917 гг., оп. 482, д. 3481, л. 81, նաև՝ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, том 1, составитель, отв. ред., автор предисловия и комментария д.ю.н., профессор Ю.Г. Барсегов, М., 2002, с. 298-300.

Բայբուրթ, Դերջան, Մամախաթուն, Վերին Արաքս, Խնուս, Մանազկերտ, Արճեշ, Բերկրի և Սարայ քաղաքներով[1]:

Նախկին նահանգների փոխարեն ստեղծվեցին Վանի, Էրզրումի և Խնուսի մարզերը, որոնք իրենց հերթին բաժանվում էին օկրուգների և տեղամասերի: Տեղամասերը կառավարում էին պետերը, իսկ մարզերն ու օկուգները՝ կոմիսարները, որոնք ամենուրեք նշանակվում էին ռուսների կողմից: Քաղաքներում և գյուղերում պետք է ստեղծվեին գործադիր կոմիտեներ, որոնց ընթացքն իրականանում էր շատ դանդաղ:

Ստեղծված նոր իրադրության պայմաններում ինքնաբերաբար առաջ է գալիս տեղական ղեկավար նոր մարմնի ստեղծման անհրաժեշտությունը Վասպուրականում: «Հոկայ յեղափոխութիւն (խոսքը՝ 1917 թ. փետրվարյան հեղափոխության մասին է - Ավ. Հ.) առիթ տուաւ յեղափոխական Վասպուրականին՝ անգամ մ'ևս իր ճակատագրի տնօրինութիւնը իր ձեռք առնել, անգամ մ'ևս ցուցադրելու ամբողջ աշխարհին թէ՝ չնայած իր դարաւոր ստրկութեան՝ Վասպուրականցին կը պահէ տակաւին իր պապենական ժառանգութիւնն եղող ազատութեան ոգին, ինքնակառավարութեան գիտակցութիւնը»[2]: Սակայն, հաշվի առնելով, որ նոր մարմնի ստեղծումը անպատեհություն կարող էր առաջացնել հայկական կուսակցությունների շրջանում, որոնք ճանաչված էին և ունեին դրամական միջոցներ, ընկերությունների ներկայացուցիչների հետ համատեղ, քաղաքապետի և Դանիել վարդապետի մասնակցությամբ, 1917 թ. մայիսի սկզբներին կազմվում է 8 հոգուց բաղկացած ժողովրդական ներկայացուցչական առաջին ղեկավար մի մարմին՝ Շրջանային վարչություն՝ ժամանակավոր Վարիչ մարմին (որը տեղակայվում էր Վանի փոքր Քեանդրչի փողոցի կաթոլիկ սաորիների շենքում) և որի կազմի մեջ մանում են քաղաքապետը, դաշնակցական ու սահմանադիր-ռամկավար ազատական կուսակցությունների ներկայացուցիչներ՝ Կ. Համբարձումյանը (նախագահ), բժիշկ Տեր-Թովմասյանը, Գ. Օհանջանյանը (բարեգործական Վանի լիազոր), Ա. Մաքսապետյանը, Գ. Խլղաթյանը, Ս. Հյուս-Փանոսյանը, Ս. Մեսրոպյանը և Բ. Կապուտիկյանը (Կապոցիկյան)[1]:

Երկու-երեք ամիս անց վարչական մարմնի մեջ մտնում է նաև Գրիգոր Բուլղարացին (զինվորական գործերի վարիչ)[2]: Վարչական մարմնի գործունեությունն այդ ժամանակ ենթակա էր Վանում գործող երկու կուսակցությունների՝ ՀՅԴ-ի և Ռամկավարների լիազոր երկու ներկայացուցիչների վերահսկողությանը, որոնք մասնակցում էին վարչական մարմնի ժողովներին և խորհուրդներ ու թելադրանքներ տալիս նրան[3]:

Շրջանային վարչությունն ըստ էության երկրի օրենսդիր բարձրագույն մարմինն էր: Առանց քվեարկության, սակայն միաձայն Շրջանային վարչության անդամներ դարձան Վանի քաղաքագլուխ Ավետիս Թերզիբաշյանը և Վանի հոգևոր ներկայացուցիչ Դանիել վարդապետը:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նորաստեղծ այդ մարմինը դառնում է Վանի Հայկական իշխանության՝ երկրորդ կառավարության կորիզը: «Ժողովրդի տրամադրութիւնը շատ լաւ է ստեղծած նոր կազմակերպութեան նկատմամբ,- գրում է «Հորիզոն» պարբերականը, - տեղական բոլոր ոյժերը գործի լծուած՝ կաշխատեն մեծ եռանդով: Իւրաքանչիւր քաղաքացու պարտականութիւնն է արդէն ոյժ տալ ժողովրդէն բղխած իշխանութեան»[4]:

Ղեկավար այդ նոր մարմնի նախագահ՝ Վանի նահանգային կոմիսար է ընտրվում «Համառուսաստանյան Քաղաքների միության» Կովկասյան բաժանմունքի Վանի լիազոր

[1] Մելիքյան Վ. Հ., 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997, էջ 149-150:

[2] Վարդանեան Ե., «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, Բոստոն, 1920, էջ 3:

[1] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 11, թիւ 71, նաև Վասպուրական. 1915-1930, էջ 101, նաև «Աշխատանք», Վան, 1917, մայիսի 13, թիւ 4:

[2] Վարդանեան Ե., «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 5:

[3] Սարհադեան Ս., Կեանքիս Յուշերից, Երևան, 2007, էջ 157:

[4] «Հորիզոն», Թիֆլիս, 1917, օգոստոսի 27, թիւ 183:

Կոստյա Համբարձումյանը՝ «Մեր Կոստին»[1], որը Մ. Օրմանյանի դիպուկ բնորոշմամբ «Վասպուրականի երկրորդ Խրիմեանն էր...»[2], կամ ինչպես նրան կոչում էին մի նոր Արմենակ Եկարյան, մարդ, որը «հոգով ու սրտով նուիրուած է Վասպուրականի վերաշինութեան գործին ...մի անձնաւորութիւն է, որ Վանի շրջանային վարչութեան ոգին կը կազմէ, նրա գլխաւոր զարկերակն է»[3]: Վ. Փափազյանի հավաստմամբ «ամենէն սիրուած ժողովրդական դէմքը Կոստին էր: Կազմակերպչական տաղանդով օժտուած, խիստ մատչելի և մանաւանդ հոգածու և պատրաստակամ այդ ընկերը, իրաւամբ դգայուն հայր մը դարձած էր ժողովրդին»[4]:

Ըստ էության Կոստյա Համբարձումյանը Վանի նահանգապետի տեղակալն էր: Ա. Կերենսկու ժամանակ նահանգապետերը ռուսներ էին, որոնք նստում էին Թիֆլիսում և որոնց պաշտոնեությունը ձևական բնույթ ուներ և քիչ էր ազդում գործերի վրա, իսկ օգնականները՝ հայեր, որոնք մշտապես լինում էին տեղերում: Փաստորեն տեղական կառավարումը գտնվում էր հայերի ձեռքին, իսկ տեղական վարչությունը կրում էր գրեթե զուտ հայկական կերպարանք[5]: Նրա լիազորությունները տարածվում էին Վանի շրջանի (Թիմարի, Վան-Տոսպի, Հայոց Ձորի, Խոշաբի, Բաշկալեի, Սարայի և Արճակի) տարածքում[6]:

Անցնելով իր պաշտոնին՝ Վասպուրականի առաջին կոմիսար Կ. Համբարձումյանը Վասպուրականի հասարակությանն ուղղված իր 1917 թ. հուլիսի 15-ի կոչում նշում էր.

[1] «Հայաստան», Թիֆլիս, 1917, թիւ 92:

[2] **Օրմանեան արք. Մ.**, Թուրքահայ աղետը. պատմական փաստաթղթեր, Ա, Տեղեկագիր, էջ 37:

[3] «Արեւ», Բաքու, 1917, յուլիսի 15, թիւ 145:

[4] **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, հտ.II, Պեյրութ, 1952, էջ 427:

[5] **Վրացեան Ս.**, Հայաստանի հանրապետութիւն, Փարիզ 1928, էջ 24:

[6] **Յացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՅԱ, 1969, թիվ 1, էջ 214-215, նաև՝ Հորիզոն, Թիֆլիս, 1917, օգոստոսի 3, թիվ 163, նաև «Ասպարեզ», Ֆրեզնո, 1919, փետրվարի 21, թիւ 550:

«Քաղաքացինե՛ր,

Պատիւ ունիմ յայտնել ձեզ, որ գրաւուած Հայաստանի առանձին կոմիսարութեան կողմէ նշանակուած եմ Վանի, Խոյասպի, Սարայի և Բաշգալէի շրջաններու ժամանակաւոր կոմիսար:

Երկար տատանումէ ետք, երբ ի վերջոյ համաձայնեցայ ընդունել ինծի առաջարկուած պատասխանատու պաշտօնը, ես նկատի ունեցայ ոչ միայն գեղեցիկ Վասպուրականին ծառայելու պարտականութիւնը, այլ նաև այն պարագան, որ Վասպուրականի հասարակութիւնը ինծի զօրավիգ պիտի ըլլայ իմ պարտականութիւնը կատարելու մէջ, ինծի հետ պիտի ըլլան հասարակական ու քաղաքական բոլոր ուժերն ու հոսանքները, և մենք բոլորս միասին պիտի աշխատենք քանդուած Վասպուրականի վերաշինութեանն ու քայքայուած ժողովուրդի անտեսական ու բարոյական ուժերու վերականգնման:

Ծանր ու պատասխանատու է իմ պաշտօնը: Կը գգամ այդ, բայց խորապէս համոզուած եմ, որ իւրաքանչիւր քաղաքացի իր պարտականութիւնը պիտի համարէ ինծի չիշեցնելու իմ պէրն ու պարտքը:

Նոր կազմակերպութեան հիմունքները կը տուին մոխրացած հայրենի երկրին մէջ: Ես հաստատ կերպով հաւատացած եմ, որ իւրաքանչիւր քաղաքացի պիտի ձգտի այդ նոր կազմակերպութեան հիմնաւորման, կարգի ու կանոնի հաստատման ու գործադրմանը, խաղաղ ու արդար աշխատանքի ընդհանրացմանը: Այդ հաւատքով գործի գլուխ կանցնեմ»[1]:

Կոչից աներկբա երևում է այն մտահոգությունը և լավատեսությունը, որ տածում էր Կ. Համբարձումյանը Վասպուրականի վերաշինության և քայքայված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով իր ստանձնած գործերի ծանրությունը՝ Շրջանային վարչությունը նպատակահարմար գտավ իր անդամների թիվն ավելացնել՝ ժողովրդի վստահությունը վայելող ներկայացուցիչների հաշվին: Այդ նպատակով նա

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1917, օգոստոսի 27, թիւ 183:

պաշտոնական գրությամբ դիմեց Վանում գործող քաղաքական կուսակցություններին՝ խնդրելով դաշնակցությունից և ռամկավարներից 2-ական, իսկ հնչակյաններից՝ 1-ական ներկայացուցիչ: Ներկայացուցչական խորհրդի մեջ մտան դաշնակներից՝ Հմայակ Մանուկյանը և Տիգրան Բաղդասարյանը, ռամկավարներից՝ Մկրտիչ Աճեմյանը և Եղիշե Վարդանյանը, իսկ հնչակյաններից՝ Սիրաք Սարհադյանը[1]:

Սակայն, 1918 թ. դեկտեմբերի կեսերից, այն բանից հետո, երբ դաշնակցությունը Հ. Մանուկյանի և զինվորական կոմիսար Գրիգոր Բուլղարացու միջոցով հայտարարում է, որ «դաշնակցութիւն տիքտատուրա է յայտարարած Կովկասի մէջ, ատոր սահմանները կը տարածուին մինչև Հոս, մենք կ'ընենք այնպէս՝ ինչպէս որ յարմար կը գտնենք, առանց կարևորութիւն տալու ըսուած խօսքերուն»,[2] Շրջանային վարչության մեջ գործող մյուս կուսակցությունների ներկայացուցիչները դուրս են գալիս վարչության կազմից, և Դաշնակցությունը գառնում է երկրի միահեծան տերը:

Կոստի Համբարձումյանի և Գրիգոր Բուլղարացու հետ ընթացող բանակցություններում համաձայնության չգալուց հետո, Վանի Շրջանային վարչության և վասպուրականցիների ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Դաշնակցության վրա:

Բացի այդ, կուսակցությունները պաշտոնական հարաբերությունները խզելուց հետո, երկվեցին ամենափոքր խոչընդոտ անգամ չհարուցել իրար, այլ օժանդակել գործի հաջողության համար:

Նոր կազմված ղեկավար մարմինն իր հաջորդական ժողովներում, գործող կուսակցությունների երկուական ներկայացուցիչների մասնակցությամբ, աստիճանաբար նախանշում է իր գործունեության հետագա ուղին և ստեղծում հանձնաժողովներ, այն է՝ 1) պարենավորման (ուտեստ, սերմնացու, լծկան, գյուղատնտեսական գործիքներ, ոռոգում, կթան, հագուստեղեն, լուսավառություն, մաքրություն, տասանորդի հարկ, նպաստ, պահեստներ և այլն), 2) տեղավորման (ազատ չրջանների բնակեցման, բնակարաններ, տեղավորման համակարգ, ապահովություն), 3) ոստիկանության (ոստիկանների հավաքագրումը, զենքի քանակը, բյուջեն և բաշխումն ըստ չրջանների), 4) կրթական (աշակերտների և որբերի թիվը, բացվելիք դպրոցները, բյուջեն և ուսումնական խորհուրդը) և 5) հաղորդակցության և զանազան այլ հարցերի վերաբերյալ (ցամաքի և ծովի հաղորդակցությունները, Շրջանային վարչության և կոմիսարի հարաբերություններն ու իրավասությունների սահմանները, Շրջանային վարչության նոր ընտրությունը): Յուրաքանչյուր հանձնաժողով ինքնուրույն էր իր գործունեության և որոշումների սահմաններում, միայն թե այդ գործունեությունը նախապես անցնում էր ղեկավար մարմնի բովով, որպեսզի հանձնաժողովների իրար հատվելու առթիվ չստեղծվեր և եղած սուղ միջոցներն ավելի արդյունավետ օգտագործվեին երկրի տնտեսությունը զարգացնելու և կյանքի ապահովության վստահություն ներշնչելու համար: Այսպիսով, Շրջանային վարչությունն աստիճանաբար իր ձեռքն է վերցնում երկրի քաղաքացիական կառավարումը[1]: Գործի հաջողությանը մեծապես նպաստում է նաև այն, որ 1917 թ. օգոստոսի 8-ին ռուսական զորքերի կողմից գրավված տարածքների գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովի քաղաքացիական մասի երկրորդ տեղակալ է հաստատվում հայազգի բժիշկ Հակոբ Զավրիևը (Զավրիյանը), որն իր ամբողջ կյանքը նվիրել էր հայ դատին և մտերիմ կապերով կապված էր Ա. Կերենսկու հետ: Իսկ դա լավագույն դրավականն էր, որ խոսքը չուտով գործի էր վերածվելու[2]:

[1] **Թեոդիկ**, Ամենուն Տարեցոյցը, Ժ–ԺԴ տարի, 1916–1920, էջ 109, նաև՝ **Վարդանեան Ե.**, «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 6:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 8:

[1] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 24, թիւ 106:

[2] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, том 1, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария д. ю. н. профессор Ю. Г. Барсегов, с. 301, նաև՝ **Վրացեան Ս.**, Հայաստանի հանրապետութիւն, էջ 23, նաև **Մելիքյան Վ. Յ.**, 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), էջ 151:

1917 թ. սեպտեմբերի 9-ին հրապարակվեց գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովի հրամանը, ըստ որի որոշվեց Արևմտյան Հայաստանը դիտարկել մեկ ամբողջություն՝ ռուսական տիրապետության տակ գտնվող ինքնավար նահանգ, որի մարզերից ձևավորվելու էր 3 շրջան 1) Էրզրումի, 2) Խնուսի և 3) Վանի (Բերկրի, Արճեշ, Սարայ, Բաշկալե, Խոշաբ, Վան)։ Մ. Արզումանյանի բնորոշմամբ ակներև էր, որ «ռուսական... բուրժուազիան ձգտում էր ամեն կերպ խուզել Արևմտյան Հայաստանի սահմանները»[1]։ Այդ շրջանների նահանգապետեր նշանակվում էին Պ. Ավերյանովի և Հ. Զավրիևի կողմից։ Ըստ այդմ Վանի շրջանի կոմիսար է նշանակվում Կ. Համբարձումյանը[2]։

1917 թ. աշնանը Թիֆլիսում գումարվեց Հ.Յ. Դաշնակցության Շրջանային ժողովը՝ Արևելյան և Արևմտյան բյուրոների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Ժողովին մասնակցում էր նաև Կ. Համբարձումյանը, որին ժողովն ընտրում է Ռուսաստանի Սահմանադիր ժողովի թեկնածու։ Սակայն նա գերադասեց վերադառնալ Վան՝ հայտարարելով, որ «ես պատրաստ եմ լսելու Վասպուրականի ձայնը, ես կերթամ Վան...»։ Նա իր հետ Վան տարավ Շրջանային ժողովի քաջալերանք-ողջույնը՝ «գրաւեալ վայրերու մէջ գործող բոլոր աշխատաւորներուն»[3]։

Շրջանային վարչությունն իրականացնում է մի շարք ձեռնարկումներ, որոնք Վանում իրոք դառնում են ապահով և ինքնուրույն կյանքի երաշխիքը։

1) Շտապ մշակվեց Արևմտյան Հայաստանը և մասնավորապես Վանը գաղթական հայերով բնակեցնելու ծրագիր[4] և այդ նպատակով կազմակերպվեց մեծ մասամբ հայերից բաղկացած հատուկ վարչություն[1], որի գործունեության համար հատկացվեցին մեծագումար վարկեր[2]։

Այդ ծրագրի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի գրավված տարածքների գեներալ-կոմիսարի կարգադրության համաձայն, «հանուն արդարության և հայերի իրավունքների վերականգնման»[3], որոշվեց չարգելել և կազմակերպել գաղթականների վերադարձը Վանի շրջան[4]։ Վերադարձող փախստականները պետք է անձամբ կամ խմբովին հեռագրով դիմեին Թիֆլիս՝ ռուսական զորքերի կողմից գրավված տարածքների գեներալ-կոմիսարի տեղակալ բժիշկ Հ. Զավրիևին և ստանային առանձին թույլտվություն[5]։

Ազատ երթևեկելու համար բավական էին հայկական նպաստամատույց ընկերությունների և Երևանի Առաջնորդարանի տված ռուսերեն վկայագրերը։ «Յեղափոխութեան մէկ փոքրիկ արդիւնքն էր այս փաստը, թերևս պիտի ըսել նաև ապացոյց մեր ինքնուրոյնութեան»,- փաստում է ժամանակակիցներից մեկը[6]։

1917 թ. վաղ գարնանը հայկական ընկերությունները, որոնք Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1916 թ. նոյեմբերյան 4-րդ գաղթից հետո մեկնել էին Կովկաս և Պարսկաստան, անմիջապես վերադառնում են Վան՝ իրենց հետ բերելով մեծ թվով գաղթական վասպուրականցիներ, որոնք լծվում են վերաշինական աշխատանքի։

Ներգաղթողները Վան-Վասպուրական էին վերադառնում կա՛մ Ջուլֆա-Խոյ-Արճակ-Ճանիկ և կա՛մ էլ՝ Էջմիա-

---

[1] **Արզումանյան Վ. Մ.**, Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ և նրա մերկացումը բոլշևիկյան կուսակցության կողմից, ԲՅԱ, 1967, թիվ 2, էջ 114։

[2] ЦГВИА РФ, ф. 13249, оп. 1, д. 25, л. 114, նաև **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), էջ 141։

[3] Վասպուրական. 1915-1930, էջ 102։

[4] Այս ժամանակաշրջանի գաղթականության մասին ավելի հանգամանորեն տես՝ **Ա. Հարությունյան**, Ժամանակավոր կառավարությունը և հայ գաղթականությունը, «Պայքար», 1997, թիվ 1, էջ 20-22։

[1] **Հաճեան Ա. քհ. Յ.**, Հայոց տաժանքի ճամբաներով, հտ. Ա., Թեհրան 1965, էջ 418։

[2] **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922, Պեյրութ, 1956, էջ 5։

[3] АВПРИ РФ, ф. Политархив, 1915-1917, оп. 482, д. 3481, л. 81.

[4] «Աշխատանք», Վան, 1917, յուլիսի 22, թիւ 23։

[5] «Աշխատանք», Վան, 1917,. յուլիսի 19, թիւ 22։

[6] Վասպուրական. 1915-1930, էջ 101։

ծին-Իգդիր-Բերկրի-Թիմար ճանապարհներով[1]:

Դանիել վարդապետին ուղղված Սալմաստի գաղթականական կոմիտեի 1917 թ. մայիսի 6-ի հեռագրում նշվում էր «Վանի շրջանի պատկանող 2000 գաղթականներ չափազանց նեղ դրության մատնված են: Մնունդ չկա, աշխատանք չկա, անասունները պահելու ոչ մի հնարավորություն չունեն: Կցանկանանք գաղթականները տեղափոխել Վան...»[2]:

Ճանապարհը՝ Իգդիր-Վան գիծը, բաց էր և ապահոված ռուսական զինվորական կայաններով՝ կորդոններով: Վան մեկնեցին արհեստավորներ, խանութպաններ, այգեգործներ, ուսուցիչներ, բժիշկներ, հիվանդապահներ և ուրիշ մասնագիտությունների տեր մարդիկ:

Վանի շրջանի դաշտերում աշխատելու, բնակչության չուտափույթ օգնությունը վերականգնելու և պետական գանձարանի հաշվին ժողովրդին պահելու անհրաժեշտությունից ազատելու համար, գեներալ Պ. Ավերյանովը խնդրում էր խոչընդոտ չհանդիսանալ գաղթականների վերադարձի ժամանակ[3]:

Սակայն մեկնողները մեծ դժվարությունների էին հանդիպում ճանապարհներին: Մի կողմ թողնելով ճյուղը, բուքը, ցեխը և այլ անհարմարություններ՝ վերադարձողները համապատասխան օժանդակություն չէին ստանում աննպաստ կայանների կողմից: Նրանց չէր հատկացվում կերակուր, տաք ջուր և օթևան[4]:

Գնալով ավելանում էր Վան-Վասպուրականի բնակչության թիվը:

Չնայած ժամանակավոր կառավարությունը Պ. Ավերյանովին տված իր ղեկավար ցուցումներում նշում էր, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահագները հայերով վերաբնակեցնելու համար[1], սակայն ժամանակավոր կառավարությունն օգտագործում էր բոլոր հնարավորությունները գաղթականների հոսքը դադարեցնելու համար: Այսպես, ներքին գործերի նախարարությանը կից Հատուկ խորհրդակցության նախագահ Էնգելգարդտը իր 1917 թ. ապրիլի 30-ի շրջաբերականում գրում էր, որ «Միանգամայն հաշվի առնելով գաղթականների ցանկության իսկությունը՝ կախված Ռուսաստանում սկսված իրադարձությունների հետ, վերադառնալ իրենց նախկին վայրերը, գաղթականների տեղավորման բաժինը, միաժամանակ իր պարտքն է համարում հայտարարել, որ ... զինվորական իշխանությունները մատնանշելով պարենի ծայրահեղ պակասությունը և բնակարանների բացակայությունը, պահանջում է վճռական միջոցներ ձեռք առնել գաղթականների հետադարձ շարժումը 1917 թ. ապրիլին դադարեցնելու համար: Գաղթականների անկանոն հոսքի անխուսափելի արդյունքը կարող է հանդիսանալ նրանց հիվանդությունների և նրանց համար կյանքի արտակարգ ծանր պայմանների ստեղծումը, որից հետո կապմակերպված օգնությունը կդառնա անհնարին»[2]:

1917 թ. սեպտեմբերին գրավված տարածքների գեներալ-կոմիսարի օգնականը, Համաձայն Կովկասյան բանակի հրամանատարի հեռագրի, խնդրում էր կասեցնել վերաբնակիչների հոսքը՝ հաշվի առնելով սննդամթերքի պակասությունը:

Վերոհիշյալ պահանջով 1917 թ. նոյեմբերի 13-ին Թուրքիայի գրավված տարածքների գեներալ-կոմիսարին էր դիմել նաև գեներալ Պ. Ի. Օգանովսկին[3]:

Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետ գեներալ-մայոր Վ.Իչինսկին իր 1917 թ. նոյեմբերի 14-ի թիվ 6406 գրության մեջ ուղղված Թուրքիայի գրավված շրջանների գեներալ-կոմիսարին նշում էր, որ վերջին ժամանակներում մեծացել էր սոված հայ գաղթականների հոսքը Երևանի նահանգից վա-

[1] Սարիադեան Ս., Կեանքիս Յուշերից, էջ 148:

[2] «Հայաստան», Թիֆլիս, 1917, մայիսի 18, թիւ 24:

[3] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 207, թ. 47:

[4] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 11, թիւ 71:

[1] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 130-131:

[2] ЦГВИА РФ, ф. 13232, оп. 1, д. 47, л. 208, նաև՝ ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ.. 207, թ. 53:

[3] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 207, թ. 92, 116:

նի շրջան: Հաշվի առնելով սննդամթերքի և հագուստեղենի պակասությունը IV կորպուսի շրջանում՝ նա առաջարկում էր դադարեցնել գաղթականների հոսքը[1]:

Արդեն 1917 թ. ամռանը Վանի, Մուշի, Բասենի տարածքը բռնված էր հայերով և հայ գյուղերով, իսկ հայկական նահանգները, ըստ Ս. Վրացյանի արտահայտության, «դարձել էին իսկական մոքով Հայաստան»[2], քանի որ ներգաղթողների թիվը Վանից մինչև Տրապիզոն և Երզնկա անցնում էր 140.000-ից[3]:

Կարճ ժամանակի ընթացքում անմարդաբնակ ու ամայի հողերը լցվեցին ու վերակենդանացան հայ ազգաբնակչությամբ, որովհետև, ինչպես ժամանակակիցներն էր նշում՝ Վան-Վասպուրականը «գերագնահատում ենք օտար երկրների խորթութիւններով լի հանգստաւէտ կեանքից»[4]:

Եթե 1917 թ. հունիսին ըստ Ա-Դոյի Վան-Վասպուրականում հաշվվում էր 17000 բնակիչ (Վանում - 4000, Թիմարում - 7000, Վան-Տոսպում - 2500, Արճակում, Սարայում -1500, Հայոց Ձորում - 1200, Բերկրի-Աբաղայում - 800 և այլն)[5], իսկ ըստ Ս. Վրացյանի՝ 25425[6], 1917 թ. հուլիսի 17-ի տվյալներով՝ Վանի մարզում կար արդեն 52000 մարդ[7]: Այն կազմում էր ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներում բնակություն հաստատած 142425[8] հայ ազգաբնակչության մոտավորապես 1/4 մասը: Իսկ դա նշանակում էր, որ Վան-Վասպուրականը հանդիսանում էր արևմտահայությ-

[1] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 38, 41, նաև՝ ֆ. 50, ց. 1, գ.2 07, թ. 115:

[2] **Վրացեան Ս.**, Հայաստանի հանրապետութիւն, էջ 24:

[3] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890-ին 1940, էջ 207:

[4] **Սարիադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 149:

[5] Պատմության թանգարան, Նոր պատմության բաժին, **Ա-Դո**, Իմ հիշողությունները, բ.մ. 839/գ. 196, թ. 270, նաև «Հորիզոն», Թիֆլիս, 1917, յուլիսի 1, թիւ 136:

[6] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, յունուարի 1, թիւ 1, նաև՝ Ս. Վրացեան, Հայաստանի հանրապետութիւն, էջ 5:

[7] ԱԳՎԻԱ ՌՖ, ֆ. 13232, օո. 1, д. 59, л. 188-189:

[8] **Վրացեան Ս.**, Հայաստանի հանրապետութիւն, էջ 5:

յան ամենաապահով շրջաններից մեկը: 1917 թ. հոկտեմբերին Վանի ազգաբնակչության թվաքանակը փոքր-ինչ նվազեց: Վանի շրջանի կոմիսար Տեր-Թումասյանցի վկայությամբ՝ Վանի շրջանում կար 25.182 բնակիչ (որից 23.822-ը հայեր էին, 1.221-ը՝ ասորիներ, 95-ը՝ թուրքեր, 38-ը՝ եզդիներ)[1]: Սակայն 1917 թ. դեկտեմբերին այն կրկին աճեց, և Կ. Համբարձումյանի վկայությամբ՝ Վանի շրջանում կար արդեն 28.558 գաղթական (որից հայ՝ 25.340, ասորի՝ 1.868, թուրք՝ 95, եզդի՝ 50)[2]: Դա արդյունք էր 1917 թ. աշնանային ներգաղթի, որն էլ իր հերթին պայմանավորված էր պետական պանճարանի սնանկությամբ:

2) Իգդիր-Վան, (Գյոլլու, Փանդ, Ջանիկ, Ալյուր, Բերկրի, Ոստան, Սուրբ-սու, Սավալի) և Վան-Խոյ, (Արճակ, Սարայ, Կոտուր և Խոյ) գծերի վրա բացվեցին սննդակայաններ, հիվանդանոցներ, դեղատուն, ամբուլատոր կայան և որբանոց, որոնք անօրինում էր Քաղաքների միությունը: Սննդակայաններում կային զինված ուժեր և ապահովում էին ժողովրդի ազատ երթևեկությունը, սնունդը, բժշկական օգնությունը և պաշտպանությունը, իսկ պաշտոնյաներին ապահովում էին նաև փոխադրական միջոցներով: Կ. Համբարձումյանը դեկավար մարմնի հսկողությանը ենթարկեց բոլոր այն հաստատությունները, որոնք իրենց հրահանգները ստանում էին Վանից[3]:

3) Հասարակական կարգի և անվտանգության պահպանման, իշխանությունների օրինական կարգադրություններն ի կատար ածելու, ինչպես նաև հայկական V գնդին օժանդակելու համար 1917 թ. մայիսին, ժողովրդական նոր կառավարության հետ միասին, Վանում հիմնադրվում է ոստիկանական մարմին՝ Վանի մարզային միլիցիա[4], որը դեկավարում

[1] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 1, թ. 44:

[2] ԱԳՎԻԱ ՌՖ, ֆ. 13277, օո. 3, д. 41, л. 79, նաև՝ ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 31, թ. 9:

[3] ԱԳՎԻԱ ՌՖ, ֆ. 520, օո. 1, д. 90, л. 169-170.

[4] **Հարությունյան Ա.**, Ցարական և Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917 թթ., ԲՀԱ, 1971, թիվ 3, էջ 72:

էին Լևոն Շաղոյանը և Գրիգոր Բուլղարացին[1] (Ըստ եղիշե Վարդանյանի՝ Լ. Շաղոյանը և Տիգրան Բաղդասարյանը[2]):

Ոստիկանության ստեղծումը կենսական հարց էր, որը քննարկվում էր պաշտոնյա և անպաշտոն պատասխանատու անձանց կողմից: Այն անհրաժեշտ էր երկրամասը ավազակային և մարդաջինջ հարձակումներից պաշտպանելու համար:

Անհնարին էր Վանում շոշափելի գործ կատարել, ստեղծագործական աշխատանք իրականացնել, վարչական կազմակերպություն ստեղծել, օգնություն իրականացնել, բնակչության ֆիզիկական և տնտեսական գոյությունը պահպանել՝ առանց ոստիկանական ուժեղ կազմակերպության:

Ոստիկանության անհրաժեշտության տեսանկյունից, Վասպուրականը, որը գտնվում էր ռազմաճակատի հարևանությամբ, չարունակական և սպառնացող վտանգի տակ, ուներ բացառիկ նշանակություն:

Փետրվարյան հեղափոխության սկզբից ևեթ Արևմտյան Հայաստանի նախկին բոլոր ոստիկանական պահնորդները հեռացվեցին զբաղված մարզերից, որի արդյունքում նախկին 3.000 ռազմաոստիկանական պահակախմբի փոխարեն մնաց 1000-ից պակաս ոստիկան[3]:

1917թ. օգոստոսի 31-ին գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովը ժամանակավոր կառավարությանն է ներկայացնում պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի ռազմաոստիկանական պահպանությունը վերակազմակերպելու և Թուրքահայաստանում մարզային ու քաղաքային միլիցիա (ոստիկանություն) ստեղծելու մասին զեկուցագիր ու կանոնադրության նախագիծ, որտեղ մատնանշվում էր, որ պետության շահերը պահանջում էին ամեն կերպ ամրապնդել Կովկասյան բանակի թիկունքը, իսկ

[1] **Վրացեան Ս.**, Հայաստանի հանրապետութիւն, էջ 62:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 7:

[3] **Հարությունյան Ա.**, Ցարական և ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917թթ., ԲՀԱ, 1971., թիվ 3, էջ 65:

դրա համար անհրաժեշտ էր Թուրքիայից գրավված մարզերում ստեղծել կիսառազմականացված ոստիկանություն[1]: Ժողովրդական ոստիկանության ջոկատների գլխավոր խնդիրն էր ապահովել տեղի բնակչության անվտանգությունը տարբեր տեսակի ավազակախմբերից, որոնք նաև հանդգնում էին հարձակվել ռուսական զորքերի պահեստների, տրանսպորտի և փոքրաթիվ ստորաբաժանումների վրա:[2] Նախատեսվում էր բազմաքանակ ու լավ վարժատրվող ոստիկանություն ստեղծել Վանի, Խնուսի, Էրզրումի ու Պոնտոսի մարզերում: Վանի մարզն ընդգրկում էր Վանի նախկին նահանգը՝ նրա հին թուրքական սահմաններով, Բայազետի և Դիադինի օկրուգները՝ մինչև Թիլլի-չայ գետից արևմուտք: Այդ սահմաններում Վանի մարզը ներառում էր 52000 երկսեռ բնակիչ: Ավազակային ասպատակությունների տեսանկյունից մարզը գտնվում էր թուրքական և պարսկական Քրդստանի հարևանությամբ, որն առանձնահատուկ իրավիճակ էր ստեղծում[3]: Ոստիկանությունը պետք է լիներ հետևակային և հեծյալ՝ զինված ժամանակակից զենքով: Նախատեսվում էր ստեղծել զորամասերի կանոններով գործող 4 տեսակի՝ տեղական անվտանգության, հաղորդակցության ուղիների, ուղեկալային և պահեստային (ռեզերվային) ոստիկանություն[4]:

Դրան հաջորդում է ռուսների կողմից պատերազմի իրավունքով գրավված Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի այլ մարզերի մարզային և քաղաքային ոստիկանության ժամանակավոր կանոնադրության նախագիծը, ըստ որի՝ հասա-

[1] Անդ, էջ 64-71:

[2] **Ստեփանյան Մ.**, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում, Երևան, 2005, էջ 111:

[3] **Հարությունյան Ա.**, Ցարական և ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917 թթ., ԲՀԱ, 1971, թիվ 3, էջ 67:

[4] ЦГВИА РИ, ф. 366, оп. 1, д. 93, л. 155, ф. 2003, оп. 4, д. 19, лл. 179-186, նաև՝ **Արզումանյան Մ. Վ.**, Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ և նրանց մերկացումը բոլշևիկյան կուսակցության կողմից, ԲՀԱ, 1967, թիվ 2, էջ 118:

րական կարգի և անվտանգության պահպանման, ինչպես նաև իշխանությունների օրինական կարգադրություններն իրատար ածելու համար՝ յուրաքանչյուր մարզում հիմնվում էր մարզային, իսկ մի քանի ավելի բնակեցված քաղաքներում՝ քաղաքային ոստիկանություն[1]:

Վանի հայկական ոստիկանության վարչությունը Վանի չորս շրջանների բաժանելուց հետո, իր ուշադրությունը բևեռում է գավառներին: Վարչությունը ձեռնարկում է կազմել ձիավոր և հետևակ ոստիկանական խմբեր՝ Հայոց-Ձորի, Թիմարի, Արճակի, Սարայի և Բերկրիի շրջանների համար: Սակայն, զենքի և դրամի սակավության պատճառով, վարչությունն ի վիճակի չէր ավելացնել ոստիկանների թիվը[2]:

Իրականում ոստիկանների թիվը հասնում էր 154 հոգու, որոնցից 70-ը ձիավորներ էին: Նրանք ստանում էին 60-120 ռուբ. աշխատավարձ[3]: Ըստ էության Վասպուրականը կարիք էր զգում 800 սպառազեն և 700 պահեստային ոստիկանների[4]: Ոստիկանության թվաքանակը չատացնելու համար ռամկավարները 1917 թ. սեպտեմբերին Շրջանային վարչությանն առաջարկեցին պարտադիր զինվորագրության հարցը: Սակայն, հակառակ խնդրի կարևորությանը և տրված բացատրություններին՝ առաջարկը մերժվեց դաշնակցության կողմից: Այդ մասին Հմայակ Մանուկյանը գրում է. «Դաշնակցութիւն՝ որ քսան տարուան յեղափոխական անցեալ ունի, Դաշնակցութիւն՝ որու հետ է ամբողջ ժողովուրդը, այնքան դիրք և այնքան հմայք ունի, որ բաւական է, որ ան դիմէ ժողովրդեան, ու դուք պիտի տեսնէք չուտով այնքան միլիցիա արձանագրուողներ պիտի լինին, որ մենք ի վիճակի չպիտի ըլլանք բոլորին կարիքը հոգալու»[5]:

[1] Հարությունյան Ա., Ցարական և ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917 թթ., ԲՀԱ, 1971 թ. թիվ 3, էջ 72-82:

[2] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 24, թիւ 106:

[3] «Հորիզոն», Թիֆլիս, 1917, օգոստոսի 29, թիւ 184:

[4] Նույն:

[5] Վարդանեան Ե., «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 7:

Սակայն, երեքուկես ամսվա փորձառությունից հետո, Շրջանային վարչությունը և նույն ինքը՝ Հ. Մանուկյանը, համոզվեցին, որ իրենք սխալվել են, և տեղական ուժերով կամավոր ոստիկաններ արձանագրելով՝ անհնար էր բավարար թվով ոստիկաններ հավաքագրել տարածաշրջանը վերահսկելու համար՝ մանավանդ, որ դրսից որևէ օժանդակության հույս չկար:

Միջոցների սղության պատճառով կառավարությունը տվել էր շատ քիչ քանակությամբ զենք և էլ ավելի քիչ քանակությամբ՝ փամփուշտներ: Ոստիկանների կեսից ավելին կամ կրում էին ատրճանակներ կամ էլ զենք չունեին: Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության հրահանգների համաձայն՝ ոստիկաններն աշխատավարձ պիտի ստանային նախկին ատրաժնիկների և գարադավոյների չափ, այսինքն՝ հետևակը՝ 35 ռուբ., հեծելազորը՝ 70 ռուբ.: Սակայն առաջին երկու ամիսների համար ոստիկանների ստացած աշխատավարձը հետևյալ պատկերն ուներ. հետևակ՝ 60-ական ռուբ., ձիավորներ՝ 75-ական ռուբ., խմբապետների օգնականներ՝ 80-ական ռուբ., խմբապետներ՝ 100-ական ռուբ.: Երրորդ ամսվա համար շրջանային վարչությունը կատարեց աշխատավարձերի բարձրացում, որը ներկայացնում էր հետևյալ պատկերը՝ հետևակ՝ 80 ռուբ., ձիավորներ՝ 100 ռուբ., խմբապետներ՝ 120 ռուբ.: Երեք ամսվա ընթացքում Շրջանային վարչությունը ոստիկանական վարչության վրա ծախսել էր 33.600 ռուբ., որից 10.000-ը՝ տեղական միջոցներից[1]: Թեև ոստիկանությանը հրահանգված էր ոչնչի չխառնվել, սակայն նա իրականացնում էր կամայականություններ և բռնագրավումներ[2]:

Այդուհանդերձ, Վանի ոստիկանությունը կարճ ժամանակում իր օգտակարությունը ցույց տվեց: Այն սանձահարեց անօրինական գինի և օղի վաճառողներին, արգելեց պղինձ,

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1917, օգոստոսի 29, թիւ 184:

[2] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 7, թիւ 69:

երկաթ, կաշի և այլ նյութեր արտահանել Պարսկաստան, իսկ որոշ անասատներին էլ՝ բանտարկեց[1]:

Քիչ չէին նաև թուրք զինվորների գերեվարության դեպքերը, որոնց պատմածով՝ թուրքերի հիմնական ուժերի թվաքանակը Վանի մերձակայքում տատանվում էր 600-700-ի սահմաններում: «Ասոնց դրութիւնը յուսահատական է, թեթեւ յարձակումով ասոնք բոլորն ալ կամ անձնատուր պիտի լինին, կամ իրենց չունչը Պիթլիս պիտի առնեն»[2]:

4) 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո թե՛ արևմտահայերը և թե՛ արևելահայերն աշխատում էին ունենալ միասնական հայկական զորամասեր, այսինքն՝ ցրված վաշտերն ու գումարտակները վերածել գնդերի և ապահովել իրենց անվտանգությունը: Այդ ուղղությամբ հայերի ցանկությունը տալիս է իր դրական արդյունքը: Ժամանակավոր կառավարության նախարարի՝ 1917 թ. հուլիսի 2-ի հրամանագրով հայկական ցաք ու ցրիվ վաշտերն ու գումարտակները վերածվում են վեց գնդերի: Երեք հրահանգիչների օգնությամբ միջոցներ են ձեռնարկվում նաև Վանի երիտասարդներին զինվորական պատրաստվածություն տալու և զենք կրելու համար՝ հարձակման և նահանջի դեպքում բանակին օժանդակելու և քաղաքապահ զորքի դեր կատարելու ուղղությամբ[3]: Այդ նպատակով կատարվում է ցուցակագրություն և առանձնացվում են 3 հրահանգիչներ[4]:

Միայն 1917 թ. դեկտեմբերի կեսերին Շրջանային վարչությունը ստիպված եղավ քվեարկելու պարտադիր զինվորագրության օրենքը[5]:

5) Տնտեսական անմխիթար վիճակը և ճանապարհների անապահովությունն իր կնիքն է թողնում նաև Վանի շուկայի առատության վրա, որը գրեթե ամայացել էր[6]: Վանի

[1] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 24, թիւ 106:
[2] «Արեւ», Բաքու, 1917,. յուլիսի 15, թիւ 145:
[3] «Արեւ», Բաքու, 1917, հոկտեմբերի 7, թիւ 211:
[4] Նույն:
[5] Վարդանեան Ե., «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 8:
[6] «Արեւ», Բաքու, 1917, յուլիսի 15, թիւ 145:

օկրուգի պետ գեներալ-մայոր Բուրկովսկին, նկարագրելով Վանի շրջանի վիճակը, ցույց էր տալիս, որ օկրուգի 6 տեղամասերն էլ ավերված են ու կողոպտված: Կենդանի մնացած բնակչությունն էլ շատ աղքատ էր և գտնվում էր աղետալի վիճակում: Եթե Վանի օկրուգի 2-րդ՝ Արճակի տեղամասում, մինչև պատերազմը եղել էր 26 գյուղ՝ 25.000 բնակչությամբ, ապա 1917 թ. մայիսին կար ընդամենը 313 մարդ՝ ցրված 9 ավերված գյուղերում[1]:

Բնակչությունն աղքատ էր և գտնվում էր աղետալի վիճակում:

Առաջին անհրաժեշտության կենսամթերքները չէին ճարվում, իսկ եղածներն էլ առասպելական գներով էին վաճառվում: Օրինակ՝ ցորենի 4 փութը՝ 60 ռուբ., հաճարը՝ 50 ռուբ., պարին՝ 45-50 ռուբ., յուղը՝ փութը 3 ռուբ., բրինձը՝ փութը 60-80 կոպ., տավարի միսը՝ 60 կոպ, ոչխարի միսը՝ 1 ռուբ., կաթի փութը՝ 25 կոպ., քարյուղը՝ 75-80 կոպ., հավկիթը՝ հատը 15 կոպ., պանրի փութը՝ 1 ռուբ. 50 կոպ. - 2 ռուբ., չարխարի փութը՝ 2 ռուբ.[2], հարդը՝ 65-70 կոպ., խոտը՝ 1-2 ռուբ.[3]:

Վանում առկա էին հացի հետ կապված խնդիրներ: Վանի շրջանի կոմիսար Հովհաննիսյանը 1917 թ. նոյեմբերի 10-ին հեռագրում էր, որ «հացի ու ալյուրի կարիքն ընդունում է սպառնալից բնույթ: Կոմիսարիատը պաշարված է քաղցածներից... ամբոխով: Քաղցածները գյուղերից գալիս են քաղաք: Պարզվում է, որ 10.000 մարդ բոլորովին զուրկ են հացից»[4]: Աշխատում էր միայն Կ.Հ.Բ.Ը. փուռը, քանի որ ալյուր չլինելու պատճառով մյուս փուռերը փակ էին:

Ժողովուրդը հաց, ինչպես նաև շաքար և նավթ ստանալու համար օգտվում էր Բարեգործականի գրքույկներից[5]:

[1] ЦГВИА РФ, ф. 13232, оп. 1, д. 50, л. 100.
[2] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 20, թիւ 78:
[3] «Արեւ», Բաքու, 1917, օգոստոսի 29, թիւ 180:
[4] ЦГВИА РФ, ф. 13232, оп. 1, д. 26, л. 9.
[5] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 11, թիւ 71:

Հայկական ընկերությունները և հատկապես Հայ գյուղատնտեսական ընկերությունը, ամենուրեք գյուղացիներին շարունակում էին ապահովել սերմացուով, լծկաններով ու գործիքներով, իհարկե միայն նոր վերադարձողներին՝ չհաղթահարելով գաղթականներին վերադառնալու Վան-Վասպուրական՝ իրենց ծննդավայր:

Միացյալ ընկերությունների հրահանգիչներից վանում գործում էին երկուսը՝ Արմենակ Մաքսապետյանը, ով ստանձնել էր Թիմարի և Բերկրի-Աբաղայի շրջանների գործը, և Տիգրան Մելքոնյանը, ով ստանձնել էր Վանի շրջանի և Հայոց Ձորի գործը[1]:

Այդ ընթացքում Շրջանային վարչությունը Պարսկաստանից ձեռք բերեց 7.000 փութ սերմացու, որից 3.000 փութը՝ գարի, իսկ մնացածը՝ ցորեն: Այդ սերմացուն բաշխելու համար կազմվեց ընկերությունների ներկայացուցիչներից մի մարմին՝ Դանիել վարդապետի մասնակցությամբ:

Սակայն սպասված գարնանացանքը չեղավ, որովհետև կառավարության պաշտոնյաների և Գյուղատնտեսական ընկերության գնած սերմացուն տեղ չհասավ: Գյուղացիները քանիցս մեկնում էին Արճակ՝ իրենց բաժին սերմացուն ստանալու հույսով, բայց ձեռնունայն հետ էին վերադառնում, որովհետև սերմացուն դեռ չէր փոխադրվել: «Մեր գիւղացիութիւնը Կովկասէն վառ յոյսերով երկիրը կը մտնէ, բայց չանցած քանի մ՚օր, վառ երազները կը ցնդին կը յուսահատուի և արամադրութիւն ցոյց կուտայ դարձեալ Կովկաս վերադառնալու, քանի որ Գիւղատնտեսն ու Բարեգործականը ի վիճակի չեն առայժմ ժողովրդեան ծով կարիքներուն բաւարարութիւն տալու»[2]:

Կ.Հ.Բ. ընկերությունը սահմանափակ չրջանակներում, մասնավորապես խիստ կարիքավորների շրջանում, սերմացու էր փոխ տալիս ժողովրդին՝ մեկ չափ կալոցին երկու չափ ստանալու պայմանով[3]:

[1] «Աշխատանք», Երեւան, 1917, մայիսի 13, թիւ 4:

[2] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 20, թիւ 78:

[3] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 2, թիւ 67:

Բարեգործականը խոստացել էր 16000 փութ սերմացու ցորեն տրամադրել Շրջանային վարչությանը՝ փութը 6 ռուբ. կ.Հ.Բ.ը.. 20 կոպ. արժողությամբ՝ ժողովրդին սերմացու տալու համար: Բայց 16000 փութից միայն 5000 փութը տրամադրեց 6 ռուբ. 20 կոպ. արժողությամբ, իսկ մնացածը վաճառվեց՝ 8 ռուբ. գումարով[1]:

Անբարյացակամ էր նաև ռուս զինվորականության վերաբերմունքը տեղացիների նկատմամբ: Ռուսական բանակի զինվորներն առանց համաձայնեցնելու գյուղացիությանը պատկանող խոտը և հարդը վերցնում էին կես կամ քառորդ գնով[2]:

Բացի դրանից, պատուղներ քաղելու ժամանակ հաճախակի էին ռուս զինվորների կողմից պտղատու ծառերի փչացման և ճյուղերի կոտրման դեպքերը: Իրենց ունեցվածքը զինվորներից պաշտպանելու համար վանեցիները հաճախ խակ-խակ հավաքում էին ծառերի բերքը[3]:

Ձեռնարկված որոշակի միջոցառումների հետևանքով երկրի գյուղատնտեսությունը սկսեց արագ կերպով վերակենդանանալ: Վասպուրականը ծածկվեց կանաչ արտերով: 1917 թ. վերջերին Թիֆլիսի «Ազատամարտ»-ում գրավված վայրերից վերադարձած ականատեսներից մեկը գրում էր. «Տասնեակ վերստերով ճամբայ կտրեցինք, Թիմարի ամբողջ երկարութեամբ և չգտանք ո՛չ մէկ թիզ հող առանց վարելու. միայն մէկ տեղ հանդիպեցանք անվար հողի, երբ սակայն, քիչ ետք նկատեցինք, որ հետէն հայ ծեր գիւղացին խոփը ձգած էր հողին մէջ և սկսած էր վարել միակ անհերկ հողը»[4]: Միաժամանակ ղեկավար մարմինը փոփոխության ենթարկեց ընկերություններին տված սերմացուի, լծկանների, գործիքների և այլ օժանդակությունների քանակն ու պայմանաժամը, որով մի կողմից ապահովվեց նյութական խնայողությունը, իսկ

[1] «Արեւ», Բաքու, 1917, օգոստոսի 29, թիւ 180:

[2] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 2, թիւ 67:

[3] «Արեւ», Բաքու, 1917 թ. յուլիսի 15, թիւ 145:

[4] **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 25:

մյուս կողմից դյուրացվեց գյուղացիների ապրուստը: Կա-
տակվեցին հացահատիկի պաշարներ և այլ մթերքներ: «Հայր
մէկ ձեռքը զէնք, միւսով մաճ ու բահ՝ իր քրտինքով հայրենի
հողն էր պարարտացնում և վերամշակում. այն հողը, որը փի
առաջ քար ու քանդ էր արել բարբարոս թշնամին: ...Զար-
մանալի կենսունակութիւն և ձեռներէցութիւն ցուցաբերեց
արևմտահայը, որ զարհուրելի տաժանքից յետոյ, պահել կա-
րողացաւ հայի բնածին հոգեկան արիութիւնը»[1]:

6) Վերանորոգվեց գերմանական հյուպատոսարանի բ-
դարձակ շենքը, որը վերածվեց կենտրոնական հիվանդանոցի[2]:

7) Ուշադրություն դարձվեց Վանա լճի ձկնորսարանների
բարեկարգման վրա, որոնք վարձով տրվեցին մասնավոր կա-
պալառուներին՝ զորքին և ժողովրդին ձկնեղենով ապահով-
լու համար: Նախատեսվում էր զորքին հատկացնել 15000,
իսկ Բարեգործականի պահեստին՝ 10000 փութ աղ դրած
տառեխ[3]: Արդյունքում միակ բանը, որ կարելի էր առաս
ճարել՝ Վանի տառեխն էր[4]:

8) Կապալառու-վարձակալների հետ պայմանագրեր
կնքվեցին աղի, բորակի և առագաստանավերի կառուցման
վերաբերյալ:

9) Վարձով տրվեցին խանութները, ճաշարանները և
սրճարանները:

10) Վերադարձի առաջին իսկ օրերից սկսած «Քաղաք-
ների միության» ներկայացուցիչ Կոստի Համբարձումյանը
ձեռնարկում է Այգեստանի արվարձանների և Թիմարի այգի-
ների ու պարտեզների մշակումը, որոնց համար հատկացվում
են որոշակի գումարներ: Այդ օգտագործման համար հաս-
տատվում են պայմանական ժամկետներ, որպեսզի հետագա-
յում վերադարձող իսկական հողատերերի հետ թյուրիմա-
ցություն և անախորժություն տեղի չունենար:

[1] Հաճեան աւ. քհ. Յ., Հայոց տուժանքի ճամբաներով. հտ. Ա., էջ 418:
[2] Սարիադեան Ս., Կեանքիս յուշերից, էջ 157:
[3] «Աշխատանք», Վան, 1917, մայիսի 13, թիւ 4:
[4] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 29, թիւ 110:

11) Մաքրվեցին Այգեստանի բազմաթիվ աղբյուրները, ջրհորները և Շամիրամի ջրանցքը՝ ջուրը մինչև Շամիրամի թաղ հասցնելու համար: Միջոցառումներ են ձեռնարկվում նաև Տոնիի լճի վերաշինման ուղղությամբ[1]:

12) Մշակվում է կենդանանց գյուղի քարհանքը:

13) Ռուսների հետ համատեղ ուսումնասիրվում են Բերկրիի Գործոթի գյուղի նավթահանքերը:

14) Բոլոր գյուղերում կազմվում են գյուղական վարչություններ, որոնց պարտականությունն էր քննել գյուղի մեջ ծագած վեճերն ու անհամաձայնությունները[2]:

15) Դեռևս 1915 թ. նախագծվել էր Շահթախթ-Իգդիր-Բայազետ-Սավալի-Վանա լճի հյուսիսային ափով՝ Առնիս (Բերկրի), ռազմավարական նշանակության երկաթուղու կառուցման ծրագիրը: Սակայն այն իրականանում էր չատ դանդաղ: 1916 թ. աշնանը ավարտվեց 30 վերստ երկաթուղիամբ հատվածը՝ մինչև Սավալի գյուղը: Նախատեսվում էր 1917 թ. աշնանը այն հասցնել մինչև Առնիս: Երկաթգծի շինարարությանը 1917 թ. մասնակցում էին ինչպես հայերը, ասորիները և քրդերը (2-3 ռուբ. օրավարձով), այնպես էլ «գաղութարար» գինվորները[3]: Սակայն, աշխատանքային անբարենպաստ պայմանների պատճառներով, երկաթգծի շինարարության ավարտը ձգձգվում էր[4]: «Այսպէս խախուտ և քմահաճ հիմքերու վրայ դրուած աշխատանքի կազմակերպութիւնը կազմալուծուեցաւ, ի վնաս բանուորներու և ի վնաս գործի յաջողութեան»[5]:

[1] Հացագործյան Ա., Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՀԱ, 1969 թ., թիվ 1, էջ 217, նաև՝ «Աշխատանք», Վան, 1917, մայիսի 13, թիւ 4:
[2] «Արեւ», Բաքու, 1917, յուլիսի 15, թիւ 145:
[3] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 24, թիւ 106, նաև՝ «Հայաստան», Թիֆլիս, 1917, նոյեմբերի 1, թիւ 146:
[4] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 11, թ. 2, նաև «Հայաստան», Թիֆլիս, 1917, նոյեմբերի 10, թիւ 156:
[5] «Հայաստան», Թիֆլիս, 1917. նոյեմբերի 26, թիւ 167:

Երկաթուղու շինարարության հետ զուգահեռ, զարկ տրվեց նաև ճանապարհաշինությանը: Կառուցվեցին չուրջ 2.000 կմ երկարությամբ մեծ խճուղիներ, որոնց մի մասը ձգվում էր մինչև Վան, Ախլաթ և Մանազկերտ[1]:

16) Վերակենդանանում է նաև Վանի հոգևոր կյանքը: 1917 թ. հունիսին Վան է ժամանում Վան-Ալաշկերտ-Խնուսի շրջիկ այցելու հովիվ, Ատրպատականի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը, որի նպատակն էր արևմտահայ սահմանադրական հիմունքներով մարմիններ կազմել Վանի ու շրջանների մեջ[2]: Նրա վերադարձից հետո Վանի առաջնորդական փոխանորդությունը ստանձնում է Եղնիկ վրդ. Ներկաբարյանը: Սակայն շուտով կաթողիկոսի կողմից Ն. Մելիք-Թանգյանին է հանձնվում նաև Վասպուրականի առաջնորդությունը[3]:

17) Նորից Վան է ժամանում պրոֆ. Ն. Մառը, որն իր աշակերտներ՝ Աշխարհաբեկ Քալանթարի, Ն. Ադոնցի, Հ. Օրբելու և Սմբատ Տեր-Ավետիսյանի հետ 1917 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին պեղումներ է կատարում և խալդիայական արձանագրություններ հավաքում Թուխրակ-կալերում, Զրմփ-Զրմփ Մաղարայում և Վանի բերդում:

18) Միջոցներ են ձեռնարկվում «Աշխատանք» թերթի վերահրատարակման ուղղությամբ, որի արդյունքում կազմակերպվում է հանգանակություն և հավաքվում է 500 ռուբ.[4]:

19) Վերաբացվում են դպրոցները: 1917 թ. Վան-Վասպուրականում գործում էին 18 (ըստ Իրազեկի՝ 16[5]) երկսեռ

[1] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Տաճկահայոց զաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի հանրապետության կազմութեան մէջ, էջ 124-125:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1917, յուլիսի 15, թիւ 147:

[3] «Արեւ», Բաքու, 1917, հոկտեմբերի 7, թիւ 211, նաև՝ Հ. Երամեան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 436:

[4] «Արեւ», Բաքու, 1917, ապրիլի 2, թիւ 67:

[5] **Հացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՀԱ, 1969, թիվ 1, էջ 218, նաև՝ **Յ. Իրազեկ**, Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922, էջ 6:

տարրական դպրոցներ, 3-ը՝ քաղաքում և 15-ը՝ գյուղերում[1]: Քաղաքի դպրոցները գտնվում էին Նորաշենում, Արարքկյոր-դարում և Քաղաքամեջում: Դպրոցներին հսկում էին «Քաղաքների միության» ներկայացուցիչ օրիորդ Աննա Բուշքարյանը և «Հայ գյուղատնտեսական ընկերության» պաշտոնյա Արմենակ Մաքսապետյանը[2]:

Ընդհանուր առմամբ՝ դպրոցներում ուսանում էին 800 աշակերտներ[3]: Դպրոցները դասագրքերով ու գրենական պիտույքներով ապահովում էին նպաստամատույց ընկերությունները, որոնք այն բերում էին Երևանից ու Թիֆլիսից: 1917 թ. մայիսին տեղի ունեցավ ուսուցչական համագումար՝ 14 ուսուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում ընտրվեց 3 հոգուց բաղկացած վարչություն: Այն հարաբերություններ հաստատեց Երևանի արևմտահայ ուսուցչական ժամանակավոր կենտրոնական վարչության հետ[4]:

Դպրոցական գործի վերաբերյալ հետաքրքրական է «Հորիզոն»-ի հաղորդած տեղեկությունը. «Երկրի մէջ այս տարի կրթական-կուլտուրական կեանքը աւելի փայլուն չրջան ունեցաւ, քան անցեալ տարիներուն: Վանի մէջ գոյութիւն ունեն մօտ 16 դպրոցներ: Դպրոցներ կան նաև երկրի ամէն մէկ անկիւնը: Կան նաև որբանոցներ: Դպրոցական-որբանոցային հսկողութիւնը կը գտնւի Արևմտահայ Խորհուրդին ձեռքը, բայց տեղական երիտասարդ ուժերն են գլխաւորաբար, որ կը վարեն գործը: Երկրի որոշ վայրերու մէջ բացուած են նոյնպէս պրադարան-ընթերցարաններ: Մէկ-մէկ կը պատահեն նոյնպէս երեկոյթներ, ներկայացումներ և այլն»[5]:

[1] **Հացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՀԱ, 1969, թիվ 1, էջ 218:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 103:

[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 1:

[4] «Աշխատանք», Վան, 1917. մայիսի 13, թիւ 4:

[5] **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 25:

1917 թ. նոյեմբերին Արեւմտահայ խորհուրդը 500.000 ռուբ. հատկացրեց Վանի գպրոցների համար, սակայն խառնակ վիճակի պատճառով այն տեղ չհասավ[1]:

Որոշ վայրերում հիմնվում են նաև որբանոցներ, ուր հավաքվում և խնամքով պահվում էին շրջանի որբերը[2]:

20) Հարևանությունը քրդական շրջանների հետ Վանի շրջանը դարձնում էր առանձնահատուկ վտանգավոր: Հաճախակի էին դարձել քաղաքների և գյուղերի խաղաղ բնակչության փոխադրամիջոցների և գումակների վրա ավազակախմբերի հարձակումները, անասունների հափշտակումները, բնակիչների ցանքսի և գույքի ոչնչացումը, ռուսական և տեղական վարչակազմի աստիճանավորների ու բնակիչների սպանությունները:

Վանի հյուսիսից Վասպուրականին վտանգ էին սպառնում Զիլանի ձորում որջացած քրդերը, որոնք հանդիսանում էին բոլոր հարձակումների կենտրոնը: «Զիլանի քրդերը ճանճի նման յարութիւն են առել և սկսած Իգդիր Օրգովի փեշերէն մինչև Բերկրի, Ջանիկ համարեա կըվխտան սպանութիւն, թալան անխուսափելի է. էլ ինչ կերպով մարդ յանդգնի Աբաղայի դաշտը կտրել ու երթևեկել»[3]:

Զիլանի ձորի հետ անմիջականորեն կապված էին Բերկրիի և Նոշարի քրդական զանգվածները:

Արևելքից, այսինքն՝ Արճակ-Սարայ գծի վրա վտանգ էին ներկայացնում պարսկական սահմանադլխի ավազակախմբերը և Փաչան-Գարահիսարի շուրջ հավաքված քրդերը:

Հարավից՝ Հայոց ձորը բաց դուռ էր Շատախի, Նորդուզի քրդական աշիրեթների համար:[4]

Օգտվելով հին կառավարության պաշտոնյաների անփութությունից՝ Զիլանի և Աբաղայի քրդերը շարունակում ու

[1] Մանուկեան Յ., Դէպքերը Վասպուրականում, «Վէմ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 2, էջ 73:

[2] Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922, էջ 6:

[3] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 29, թիւ 110:

[4] «Յորիզոն», Թիֆլիս, 1917, օգոստոսի 29, թիւ 184:

բազմապատկում էին իրենց շահատակությունները: Անհանչիվ դարձան անզեն ժողովրդին ու փախստականներին կողոպտելն ու սպանելը: Իսկ նահանջների ժամանակ ի՛նչ վայրագություններ գործեցին և ի՛նչ պատուհաս դարձան թե՛ հայ ժողովրդի և թե՛ ռուս զինվորների համար[1]:

Քրդերը չէին բավարարվում ոչ միայն հասարակ անզեն ճամփորդներ կողոպտելով ու սպանելով, այլև հարձակումներ էին գործում նաև ռուս զինվորների և կազակների վրա:

1917 թ. մայիսի 1-ին Վանի Գործադիր կոմիտեն և 50 հոգուց բաղկացած զինվորական ժողովը, հաշվի առնելով քրդական վտանգը, որոշվում է. «Բանակի յառաջխաղացման համար անհրաժեշտ է, որ բանակի թիկունքը և կողքերը թշնամիներու յարձակումներէն ազատ մնան, քանի որ թէ մեր թիկունքը և թէ կողքերը բազմաթիւ զինուած քիւրդեր կան պետական մօսիներով զինուած՝ գեներալ Զերնագուբովի և Շախովսկիի շնորհիւ. պէտք է նախ և առաջ թիկունքը գտնուած քիւրդերը զինաթափ անել, զէնքի ընդունակներն անխտիր իբրև պատերազմական գերի նկատելով վերցնել և ուղարկել Կովկաս, իսկ անոնց ընտանիքներն ալ ուղարկել թիւրքական բանակը»[2]:

Միաժամանակ հեռագրվում է Թիֆլիս՝ Կովկասյան բազմաճակատի զինվորական ընդհանուր հրամանատարին և IV կորպուսի հրամանատարին:

Քրդերի վայրագություններին և չհատակություններին վերջ տալու համար Վանի և Բայազետի զինվորական կոմիտեները նույնիմաստ որոշումներ են կայացնում և հեռագրում ռուսական IV կորպուսի հրամանատարին հետևյալ բովանդակությամբ. «Պատժախմբեր ուղարկել Զիլանի և Աբաղայի քրդերուն վրայ ապահովելու համար 1. Երեք տարի ծառայող զինուորի տունը վերադառնալը, 2. Թրանսպորթներու փոխադրութիւնը և 3. Անզէն ժողովուրդի վերադարձը»[3]:

[1] «Արեւ», Բաքու, 1917, յունիսի 21, թիւ 126:

[2] «Արեւ», Բաքու, 1917, մայիսի 24, թիւ 106:

[3] «Արեւ», Բաքու, 1917, յունիսի 21, թիւ 126:

Իր հերթին IV կորպուսի հրամանատարը հեռագրում է Վան, որ հայկական V գումարտակը ուղևորվի Զիլան՝ քրդերին պատժելու համար: Առնիսի ռուսական զինվորական պարետը, իմանալով, որ պատժախումբը հայկական գումարտակն է, իսկույն հեռագրում է IV կորպուսի հրամանատարին. «Երբ հայերը պիտի գան քրդեր պատժելու, ինքը պատասխանատու չէ այդ շրջանի պահպանման, քանի որ հայերու երևումը քրդերուն պիտի կատաղեցնէ»[1]:

Այդուհանդերձ, պատժախումբը 1917 թ. մայիսի 19-ին շարժվում է Արճեշ և Բերկրի:

Առնիսի մոտ Սորեր գյուղում տեղի է ունենում փոխհրաձգություն՝ Խուրշիդ բեկի «հավատարիմ» քրդերի և ռուսական զորքերի միջև, որի արդյունքում սպանվում է 4 զինվոր: Խուրշիդ բեկի տնից հայտնաբերվում է ռուսական զինվորների անունով ուղարկված մեծ քանակությամբ պահածոներ, կրուպպա, վերմիշել և կանացի թաշկինակներ, որոնք քրդերին էին նվիրել Բերկրիի ռուս պարետը և «Քաղաքների միության» պաշտոնյաները:

Ընդհարում է տեղի ունենում նաև Բերկրիում: Բերկրիի ծագումով զերմանացի պարետը՝ Պետցոլդը և օկրուգի հրամանատար Կոզիևը, միանալով «Քաղաքների միության» գիտությանը քույրերին, որոնց մոտ ծառայում էին մեծ թվով քրդեր, հեռագրում են զանազան կողմեր, հայտնելով, որ հայերը մի քանի օր է վեր կոտորում են քրդերին և պաշտպանություն խնդրում:

Վանի Զինվորական կոմիտեի կողմից ուղարկված քննիչ հանձնախումբը ոչ միայն հարցին տվեց դրական լուծում, այլև իր գոհունակությունը հայտնեց հայկական V գումարտակի պատրաստակամության և գործունեության համար, և որ հայկական գումարտակը գործել է իբրև պետական զինվորական միավոր՝ համաձայն ռուսական IV կորպուսի հրամանատարի հրահանգների համաձայն[2]:

[1] «Արեւ», Բաքու, 1917, յունիսի 21, թիւ 126:

[2] «Արեւ», Բաքու, 1917, յունիսի 21, թիւ 126:

Քիչ չէին դեպքերը, երբ քրդերը հայտնվում էին Հայոց ձորում և սպառնում դաշտային խաղաղ աշխատանքին: Այսպես, 1917 թ. հուլիսի 14-ին 100-ից ավելի զինված քրդեր հարձակվում են Վերին Հայոց Ձորի Քռելի գյուղի վրա՝ կոպտելով ամեն ինչ և առևանգելով 30 հայ գյուղացիների, որոնք լծված էին գյուղատնտեսական աշխատանքների:

Վանի Շրջանային վարչությունը, նկատի ունենալով հարցի լրջությունը, դիմեց տեղի ռուսական զինվորական շտաբի պետին՝ խնդրելով, որ հրահանգի Խոշաբի պահակազորքին, որպեսզի հարկ եղած ուժերով ապահովի Քռելի և շրջակա 8 գյուղերի անվտանգությունը քրդական հարձակումներից և հնարավորություն տա գյուղացիներին հունձքը հավաքելու[1]: Միաժամանակ, տեղի զինվորական գործադիր կոմիտեն պատվիրակներ ուղարկեց Թիֆլիս՝ խնդրելով IV կորպուսի զինվորական խորհրդին անմիջական միջոցներ ձեռնարկել քրդական հարձակումների դեմ՝ ապահովելով ճանապարհները, զորքի թիկունքը և անզեն ժողովրդին: Ի պատասխան այդ խնդրանքին՝ IV կորպուսի հրամանատարը հեռագրում է Վան և պատվիրում, որպեսզի V գումարտակն ուղղևորվի Զիլան՝ քրդերին պատժելու համար: Այս որոշումը անհագստություն է առաջ բերում հայերի շրջանում: Առնիսի պարետը, լսելով, որ պատժախումբը բաղկացած էր հայկական գումարտակից, հեռագրում է IV կորպուսի հրամանատարին, որ. «Երբ հայերը պիտի գան քրդեր պատժելու, ինքը պատասխանատու չէ այդ շրջանի պահպանման, քանի որ հայերու երևումը քրդերուն պիտի կատաղեցնէ»[2]:

Այդուհանդերձ, 1917 թ. մայիսի 19-ին պատժախումբը շարժվում է Արճեշ և Բերկրի:

1917 թ. հուլիսին Շատախի Կատը, Ջաֆար քրդական ցեղերը և Նորդուզի լեզգիները 1000 զինված ձիավորներով պատրաստություն էին տեսել անցնել Խոշաբի կողմե-

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1917, օգոստոսի 3, թիւ 163:

[2] **Մանուկեան Հ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), II, «Վէմ», Փարիզ, 1937, յուլիս-հոկտեմբեր, թիւ 3, էջ 92-93:

րը, այնտեղից Վանի վրա հարձակվելու համար, որովհետև ըստ քուրդ դերձների վկայությունների, քուրդ բեկերը տեղեկացել էին, որ ռուսները Վանի մեջ քիչ ուժ ունեն: Ռուսական հրամանատարությունը 2 վաշտ զորք ուղարկեց Խոշաբ: Հուլիսի 20-22-ին այնտեղ մեկնեցին նաև Վանի 80 հայ ոստիկաններ, որոնք ռուսական զինվորների հետ չարունակ հետախուզումներ կատարելուց հետո, արգելեցին քրդերին իրենց ցանքսերը քաղել: Վանի կառավարության հաճությամբ վասպուրականցիների մի մասը Խոշաբ գնաց և այնտեղ ռուս զինվորների և ոստիկանների պաշտպանության տակ քրդերի ցանքսերը քաղեց և փոխադրեց Վան: Իսկ հեռավոր վայրերի ցանքսերն այրվեցին:

Քրդերի դեմ պատժիչ գործողություններ կազմակերպվեցին Պհանցում, Շեյխանում, Տնտանսում, Փութում, Խրկանիսում, Ռապատիկում և Փաչանում: 10-12 օրյա կռիվների ընթացքում քրդերը տվեցին 68 սպանված, 2 գերի, առգրավվեց 3 հրացան, 26 եզ, 12 ձի, 8 ջորի և 8 էշ: Դրա դիմաց ռուսները տվեցին 1 զոհ[1]: Արդյունքում՝ Խոշաբի կողմից սպառնացող վտանգը վերացավ, իսկ Խոշաբի քրդերի մի մասն էլ ապաստան գտան Գարասխաարում և Նորդուզում:

1917 թ. օգոստոսի 26-ին Խոշաբում տեղակայված ռուս զինվորները 30 ոստիկանների հետ միասին հետախուզության են մեկնում Գարահիսարի կողմերը, ուր նախապես ամրացել էին տեղի և Խոշաբի քրդերը: Վստահ լինելով իրենց անմատչելի դիրքերի վրա՝ նրանք հրաժարվել էին իրենց հնազանդությունը հայտնել ռուսական իշխանություններին: Ընդհակառակը՝ պատեհ առիթ ներկայանալուն պես, քրդերը երբեմն թեթև հարձակումներ էին գործում հետախուզիչ խմբերի և հայերի վրա:

Քրդերին հնազանդեցնելու և Բաշկալեի ճանապարհը բացելու համար, հետախուզիչ խումբը գրավում է քրդական Ռապատիկ և Փաչան գյուղերը: Կռիվների ընթացքում սպանվում է 1 վաշտապետ, 6 զինվոր և 1 ոստիկան, վիրավորվում են 1 սպա և 9 զինվոր: Զինվորներն իրենց հետ են բերում 1000-1500 ոչխար և տավար[1]:

Բիչ չէին դեպքերը նաև, երբ հպատակություն հայտնած քրդերը, միանալով կազակներին, մտնում էին հայկական գյուղերը և խուզարկություններ կատարում: Այսպես, մտնելով Փանճ գյուղը՝ նրանք խուզարկում են հայերին պատկանող 8-10 տուն և ցուցակագրում իբր քրդերին պատկանող կահ կարասին՝ հետագայում այն հետ ստանալու ակնկալիքով: Հայերն ընդդիմանում են և այդ մասին տեղեկացնում Շրջանային վարչություն[2]:

Վանեցիների կողմից փորձեր կատարվեցին նաև սիրաշահելու քրդերին և բարեկամական հարաբերություններ հաստատելու նրանց հետ: «Աւերակներու և դիակներու մէջ ուզեցինք մոռնալ երէկի արհաւիրքներն և քիւրտի վայրագութիւնները և անոնց բարեկամութիւնը ձեռք բերել»- գրում է Արմենակ Մաքսապետյանը[3]: Աբաղայի Նազարավա գյուղում տեսակցություն կայացավ Բերկրիի խաղաղասեր քուրդ Կոպ Մահմադի որդու հետ[4]:

Խոշաբի քուրդ ազան, համագործակցելով Վանի Շրջանային վարչության հետ, կարևոր տեղեկություններ հաղորդեց նաև թուրքական զորքերի տեղաշարժի մասին:

Վասպուրականի վերագրավված մասերում հայերի կողքին ապրում էին նաև փոքրաթիվ ասորիներ և եզդիներ, որոնք հավասար կերպով վայելում էին հայկական ընկերությունների աջակցությունը:

21) Վանի տարածքը չարունակում էր մնալ ռուս-գերմանական ռազմադիվանագիտական հարաբերությունների ոլորտում: 1917 թ. օգոստոսի 28-ին՝ երկուշաբթի առավոտյան, գերմանական մի օդանավ, թռիչք կատարելով և քառորդ ժամ պտույտ գործելով Վանի վրա, գերմանական դրոշի հետ ռու-

[1] «Արեւ», Բաքու, 1917, օգոստոսի 24, թիւ 176:

[1] «Արեւ», Բաքու, 1917, սեպտեմբերի 15, թիւ 194:

[2] Անդ:

[3] Վասպուրական. 1915-1930, էջ 103:

[4] Անդ, էջ 104:

սերեն և գերմաներեն լեզուներով գրված թռուցիկ թողնելով հեռացավ: Թռուցիկի բովանդակությունը հետևյալն էր.

«Ռուս զինուորներ, լաւ կանէք, որ հաշուէք, այժմ երկու միլիոն ռուս զինուորներ գերի են, Գերմանիայի մէջ և լաւ կըկերակրուին, Ռիգայի գաւառամասերը տիրած ենք և Պետրոգրադն ալ իյնալու վրայ է: Յոյս մի դնէք Անգլիոյ և Ֆրանսիայի վրայ թէ ձեզ պիտի օգնեն, նմանապէս մի կասկածէք Ճաբոնիայէն և Չինէն թէ երբ ազատ հաշուութիւն կնքէք ձեզ վրայ պիտի յարձակին չհաւատաք այս լուրերուն, ձեզ վախեցնելու համար է: Մի քանի օրէն ալ այս ֆրօնտի վրայ յարձակման պիտի դիմենք, բայց լաւ կանէք որ չըկուէք»[1]:

Թռուցիկը ռուս զինվորների վրա էական հոգեբանական ազդեցություն չունեցավ:

22) Վան-Վասպուրականում կյանքը գնալով ավելի էր լավանում և բարգավաճում: Վանում գտնվող ժողովրդի վիճակը 1917 թ. շատ ավելի լավ էր, քան Երևանում և այլ վայրերում տեղաբաշխված գաղթականների նյութական վիճակը: Շատ ընտանիքներ դուրս էին եկել չքավոր կյանքից, ձեռք էին բերել ապրուստի բարվոք պայմաններ, որովհետև մշակելի հողատարածությունները շատ էին, հարկեր չկային, իսկ կյանքն էլ ապահով էր: Պարզ է, որ աշխատասեր հայ գյուղացու կյանքը պետք է լավանար: Երկիր վերադարձողներն ազատվում էին նաև «տարագիր», «գաղթական», «հայ չէ, գաղթական է», «նա եռլականին (տեղացիներին) հաւասար չէ» ամոթալի պիտակներից, որոնք լայն տարածում էին գտել Արևելյան Հայաստանում: Երբ «եռլականներից» մեկը մահանում էր, ասում էին. «Գաղթական չկա՞ր, որ դու մեռար» և այլն:

Նույնիսկ Երևանից գալիս էին Վան և գյուղերից ցորեն տանում:

Վերաշինության և վերակառուցման ձեռնարկումները հունի մեջ էին դրվում և նոր թափ ստանում: Ժամանակակից բնութագրմամբ՝ «մօտիկ ապագայի յաջողութեան և երջանկութեան յոյսերը հետզհետէ մարդկանց տոգորում էին հաւատքով և նրանց սրտերը լցնում էին ուրախութեան ցոլքերով»[1]:

Ահա թե ինչպես է «Արև» պարբերականը ներկայացնում կյանքի զարթոնքը Վանի մեջ. «Կեանքը սկսած է կամաց-կամաց վերակենդանանալ. օրը-օրին նորանոր դէմքեր կ՛երևին, թէ քաղաքացիներէն և թէ գիւղացիներէն: Օրը-օրին երկիր վերադարձողներու հոսանքը կուժեղանայ: Կարաւանն ըսկսած է շարժուիլ թէ Իգդիրէն և թէ Պարսկաստանէն: Օրական 20-30-50-100 հոգի քաղաք կիջևանեն: Եկողներու բացարձակ մեծամասնութիւնը գիւղացիութիւնն է, մեր երկրի ազը: Վերջապէս ամեն օր նոր դէմքերու կըհանդիպենք, որոնք առլցուն յոյսերով եկած են վերաշինելու իրենց հայրենի քանդուած օջախները: Ոմանք բոլորովին վստահ իրենց հետ բերած են իրենց կինն ու երեխաները»[2]:

Այսպիսով, Վան-Վասպուրականը վերաշինվում էր, «յարութիւն էր առնում մոխիրների տակից»[3]: Ներգաղթողները նվիրվել էին ստեղծագործական եռանդուն աշխատանքներին: Վերաշինության գործին լծված մարդիկ աշխատում և ճգնում էին օգտակար ու չինարար գործեր կատարել և պատրաստվում էին ապրել նոր կյանքով: Վասպուրականցին՝ քաղաքացին, գյուղացին, կուսակցական գործիչը և թե պաշտոնյան, հանդես բերեց զարմանալի կենսունակություն և ձեռներեցություն՝ վերակառուցելու և վերակենդանացնելու կիսավեր և քարուքանդ դարձած իրենց անչափ սիրելի Վասպուրականը: Ամենատաժանելի պայմաններում վասպուրականցին պահեց իր հոգեկան արիությունը, իր ձեռքը վերցրեց սեփական ճակատագրի տնօրինումը և կազմակերպեց իր հավաքական կյանքը:

[1] «Արև», Բաքու, 1917, սեպտեմբերի 15, թիվ 194:

[1] Սարիադեան Ս., Կեանքիս Յուշերից, էջ 157:

[2] «Արև», Բաքու, 1917, ապրիլի 2, թիվ 67, ապրիլի 11, թիվ 71:

[3] Վրացեան Ս., Հայաստանի հանրապետութիւն, էջ 24:

2.2. Կովկասյան ռազմաճակատի քայքայումը և Վան-Վասպուրականի պաշտպանության հարցը (1917 թ. հոկտեմբեր - 1918 թ. հունվար):

1917 թ. աշնանը թուրքական բանակն ի վիճակի չէր ռազմական և ոչ մի լուրջ գործողություն ձեռնարկելու Կովկասյան ճակատում, որն այդ պահին ձգվում էր Սև ծով-Երզնկա-Խնուս-Վան-Ռևանդուզ գծով՝ մոտ 500 կմ երկարությամբ:

Իր հերթին, ռուսական բանակի զինվորները կազմակերպում էին հանրահավաքներ և հրաժարվում էին կատարել հրամանատարների հրամանները: Այսպես, Ոստանում ձախողվում է հետախուզության մեկնելու հրամանը[1]:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև Ռուսաստանի քաղաքական շրջադարձային փոփոխությունների հետևանքով երկրի ներսում սկիզբ առած հեղափոխական խմորումների կործանարար ալիքը, որը խարխլում էր Կովկասյան ճակատի ամրությունը և բանակի մարտունակությունը՝ ռուսական զորքերի գերագույն սպայակույտը որոշից որոշ չափով բեռնաթափել Կովկասյան ճակատի ռուսական բանակային միավորումները: Ըստ այդմ, 1917 թ. հոկտեմբերի սկզբներին Կովկասյան IV կորպուսի ռազմական գործողությունների շրջանից դեպի Հյուսիսային Կովկաս հեռացավ Կովկասյան կազակային II դիվիզիան, որից հետո հետ կանչվեց նաև Վանի ջոկատի հրամանատար, կուբանյան կազակային զորաջոկատի գնդապետ Բելին, որի հետ Վանը լքեցին նաև Վոլգյան III կազակային գնդի երկու հարյուրյակ: Ռուսական զորամիավորումների այս տեղափոխումն ինքնաբերաբար առաջ բերեց անկազմակերպ և քաոսային իրավիճակ: Վանում մնաց միայն հայկական V հրաձգային գնդի V վաշտը՝ գնդապետ Պ. Փիրումովի գլխավորությամբ, (որը հետագայում ինքնասպան եղավ Երևանում), սահմանապահ III հետևակային գունդը՝ գնդապետ Օստրեհինի գլխավորությամբ, և լեռնային IV մարտկոցը:

Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը՝ Կովկասյան IV կորպուսի ժամանակավոր հրամանատար՝ գեներալ-մայոր Ա. Կուլեբյակինը, Վանի ջոկատի հրամանատար նշանակեց Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Մ. Սիլիկովին (Մ. Սիլիկյանին)[1], որի մասին Հ. Մանուկյանը հիշում է. «...գեներալը շատ ազնիվ, հայրենասեր, վերին աստիճանի հոգատար հայ մըն է, որ հազիւ հայերէն կը հասկնայ»[2]: Գալով Վան՝ նա անմիջապես ձեռնամուխ եղավ բարձիթողի վիճակում հայտնված ռուսական կայազորում կարգ ու կանոն հաստատելու և ջոկատի ռազմունակությունը բարձրացնելու գործին[3]:

Բանն այն է, որ ռուս սահմանապահները, գտնվելով բարոյալքված վիճակում, Վանում իրենց պահում էին լկտի ձևով և հաճախ զինվորական ծառայությունն իրականացնում էին հարբած վիճակում՝ չարաշահելով տեղական խաղողի օղու օգտագործումը: Նրանք երբեմն ապօրինաբար ներխուժում էին վանեցիների տները, կազմակերպում էին գողություններ, թալան, բռնություններ և նույնիսկ սպանություններ:

Գեներալ Մ. Սիլիկովը, որին մեծապես օգնում էր նաև Վանի կոմիսարիատը՝ Կոստի Համբարձումյանի գլխավորությամբ, ձեռնարկում էր բոլոր միջոցները բանակում հարբեցողությունն էապես արմատախիլ անելու և քաղաքով մեկ «տոնական թափառումները» վերացնելու ուղղությամբ: Սակայն ոչինչ չէր օգնում, քանի որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խիստ ընկել էր զինվորական իշխանությունների հեղինակությունը:

[1] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1, էջ 62:

[1] Մ. Սիլիկյանը մինչ այդ Մուշի կայազորի պետն էր: Տես **Մկրտչյան Վ.**, Սարդարապատի հերոսը. գեներալ Մովսես Սիլիկյան, Երևան, 2012, էջ 9:

[2] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 2, էջ 74:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 37, թ. 36:

Բարոյազրկված այս տրամադրությունն ազդում էր նաև արևելահայ զինվորների վրա, որոնք իրենց հայացքը հառել էին դեպի իրենց հարազատ Անդրկովկաս, որտեղից պարբերաբար ստացվում էին կովկասյան թաթարների և սահմանամերձ քրդերի հակահայկական ելույթների լուրերը: Արդյունքում՝ աճում էր հայրենիք վերադառնալու նրանց ցանկությունը:

Գեներալ Մ. Սիլիկովը ենթադրում էր, որ կռվել չցանկացող սահմանապահ զինվորների անհապաղ հեռացումը Վանից էլ ավելի կուժեղացներ Վանի ջոկատի ազգային միատարրությունը և կօգներ համախմբելու ջոկատը առաջիկա ռազմական խնդիրների լուծման ժամանակ: Այդ հարցով նա դիմում է Կովկասյան IV կորպուսի ժամանակավոր հրամանատար՝ գեներալ-մայոր Ա. Կուլեբյակինին, առաջարկելով, որքան հնարավոր է չուտ իրականացնել ռուս սահմանապահների տեղափոխումը Վանից, քանի որ պատերազմական գործողությունները սկսելուց հետո նրանց վարքագիծը կարող էր ազդել նաև հայերի վրա[1]:

Հաշվի առնելով ռազմաճակատի գծի քայքայումը և սպառնացող վտանգը՝ 1917 նոյեմբերի 24-ին հրավիրվեց դաշնակցության Ընդհանուր ժողովը, ուր քննության առնվեց երկրի պաշտպանության հարցը: Նոյեմբերի 27-ին հրավիրված մեծ միտինգի ժամանակ Հ.Յ.Դ.-ն ժողովրդին կոչ արեց զինվել[2]:

1917 թ. հոկտեմբերին Վանի ջոկատի հրամանատար գեներալ Մ. Սիլիկովի օրոք և նրա խորհրդով, Կովկասյան IV կորպուսի հրամանատարի հրամանով և Վանի շրջանի զինվորական գործակչի անցկացման միջոցով, հայկական V հրաձգային հարվածող դնդին կից նախատեսվեց ձևավորվել նոր՝ III դումարտակ, որը ստացավ «մահապարտների գունդ» անունը: Այդ հրամանով և Վանի Շրջանային կոմիսարիատի ու տեղական կուսակցական և ազգային կազմակերպությունների օժանդակությամբ սկսվեց 18-25 տարեկան բոլոր զինակոչների հավաքագրումը և ուսուցումը[1]: Մի քանի օրվա ընթացքում, ոստիկանության անվան տակ, հավաքվեց 5000 զորակոչիկ[2]: Ստեղծվեց Զինվորական խորհուրդ, որի կազմի մեջ մտան ոստիկանության ներկայացուցիչ՝ Գ. Բուլղարացին, կոմիսարիատի ներկայացուցիչ՝ Կ. Համբարձումյանը և Շրջանային վարչության ներկայացուցիչ Հ. Մանուկյանը[3]:

Միաժամանակ զենք և զինամթերք հայթհայթելու նպատակով Թիֆլիս գործուղվեցին հատուկ պատվիրակներ: Սակայն, այս մտահաղացումը հեռու էր իրականացումից, քանի որ շուտով հրապարակվեց մի նոր հրաման, տեղական նոր՝ Վանյան IV գնդի կամավարման մասին: Փաստորեն, կասեցվեց Վանի III գումարտակի ձևավորումը, սակայն արագ և հաջողությամբ ձեռնարկվեց նոր՝ IV գնդի ստեղծումը:

Սակայն, 1917 թ. նոյեմբերին Վանից մեկնեց նաև գեներալ Մ. Սիլիկովը, և Վանի ջոկատի հրամանատարության պարտականությունները ստանձնեց հայկական V գնդի հրամանատար՝ գնդապետ Պավել Փիրումովը[4]:

Հաշվի առնելով Կովկասյան ռազմաճակատում իրենց համար ստեղծված անբարենպաստ իրավիճակը՝ 1917 թ. նոյեմբերի 17 (21)-ին թուրքական երրորդ բանակի հրամանատար Յերիկ-Վեհիբ-Մեհմեդ փաշան ռուսական Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ Մ. Պրժևալսկուն զինից զինադադարի մասին խնդրանքով: Իրականում, սակայն, թուրքական կառավարող և զինվորական վերնախավի նպատակը հաշտություն կամ խաղաղություն կնքելը չէր. նրանք, ըստ էության, ցանկանում էին ժամանակ չահել:

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 37, թ. 36:

[2] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1, էջ 62:

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1, նաև՝ **Սահակյան Ռ. Օ.**, Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2011, թիվ 1-2 (630), էջ 336-362:

[2] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1, էջ 62:

[3] **Անդ**, էջ 77:

[4] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

Ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Մ. Պրժևալսկին Էրզրումի ռուսական բանակի հրամանատարի միջոցով վեհիբ փաշային ի պատասխան ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Պարոն գեներալ, զինադադարի առաջարկությամբ, Ձեր նամակը ստացա և շտապում եմ տեղեկացնել Ձեզ, որ ես պատրաստ եմ ընդառաջ գնալու Ձեր մարդկային առաջարկին: Այդ նպատակով ես առաջարկում եմ իրար դեմ մարտնչող մեր երկու բանակներին ամբողջ կովկասյան ռազմաճակատում դադարեցնել ռազմական գործողությունները և չիրականացնել որևէ ռազմավարական վերախմբավորում, մնալ ներկայումս զբաղեցրած դիրքերում՝ սպասելով զինադադարի կնքմանը: Այդ պայմանին Ձեր համաձայնության դեպքում ես առաջարկում եմ, Ձեր կողմից նպաստավոր պատասխան ստանալուն պես թուրքական և ռուսական բանակների ներկայացուցիչներից ստեղծել հատուկ հանձնաժողով, որին հանձնարարել մանրամասնորեն մշակել երկու կողմերի համար էլ ընդունելի զինադադարի պայմաններ: Պարտքս եմ համարում մեր այս նամակագրության մասին հաղորդել անգլիացիների միջամտության բանակի հրամանատարին: Գեներալ, խնդրում եմ ընդունեցեք խորին հարգանքներիս հավաստիքը»[1]:

1917 թ. նոյեմբերի 22-ին Կովկասյան կոմիսարիատն իր պատմական կոչով դիմեց Կովկասյան բանակին և Անդրկովկասի բնակչությանը, թուրքերի հետ զինադադար կնքելու համար որոշում կայացնել, որի ընթացքում հրավիրվելիք Սահմանադիր ժողովը պետք է վերջնականապես ավարտեր պատերազմը[2]:

Երկկողմանի համաձայնությունից հետո Հոկտեմբերյան հեղափոխությունից 41 օր անց՝ դեկտեմբերի 5-ին, Երզնկայում կնքվեց զինադադար, որի սահմանագծի մի հատվածն անցնում էր Վանա լճի հարավային ծովեզերքով և Աղթամար

[1] Փաստաթղթեր և նյութեր Անդրկովկասի և Վրաստանի արտաքին քաղաքականության մասին, ժողովածու, Թիֆլիս, 1919, էջ 13:

[2] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ.2 7, թ. 1:

կղզու մոտով[1]: Դրանից անմիջապես հետո Կովկասյան ռազմաճակատում հրավիրվեցին զինվորական ժողովներ և որոշումներ ընդունվեցին «զենքերը վար դնել» և «վերադառնալ տուն»: Ռուս զինվորը, ինչպես նկատում է Ե. Գեղամյանցը, «բարոյական արբեցության ենթարկվեց և թքնելով ամեն բանի վրա՝ թողեց պատերազմի դաշտն և խումբ-խումբ վերադաձավ իր հայրենիքը, - Ռուսաստան»[2]: Մինչև դեկտեմբերի 25-ը ռուսական առաջապահ ու պահեստի կես միլիոնանոց բանակի և ոչ մի զինվոր չպետք է մնար Կովկասյան ճակատում:

Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը Պոլոս Նուբարին ուղղած իր 1917 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 114 հեռագրում նշում էր, որ «Հայոց Ազգային խորհուրդը ... պատիվ ունի հաղորդելու, ...որ ռուսական բանակը գրեթե կատարելապես լքում է Կովկասյան ճակատը»[3], որը պարզապես «մեֆիստոֆելյան ծաղրանք մըն էր, ավելի՛ն, կեղծիք մըն էր»[4]: Ա. Ահարոնյանի բնորոշմամբ՝ ռուսական բանակի նահանջով վերանում էր այն գաղտնի որոշումը, որով Հայաստանը պատերազմից հետո կցվելու էր ցարական Ռուսաստանին[5]:

Հաշվի առնելով Կովկասյան ճակատի մեծ ձգվածությունը, զորացրումը և պայքարը հակահեղափոխության դեմ՝ Ինզելիում (արևելապարսկական շրջան), Ջուլֆայում (Ուրմիայի շրջան), Շահթախտ կայարանում (Վանի շրջան), Սարիղամիշում (Էրզրում-Երզնկայի շրջան) և Տրապիզոնում

[1] Այդ մասին առավել հանգամանորեն տես Документы и материалы о внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с.18-23, նաև՝ **Ամիրխանեան Ա.**, Ռուս և թուրք զինադադարը. պատմական անցքեր 1917–1918 (Փայտօմ Տամօ), Ֆրեզնո, 1921:

[2] **Գեղամեանց, ա. քահ. Ե.**, Տաճիկները Կովկասում և Բաքուի անկումը, պր. առաջին, Երևան, 1994, էջ 11:

[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 158, թ. 1:

[4] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետության տակ (1914–1918). Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, էջ 160:

[5] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 158, թ. 2:

(Տրապիզոնի չրջան), համապատասխանաբար ձևավորվում են Արևելապարսկական ռազմաչրջանի, Ուրմիայի, Վանի, Էրզրում-Երզնկայի և Տրապիզոնի չրջանների բոլշևիկյան իշխանության ռազմահեղափոխական կոմիտեները[1]:

և ամեն րոպե սպանվելու սարսռալից վտանգն ապրած զինվորների և զինվորականների սրտից էր խոսում»[2], սակայն ըստ էության բոլշևիկյան հեղափոխությունը զանգվածային ձևով և խառնաչփոթորեն քայքայում էր ռազմաճակատը: «Մշակ» թերթի հավաստմամբ՝ «ռուս զինվորը, որ առաջ, այնքան հիանալի ժեստով մը, ցուցուց աշխարհին իր անպարտելիությունը, երբ հոս, Արևելքին մեջ, խիզախեց մինչև Էրզրումի անառիկ ամրությունները, այժմ չատ անպատվաբեր կերպով կլքե իր ընկերներու անգին արյան գնով գրավված երկիրները և Ռուսիա կմեկնի «հող և ազատություն» ստանալու համար»[3]:

Ռուս հասարակ զինվորն այլևս չէր ցանկանում կռվել և ենթարկվել զինվորական հրամանատարներին և ձգտում էր օր առաջ բռնել տունդարձի ճանապարհը՝ բախտի քմահաճույքին թողնելով տասնյակ հազարավոր զինվորների արյան գնով ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքը:

Երզնկայի զինադադարից հետո առաջ եկած դասալքությունը մեծ աղետ էր ռազմաճակատի սահմանամերձ տարածքներին մոտ գտնվող ազգաբնակչության համար: Ինչպես նույն «Մշակ»-ն է արձագանքում, «բոլշևիկական «երկրորդ հեղափոխության» ստեղծած տարականոնությունն ու կազմալուծումը իր ամբողջ պեսպիսություններով ի հայտ կուգա գրավված վայրերուն մեջ, որոնցմե մեկն է Վան»[4]: Այդ էր պատճառը, որ Վ. Տերյանը և Ս. Լուկաշինը Արևմտյան Հայաստանի ազատագրման ու անկախության վերաբերյալ իրենց կազմած զեկուցագրում և Արևմտյան Հայաստանի անկախության հռչակման մասին Վ. Տերյանի կազմած հրովարտակի նախագծում նշվում էր, որ «անհրաժեշտ քանակությամբ ռուսական զորքերը կթողնվեն Վանի, Էրզրումի և Բիթլիսի սահմաններում այնքան ժամանակ, մինչև որ հայ ժողովուրդը հնարավորություն կստանա համաժողովրդական քվեարկությամբ վճռելու անկախ Հայաստանի ներքին կարգի հարցը և մինչև որ կկազմակերպվի հայկական ոստիկանության՝ երկրի ներքին կարգն ու արտաքին անվտանգությունն ապահովելու համար»[1]:

Վան-Վասպուրականի զեկավար մարմնի անդամներն անցնում են գործի և ջանում հուսալքումի ընդհանուր տրամադրությունը ցրել: Սակայն, անկարող լինելով կասեցնել ռազմաճակատի ընդհանուր քայքայումը՝ նրանք պայմանավորվում են Վանի ռուսական զորամասի զեկավարության հետ, որ ռուսներն իրենց հետ ոչինչ չտանեն, բացի անձնական զենքերից ու ճանապարհի սննդամթերքից:

Բանն այն էր, որ դեռևս Ա. Կերենսկու կառավարության օրոք նախապես հայտարարվել էր, որ Արևմտյան Հայաստանի ճակատի վրա կռվող բանակի հայ զինվորները հայազգի զորավարների զեկավարությամբ կարող էին տիրանալ կազմալուծվող ռուսական բանակի անբավ մթերքներին և պաշտպանելով Կովկասյան ճակատը հուսահատության մատնված թուրքական բանակից՝ ապահովել Արևմտյան Հայաստանի ազատագրումը[2]: Այդ մասին ցեղասպանությունը վերապրած Աղավնի Բարսեղյանը հիշում է. «1917-ին, երբ ռուսները «Դեպի տո՛ւն» լսելով քաշվեցան՝ հայերը մինակ ձգելով, համաձայնեցան իրենց թնդանոթները, հրացանները և ուրիշ զենքերը հայերուն ձգել»[3]:

[1] Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917–1921 гг.). Тбилиси, 1958, с. 179., նաև **Մելիքյան Հ. Ս.**, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970, էջ 557

[2] **Սարիադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 171:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1918, մարտի 20, թիւ 59:

[4] Վասպուրական, 1915–1930, Վենետիկ, 1930, էջ 105, նաև Վան-Վասպուրականի հերոսամարտ, 75, Երևան, 1990, էջ 115:

[1] **Տերյան Վ.**, Երկեր, հտ. 4, Երևան, 1925, էջ 404–405:

[2] **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 437:

[3] **Սվազլյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. Ականատես-վերապրողների վկայություններ, էջ 165:

Իսկ ռուսներն Արևմտյան Հայաստանում թողել էին 3.000 թնդանոթ, 3.000 գնդացիր, 1 մլրդ փամփուշտ, 100 հազ. զինվորի համար նախատեսված հագուստ և ուտելիք, 15–17 հազ. ձի, 1 մլն ռումբ, 100 հազ. հրացան, փոխադրության համար նախատեսված բազմաթիվ կառքեր, մեքենաներ, ձիու թամբեր, բենզին, կաշի և օժանդակ ամեն տեսակի պիտույքներ[1]: Այդ ամենի խելացի օգտագործման դեպքում կարելի էր 2-3 տարի սնվել, հագնվել, զինվել և կռվել: Սակայն հայերն ընդհանուր առմամբ բավարարվում են միայն թողած հարստության փշրանքներով: Դրանք հիմնականում թալանվում են քրդերի կողմից և հետո էլ ընկնում սոված ու ոջլոտած թուրք զինվորների ձեռքը, որոնք ուտում, հագնվում, զինվում, մի փոքր հանգստանում և վերակազմում են քայքայված դիվիզիաները, ապա անցնելով հարձակման հետ են գրավում ոչ միայն ռուսների կողմից գրավված հայկական նահանգները, այլ նոր նվաճումներ կատարում Անդրկովկասում: Ի բարեբախտություն հայերի՝ Վանում տեղակայված ռուսական 10.000-անոց բանակը վասպուրականցիներին է թողնում ոչ միայն իր գրաված երկիրը, այլև պահեստները, զենքերն ու ռազմամթերքը: Միայն Սավալիում հայերին է փոխանցվում 150 կառք և 900 ձի[2]: Սակայն, Սավալիի, ինչպես նաև Առնիսի ռուսական լքված պահեստներից, որոնք համալրված էին զինվորական ամեն տեսակի մթերքներով, «հնար չեղաւ պէտք եղած չափով օգտուելու, փոխադրական միջոցներու անբաւարարութեան և եղանակի խստութեան պատճառաւ: Այնպէս, որ զինուորներ մեծ մաս մը առանց տաք շորերու և ոտնամաններու ստիպուած էր իր դեղջկական հագուստով և միակ չապիկով մը մնկնիլ խրամներ, Ոստանի և Առնիսի բարձունքներու վրայ, լուռ ու անտրտունջ»[3]:

Տուն չտապող ռուս զինվորները, հնթարկվելով Վան-Վասպուրականի զեկավար մարմնի որոշմանը, վերցնում են իրենց անձնական զենքերը, ճանապարհի համար անհրաժեշտ պաշարները, պաշտպանության համար 2 թնդանոթ և 60 հոգուց բաղկացած հայկական հեծելազորային ուղեկցող մի խումբ՝ Մեսրոպ Ջանոյանի ու Խաչիկ Խոանյանի զեկավարությամբ ու 1917 թ. դեկտեմբերի երկրորդ շաբաթվա ընթացքում ճանապարհ են ընկնում դեպի Պարսկաստան–Երևան՝ պայմանով, որ հետագայում 2 թնդանոթները և հայ հեծելախումբը հետ ուղարկվեն Վան:

Թվում էր, թե Վանի պաշտպանության գործը հաջողված էր:

Սակայն, արձակուրդ գնալու նպատակով, 1917 թ. դեկտեմբերի 19-ին (հին տոմարով) (Հունվարի 1-ին) Վանից մեկնեց նաև գնդապետ Պ. Փիրումովը[1]: Նրա փոխարեն Հայկական V գնդի հրամանատարության պարտականությունները ստանձնեց փոխգնդապետ Պողոսյանը, ով աչքի էր ընկնում իր թուլլ բնավորությամբ և ապաշնորհությամբ:

Դեկտեմբերի 21-ին Վանից մեկնելու ցանկություն հայտնեցին նաև փոստը, հեռագիրը, կայծակպարպիչ կայանը, մարտկոցը և հացի փուռը: Շնորհիվ Վանի շրջանի կոմիսար Կոստի Համբարձումյանի անխոնջ աշխատանքի՝ հաջողվեց համոզել մարտկոցի զինվորներին մնալ Վանում:

Սակայն դեկտեմբերի 25-ին մյուս հաստատություններն անկանոն հեռացան Վանից[2]:

Ռուսական բանակի նահանջի հետ հեռանում են նաև Ջեմսովոնների և Քաղաքների միության 300 ներկայացուցիչները[3], որոնք իրենց գործունեությունը փոխանցում են Վանի կոմիսարությանը[4]:

---

[1] **Միհրանեան Ա.**, Ինչպէ՞ս պէտք է գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, էջ 7:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1918, մարտի 20, թիւ 59:

[3] **Վարդանեան Ե.**, «Նահանջ Իւրոց» Վասպուրականի, էջ 9-10:

[1] Սարդարապատի հերոս Պավել Փիրումովը (Փիրումյան)՝ Սարդարապատի մեկ այլ հերոս Դանիել-Բեկ Փիրումյանի հորեղբեր տղան էր, որը 1921 թ. ինքնասպան եղավ Երևանում:

[2] ՀԱԱ, ֆ. 267, ց. 2, գ. 96, թ. 1:

[3] **Թեոդիկ**. Ամենուն Տարեցոյցը, Ժ–ԺԴ տարի, 1916–1920, էջ 109:

[4] «Յորիզոն», Թիֆլիս, 1918, մարտի 9, թիւ 50:

Թոչնիկը (Ա. Հացագործյան) հիշում է, որ «Անթևակայելի արագութեամբ դատարկուեցան պունկտերն ու էտապները պահապան զինուորներէ, շատ անգամ նոյն իսկ առանց մթերքները նոր կառավարութեան փոխանցելու: Երբ կ'անցնէինք Բերկրիի ձորով դէպի Վան, կը տեսնէինք պահականոցներ՝ իրենց կարգ ու սարքով, որոնց ամայութիւնը սակայն՝ մարդուս վրայ սարսափ կը տարածէր»[1]:

Վանում հաստատվեց անկումային տրամադրություն: Հայկական V գնդում հաճախակի սկսեցին լսվել զինվորների պահանջներն՝ իրենց արձակուրդի մասին:

Ռուսական զորքերի վերադարձից հետո ճակատագրական և մահու ու կենաց հարց էր դարձել Արևմտյան Հայաստանի նվաճված երկրամասերի պաշտպանության խնդիրը, քանի որ ռազմաճակատից հեռացել էր շուրջ 500.000 ռուսական բանակ և ռազմաճակատը կազմալուծվել ու մնացել էր անտեր[2]:

Արևմտյան ճակատից վերադարձող զինվորները տրամադիր չէին տեղափոխվելու Կովկասյան ճակատ: Ցաք ու ցրիվ եղած հայկական գնդերը գործում էին ինքնագլուխ՝ առանց միասնական ղեկավարի և առանց իրար հետ կապ պահպանելու: «Կովկասահայ ժողովուրդին մէջ բարոյալքումը կը զօրանար հետզհետէ...»[3]:

Արևմտահայությունը խորհում էր, որ թուրքը հեշտությամբ ոտք չդներ գրավված վայրերում, չհամալրվեր զենքի, հոգուստի և կենսամթերքի ռուսական պահեստներով, իսկ հաջորդ օրն էլ սուրը չչողացներ արևելահայության գլխին: Կովկասյան ճակատը պաշտպանելու համար՝ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Լեբեդինսկին 1917 թ. դեկտեմբերի 26-ին իր թիվ 136 հրամանագրով հայերին պաշտոնապես արտոնել էր ստեղծել առանձին զորաբանակ, կամ

[1] «Հայրենիք», Բոստոն, 1919, ապրիլի 10, թիւ 2114:

[2] **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Բեյրութ, 1966, էջ 144:

[3] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890-էն 1940, էջ 217:

կորպուս, որի մեջ մտնում էին հայկական I և II հետևակային դիվիզիաները, հայկական կամավորական դիվիզիան (հրամանատար գեներալ Անդրանիկ), հայկական հեծյալ բրիգադը (հրամանատար՝ գնդապետ Գ. Կորգանով), 4 տարածքային գնդեր, 5 տարածքային գումարտակներ: Երեք դիվիզիաների քանակը կազմում էր 17 հազ. սվին, իսկ հրետանային միջոցները՝ 16 մարտկոց: Կորպուսի հրամանատար նշանակվեց ցարական բանակի գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը: Հայկական ազգային կորպուսը պետք է պաշտպաներ ռազմաճակատի գիծը՝ պարսկական սահմանից մինչև Բայբուրդ[1]: Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Մ. Ա. Պրժևալսկուն փոխարինած գեներալ-լեյտենանտ Ն. Զ. Օդիշելիձեն[2]:

Ռուսական քայքայված Կովկասյան ռազմաճակատին հակազդում էր թուրքական 20 հազ. զինվորներից բաղկացած «Կովկաս» բանակային խումբը, որի կազմի մեջ էին երկրորդ (Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ) և երրորդ (Մեհմեդ Վեհիբ փաշայի գլխավորությամբ) բանակները՝ Ահմեդ Իզզեթ-փաշայի գլխավորությամբ, որին 1917 թ. դեկտեմբերից փոխարինեց Մեհմեդ Վեհիբ փաշան[3]:

Վանա լճից հարավ տեղակայված էին IV բանակային կորպուսի զորամասերը, որոնք բաղկացած էին 5-րդ ը 12-րդ հետևակային դիվիզիաներից և որի հրամանատարը գեներալ Ալի Իհսան-փաշան էր[4]:

Երկրի պաշտպանության կարևորագույն հարցը հրատապ լուծում էր պահանջում, քանի որ վասպուրականցին իր գոյության պահպանումը վստահում էր իր զենքին և հավաքական ուժին: Վասպուրականի ղեկավար մարմինը, հաշվի

[1] Բայբուրդից մինչև Սև ծով ընկած տարածքը պաշտպանելու էին վրացական 12 հազ. հոգուց բաղկացած ազգային զորամիավորումները:

[2] **Лудшувейт Е. Ф.**, Турция в годы Первой мировой войны 1914-1918 гг., Военно-политический очерк, Москва, 1966, с.160-161.

[3] Անդ, էջ 162-163.

[4] **Кадишев А. Б.**, Интервенция и гражданская война в Закавказье, Москва, 1960, с. 44:

առնելով ստեղծված նոր կացութ յունը, ինքնապաշտպանութ յան և ինքնապահպանման համար միջոցներ է ձեռք առնում, ինչպես դա արվեց 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի ժամանակ: Ա. Մաքսապետյանի հավաստմամբ՝ «կ՛աճապարեինք իշխանութ յան կազմակերպումը չուտ ավարտել, որպեսզի արտաքին ու պատերազմական գործերը երեսի վրա չմնան»[1]:

Վանյան V գնդի համալրման հրամանն ի կատար ածելու համար 1918 թ. հունվարի 1-ին Վանի շրջանում հայտարարվեց 20-35 (18-40) տարեկան երիտասարդների պարտադիր զորահավաք, իսկ ավելի ուշ՝ մինչև 50 տարեկան տղամարդկանց համընդհանուր զորակոչ: Հավաքագրումն ընթանում էր բավականին հաջող: Զենք կրելու ընդունակ երեկվա արհեստավորները, խանութպանները, ուսուցիչները, քաղաքական գործիչները, զինապարտները և ընդհանրապես բոլորը ներկայացան հավաքատեղի, անցան զորանոց և ենթարկվեցին զինվորական ընդհանուր կարգ ու կանոնին:

Այս ձեռնարկումը ժողովրդի կողմից ընդունվեց շատ բարձր դիտակցումով և սիրով, քանի որ մեծացվում էին պաշտպանութ յան ուժերը, իսկ ժողովուրդն էլ լծվում էր գործունյա պայքարի: V գնդի սպաները, մարզելով զորակոչիկներին, կազմեցին երկու գունդ՝ 2.376 սվինով և 80 գնդացիրով: Դրանցից մեկը 100 ձիավորով հետագայում ուղարկվեց Ոստանի ճակատ, 800 հոգի և 100 ձիավոր՝ Առնիս-Արճեշի ճակատ, իսկ 200-ը՝ Բերկրի-Սավալի գիծը (Իգդիրի ճանապարհը) պաշտպանելու[2]:

Ձևավորվեց ուսումնահրամանատարական կազմ, որի օգնութ յամբ Վանում բացված սպայական դպրոցում պատրաստվեցին շուրջ 30 ենթասպաներ[3]: «Ամեն պարագայում, - հիշում է ժամանակակիցներից մեկը, - պարծենում էինք, որ

[1] Վասպուրական, 1915–1930, էջ 107–108, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 118:

[2] **Յացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (ականատեսի հուշեր), ԲՅԱ, 1969, թիվ 1, էջ 218:

[3] ՅԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

սպաներ պատրաստելու համար դպրոց ունենք»[1]: Արևելահայ սպաների ձեռքի տակ մարզվելուց հետո նրանք փետրվարի 1-ին մտան բանակ և որպես հարյուրապետ, հինսապետ և զինվորական պահեստների կառավարիչներ՝ անձնվիրաբար ծառայեցին իրենց հայրենիքին[2]: Բայց, քանի որ սպանեի պակասը զգացնել էր տալիս, ստիպված կազմակերպվեց սպայական երկրորդ դասընթացը՝ նախատեսված 50 հոգու համար[3]:

Հայնկույսների եկեղեցու մոտ՝ Ակոբա Քար քարաժայռի մոտ նորաթուխ սպաների ղեկավարությամբ կազմակերպվեցին հրաձգության, իսկ քաղաքի արևելյան կողմում՝ Ուրբաթ Առուի դաշտում՝ քայլքի պարապմունքներ[4]:

Այնքան մեծ էր զորակոչի ոգևորությունը, որ դրան իրենց մասնակցելու ցանկությունը հայտնեցին նաև տարիքով փոքրերը[5]: Այդ մասին Ե. Վարդանեանը համոզմունքով արձանագրում է. «Ոգևորութեան ալիքներ մեծերէն անցնելով թափանցած էին 10-12 տարեկան փոքրիկներու սրտերու մէջ փոթորկելով անոնց հոգիներ: Եւ ահա Արտամետ գիւղ բնակող Շատախցի 50 փոքրիկներ՝ որոնց հայրեր և մեծ եղբայրներ արդէն զինուոր էին և խրամներու մէջ, մի մի փայտ ուսերուն դրած, զինուորական չարքով և «Մեր հայրենիք» երգելով ամբողջ ժողովրդեան ծափերու մէջէն զօրանոց կուգային պահանջելով, որ իրենց ալ զէնք տրուի, իրենք ալ կ՛ուզեն կռուի

[1] **Սարիադեան Ս.**, Կյանքիս յուշերից, էջ 171:

[2] Վասպուրական, 1915–1930, էջ 108, տես նաև՝ **Յացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (ականատեսի հուշեր), ԲՅԱ, 1969, թիվ 1, էջ 218:

[3] Նրանցից շատերը հետագայում մասնակցեցին Սարդարապատի հերոսամարտին և 1921 թ. Փետրվարյան ապստամբությանը: Տես Վասպուրական, 1915–1930, էջ 108, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 119-120:

[4] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 18:

[5] The national geographic magazine on Armenia and the armenians 1915-1919. The Modus Vivendi Center Legacy Reprint and Aichival Document Publication Series, volume I, Yerevan 2014, p. 183-184.

դաշտ մեկնիլ: Շատախի առուծներու արժանաւոր կռիւններն էին անոնք, Հայ աննկուն նկարագրի կենդանի պատկերներն էին անոնք, զորոնք մի չաբաթ զօրանոցի մէջ զինուորի նման կերակրելէ վերջ ճամբու կը դնէին ըսելով - Հայաստան չի մեռնիր քանի, որ ձեզ նման փոքրիկներ ունի»[1]:

Իր քանակով քիչ V հայկական գունդը ստիպված էր ճակատը պաշտպանելուն զուգընթաց իրականացնել ներքին ծառայութիւն, որի գլխավոր խնդիրն էր հետևակային և հեծյալ խմբերով ապահովել տեղի բնակչութեան անվտանգութիւնը տարբեր տեսակի ավազակախմբերի հարձակումներից: Այդ նպատակով առանձնացված Վանի ոստիկանական երկու վաշտերը զեկավարում էին Լևոն Շաղոյանը և Գրիգոր Բուլղարացին[2], որոնց օգնութեան եկան նոր ձևավորված IV հայկական գնդի զորամասերը: Վանից մինչև Շերբեկ (Խոյի ուղղութեամբ) և Վանից-Սավալի զինվորական հանգրվանները զբաղեցվեցին Վանի ոստիկանների կողմից:

Մ. Գրեյսին հանձ առավ հոգալ Վանի իշխանութեան զինբաժնի ամբողջ ծախսը, որն ամսական կազմում էր մոտավորապես կես մլն ռուբ.: Միաժամանակ, նա խոստացել էր տալ 20 գնդացիր և 12 թնդանոթ՝ իրենց հրահանգիչներով:

Վանի գնդի կողմից զբաղեցվեցին ռուսների կողմից թողնված Առնիսը և Արճեշը: Բացի դրանից, V հայկական գնդի մեկ վաշտի հետ Ոստանի դիրքերում կանգնած էր IV Վանյան գնդի վաշտը[3]:

1918 թ. հունվարի 13-ին V հայկական հրաձգային հարվածող գնդի 7-րդ վաշտը և Վանյան IV գնդի 1-ին վաշտը Հայկական 5-րդ հրաձգային հարվածող գնդի պրապորշիկ՝ Տիգրան Ժամհարյանի գլխավորութեամբ մեկնեց Ոստան՝ Հայկական 5-րդ հրաձգային հարվածող գնդի երկու վաշտերին փոխարինելու համար[4]:

[1] Վարդանեան Ե., «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 18:

[2] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 62:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

[4] Անդ:

Վասպուրականի հայկական այդ գնդերի մեկնումը ոգեմաճակատ կատարվեց հանդիսավոր իրադրութեան մեջ՝ իշխանութեան բոլոր անդամների, Վանի չափահաս բնակչութեան և աշակերտների մի մասի ներկայութեամբ: Հուզիչ և ոգևորիչ ճառով հանդես եկավ հայտնի գործիչ Ավետիք Սահակյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Վանում[1]: Վասպուրականի նվիրական հողի պաշտպանութիւնն ամբողջութեամբ հանձնվում էր հայրենի կարիճներին, որոնց խիզախութեունից ու տոկունութեունից էր կախված տեղի ազգաբնակչութեան մնալ-չմնալու հարցը:

Հասնելով տեղ՝ 1918 թ. հունվարի 14-ին Տիգրան Ժամհարյանը ստանձնեց Ոստան-Դերս-Խանի պաշտպանական գծի պարտականութիւնները:

Սակայն Վասպուրականի ինքնապաշտպանութեան վրա իր բացասական ազդեցութեունն ունեցավ V հայկական հրաձգային հարվածող գնդի մեկնումը Իգդիր:

1918 թ. հունվարի 18-ին Պարսկաստանի վրայով Վան-Վասպուրականից կովկաս են մեկնում ռուսների վերջին զինվորները, փոստ-հեռագրատան մնացած պաշտոնյաները և թնդանոթաձիգները:

Այդ ամենի անմիջական ազդեցութեան տակ 1918 թ. հունվարի 20-ին Ոստանի վաշտի անունով ստացվեց 4 զինվորների հեռախոսագիրը, որով նրանք կոչ էին անում ռազմաճակատի պաշտպաններին ինքնակամ թողնել ճակատը և հեռանալ Կովկաս: Տ. Ժամհարյանի բացատրական աշխատանքների արդյունքում վաշտն այդպիսի քայլը որակեց որպես դավաճանութեուն[2]:

Սակայն, 1918 թ. հունվարի 25-ին գնդի մնացած վաշտերի 250 հայ սպաներ և զինվորներ (ըստ Հ. Երամյանի՝ 300-400[3], իսկ ըստ Ե. Վարդանյանի՝ 300 հոգի[4]), որոնք պահում

[1] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 120:

[2] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 1:

[3] Երամյան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 437:

[4] Վարդանեան Ե., «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 17:

էին Ոստանի դիրքերը, «վարակվելով ռուսներու վատասերիչ օրինակեն»[1] և տարված ռուսների «տունդարձի» լոզունգով, հաշվի չառնելով երկրի առջև ծառացած լուրջ վտանգը, ծանր կացությունը և ժողովրդի ու կառավարության խնդրանքը և հորդորը, իրենց հետ վերցնելով չարժական խոհանոցը, երկաթուղային պատերազմական կառքերը, զինանոցը և ձիերը, լքում են Վան-Վասպուրականի ճակատը և մեկնում Կովկաս: Դա, փաստորեն, կատարյալ դավաճանություն էր, որի անմիջական արդյունքը եղավ այն, որ հաջորդ օրը Վանից հյուսիս ընկած Գեղու գյուղի մեջ նրանք հարձակման ենթարկվեցին իրենց իսկ մարտական ընկերների կողմից, որի հետևանքով սպանվեց 5 և վիրավորվեց 7 զինվոր: Եղբայրասպան այս արարքը, սակայն, եթե նույնիսկ ուներ արդարացուցիչ պատճառ, արժանացավ ժողովրդի արհամարհանքին[2]:

Տունդարձի վարակը շարունակվեց նաև հետագայում: 1918 թ. փետրվարին Տ. Ժամհարյանի գնդի 1-ին գումարտակը, որն այդ ժամանակ գտնվում էր Սավալիում, սկսեց ամենօրյա պահանջներ ներկայացնել, որպեսզի գնդի մյուս գումարտակները թողնեն Վանը և նահանջեն Սավալի: Փոխգնդապետ Պողոսյանը, որն անձամբ գտնվում էր հուսահատ վիճակում, չկարողացավ անձամբ ոչինչ ձեռնարկել: Սակայն, որոշ ազդեցիկ սպաների միջոցով նա հրաման արձակեց և արգելեց ճակատի ինքնակամ քայքայումը[3]:

Այսպիսով, Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած իրադարձությունները կազմաքանդիչ նշանակություն ունեցան, ինչպես Կովկասյան ողջ ռազմաճակատի, այնպես էլ Վան-Վասպուրականի պաշտպանության համար, որի արդյունքում Վանում տեղակայված ռուսական 10000-անոց բանակը բռնեց տունդարձի ճանապարհը՝ ճակատագրի քմահաճույքին թողնելով Վասպուրականի ազգաբնակչությանը:

[1] Երամյան Յ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ., էջ 437:

[2] Վարդանեան Ե., «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 18:

[3] ՅԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 2:

2.3. Վանի նահանգային ինքնավար Կոմիսարության՝ հայկական նորանկախ կառավարության հռչակումը և գործունեությունը

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո արևմտահայերի և արևելահայերի կյանքն ընթացավ տարբեր ճանապարհներով: Արևելահայությունն ամբողջապես ներգրավվեց համառուսական քաղաքական ընդհանուր հորձանուտի մեջ, քանի որ «հեղափոխության մրրիկը հափշտակեց նրան և մի պահ մոռացնել տվեց զուտ ազգային ցավեր»-ը[1]: Իսկ արևմտահայությունը շարունակեց ապրել իր ազգային տեղական կյանքով, քանի որ նրա հետաքրքրություններն ամփոփված էին Արևմտյան Հայաստանի և հայ գաղթականական գործերի սահմաններում:

Վան-Վասպուրականի Շրջանային վարչության ղեկավար մարմնի անդամները չեն կարողանում ըմբռնել Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքներն Արևմտյան Հայաստանի և մասնավորապես Վան-Վասպուրականի հետագա ճակատագրում: Ինչպես Վանի քաղաքական գործիչներից Արմենակ Մաքսապետյանն է նշում, «չատ հասկանալի է, որ առաջին օրերուն չկարողացանք ըմբռնել ու չափել ներկայի անորոշությունն ու ապագայի ահավորությունը: Մենք չունեինք այդ ի վերուստ տրված ընդունակությունը, զոր ոմանք, հետևյալ թվականով, սեփականացնելու և անու անցյալը չափելու հանդգնություն ունեցան տարիներ հետո»[2]: Նրանք պետք է թեկուզև ժամանակավորապես կանգնեին այդ հեղափոխության դիրքերում, Երևանի ու Թիֆլիսի վրայով կապ ստեղծեին այդ հեղափոխության բոլշևիկ ղեկավարների՝ հատկապես Վ. Ի. Լենինի հետ, և նրանց օգնությամբ ռուսական զորքերը պահելով՝ Երկրում փրկեին ոչ

[1] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 29:

[2] Վասպուրական. 1915–1930, էջ 105, նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտ, 75, Երևան, 1990, էջ 115:

միայն Վան-Վասպուրականը, այլև Արևմտյան Հայաստանի մեծ մասը: Սակայն, դժբախտաբար, այդպես չստացվեց, և Հոկտեմբերյան հեղափոխությունը տակնուվրա արեց բոլորի հույսերը:

Ռուսական բանակի հեռացումից հետո արևմտահայությունը մնում է մենակ:

Հայ ժողովուրդն, իրերի բերումով, դառնում է Արևմտյան Հայաստանի իրական և իրավական տերը: Այդ իսկ պատճառով վարչական կազմակերպությունները կենտրոնացնելու և կառավարական ձև ստանալը հակամետ էին:

Սրանով իսկ, կարծես թե, հայ ժողովուրդն անկախանում է, հասնում իր դարավոր փափագած երազանքին:[1] Վասպուրական աշխարհն ազատվում է թուրքական բռնակալության արյունոտ ճիրաններից և մի բուռ վասպուրականցիներ տեր են դառնում իրենց հայրենի աշխարհին. «Մենք մենակ մնացինք մեր երկնքի տակ, մեր թշնամու հանդեպ, ... այլևս մենք միայնակ էինք: Քանի՛ դարեր այդ փափագը ունեցած էինք մեր գանգերու մեջ և ինչպես երազախաբ եղած էինք»[2]: Ավա՛ղ, դա մի հրաշք ու երազանք էր, սակայն միայն մի փոքր ու կարճ ժամանակի վայելքի համար:

Անկախ հայրենիքի և անկախ կառավարության անհրաժեշտությունը օրակարգի հարցն էր:

Սակայն, ո՛չ իր սեփական ուժերը և ո՛չ էլ իր կազմակերպական վիճակը թույլ չէին տալիս, որ նա իր բախտը տնօրիներ անկախորեն: Այստեղ հանդես է գալիս ամբողջ Հայաստանը, որի կենտրոնը Թիֆլիսն էր և որը, սակայն, խճճված էր կովկասյան քաղաքական կծիկի մեջ և զրկված էր ինքնուրույն շարժվելու հնարավորությունից:

Դեռևս 1917 թ. սեպտեմբերից Վասպուրականի Շրջանային վարչությանը կից ստեղծվել էր Կոմիսարիատ, որը ռուսական զորամասի հեռանալուց հետո կամաց-կամաց իր ձեռքն է վերցնում նահանգի քաղաքացիական գործի ղեկը:

[1] Վասպուրական. 1915–1930, էջ 105:

[2] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 115:

Շրջանային վարչությունը որոշում է վերջ դնել հանձնախմբերի միջոցով երկիրը կառավարելու ձևին և Անդրկովկասյան կոմիսարիատի և Խորհրդային Ռուսաստանի կառավարության նման օրինականությամբ ստեղծել ղեկավար մի նոր մարմին՝ կառավարման յուրաքանչյուր ճյուղի պատասխանատու-լիազոր ճանաչելով մեկին:

Ա. Մաքսապետյանի հավաստմամբ՝ իշխանության կողմից հրավիրված ժողովների ժամանակ երկար վիճաբանության նյութ դարձավ կառավարության իրավասության և անվանումի հարցերը: Արդյունքում նոր կառավարությունը կոչվեց Վասպուրականի իշխանություն կամ Վասպուրականի ժողովրդական կոմիսարների խորհուրդ: Վասպուրականի ղեկավար այդ մարմինը, որը դարձավ երկրի քաղաքացիական ու զինվորական իշխանությունը, ինքնաբերաբար և աստիճանաբար վերածվեց հայկական մի նոր կառավարության՝ առանց հովանավորի և օգնության, որը, ի տարբերություն 1915 թ. ստեղծված Վանի նահանգային վարչության, կազմված էր միայն հայերից և մեծամասամբ վասպուրականցիներից և ուներ միայն հայ պաշտոնյաներ, հայկական զորք և ոստիկանություն (հետևակ և հեծյալ վաշտերով), հայկական գործավարություն, հայկական դրամ՝ փող, և հայկական տնտեսություն: Այսպես, Վասպուրականի հողի վրա երկար դարերից հետո կազմվում է թվով երկրորդ[1], բայց հայկական առաջին անկախ կառավարությունը, որը հեռակա կարգով և ձևականորեն ենթարկվում էր Անդրկովկասյան կոմիսարիատին:

1918 թ. հունվարի 6-ին Ս. Ծննդյան օրը Վան-Վասպուրական աշխարհը Այգեստանի Հանկույսների ձորաց եկեղեցու առջև կանգնած 400 հոգուց բաղկացած երկու վաշտերի, հայ սպաների, բարձրաստիճան պաշտոնեության և հոգևորականության ներկայությամբ՝ «Կեցցէ՛ ազատ Հայաստան, կեցցէ՛ հայ բանակ» բացականչությունների ներքո, «Մեր

[1] Վանի առաջին կառավարությունը՝ նահանգապետության տեսքով ստեղծվել էր 1915 թ. մայիսի 7-ին՝ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ և գոյատևել էր մինչև նույն թվականի հուլիսի 18-ը:

հայրենիքը» քայլերդի տակ», հրացանազարկով և թնդանոթազարկով հայտարարվում է ազատ ու անկախ հայրենիք՝ «ավետելով Հայկական նորածագ ազատութի՛ւնը...», որով «տարիներու ստրկութեան արցունքը սրբեց իր աչքերեն, խոր չունչ մը առավ»: «Որքա՜ն քաղցր, որքա՜ն խորհրդաւոր էր Հայ հրամանատարի բերնէն Հայ լեզուով, Հայ զինուորներուն ուղղուած հրահանգը. որքա՜ն երջանիկ, որքա՜ն հպարտ էին բարևի կանգնող զինուորները...: Փա՜ռք քեզ Աստուա՜ծ, փա՜ռք քեզ Աստուա՜ծ, կը կրկնէր ժողովուրդը միաբերան՝ յուզմունքէն դողդողալով»,- գրում է դեպքերի ականատես Եղ. Վարդանյանը[1]:

Գեներալ Թ. Նազարբեկյանը գրում է, որ այդ օրը նույնիսկ նախատեսված էր անցկացնել հետևակային և հեծելազորային զորամիավորումների զորատես, որը, սակայն, հեծելազորային գնդի հրամանատար Փիրումովի անփութության պատճառով չիրականացավ:[2] «Առաջարկ էր եղել, - նշում է Թ. Նազարբեկյանը, - 1918 թ. հունվարի 6-ին Վանի եկեղեցու գավթում հանդիսավորությամբ շնորհավորել ջրօրհնեքը (մկրտությունը): Յանկանալով հայերին ցույց տալ իրենց ազգային զորքերը, ես կարգադրեցի ժամերգության ժամանակ եկեղեցու գավիթ բերել հետևակի մեկ վաշտ և հեծյալ գնդի մեկ հեծելավաշտ՝ երաժշտության ուղեկցությամբ: Ես կարծում էի, որ սեփական ազգային զորամասերն առաջին անգամ տեսնելով՝ եկեղեցու գավթում ներկա գտնվող հայերի մոտ ակամայից կբարձրանա հայրենասիրության զգացումը: Սակայն հեծելազորային գնդի հրամանատար Փիրումյանն իր անճշտակատարության և անփութության պատճառով փչացրեց իմ այդ մտահղացումը: Վաշտը եկավ ժամանակին, իսկ հեծելավաշտը՝ երաժշտությամբ, միայն այն ժամանակ, երբ ժողովուրդն արդեն սկսել էր ցրվել: Փիրամյանն իրեն արդարացնելու համար նշում էր այն հանգամանքը, որ երբ ինքը, հեծելավաշտի հետ, անցնում էր Բարատինսկու փողո-

[1] **Վարդանեան Ե.**, «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 12-13:

[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 13, թ. 44:

յով, դիմացը դուրս է եկել զորքերի Գլխավոր հրամանատար գեներալ Պրժևալսկին, ողջունել մարդկանց, դիտել հեծելավաշտը և շնորհակալություն հայտնել հիանալի տեսքի և վայելչության համար: Իհարկե, այդ արդարացումը մանկական էր: Ստիպված եղա միայն հետևակի ներկայությամբ ճառով պիմել ժողովրդին, բայց այդ ճառն, իհարկե, ասվեց ռուսերենով ու առանց երաժշտության և չէր կարող այն տպավորությունը գործել, որը ես ակնկալում էի»[1]:

1918 թ. հունվարի 13-19-ը Վանում գումարվում է Հ. Յ. Դ. Վասպուրականի չրջանային ժողովը, որին մասնակցում էին 84-85 պատգամավորներ և որոնք գործուղվել էին պաշնակցություն կուսակցության տարբեր մարմիններից: Քննարկվում են զինադադարի ու հաշտության, ճակատի պաշտպանության և զինված ուժերի կազմակերպման (ոստիկանություն, պարտադիր զինվորագրում), հայ-քրդական հարաբերությունների կարգավորման, հայկական կուսակցությունների փոխհարաբերությունների ու համագործակցության, ինչպես նաև հացի ճգնաժամի և երկրի պարենավորման անհրաժեշտության հարցերը: Ժողովը որոշում է մերժել Կովկասում կազմված արևմտահայ և արևելահայ զինվորական առանձին մարմիններ և գնդեր ստեղծելու գաղափարը և առաջարկում, որ ստեղծվի մեկ իշխանություն և զինվորական մեկ բանակ: Ժողովի պատվավոր նախագահ է ընտրվում Գ. Գևորգյանը (Բուլղարացի), իսկ նախագահներ՝ Վ. Առաքելյանը և Ս. Մեսրոպյանը[2]:

Հաշվի առնելով դեպքերի արագընթաց զարգացումը և այն, որ Վանի կոմիսարիատը չի կարողանում ընդառաջ գնալ օրվա պահանջներին և կազմակերպել դիմադրական ուժ, Կենտրոնական կոմիտեն որոշում է նոր ձևով ձևավորել կառավարություն, որն անկախ կլիներ կոմիսարիատից:

[1] Գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերը, Հայկական կորպուսն ընդդեմ թուրքական զորքերի (1917 թ. նոյեմբեր- 1918 թ. հուլիս), էջ 24-25:

[2] «Յորիզոն», Թիֆլիս, 1918, մարտի 4, թիւ 46, նաև՝ **Մանուկյան Յ.**, Դեպքերը Վասպուրականում (1914-1918).- «Վեմ», Փարիզ, 1937, հունվար-մարտ, թիւ 1, էջ 62:

Վասպուրականի կառավարությունն ամբողջությամբ իր ձեռքն է վերցնում երկրի քաղաքային և գինվորական ղեկավարման գործը, և հունվարի 18-ին ամբողջովին ձևավորվում է Վասպուրականի երկրորդ կառավարությունը՝ «ժողովրդական կոմիսարների խորհուրդ»-ը, որի ստեղծման մասին հատուկ հայտարարությամբ հանդես է գալիս Վասպուրականի ժողկոմխորհի նախագահ Կ. Համբարձումյանը, որին կոչում էին «Վանի նոր Արամ» և որն աչքի էր ընկնում «իր բացառիկ անձնվիրությամբ և ցայտուն եռանդով»[1]: Կազմված իշխանությանը տրվում են օրենսդիր և կատարողական (գործադիր) իրավունքներ:

Կառավարության կազմը, որի անդամներին՝ նախարարական խորհրդի նման, նպատակահարմար եղավ կոչել «վարիչ-տեսուչ», կամ «կոմիսար» («նախարար»), պարզ դարձավ միայն 1918 թ. հունվարի 24-ին, երբ տների պատերին փակցվեցին հայտարարություններ: Կառավարության մեջ էին մտնում. 1) Կոստյա (Կոստի) Համբարձումյան – նահանգապետ, կոմիսարների խորհրդի նախագահ և արտաքին գործերի (հարաբերությունների) վարիչ-տեսուչ (կոմիսար), 2) Հմայակ Մանուկյան – ներքին գործերի վարիչ-տեսուչ (կոմիսար), 3) Գրիգոր Գևորգյան (Բուլղարացի) – գինվորական գործերի վարիչ-տեսուչ (կոմիսար), 4) Զավեն Կորկոտյան – պարենավորման վարիչ-տեսուչ (կոմիսար), 5) Սամվել Մեսրոպյան – ելևմտական գործերի վարիչ-տեսուչ (կոմիսար), 6) Արմենակ Մաքսապետյան – գյուղատնտեսական (երկրագործական) գործերի վարիչ-տեսուչ (կոմիսար), 7) Ներսես Տեր-Թովմասյան – առողջապահական-բժշկական վարիչ-տեսուչ (կոմիսար)[2]: Հետագայում իշխանության կազմը համալրվեց նոր անդամներով: Կառավարության մեջ մտան Կովկասից եկած՝ 8) Հայրապետ Հովհաննիսյանը – նահանգապետի օգնական և խնամատարության վարիչ-տեսուչ (կոմիսար), 9) Սարգիս Զավրիևը (Զավրիյան) – փոստահեռագրական (հաղորդակցության) գործերի վարիչ-տեսուչ (կոմիսար)[1]:

«Մշակ»-ն անդրադառնալով նորաստեղծ կառավարության կուսակցական պատկանելության խնդրին՝ նշում է. «Վանի լաւատես դաշնակցականները ապագային յաղթական դափնիները միայն իրենք կրելու մտահոգութեամբ կազմեցին միատարը (իմա՝ դաշնակցական) կոմիսարութիւն, որու ապիկարութիւնը ի յայտ եկաւ չատ անգամ և պատկուեցաւ Վանի վերջին գաղթի կատաստրոֆովը»[2]:

Նորաստեղծ կառավարությունը տեղավորվում է Վանի Փոքր-Քենդրչի փողոցի վրա գտնվող կաթոլիկ Գիլտանինների վերանորոգված մեծ ու գեղեցիկ շենքում (նախկին գինվորական հիվանդանոցը), ուր տեղակայված է եղել նաև Արամ Մանուկյանի կառավարությունը:

Յուրաքանչյուր կոմիսարիատ կամ բաժին ուներ իր գրասենյակը և 9 կոմիսարներին ստորադասված 130 հոգուց բաղկացած ընդհանուր պաշտոնեություն: Բոլոր կարգի գործառնությունները վարում էին հայերեն լեզվով, իսկ նահանգապետն ու կոմիսարներն ունեին հայերեն և ռուսերեն լեզուներով կնիքներ: Իշխանության կայացմանը՝ առանց պաշտոնի, մասնակցում էին նաև Ռամկավար և Դաշնակցություն կուսակցությունների ներկայացուցիչները: Ըստ Ա. Մաքսապետյանի՝ «Եղանք և այս անգամին, փոքր ժամանակի մը վայելքե հետո»[3]:

Կառավարության գործունեության մասին հետագայում

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 37, թ. 36:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 105, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 116:

[1] **Թեոդիկ**, Ամենուն Տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 109, տես նաև՝ Վասպուրական, 1915-1930, էջ 106, **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 16-17, նաև **Յացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, թիվ 1, էջ 215, *Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 116:*

[2] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81:

[3] Վասպուրական. 1915-1930, էջ 105, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 115:

Ա. Հացագործյանը հիշում է. «Ամբողջ օրը եռուզեռ էր այն-տեղ, և ամեն ինչում նկատվում էր շտապողականություն, մտահոգություն, բայց և միաժամանակ՝ վճռականություն, կորով, համառություն ու ձեռներեցություն: Կարծես կառավարչատունը մի զինվորական շտաբ լիներ, որտեղ ամեն րոպե մտածում էին սահմանի ու գրավված դիրքերի ապահովության ու ամրապնդման, թշնամու անակնկալ հարձակումը կամ հակահարձակումը կանխելու, դիրքերում մարտնչող զինվորների պարենավորման ու ռազմանյութերի մատակարարման, թիկունքի ու մյուս զորամասերի հետ կապի անխափան պահպանման մասին և այլն, միայն ա՛յն տարբերությամբ, որ այդ բոլորի հետ մեկտեղ, Վասպուրականի կղզիացած փոքրիկ ու սակավաժ իշխանությունը պարտականություն ուներ նաև սննդով ապահովելու հայրենի տուն վերադարձած 25.000 վասպուրականցիներին և նորմալ կյանքի պայմաններ ստեղծելու նրանց համար: Եվ դեռ ավելին: Այդ իշխանությունը ծրագրում, ձգտում էր Կովկասում ապաստանած փախստական վանեցիներին ևս երկիր վերադարձնել, հզորացնել Վասպուրականը, նոր Արծրունիքի վերածել այն, միայն առանց թագակրի, առանց տոհմական ազնվականության: Անելիք շատ կար: Պետք է պարծանքով արձանագրել, որ Վասպուրականի իշխանության մեջ գործող դեկավարներին հոգեկան ուժ ու կորով չէր պակասում, արիությունը երբեք չէր դավաճանում նրանց, և նրանք կարողանում էին պատվով դուրս գալ իրար հաջորդող դժվարություններից»[1]:

Հայկական երկրորդ կառավարության տարածքի մեջ էին մտնում Վան քաղաքը և նրա արվարձանները՝ Վան-Տոսպը, Հայոց Ձորը, Աղբակը, Արճակը, Սարայը, Թիմարը, Բերկրին, Արճեշ-Ալջավազը և Խոշաբը, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր գավառապետը, և որոնց դեկավարումը ստանձնում է Շրջանային վարչությունը:

[1] Հացագործյան Ա., Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր) ԲՅԱ, 1969, թիվ 1, էջ 216:

Իբրև օրենսդիր մարմին՝ Վան-Վասպուրականի նորաստեղծ 2-րդ կառավարությունը մշակում է օրվա պայմաններից (շարունակվող պատերազմը, թշնամու մոտիկությունը, երկրի տնտեսական ու դրամական ծանր վիճակը) բխող մի շարք օրենքներ ու օրինագծեր և դրանք ծանոթացնում ժողովրդին: Դրանք էին. 1. կազմալուծված էին համարվում Վասպուրականի տարածքում նախկինում գործող բոլոր ընկերությունները, իսկ նրանց ունեցվածքը և ռուսների կողմից թողնված գույքն ու գումարները համարվում էին Վանի կառավարության սեփականությունը: 2. 1917 թ. հոկտեմբեր ամսից առաջ եղած պարտք ու պահանջի մասին հաշիվները համարվում էին փակված, և որոշվում է այդ մասին եղած նոր դիմումներին ընթացք չտալ: 3. Վասպուրականի իշխանության սահմաններից դուրս գալու համար անհրաժեշտ էր ստանալ համապատասխան թույլտվություն: 4. Արգելվում է ապակեղենի, բրդեղենի, մորթու, ուտելիքի, կահկարասիների և տավարի արտահանությունը: 5. Ավերակ շինությունների միջից դուրս բերված իրեր-ապրանքները հանդիսանում էին իշխանության սեփականությունը: 6. Ազատ հողերի, անմշակ այգիների և պարտեզների, ինչպես նաև ջանիկի աղահանքի ու ծովի բորակի չահագործման իրավունքը վերապահվում էր միայն իշխանությանը: 7. Հատուկ կանոններով տնօրինվում էր ջրերի ու ջրաղացների գործունեությունը: 8. Փոխադրության բոլոր միջոցները՝ գրաստ, սայլ, կառք և նավ, հարկ եղած դեպքում անցնում էին իշխանության տնօրինության տակ: 9. Խմիչքների պատրաստումը և սպառումն իրականացվում էր միայն մասնավոր թույլտվությամբ: 10. Յանկացած տեսակի զենք կրելն իրականացվում էր միայն կառավարության թույլտվությամբ: 11. Երկրի սահմանների մեջ գործածելի էին կովկասյան բոլոր տեսակի դրամները՝ առանց հավելյալ վճարումների: 12. Նահանգի տարածքում արգելվում էր գիշերային երթևեկությունը և հրաձգությունը: 13. Յուրաքանչյուր 20–35 տարեկան քաղաքացին համարվում էր զինվոր, իսկ հարկ եղած դեպքում զինապարտ

կարող էր դառնալ նաև կոմիսարության տարածքի ողջ բնակչությունը: Բնակչությանը զինելու և թուրք-քրդական հարձակումներից պաշտպանելու համար Կ. Համբարձումյանի խնդրանքով Թիֆլիսի Ազգային խորհուրդն ուղարկում է 1.500 միավոր զենք[1]: 14. Երկրի ներքին ապահովության և կարգուկանոնի պահպանման համար կազմվում են 200 հոգուց բաղկացած ոստիկանական վաշտեր[2], որոնց ստեղծման գործում մեծ դեր են խաղում Լևոն Շաղոյանը և Տիգրան Բաղդասարյանը: Յուրաքանչյուր ոստիկան-միլիցիան թևին կրելու էր «Վ» (Վանի իշխանություն) տառերով տարբերանշան[3]: Ոստիկանությունը ենթակա էր ներքին գործերի դիվանի վարիչին, որը ղեկավարում էր Ա. Հացագործյանը:

Ինչպես տեսնում ենք, ընդունված օրենքները, որոնց գործադրման համար բացվում են պաշտոնատներ, կրում էին տնտեսական, սոցիալական, պետական ու ռազմական բնույթ: Դրանց գործադրումը խիստ անհրաժեշտ էր և պայմանավորված էր ժամանակի թելադրանքով: Ըստ էության նորաստեղծ կառավարությունն իր բոլոր իրավունքներով ու պարտականություններով դառնում է ինքնիշխան մի պետություն Վան-Վասպուրականի տարածքում:

Վասպուրականի նորաստեղծ կառավարությունը գործունյա նոր մասնագետների և կռվող ուժերի կարիք ուներ: Կենսական այդ պահանջները բավարարելու համար Երևանի արևմտահայ խորհրդին հաջողվում է 1917 թ. դեկտեմբերին Երևանից և Թիֆլիսից որոշ թվով ուսուցիչներ, տնտեսական բնագավառի աշխատողներ և զինվորականներ ուղարկել Վան: Նրանց թվում էր նաև Ա. Հացագործյանը, որը մինչ այդ վարել էր Երևանի Գայանյան և Խրիմյան դպրոցների արևմտահայ բաժինների ավագ ուսուցչի պաշտոնները[4]:

[1] «Ազատամարտ», Թիֆլիս, 1917, դեկտեմբերի 23, թիւ 54:

[2] **Թեոդիկ**, Ամենուն Տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, 1916–1920, էջ 109:

[3] Վասպուրական. 1915–1930, էջ 106–107, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 117:

[4] **Հացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավա-

1918 թ. սկզբներին Վանի կոմիսարության բնակչության թիվը հասնում էր 25425 հոգու[1], որը տեղաբաշխված էր Վան-Տոսպում, Ալջավազ-Արճեշում, Թիմարում, Խոշաբում, Սարայ-Արճակում, Հայոց-Ձորում, Բերկրիում և Ադրակ-Բաշկալեում: Առավել ստվար էին Վան-Տոսպի և Թիմարի շրջանները[2]: 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին Վանի ազգաբնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր Նորաշեն, Պատիկ Քյանդրչի, Փշի փողան և մի քանի այլ փողոցներում[3]: Կյանքի նպաստավոր պայմանների ստեղծման դեպքում նախատեսվում էր բնակչության թվաքանակը հասցնել 50 հազարի[4]:

Հրամայական մտահոգություններ էին երկրի պարենավորումը, դրամական ճգնաժամի հաղթահարումը, սահմանների և ճակատի պաշտպանությունը, նորակոչ զինվորների դինավարժությունները, սպաների ռազմական ուսուցումն ու պատրաստվածությունը և ընդհանրապես՝ երկրի ավերածության վերականգնումը: Ստորև փորձենք ներկայացնել կատարված հիմնական աշխատանքները:

1) Բնակչության պարենավորման գործը կազմակերպելու համար Վասպուրականի կառավարությունը ցուցակագրեց Վասպուրականում առկա պարենի ողջ պաշարը, անասունների գլխաքանակը և սահմանեց գործածության որոշակի կարգ:

Դեռևս 1917 թ. նոյեմբերից Վասպուրականի ազգաբնակչության պարենավորումն իրականացվում էր Վանի շրջանային վարչությունը: 1918 թ. սկզբներից այդ գործը կենտրոնացվեց պարենավորման հանձնաժողովի և տեղական կոոպերատիվի ձեռքում, որը հացակարոտ բնակչությանը

րությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր) ԲՀԱ, 1969, թիվ 1, էջ 215–216:

[1] «Աշխատանք», Երեւան, 1917, յունիսի 21, թիւ 15:

[2] «Յորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 16, թիւ 90:

[3] **Սերինե**, Վեպ, որն այդպես էլ չգրվեց... Նյութեր ապագա վեպի համար, «Նորք», 1991, թիվ 4, էջ 138:

[4] Վասպուրական. 1915-1930, էջ 102:

կերակրելու համար 59 գյուղերից 6185 փութ ցորեն հավաքելու, այն ժողովրդին մատչելի գնով և հավասար չափով բաժանելու որոշում կայացրեց[1]:

Այգեստանում և գավառական կենտրոններում կառուցվեցին պահեստներ, ուր ամբարվեցին հացահատիկ, ալյուր, շաքար, խոտ և հարդ: Գյուղատնտեսության գործերի կոմիսար Ա. Մաքսապետյանի խոստովանությամբ՝ «...եթե այս հացահավաքը և հասարակական ամբարը չըլլային, Վասպուրականը կանգնած կըլլար իրական սովի մը առաջ»[2]: Գործի հաջողությունն ապահովելու համար հաստատվեց նաև հեռախոսային կապ Վանի և սննդակայանների միջև:

Նախատեսվեց քաղաք բերել Սավալուում և այլ վայրերում ամբարված ալյուրը և սկսել գարնանացանքը: Միջոցներ ձեռք առնվեցին նաև Ռուսաստանից և Պարսկաստանից ալյուր, հացահատիկ, կենսամթերքներ, կենդանիներ, գութան, լծկան ներմուծելու, պարենավորման հանձնախմբի ներկայացուցիչների հետ հաց չունեցողների նոր վիճակագրություն կազմելու և բնակչության հացի սպառման քանակը սահմանափակելու համար:

Միաժամանակ, զարկ տրվեց նաև ոռոգման համակարգին, և բաժանվեցին գյուղատնտեսական գործիքներ: Արդյունքում՝ տնտեսապես ապահով վիճակում հայտնվեցին Թիմարի, Վան-Տոսպի, Հայոց Ձորի և Արճակի բնակչությունը[3]:

2) Արտաքին հարաբերություններից զուրկ Վանի կոմիսարությունն իր ելևմտական դրությունը կարգավորելու համար իսկույն հաստատեց բյուջե և հարկային կանոնավոր համակարգ, որի արդյունքում սկսեցին գանձվել որոշակի տուրքեր: Վասպուրականի կառավարության բյուջեն կազմում էր 10,5 մլն ռուբ., որից միայն 3 մլն ռուբ. էր գոյանում տուրքերից:

3) Կովկասի հետ հաղորդակցության խզվածությունը ծանր

[1] «Աշխատանք», Երեւան, 1918, մարտի 24, թիւ 89:

[2] Անդ:

[3] Անդ:

էր անդրադարձել երկրի վրա, որն առաջ էր բերել դրամական ճգնաժամ: Երկրում պակասում էր դրամը՝ գնումների, ինչպես նաև պաշտոնյաներին, զինվորներին ու ոստիկաններին աշխատավարձը վճարելու համար: Մանր դրամի բացակայության պատճառով չուկան անկում էր ապրում, իսկ չարաշահումները մեծ չափերի էին հասնում: Ա. Կերենսկու կամ անդրկովկասյան հազարանոցները շատ անգամ մնում էին անգործածելի՝ մանր դրամի բացակայության պատճառով: Իշխանությունը ստիպված է լինում համարձակ քայլի դիմել և փոխգրերի նմանակությամբ թղթադրամ կարել: Նոր դրամը՝ 5, 10, 25, 50 և 100 ռուբլի արժողությամբ փոքր, քառակուսի, անգին թուղթ էր՝ մանուշակագույն մելանով գրված, կոչվում էր «փոխգիր՝ ներքին գործածության համար»[1] և բազմացվում է խմորատիպով: Անդրկովկասի կոմիսարիատի օրինակով՝ փոխգիր դրամն իրենց ստորագրություններով վավերացրել էին Վասպուրականի կառավարության 3 վարիչ-կոմիսարները՝ կառավարության նախագահ Կ. Համբարձումյանը, զինվորական գործերի վարիչ Գ. Բուլղարացին և ելևմտական գործերի վարիչ Ս. Մեսրոպյանը: Վերջինիս անունով դրամը կոչվում էր «Սամվել փուլի» (Սամվելի փող)[2]: Փոխգիրի վճարումը երաշխավորվում էր Վանի նահանգային կոմիսարիատի կողմից, որի ռուսերեն կնիքով էլ կնքված էր այն: Փոխգիրների գործածությունը պարտադիր էր, իսկ դրանց գործածությունը չհարգողները ենթարկվում էին պատասխանատվության: Վանի թղթադրամները ներքին շրջանառության մեջ դրվեցին 1918 թ. փետրվարի 27-ից՝ 6 ամիս ժամանակով, որից հետո դրանք պիտի հավաքվեին ու փոխարինվեին ռուսական թղթադրամներով: Անմիջապես գործածության մեջ մտան 120.000 ռուբ. (ըստ որոշ տվյալների 164.000 ռուբ.) արժողությամբ թղթադրամներ, որն

[1] **Հացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր) ԲՅԱ, 1969, թիվ 1 , էջ 217:

[2] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 118–119:

ապահովված էր ինչպես կառավարության, այնպես էլ Վանում գտնվող Թիֆլիսի անգլիական սպայակույտի (չտարի) ներկայացուցիչ կապիտան Մ. Գրեյսիի կողմից[1]:

Դրանք Վանի շուկայում, գյուղերում ու քրդերի մեջ ճանաչվեցին որպես փոխանակության միջոց: Դրանով էին վճարվում ռոճիկները, մանրում ռուսական 1000-անոցները և առևտուր անում: Ում մոտ, որ ռուսական 1000 ռուբ. էր հավաքվում, կարող էր այն ներկայացնել կառավարությանը և փոխարենը ստանալ տեղական 1000-անոց: Արդյունքում ռուսական թղթադրամը սկսեց մեջտեղից վերանալ և ավելի մեծ արժեքով վաճառվել: Վանի փոխգիրները հետագայում հասան մինչև Բաղդադ և մեծ հետաքրքրություն առաջ բերեցին տեղացիների շրջանում[2]:

Վանում թողարկված փոխգիր թղթադրամները քաղաքական մեծ իրադարձություն էին Վանի կառավարության ինքնիշխան լինելու կամքը հաստատելու առումով, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի Առաջին Հանրապետության առաջին՝ 10, 50, 250 թղթադրամները թվագրվում են 1919-ով, սակայն շրջանառության մեջ են դրվել միայն 1920 թ. հունիսին:

Դրանք մեծ դեր խաղացին Վասպուրականի երկրորդ կառավարության ամրապնդման, նրա վարկը բարձրացնելու և ժողովրդի տնտեսական կարիքները բավարարելու գործում: «Այսօր, տարիներ հետո, կարելի է ծիծաղիլ մեր ձեռնարկի և մեր դրամի վրա, բայց այդ օրերուն ստիպողական էր: Եվ այդ թուղթի կտորները մեծ դեր կատարեցին հօգուտ մեր իշխանության, քան Կովկասի մեջ հազար մի տեսակ մեքենաներու զարդարուն թղթադրամները»[3], – վերհիշում է Ա. Մաքսապետյանը:

[1] **Թեոդիկ**, Ամենուն Տարեցույցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 110:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 20-21, տես նաև՝ Վասպուրական, 1915-1930, էջ 108:

[3] Վասպուրական. 1915-193, էջ 107-108, տես նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 119:

4) 1918 թ. հունվարից իսպառ ընդհատվեցին հարաբերությունները Կովկասի հետ, որի արդյունքում դադարեցին փոստի և հեռագրատան գործունեությունը:[1] Որոշակի միջոցառումներ իրականացվեցին ընդհատված այդ հարաբերությունները, ինչպես նաև Վանի և սննդակայանների միջև ընդհատված հեռահաղորդակցությունը վերականգնելու ուղղությամբ:

5) Նահանգապետ Կ. Համբարձումյանի նախաձեռնությամբ իրականացվեցին Վանի այգիների ու պարտեզների մշակումը, մաքրվեցին Այգեստանի աղբյուրների ջրհորները, Հայոց ձոր և Թիմար գավառների տղմակալած առուները, որպեսզի խմելու ջուրը զերծ լիներ մանրէներից, և այգիների ոռոգման համար առատ ջուր ապահովվեր:

6) Տնտեսական կյանքը վերակենդանացնելու համար գյուղեր են ուղարկվում երկրագործ վարպետներ, արհեստավորներ, խանութպաններ, այգեգործներ, բժիշկներ, հիվանդապահներ և զանազան պաշտոնյաներ:

7) Շահագործվեց Վանի մոտ գտնվող Կենդանանց գյուղի քարհանքը, մասնավոր կապալառուներին վարձակալության տրվեցին Վանա լճի հարուստ ձկնորսարանները և հետազոտվեցին Գործոթ գյուղի նավթահանքերը, որտեղ նույնիսկ մի քանի հորեր փորվեցին:

8) Վանի կոմիսարության տնտեսական վերաշինությանը մեծապես նպաստում էր Քաղաքների միության գործունեությունը: Կ. Համբարձումյանը որպես այդ միության նախկին ներկայացուցիչ պետական գումարներով կազմեց զինված պահակախումբ՝ Խոյ-Վան և Իգդիր-Սավալի-Վան ուղղությամբ գործող Քաղաքների միության բոլոր հաստատությունները և սննդակայանները պահպանելու համար:

9) Աչխուժացավ նաև Վանի կրթական գործը: 1917 թ. վերջերից Վասպուրականում գործում էին արդեն 25 երկսեռ տարրական դպրոցներ՝ 47 ուսուցիչներով, 1220 աշակերտներով և ամսական 6765 ռ. ծախսով:[2] Դպրոցների աշխա-

[1] «Մշակ», 1918, մարտի 20, թիւ 59:

[2] **Թեոդիկ**, Ամենուն Տարեցույցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 109-110:

տանքները վերահսկում էին երկու տեսուչներ:

10) Օգտվելով առիթից՝ Վան մեկնեցին նշանավոր հայագետներ Նիկողայոս Մառը և Աչխարհբեկ Քալանթարը, որոնք ուսումնասիրեցին Վանի հնություններ, պեղումներ կատարեցին Վանի բերդում, Զըմբ-Զըմբ Մաղարայում և ձեռնարկեցին խալդական արձանագրությունների վերծանումը:

11) Ուշադրություն դարձվեց ներկուսակցական գործունեությանը: Հաշվի առնելով, որ Վանի դաշնակցության կենտրոնական կոմիտեն զբաղված էր նորակազմ կառավարության գործերով և ինքնապաշտպանության կազմակերպմամբ՝ որոշվեց նորընտիր կենտրոնական կոմիտեի 7 անդամներին մասնակից չդարձնել կառավարության պատասխանատու գործերին, իսկ նրանց փոխարեն մի քանիսին ներգրավել կուսակցական-կազմակերպչական գործունեության մեջ[1]:

12) «Աչխատանք» թերթի նախկին խմբագիր Հմայակ Մանուկյանի առաջարկությամբ նախատեսվեց թերթի հրատարակումը փոխադրել Թիֆլիս և այն դարձնել ազատագրված Հայության օրգանը: Սակայն, հաշվի առնելով դաշնակցական «Ազատամարտ»-ի գոյությունը՝ որոշվեց «Աչխատանք»-ը պահել Երևանում, իսկ հետագայում այն կրկին տեղափոխել Վան[2]:

13) Միջոցներ ձեռք առնվեցին 1918 թ. փետրվարին Վանից հեռացած ռուսական հակահետախուզության հիմնարկի բարեփոխման, այն ազգայնացնելու և նրա գործը կոմիսարիատին հանձնելու ուղղությամբ: Բանն այն է, որ «ռուսական բանակի այդ բաժինն իրականում զբաղված էր ոչ թե լրտեսելու, այլ հայերի մասին թուրքերին տեղեկություններ հաղորդելու գործով»[3]:

14) Միջոցառումներ ձեռնարկվեցին ջրային և ցամաքային հաղորդակցության վերականգնման ուղղությամբ: Վերահաստատվեց Վանա լճի նավագնացությունը՝ ռուսների

[1] Թեոդիկ, Ամենուն Տարեցուցը, Ժ-ԺԴ տարի, 1916–1920, էջ 109–110:

[2] Անդ:

[3] Անդ:

թողած նավերով[1]: Միաժամանակ, նախատեսվում էր չարունակել ռուսների կողմից ծրագրած և սկսած, սպա անավարտ մնացած Մակու–Շահթախթ–Բայազետ–Սավալի–Վան երկաթուղու շինարարությունը, որով Վանա լիճը երկաթուղային հաղորդակցություն կունենար Կովկասի հետ: Սակայն այն մնաց անավարտ:

15) Վան-Վասպուրականում բնակվող ասորիները և եզդիները հայերին հավասար վայելում էին հայկական ընկերությունների աջակցությունը: Վասպուրականի կառավարման ղեկավար մարմնի միակ մտահոգությունը քրդերին սիրաշահելու և բարեկամություն հաստատելու խնդիրն էր: Քրդեր կային Հայոց ձորում, Շատախում, Գավաշում, Մոկսում և Խոշաբում: Քրդերը մեծ թիվ էին կազմում նաև Արճեշ-Ալջավազի գավառներում՝ Սիփանում, Ձիլանի ձորում և Ալադաղում, ինչպես նաև՝ Խանասորի լեռներում:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո Ձիլանի ձորի քրդերը, որոնք երկու տարի չարունակում էին մնալ անհաչտ և կղզիացած, նորից սկսում են աչխուժացնել իրենց գործողությունները և առանձին ավազակախմբերով չահատակություններ են կատարում Բերկրիի կիրճում՝ հարձակվելով հայերի վրա, սպանելով, կողոպտելով անցուդարձ անողներին, կտրելով կապը Վանի և Երևանի միջև[2]:

Քրդերի հետ տեղի ընթացած բանակցությունները տալիս են որոշակի արդյունք, և ձեռք են բերվում որոշակի հաջողություններ: Այսպես, Խոշաբի քուրդ աղան Վան էր գալիս առևտուր անելու և միաժամանակ տեղեկություններ էր հաղորդում թուրքական բանակի չարժումների մասին: Իսկ Աբաղայի դաչտի Նազարովա գյուղի հայերին քաջածանոթ ու խաղաղասեր քուրդ Կոպ Մահմադի բեյը հայերի հետ բարեկամություն հաստատեց:

Հայ-քրդական և հարաբերությունների կարգավորման գործում որոշակի ներդրում ունեցավ Թիֆլիսի անգլիական

[1] Թեոդիկ, Ամենուն Տարեցուցը, Ժ-ԺԴ տարի, 1916–1920, էջ 109–110:

[2] Վարդանեան Ե., «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 19:

սպայակույտի (չտաբ) ներկայացուցիչ կապիտան Մ. Գրեյսին: 1917 թ. դեկտեմբերին նա մեկնում է Խոյ, տեսակցում քուրդ ավազակապետ Սմկոյի հետ և հայերի վրա հարձակում չգործելու խոստումներ ստանում[1]:

Այսպիսով՝ 1917 թ. աշնանից մինչև 1918 թ. մարտի վերջը Վասպուրականում ստեղծված հայկական ինքնավար կոմիսարության գոյությունն ու գործունեությունը Վասպուրականի և ողջ հայ ժողովրդի անսասան կամքի, անսպառ կորովի ու ջերմ հայրենասիրության վառ և ցայտուն ապացույցն է: Կյանքը Վանում և նրա շրջաններում սկսել էր հունի մեջ մտնել՝ ոգևորության նոր ալիք բարձրացնելով հայության մեջ: Վասպուրականի երկրորդ կառավարությունը ոգևորեց նաև կովկասահայությանը, որն ի դեմս ինքնավար Վասպուրականի՝ երազում էր ապագա Հայաստանի անկախությունը:

2.4. Ինքնապաշտպանական մարտերը Վան-Վասպուրականում (1918 թ. փետրվար-մարտին)

Ծավալված կռիվները համարվեցին ռուս-թուրքական պատերազմի շարունակությունը, սակայն, իրականում, 1918 թ. հունվարից սկսած՝ Արևմտյան Հայաստանի և Կովկասի ռազմաբեմում տեղի ունեցած հայ-թուրքական պատերազմը բաղկացած էր երկու փուլից: Առաջին փուլը ներկայացնում է այն գործողությունները, որոնք տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի տարածքում: Իսկ երկրորդ փուլը սկսվեց այն ժամանակ, երբ թուրքական բանակը, առանց կանգ առնելու 1914 թ. ռուս-թուրքական սահմանի վրա, առաջ չարժվեց դեպի Արևելյան Հայաստան[2]:

Արևմտահայ զինական ուժի տենդագին նախապատրաստությունից հետո, երկրի վարչական մեքենան կանոնավորելու

[1] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 19:

[2] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, էջ 152-153:

ջանքերը հասել էին առավելագույն չափերի, առանց որի անհնար էր պահպանել ռուսական բանակի թողած հարստությունը, կազմակերպել փոխադրության գործը, նվազագույն չափով կանգուն պահել հեռագրի, հեռախոսի և ռադիոկայանների ցանցը և օժանդակել զորահավաքի կազմակերպմանը:

Վասպուրականի և Տարոնի շրջաններն արդեն կարողացել էին ստեղծել ազգային այնպիսի կենտրոններ, որոնք «տեսակ մը տեղական կառավարական կազմի պատկերն ունէին»[1] և ըստ էության մասնակի հայատարարություններ էին Արևմտյան Հայաստանի անկախության:

Վանն ուներ երկու ռազմաճակատ՝ հարավային կամ Ոստանի ճակատ, որը ձգվում էր լճի հարավ-արևմտյան ուղղությամբ մինչև լճի հարավ-արևելյան անկյունը՝ Ոստանի բարձունքները[2], և հյուսիսային կամ Առնիս-Արճեշի ճակատը, որը ձգվում էր լճի հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ տարածվելով մինչև Արճեշ, Ալջավազ, Կամուրջ, Ախլաթ և Մանազկերտ: Այն միաժամանակ հանդիսանում էր Խնուսի զորամասի ձախ թևը[3]: Այս գծի վրա՝ լճի հյուսիսարևելյան ծովախորշի ափին, գտնվում էր Առնիսը (նախկին քրդաբնակ մի գյուղ), որը ռուսների կողմից վերածվել էր ռազմական նավահանգստի, ուներ էլեկտրական լուսավորություն, մեծ քանակությամբ մթերքներ և հաղորդակցություն էր պահում լճի բոլոր ափերի հետ՝ նոր պատրաստված մոտորանավակների երթևեկությամբ[4]: Ռազմական վարիչ Գ. Բուլղարացին,

[1] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 159:

[2] Ոստանի ճակատի ամրացումներն իրականացվել էին դեռևս 1915 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 12-ը ԱտրպատականՎանի ջոկատի հրամանատարի հրամանի համաձայն և կապիտան Սախարովի հատակագծով: Այդ ընթացքում փորվել էր մոտ 4500 քայլ խրամատ՝ իր դիտակետերով, մուտքերով և ճանապարհներով, պատրաստվել էր 8 գրահապատ բլինդաժ և տեղադրվել էր 20 գնդացիր: Տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 37, թ. 35:

[3] **Հացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր) ԲՀԱ, 1969, թիվ 1 , էջ 218:

[4] Հայաստանի պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան (ՆՊ ԲՄ), 839, արկղ 4, գ. 195, թ. 231:

համաձայնության գալով կառավարության հետ, հարավային ճակատի 2 թևերի պաշտպանությունն ու ղեկավարությունը հանձնում է իր 2 օգնականներին՝ Փեսանդաշտի ինքնապաշտպանության ղեկավար Լևոն Շաղոյանին և գնդապետ Տիգրան Բաղդասարյանին, առաջինին՝ Ոստանի, երկրորդին՝ Սիարկա-Գեալիի ճակատները: Իսկ հյուսիսային՝ Առնիս-Արճեշի ճակատի հրամանատարությունը հանձնում է կամավորական 5-րդ գնդի սպա Միշա (Միքայել) Գասպարյանին[1]:

Ռազմաճակատի արևմտյան սահմանը պաշտպանված էր ծովով, իսկ արևելյանը՝ դեպի Պարսկաստան-Ատրպատականն բաց էր: Արճեշ-Առնիսից Ոստան ընկած այս հատվածը պետք է պաշտպաներին հայկական կամավորական 5-րդ գունդը՝ ընդամենը 800-900 զինվորով, որը գտնվում էր Վանում և կոչվում էր Վանի գունդ, և տեղական ժողովուրդը: Մինչդեռ, թուրքական բանակը հասնում էր մի քանի հազարի[2]: Հարավային ճակատում թուրքական բանակի կենտրոնը Գավաշն էր, որի շուրջը հավաքված էին նաև բազմաթիվ քրդական ցեղեր: Այդ ճակատի մի մասն էր Բաշկալեի ճակատը, որ Մոսուլի ճանապարհն էր, որտեղից հայերը սպասում էին անգլիացիների առաջխաղացմանը: Այս ճանապարհով էր, որ հայկական բանակը կապված էր Սալմաստի հետ, որտեղ գտնվող հայկական մի նոր գումարտակ պաշտպանում էր հայկական բանակի թիկունքը: Մինչ այդ ռուսները ռազմաճակատի այդ հատվածը հազիվ էին պաշտպանում իրենց 10000-անոց բանակով[3]:

Վասպուրականի պաշտպանության համար ամենակարևորը Առնիսի ճակատն էր, որովհետև, եթե այն չկարողանային պաշտպանել, թշնամին հեշտությամբ կկտրեր նահանջի ճանապարհը՝ դեպի Իգդիր-Կովկաս, ինչպես այդ պատահեց արդեն մարտի վերջերին:

[1] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 119:

[2] **Գէորգեան Մ.**, Վասպուրականէն՝ Պաղտատ և Պասրայի անապատները, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1965, թիւ 2, էջ 41:

[3] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 6:

Առաջին ամիսներին թե՛ հյուսիսային և թե՛ հարավային ռազմաճակատներում անդորը էր տիրում, որովհետև թուրքական զորքի մեջ «եղբայրանալու» տրամադրություն էր նկատվում, իսկ ձյունը, ցուրտը և ցեխը թույլ չէին տալիս առաջ շարժվելու[1]:

1918 թ. փետրվարին Վանում բողոքականների ժողովասրահի մեջ (հետագայում փո-խադրվեց Մեծ Քենդրչիի վրա «Ազատության լույս» գրադարանը) գումարվեց Հ.Յ.Դաշնակցության Վասպուրականի շրջանային ժողովը, որը տևեց երկու շաբաթ, և որին մասնակցեցին քաղաքի և գյուղի ընտրովի 30 ներկայացուցիչներ: «1915 թ. ի վեր ներքուստ երկրի գոյութեան համար աշխատող կուսակցությունը հրապարակ կ՛իջնէր և իր թելադրանքները կ՛ընէր օրւայ իշխանութեան»[2]: Շրջանային ժողովը որոշումներ կայացրեց տիրող պայմանների և վիճակի համաձայն, ընտրեց ղեկավար մարմին և ցրվեց, հանձնարարելով բոլոր ընկերներին գիտակցել պահի լրջությունը և լծվել գործի:

Վասպուրականի հայկական իշխանությունը հույս ուներ, որ շուտով իրեն օգնության կգա 1918 թ. հունվարին Կովկասի վասպուրականցիների օգնությամբ և «Ապահովության խորհրդի» երևանյան մարմնի կողմից ստեղծված Վանի այդ նորակազմ զորաբաժինը, և ինքնապաշտպանության վիճակը կբարելավվի, մանավանդ որ Կարինը, ուր գտնվում էր Անդրանիկը, դեռ չէր ընկել:

Սակայն մոտեցող գարնան հետ երկյուղն ավելացավ: Ուշանում էր ոչ միայն գնդապետ Ն. Բաղդասարյանի գլխավորած Վասպուրականի զորամասը, այլև նրա կազմի մեջ մտած Վանի հեծելախումբը, որոնք ստիպված մնացել էին Կովկասում քաղաքական իրադրության բարդացման պատճառով:

Վասպուրականի համար կազմված բանակը՝ գնդապետ Բաղդասարյանի հրամանատարությամբ, Իգդիրում և Ճանապարհին այնքան դանդաղեց, որ Վան չհասած՝ Կզըլդիզեի

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 108:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 109, նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, Երևան, 1990, էջ 121:

մեջ, հանդիպելով մեր նահանջող զորքին, ետ վերադարձավ Իգդիր: Իսկ Խոանյանի և Ջանոյանի 60 հոգանոց խմբերից միայն 3 հոգի է վերադառնում[1]:

Երևանի և Վանի միջև ընդհատված կապն ապահովելու և դրամական խնդիրները կարգավորելու նպատակով, Կոստի Համբարձումյանը փետրվարի 8-ին մեկնում է Կովկաս, բայց Առնիս նավահանգստում հանդիպում է զինվորական-ռազմական նավերի՝ լեհ ու գերմանացի սպաների ղեկավարությամբ, և կանգ առնում ու ստուգում նավերն ու զինվորական պահեստները: Քանի դեռ գեներալ Թ. Նազարբեկյանի բանակը գտնվում էր Ախլաթում, լուրջ երկյուղ չկար հյուսիսի՝ Առնիսի ճակատում, իսկ Արճեշն էլ վերահսկում էր հայկական կառավարությունը: Սակայն, Կոստին, նավերից դուրս գալուց հետո, լսում է փետրվարի 7-ին Կամուրջի և Ախլաթի գրավման լուրը թուրքերի կողմից: Հայտնի չէ, թե ինչու՝ Ալաշկերտի գիծը պաշտպանող գունդը թողնում է Կամուրջն ու Ախլաթը և վտանգ ստեղծում Վան-Վասպուրականի համար: Դրա հետևանքով էլ Զիլանի քրդերը կապ են ստեղծում թուրքերի հետ և Վասպուրականը վերցնում պաշարման օղակի մեջ: Իսկ Կամուրջի ու Ախլաթի անկումից հետո 300 թուրք զինվորներ գալիս ու մտնում են Ալջավազ և կապ ստեղծում Զիլանի քրդերի հետ ու վտանգում Վանի հայերի դիրքերը[2]:

Սակայն, դժբախտաբար, «Կոմիսարներու Խորհուրդ գոնէ արտաքուստ այնքան ալ կարևորութիւն չէր տար Կամուրջի գրաւման, - Առնիսի մեր դիրքեր չա՜տ ուժեղ են - յուսադրիչ խօսքերով քաջալերել կը ջանար ժողովուրդը»[3]: Դեռ ավելին, կոմիսարները անծանոթ պատճառներով որոշեցին Վանում մնալ մինչև վերջ[4]:

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 109-110, նաև՝ **Ա. Յացագործյան,** Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՅԱ, թիվ 1, էջ 219:

[2] **Թեոդիկ**, Ամենուն Տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 111-112:

[3] **Վարդանեան Ե.**, «Նահանջ քիւրոց» Վասպուրականի, էջ 20:

[4] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիվ 81:

Բացի այդ, քանի դեռ կարինը կանգուն էր, Վան-Վասպուրականն իրեն ապահով էր զգում:

Հաշվի առնելով թուրքերի ու քրդերի այդ նոր վտանգը՝ Կոստի Համբարձումյանը այլևս կովկաս չի գնում և հենց Առնիսում, նորից նավ նստելով, փետրվարին սկսում է իր նավային արշավը թուրքերի դեմ՝ Ալջավազի և Արճեշի ուղղությամբ՝ լճի հյուսիսային ափերը մաքրելու համար: Յամաքից էլ հեծելազորի մի փոքրիկ խումբ՝ Տաճատ Թերլեմեզյանի գլխավորությամբ, գործակցում էր նրան[1]: Ռուսները Վանա լճում, բացի տրանսպորտի շոգենավեր շինելուց, պատրաստել էին նաև 2 ռազմանավ, որոնք նույնպես մնացել էին հայերի ձեռքին:

Փետրվարի 13-ի արշալույսին նավերի թնդանոթների կրակոցներից սարսափած մի քանի տասնյակ թուրք զինվորներ, առանց դիմադրության, թողնում են Ալջավազը և փախչում արևմուտք՝ դեպի Կամուրջ գյուղը: Այդ մասին կ. Համբարձումյանը հեռախոսով տեղեկություն է հաղորդում Վան. «Աստուծոյ օգնութեամբ գրաւեցինք Ալջավազը: Առաւօտը կըմեկնինք Ախլաթ: Փետրուար 13-ի դիշերն էր, Տեառնընդառաջի դիշերը, թիւրք զինուորներու լքած օջախներուն շուրջը հաւաքուեցանք և խարոյկ մը պատրաստեցինք: Գրիգոր Բուլղարացիին նկարագրական նամակ մը գրեցի, չմոռանալով յիշատակել որ կուի ժամանակ ես մտած էի նաւի ներքնատունը: Փետրուար 14-ին առաջացանք դէպ ի Կամուրջ. այս կէտը ուժեղ դիմադրութիւն ցոյց տուաւ, իսկ երբ նաւի թնդանօթի գնդակը զօրանոցի դլխին պայթեց, թիւրքերը կծիկ դրին: Ախլաթին մօտենալ չկարողացանք, որովհետև թիւրքերը կծիկ դրին: Ախլաթին մօտենալ չկարողացանք, որովհետև թիւրքերը ուժեղ դիմադրեցին: Մենք վերադարձանք, մասամբ մեր նպատակին հասած: Թշնամու ճակատը հեռացած էր»[2]: Ապա նավերից դուրս են գալիս ցամաք, իսկ փետրվարի 14-ին՝ շարժվում դեպի Կամուրջ: Այս

[1] Թերլեմեզյան տոհմ. մի տոհմի պատմություն, էջ 29-30:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 109:

կետը դիմադրում է, բայց երբ նավերի թնդանոթները գործի են դրվում ու սկսում գործել, թուրքերը փախչում են: Ախլաթը մնում է անառիկ, իսկ հայերն էլ չեն մոտենում Ախլաթին, քանի որ այն նախ Վան-Վասպուրականի պաշտպանության գծի մեջ չէր, երկրորդ՝ այստեղ թշնամին մեծ ուժ ուներ: Միայն նավերով հնարավոր չէր կռվել ու հաղթել, և երրորդ՝ շատ էին հեռացել Վան-Վասպուրականի պաշտպանության գծից[1]: Այդ ժամանակ թուրքերի ուշադրությունը դեռ Էրզրումի վրա էր, ուստի թշնամին Վասպուրականի ճակատից շատ էր հեռացել:

1918 թ. փետրվարի 21-ից պատերազմական իրավիճակը լարվում է Առնիսի ճակատում, որտեղ 300 թուրք զինվորներ պատրաստվում էին հարձակման: Այդ մասին Առնիսի ճակատի ընդհանուր հրամանատար Լ. Գասպարյանը կառավարությանն ուղղված հեռագրում նշում է, որ «դրությունն լուրջ է և վտանգաւոր. մեր ոյժերը անբաւարար են, խնդրեմ ուղարկել ինձ հարկ եղած օգնական ոյժեր, մանաւանդ մի վարժ գնդացիրային խումբ»[2]:

Փետրվարի 22-ին լարվածության սրման համանման տեղեկություն է հասնում Բերկրիից, որտեղ նշվում էր, որ «քիւրտեր արտասովոր եռուզեռի մէջ են, կարծենք թէ որոշ ձեռնարկի մը կը պատրաստուին»[3]:

Փետրվարի 27-ին երիտասարդ սպաների հրամանատարությամբ Առնիս է ուղարկվում 200 հոգուց բաղկացած մի վաշտ և 50 հոգանոց գնդացիրային խումբ: Սակայն փետրվարի 28-ին պարզ է դառնում, որ Արճեշից 6 վերստ հեռավորության վրա տեղի ունեցած ընդհարումից հետո, վասպուրականցիները, տալով 3 զոհ և 3 վիրավոր, հետ են նահանջում:

Տ. Բրուտյանը հիշում է, որ Առնիսի ճակատում գտնվող գյուղացիներից լուր ստացվեց, որ «իրենց դրութիւնը շատ վատ է. գերմանացի սպաները հայերուն կը դաւաճանեն. քուրդերը իրենց նահանջի ճամբան կտրած՝ իսկ թուրքերը կը յառաջանան»[1]:

Մինչ Առնիսի ճակատում նորից էին սկսվել իրարանցում և թեժ մարտեր, Ոստանի ճակատը դեռ խաղաղ էր, հայ և թուրք սպաները իրար այցելության էին գնում-գալիս խրամատներում: Իհարկե, թուրքերը խորամանկություն էին անում՝ քնեցնելով հայերին՝ հանկարծակիի բերելու համար: Վասպուրականի կառավարությունը բանակցություններ էր վարում Խոշաբի և Զիլանի քրդերի հետ, որ նրանք թուրքերի ու հայերի միջև մղած կռիվների ժամանակ լոյալ ու չեզոք մնան: Սակայն, ինչպես թուրքերը, այնպես էլ քրդերը՝ արտաքուստ էին միայն իրենց բարեկամությունը պահպանում՝ չհրաժարվելով իրենց նկրտումներից:

Անդրանիկը՝ որպես արևմտահայերի դիվիզիայի զորավար, 1918 թ. փետրվարի վերջերին մի սպա է ուղարկում Վան՝ Վանի վարիչ մարմնի մոտ, Համո Օհաննեսյան անունով, որպեսզի տեղեկություններ բերի և օժանդակի վասպուրականցիներին: Անդրանիկը մտածում էր հնարավորություն տալ Վասպուրականի ազգաբնակչությանը՝ հանգիստ թողնել Վանը և նորից պատսպարվել Արևելյան Հայաստանում: Բանն այն է, որ ձմռանը հաղորդակցությունը խանգարվել էր, իսկ Անդրկովկասն էլ կլանվել էր իր հոգսերով:

Միաժամանակ, 1918 թ. փետրվարի վերջին Վասպուրականի II կառավարությանն ուղղված իր հեռագրում Անդրանիկը, որի գլուխը խառն էր Էրզրումում, չտալ հեռագրով կրկնում է Վասպուրականի դատարկման իր առաջարկը, և ինչպես Ա. Մաքսապետյանն է հիշում՝ «հաւաքել մեր տարածած թևերը»: Բացի այդ, մի ուրիշ հեռագիր էլ, նույնմասամբ բովանդակությամբ, փետրվարի 26-27-ին ստացվում է գնդապետ Հովսեփյանից, որը հրահանգում էր ժողովրդին

[1] Յացագործեան Ա., Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր) ԲՅԱ, 1969, թիվ 1, էջ 219:

[2] Վարդանեան Ե., «Նահանջ բիւրոց» Վասպուրականի էջ 25:

[3] Անդ:

[1] «Վարագ», 1965, ապրիլ, թիւ 49, բացառիկ, նուիրուած Մեծ Եղեռնիւ Վանի հերոսամարտի 50-ամեակի տարեդարձներուն, 1915-1965, էջ 49:

կանոնավոր և հանդիստ կերպով տեղափոխել Բերկրի[1]: Կովկասը չէր պատրաստվում օգնել[2]: Իսկ Վասպուրականը հույս ուներ Կովկասի օգնության վրա:

Մխիթարական չէր նաև Էրզրումի դրությունը, որտեղ ռուսները թողել էին 600 թնդանոթներ, միլիոնավոր փամփուշտներ և հրացեն[3]:

Ռազմական աննմխիթար վիճակը զուգորդվում էր ներքին խնդիրներով: Ժողովուրդը չարունակում էր խաղաղ աշխատանքը և պատրաստվում էր գարնանացանին, սակայն պարենավորման հարցը սուր կերպարանք էր ստացել, քանի որ հաց չկար: Հարցին դրական լուծում չէր կարողանում տալ նաև պարենավորման կոմիսար Զավեն Կորկոտյանը[4]: Մարտի 1-ին ութ կանայք հարձակվում են պարենավորման փոխ վրա և գողանում հացերը: Թեև նրանք ձերբակալվում են և բանտարկվում, սակայն Մամբրեի հարյուրակի զինվորները նրանց ազատում են: Այս ամենի կազմակերպիչը Շատախցի Ազատն էր, որը դժգոհ լինելով կառավարության գործունեությունից՝ հայտարարում էր. «...ես պիտի քանդեմ զինուրական մարմինը, որուն գլուխը կը գտնւի Պուլկարացի Գրիգորը, որ ոչ մէկ լուրջ միջոցի դիմած է անիշխանութեան վերջ տալու համար: Գրիգոր սկսած է գործել ճիշտ այնպէս, ինչպէս Արամ՝ չունենալով վերջինիս առաւելութիւնները: Շաբաթէ մը ի վեր է, Գրիգորի հետ խզած եմ յարաբերութիւններս»[5]:

Կանոնավոր գործում էին դպրոցները: Միայն հաշվի առնելով նոր նահանջի վտանգը, սկսած փետրվար ամսից, ծրագրերը խտացվում են, որ դասընթացը կարողանան ավարտել ու ամփոփել:

[1] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1938, յունուար, թիւ 3, էջ 91:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 109:

[3] «Հայրենիք», Բոստոն, 1919, ապրիլի 13, թիւ 2117:

[4] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի էջ 26:

[5] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1938, յունուար, թիւ 3, էջ 89:

Այսպիսով, մինչև փետրվարի 27-ը Վանից մինչև Խնուս ձգվող ճակատը, չնայած թուրքական կրկնակի գերազանցությանը, մնաց ամուր, և թուրքական գործողությունները, որոնք ձգտում էին ճակատը ճեղքել, անցան ապարդյուն:

Վանը համեմատաբար հանդիստ էր մինչև 1918 թ. մարտի սկզբները: Դժվարությունը միայն Կովկասից կարված լինելու և ամեն տեսակ հաղորդակցությունից և օգնությունից զուրկ լինելու հանգամանքն էր:

Գարնան նախաշեմին ահագնանում էր երկյուղը, քանի որ Վան-Վասպուրականը մնում էր միայն իր հույսին: Բայց ինչ պիտի աներ մի բուռ ժողովուրդը, թվով մոտ 36.000 հոգի՝ թուրքական բանակների ու քրդական խմբերի դեմ, որոնց կռվողների թիվը բուն հայ բնակչությունից շատ էր: 1915 թ. հուլիսի վերջն էր, երբ դեռ չէր գաղթել Վան-Վասպուրականի մոտ 200.000 բնակչությունը, որ կարող էր մոտ 20.000 կռվող ուժ դուրս բերել, զինել ու հանդիստ կերպով դիմադրել թուրքական զորքերին ու քրդական հարձակումներին և Վան-Վասպուրականը դարձնել փախստական հայերի կենտրոնավայր, զինվել ռուսների՝ պահեստներում թողած անսպառ ռազմամթերքով ու հրացենով:

Այդ բոլորի պատասխանատուն արևելահայ բուրժուազիայի հետադեմ մասի և արևելահայ մեծամիտ, անհաշտ և ամբարտավան դաշնակցության չեֆերի մի մասի ներկայացուցիչներն էին, որոնք մշտապես երկպառակություն էին սերմանում ազգի մեջ՝ առաջ բերելով արևելահայ, արևմտահայ, Արևելյան Հայաստան, Արևմտյան Հայաստան, Արևելահայ ազգային խորհուրդ, Արևմտահայ ապահովության խորհուրդ հասկացությունները և այն գաղափարը, որ արևմտահայերը թող իրենց երկիրը պաշտպանեն, իսկ արևելահայերը՝ իրենցը: Այս հատվածականությունը կոտրում էր ժողովրդի մեջքը և թույլ չէր տալիս նրան միավորվելու, իսկ առանց միության երկիրը պաշտպանել ու հաղթել հնարավոր չէր:

Այս իրավիճակում հասունացել էր նաև արևմտահայերի նոր համագումար (ներկայացուցչական ժողով) հրավիրելու

անհրաժեշտությունը, որը պետք է պաշտոնապես, հանուն արևմտահայերի՝ հռչակեր Արևմտյան Հայաստանի անկախությունը, որն ըստ էության՝ de facto անկախ էր: Որոշվեց այդ համագումարը հրավիրել 1918 թ. մարտի 4-ին Էրզրումում[1]:

Վասպուրականի Ներքին գործոց կոմիսար Հ. Մանուկյանը կովկասյան թերթերից պատահմամբ տեղեկանում է Հայկական II համագումարի հրավիրման մասին:[2] Եվ ահա Վանի իշխանությունը սեղմ ժամկետներում որոշում է այդ ժողովի համար ուղարկել պատգամավորներ՝ Վանի քաղաքապետ Ավետիս Թերզիբաշյանի գլխավորությամբ: Փետրվարի 19-ին հրավիրված ժողովում ընտրվում են 94 պատգամավորներ, այդ թվում՝ Հ. Մանուկյանը, Ա. Մաքսապետյանը, Մ. Սոսոյանը, Պ. Պանիրյանը, Մ. Օվիկյանը, Վ. Առաքելյանը, Ա. Մեսրոպյանը, Ա. Աղավնյանը, օրիորդ Աննիկը և ուրիշներ[3]: Սակայն 1918 թ. փետրվարի 27-ին Էրզրումի անկումը խափանեց ամեն ինչ: Վերջիններս 1918 թ. մարտի 2-ին հազիվ էին հասել Իգդիր, երբ տեղեկացան, որ Էրզրումն արդեն ընկել էր հայ զինվորների անմիաբանության պատճառով: Արևմտահայերը հավաքականորեն և պաշտոնապես չկարողացան իրականացնել Արևմտյան Հայաստանի անկախության հռչակումը, որն իրերի բերումով անկախ էր:

Թուրքական զորքերը հայ ժողովրդին զրկեցին ինքնորոշման իր իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Վանի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներում բնակություն հաստատած 100 հազարից ավելի հայ բնակչությունը,[4] հայրենի հողեր վերադառնալու, իրենց բույնը վերաշինելու հույսով, սպասում էր դրության կայունացմանը: Սակայն

[1] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, էջ 160:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի էջ 24:

[3] **Մանուկեան Հ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յուլիս- հոկտեմբեր, թիւ 3, էջ 90:

[4] Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ Պոլիս 1920, էջ 90:

Թուրքիայի համար զինադադարը միայն պատրվակ էր ժամանակ շահելու, սեփական ուժերը համախմբելու ու հարձակման նախապատրաստվելու համար:

Բացի այդ, Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ Թուրքիան փետրվարի 18-ին ստացել էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսի և Բաթումի շրջաններըը և Լենինի «բարեհաճ» կամքով հունվարի 3-ին հռչակվել էր անկախ: 1917 թ. հոկտեմբերին կամ նոյեմբերին ոչ մեկի մտքով չէր անցնում, որ թուրքերը կարող էին հասնել 1914 թ. սահմանին:

Ավելին, Էրզրումի պարիսպների տակ փետրվարի 25-ին նրանք Անդրկովկասյան Կոմիսարիատից պահանջեցին դատարկել Բրեստ-Լիտովսկի բանակցություններով Թուրքիային թողնված Արևմտյան Հայաստանի տարածքը: Դրանից առաջ՝ 1918 թ. հունվարի 30-ին, թուրքերն արդեն գրավել էին Երզնկան, իսկ փետրվարի 4-ին՝ Բաբերդը:

Էրզրումի անկումով Վասպուրականի վիճակն էլ ավելի վատթարացավ, քանի որ թուրք հրամանատարությունը, անշուշտ, պիտի փորձեր «ուղղել իր ռազմաճակատը» Կովկասի վրա հարձակվելու համար, այսինքն՝ վերցնել Վանը և վերադարձած հայերին նորից քշել Բարթողյան լեռներից այն կողմ և նրանց կաշկանդել Երևանի շուրջը: Բացի այդ, հայկական դիվիզիայի հրամանատար Անդրանիկը հրաժարվել էր իր պաշտոնից, և լուրեր էին տարածվում նահանջի մասին: Այն, ինչպես նաև՝ Խնուսի ու Ալաշկերտի նահանջը, Վան-Վասպուրականին դնում են ծանր կացության մեջ[1]: Այդ մասին Արմենակ Մաքսապետյանը հիշում է. «Նայեցէք քարտէսին և մատը դրէք Վանայ լճին վրայ: Դէպի հիւսիս-կարինը ընկած է, թուրքը Սարիղամիշի դռներու մօտ, դէպի հարաւ ընդարձակ անտէր տարածութիւն մը՝ քիւրտերով. դէպի արեւմուտքը կանգնած է թիւրքը: Մենք ճիշտ մէջտեղը Կովկասին միացած նեղ արահետով մը, որու ձախ թևին անդնդախոր Ձիլանն է, իսկ աջ թևին՝ դարձեալ քիւրտերը,

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 110:

մինչև Խոյ Սալմաստ: և մենք կ՛ուզէինք մնալ. մնացինք»[1]:

Էրզրումի անկումից հետո, Վան-Վասպուրականը փաստորեն կտրվում է արտաքին աշխարհից: Այն մի նեղ արահետով էր կապված Երևանի հետ, այն էլ վտանգվում է, երբ Էրզրումի գծով թուրքական զորքերը հասնում են Սարիղամիշ: Զիլանի քրդերը ամեն քայլափոխի պատրաստ էին կտրել այդ նեղ արահետը:

Էրզրումի անկումը ծանր էր ոչ միայն Վան-Վասպուրականի, այլև Կովկասի համար: Էրզրումից մինչև Վասպուրականի Հայկական գործող բանակի թիվը հասնում էր 22000-ի, որը երեք անգամ քիչ էր թուրքականից և որի 3/4-ը նորակազմ ուժեր էին և հազիվ նոր էին տեղ հասել, երբ նահանջը սկսվեց[2]: Դրոն, Սիլիկովը և Երևանի Ապահովության խորհուրդը գտնում էին, որ պետք է Վան-Վասպուրականը դատարկել, ժողովրդին փոխադրել Կովկաս և ուժերը իմի հավաքելով, էջմիածնում զորքը միացնել Անդրկովկասի բանակին: Արամը դեմ էր դրան՝ պատճառաբանելով, որ յուրաքանչյուր շարժում կնկատվեր թշնամու կողմից, և զորքի մեջ խուճապ կառաջանար: Վանի ընկերներին ուղղված՝ 1916 թ. մարտի 6-ի իր նամակում նա տեղեկացնում էր և հրահանգում. «...Ես ուզում եմ միայն ստեղծուած կացութեան մասին մի քանի գործնական թելադրութիւններ անել ձեզ: 1. ...զօրքը անբարոյականացել է. տուն փախչելու փսիխոզը հասել է ծայրայեղութեան. սրա դէմ վերջերս միջոցների դիմեցինք՝ կիրարկելով մահուան պատիժը, և աջ-ձախ սկսել ենք զարնել. առաջին տպաւորութիւնը լաւ է: Այս լքուածութիւնը մեծապէս ազդեց ճակատների վրայ. հրաման են տուել ետ քաշուել, երևի, նոյնը կանեն և ձեզ: Քաջ ծանօթ լինելով թուրքերի վիճակին՝ կարծում եմ, որ դուք այժմ ինձանից լաւ գիտէք այդ. պէտք է տեղի չտալ, գէթ պաշտպանել Ալաշկերտ-Վան հողամասը թիկունքը լաւ ամրացնելու պայմանով... 2. Վանի պրիգադային ձեր հրահանգին համաձայն թոյլ չտուի, որ շատ մարդ վերցնի. մօտ 1500 դէնք և 4000 կոմպլէկտ հագուստ ունենք պատրաստ ձեզ համար: Ես կարող եմ հասցնել մինչև Իգդիր. աշխատեցէք այնտեղ բեռներով որևէ կերպ ներս քաշել: Ալաշկերտի Ղարաքիլիսէն փամփուշտ կայ մոսինի, աշխատեցէք այնտեղից էլ օգտուել: Այնտեղ մօտ մէկ միլիոն պատրաստի փամփուշտ կայ ձեզ համար: Խիստ եղէք դասալիքների և դաւաճանների վերաբերմամբ: Վանի պրիգադի պետը մի լաւ մարդ և հրաշալի ուժ փորձառու պոլկովնիկ է, ներկայացուած է զօրավարութեան, կամ դէպքերի պատճառով չի ստացել. շատ պիտի սիրէք, հոգով հայ է և տղամարդ. ինքն էլ զարաբաղցի է իսկական տիպով: Շուտով կը պատրաստենք և թնդանօթաձիգներ. արդէն հեռագիրներ ունենք, որ սպաներ են գալիս, այնպէս որ դրանց հետ ռուսահայեր կը դնենք և կ՛ուղարկենք անմիջապէս ձեզ: 3. Իմ կարծիքով Ե. պոլկի աւելորդ դէնքեր և ինչքեր ձեզ թողնելով, վերցնելով և լաւ սպաներին՝ միւսներին պիտի թողնել, որ ուժ լինին. այդպէս էլ ես պիտի աշխատեմ այստեղ: 4. Դրամի համար ամէն կէրպ աշխատեցինք, որ մի գումար հասցնենք. այդտեղից փոլիցա քաշեցէք՝ հոս վճարենք ընտանիքներին: 5. Շուտով ներկայացրէք ձեր զինուորների ընտանիքների անդամների թիւը զինուորների անունների հետ, որ ամսականներ կապենք. երևի գիտէք, որ տունը մնացող մարդագլուխ, մեծ ու փոքր, աղքատ կամ հարուստ ստանալու է ամսական 20 ռուբլի: 6. Սուրհանդակներ հանեցէք մինչև Երևան. ուրիշ կերպ լուր առնել կամ տալ անհնարին է...»[1]:

Նախքան ժողովրդին Կովկաս փոխադրելը, անհրաժեշտ էր պահպանել Բերկրիի կիրճը: Դա նշանակում էր, որ Վանի դունդը պետք է մնար տեղում՝ մինչև ժողովրդի անցումը կիրճով[2]:

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 110:

[2] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, էջ 163:

[1] Արամը. մահուան 3իսնամեակին առթիւ, էջ 392-394:

[2] Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 122:

Առհասարակ Երևանը ոչ մի բանով չօգնեց Վանին, բացի 80 հազար ռուբլուց[1]:

Ժողովուրդը կառավարության նահանջի հրամանին էր սպասում, սակայն կառավարությունը ոչ միայն հուսադրում էր ժողովրդին, այլև Էրզրումի անկման լուրը փորձում էր փոխհատուցել ստացված ոչ պաշտոնական տեղեկատվությամբ, որ «Անգլիացիներ Դաւրէժ և Սավուջ – Պուլաղ մտած են 6000 զօրքով»[2]:

Այդուհանդերձ, Երզնկա-Էրզրումից մինչև Վան, 12-15 հազ. արևմտահայ զինված ժողովուրդը մեծ դժվարությամբ կարողանալով երեքուկես ամիս պաշտպանել ճակատը, դեպի Կովկաս փոխադրեց հարյուր հազար գաղթական[3]: Կար նաև 2.653 հոգուց բաղկացած կանոնավոր բանակ, որը հետագայում ցրվեց:

Հաշվի առնելով ստեղծված խառնաշփոթ իրավիճակը՝ Էրզրումի անկումը, Խնուսի, Ալաշկերտի և Դութաղի նահանջից հետո Վանում մնալու աննպատակահարմարությունը, 1918 թ. մարտի 6-ին հայկական V գնդի հրամանատար՝ փոխգնդապետ Պողոսյանը, հաշվի առնելով ստույգ վտանգը և անկարելի դարձած դիմադրության համար զոհեր չտալու մտայնությունը, հրաման է արձակում Վանից հեռանալու մասին, որը նախատեսվում էր մարտի 7-ին:

Նույն օրը փոխգնդապետ Պողոսյանը հրաման է արձակում նաև Ոստանի պաշտպանության հրամանատար պորուչիկ Այվազյանցին, որպեսզի նա ևս թողնի դիրքերը և վերադառնա Վան՝ Կովկաս մեկնելու համար[4]: Սա, փաստորեն, մի նոր դավաճանություն էր հայկական 5-րդ գնդի կողմից: Լքել ժողովրդին, թողնել թշնամու ձեռքն ու հեռանալ, այն էլ ամենածանր պահին, ոչ միայն դավաճանություն էր,

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 110:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի էջ 31:

[3] **Միհրանեան Ա.**, Ինչպէս պէտք է գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), էջ 9:

[4] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ .96, թ. 2:

այլև՝ թշնամություն: Վան-Վասպուրականի կառավարության խնդրանքներն իզուր են անցնում: Ժողովուրդն՝ անկախ կառավարությունից, Եղնիկ վարդապետի գլխավորությամբ, դիմում է գնդի հրամանատար գնդապետ Պողոսյանին և գնդի սպաներին ու խնդրում, որ չթողնեն իրենց բախտի քմահաճույքին և չհանձնեն դարավոր թշնամու ձեռքը: Սակայն Պողոսյանը, այդ ազգուրաց դավաճանը, հաշվի չի առնում նաև ժողովրդի իրավացի ու արդարացի պահանջն ու աղերսանքը՝ պատասխանելով «Յանցանք մեր չէ, ձեր մեծերուն դիմեցէ՛ք, մենք ստիպված ենք մեկնիլ»[1]: Մարտի 6-ին V հայկական գնդի 2 վաշտերը հեռանում են Ոստանից և միանալով Վանում գտնվող հայկական 5-րդ գնդին, մարտի 7-ին գնդի հրամանատար գնդապետ Պողոսյանի գլխավորությամբ՝ մոտ 550 հոգի, թողնում են Վանը և բռնելով «տունդարձի» ճանապարհը՝ անցնում Կովկաս: «Գունդի հեռացումը թէև յոռի տպաւորութիւն թողուց ժողովրդին վրայ և այդ քայլը համարեցաւ հայրենադաւ արարք մը, սակայն ժողովուրդէն ալ կարգ մը մարդիկ թագուն անոնց հետ բռնեցին փախուստի ճամբան»[2]: Դա ցույց է տալիս, որ հայկական 5-րդ գնդի զինվորներն իրենց զեկավար Պողոսյանի գլխավորությամբ դուրս էին եկել ազգային սահմաններից, դարձել էին ապազգայնացած մի գորշ զանգված, որը պիտանի չէր երկրին ու ժողովրդին:

Կոստի Համբարձումյանի պահանջով կազմվեց Վանում մնացած V հայկական գնդի 1 վաշտի ցուցակը, որի մեջ էին մտնում հակահայրենասիրական հովերով չտարված 64-68 զինվորներ՝ պորուչիկ Տիգրան Ժամհարյանի, ենթապորուչիկներ՝ Համբարձում Մելքումյանցի, Միշա Գասպարյանցի, Միրաքյանի, պրապորշիկներ՝ Արմենակ Հովհաննիսյանցի, Աբրահամյանի, Հախնազարյանի և Խաչիյանցի գլխավորութ-

[1] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի էջ 32:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 5, թիւ 83:

յամբ[1], որոնք երդվեցին մնալ և «մինչև վերջին շունչ կռուիլ Վասպուրականցիներու կողքին»[2]:

Քննադատելով կոմիսարների անհեռատես քաղաքականությունը՝ «Մշակ»-ը նկատում է. «... մեր նորելուկ ռազմագէտները կը յուսային սակաւաթիւ և աղ ու ձախ միայն ջոկել գիտցող զինուորներով, պահպանել Էրզրումի և Ալաշկերտի նահանջի պատճառով մեկուսացած Վանը»[3]:

Բայց 1918 թ. գարնանամուտը հայերի համար ամենուրեք բերում է ծանր վիշտ ու տառապանք:

1918 թ. մարտին Վան-Վասպուրականի կռիվները խիստ ուժեղանում են 2 ճակատներում, թե՛ հարավում՝ Ոստանում, և թե՛ հյուսիսում՝ Արճեշ-Առնիսում:

Դավաճան Պողոսյանի գնդի հեռանալուց 6 ժամ հետո՝ մարտի 8-ին, Ոստանի ճակատում թուրքերն անցնում են հարձակման:

Մարտի 7-ին՝ առավոտյան ժ. 6-ին, Տիգրան Ժամհարյանը հակիրճ մի երկտող է ստանում Կոստի Համբարձումյանից հետևյալ բովանդակությամբ. «Սիրելի Տիգրան, Ոստանում կռիվ է սկսվել, անհապաղ ներկայացիր կոմիսարիատ, որպեսզի քննարկենք ստեղծված իրավիճակը. Կոստյա»[4]:

Վանյան գնդի վաշտի հրամանատարի հեռախոսազրույցից պարզվում է, որ «մարտերը չարունակվում են, թուրքերը հարձակվում են 300 հոգով: Ոստանի դիրքերի առաջին գիծը գրավված է նրանց կողմից: Մենք դիրքեր ենք գրավել լարափակոցների այս կողմում... Ի սեր աստծո, ուղարկեք օժանդակ ուժեր»[5]:

Միաժամանակ, Ոստանի պաշտպանության ղեկավարը Տ. Ժամհարյանին առաջարկում էր ստանձնել Ոստանի պաշտպանության գործը, պայմանով, որ 2-3 օրվա ընթացքում Ոստանում կատեղակայվի մեկ գումարտակ:

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 2:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 31:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81:

[4] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 2:

[5] Անդ:

Ի վերջո, Տ. Ժամհարյանը ստանձնում է Ոստանի պաշտպանության գործը, իսկ նրա տեղակալ է նշանակվում գնդմարմնի անդամ Լևոն Շաղոյանը[1]: Տ. Ժամհարյանը ներկայանում է գնդի հրամանատար փոխգնդապետ Պողոսյանին և պնդում, որ Ոստանում սկսվել է կռիվ և խնդրում է Ոստան ուղարկել գնդացիրավորների խումբ՝ սպա Առաքելյանի գլխավորությամբ[2]: Սակայն Պողոսյանը ոչ միայն չի բավարարում արդարացի պահանջը, այլև պատասխանում է, որ «դա սադրանք է, այնտեղ ոչ մի կռիվ էլ չկա, և նրանք դիտմամբ այդպիսի լուրեր են տարածում, որպեսզի մենք մնանք, սակայն չենք մնա...»[3]:

Շուտով Հայոց ձորի Կղզի գյուղից Ոստանի ճակատին՝ այնտեղ գործող Գարեգին Հացագործյանի հրամանատարության տակ գտնվող Վանի սպայական կուրսն ավարտած երիտասարդներին օգնության են գնում գինված գյուղացիները՝ Մուրադն իր ձիավորներով, Սամվելն ու Ագատն իրենց վաշտերով: Օգնության են հասնում նաև Վանի, Անդղի և Հայոց Ձորի գինված ազգաբնակչությունը[4]: Մարտի 8-ին՝ առավոտյան ժ. 6-ին, թուրքերը, գրավելով Պատականց գյուղի 2 բարձունքները, 100-150 հոգով սկսում են հրացանաձգություն[5] և հարձակում գործելով՝ գրավում Հիլի գյուղը: Տ. Ժամհարյանի տրամադրության տակ կար 3 վաշտ և հեծյալ 1 հարյուրակ՝ Մուրադի գլխավորությամբ: Վաշտերից 1-ինը և 2-րդը դիրքեր են գրավում լճի ափամերձ գոտում՝ մինչև Մատնոց գյուղը, իսկ 3-րդ վաշտը մնում է ռեզերվում: Իսկ հեծյալ հարյուրակը հասատավում է Արտոս լեռան թիվ 6-րդ ուղեկալում: Միաժամանակ, հայկական ռազմանավը՝ Կ. Համբարձումյանի և Դանիել վարդապետի գլխավորությամբ ռմբակոծում է Ագթամարը և շրջակա դիրքերը[6]:

[1] «Աշխատանք», Երեւան, 1918, ապրիլի 11, թիւ 94(194):

[2] Անդ:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 2:

[4] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 32:

[5] «Աշխատանք», Երևան, 1918, ապրիլի 11, թիւ 94 (194):

[6] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրսկանում (1914-1918), «Վէմ», Փարիզ,

Արդյունքում՝ հայ զինվորների անձնազոհության և մուրադի հերոսության գնով կասեցվում է թշնամու հարձակումը, և թուրքերը հետ են շպրտվում՝ տալով մեծ զոհեր և թողնելով զենքն ու զինամթերքը[1]: Ըստ Հ. Մանուկյանի՝ թուրքերը տալիս են 4 զոհ, 2 հրացան, 200 փամփուշտ, զինվորական չինել և կոշկեղեն («բատինկա»)[2]:

Թշնամու առաջին լուրջ հարձակումը և պարտությունը մեծ ոգևորություն է առաջ բերում ժողովրդի մեջ, որի հետևանքով բազմաթիվ պատանիներ և ծերունիներ մեկնում են ռազմաճակատ:

Մարտի 15-ին թշնամին փորձում է առաջանալ Արճեշից: Սակայն մարտի 8-ին՝ ժամը 16-ին, սկսվում է հակահարձակումը Առնիսից, որին օգնության էր գնացել Գարեգին Հացագործյանն իր սպայական կազմով ու քաջակորով երիտասարդներով, չարժվում են 2 ռազմակույկ՝ մեծ և փոքր, և ուղղվում դեպի Ոստան՝ Կոստի Համբարձումյանն ու Դանիել վարդապետն էլ փոքր նավի վրա[3]: Թեև ռազմանավը ծովի ալեկոծման պատճառով չէր կարողացել մոտենալ ափին՝ կրակելու համար, բայց նրա երևալը սարսափ էր առաջացրել թուրքերի շրջանում: Երիցս հարձակման արդյունքում թշնամին պարտվում է և մարտի 10-ին ետ է քաշվում Վորկունիս գյուղը: Այդ մասին դեպքերի ականատես Եղ. Վարդանյանը հիշում է. «Մինչ ժողովուրդ ելեքտրականացած ու վախով համակուած լուրի կ'սպասէր, անդին Ոստանի մէջ մեր զինուորներ առանց չփոթուելու հերոսաբար կուրծք կուտային թշնամիի գրոհին, ուրախ երգելով՝ ծաղրելով անոր մոլեգնութիւնը: Ու ճիւնածածկ խրամներու մէջ, թշնամիի ահռելի գնգակներու տեղատարափին տակ հայրենիքի պաշտպանութեան վեհ գաղափարով տոգորուած զինուորներու ոգևորու-

1938, յունուար, թիւ 3, էջ 93:


[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 3:

[2] **Մանուկեան Հ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1938, յունուար, թիւ 3, էջ 93:

[3] «Աշխատանք», Երեւան, 1918, ապրիլի 11, թիւ 94 (194), նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 10, թիւ 85:



Կտուց անապատը



Վանի Երամյան վարժարանը



Վարագավանքը և. Ժառանգավորաց դպրոցի սաները



Խաչվերացի պատարագը Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցում 1895 թ.




Լիմի միաբանությունը




Վանի միանձնուհիները




Քսերքսեսի Վանի եռալեզու (հին պարսկերեն, բաբելոներեն, էլամերեն) արձանագրությունը



Աղթամարի վանքը
(19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ)




Վանի Դոմինիկյան միաբանության շենքը



Լիմ անապատը



Սբ. Բարդուղիմեոս եկեղեցին (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ)



Նարեկավանքը




Լիմ անապատը



Կամավորները. Հ. վրդ. Հյուսյանը և Ս. Տեր-Ավետիսյանը Աղթամարի գրապահոցում



Աղթամարի ս. Խաչ եկեղեցու զանգերը (1388 թ.) Ուրմիա քաղաքի մարդաբանության թանգարանում



Փանոս
Թերլեմեզյան



Կոստի Համբարձումյան



Արմենակ Եկարյան

թեանը պահուն կը հասնի իրենց չոգենաւը, որ ծովէն կատարեալ վարպետութեամբ կը ռմբակոծէ թշնամիի դիրքերը, ու մերոնք չկարողանալով ինքզինքնին զսպել, դուրս կը ցատկեն խրամներէն ու գնդակներու տեղատարափին տակ յարձակման կը դիմեն»[1]:

Սա մեծ հաղթանակ էր Վասպուրականի հայերի համար: Հայերը 2 օրվա մարտերի ընթացքում տալիս են 2 զոհ և 2 վիրավոր, իսկ թշնամին՝ քառակի անգամ շատ: Իրենց հերոսութեամբ աչքի են ընկնում Ուրանցի Մուրադը (Սաքոն), Ազատը, Մոկացի Համբարձումը, Արամ Գրիգորյանը և Գևորգ Բաղդասարյանը (Բարդուղիմեոսյանը):[2]

Այդ օրվանից Ոստանի դիրքերում տիրում է անդորր՝ մինչև մարտի 19-ը:

Այդ ընթացքում կազմվում են աշխատավորական խմբեր՝ խրամներ փորելու և այլ աշխատանքներ կատարելու համար, իսկ գյուղացիներին հանձնարարվում է զորքի համար քաղաք բերել խոտ և հարդ:

Մարտի 10-ին Զիլանի և Մոկուզի քրդերը հարձակվում են Արճեշի վրա, բայց մեծ զոհեր տալով՝ ետ են քաշվում: Այդ մասին ժամանակակիցներից մեկը հիշում է. «Զիլանի քիւրդերն էին եկողները: Հրապուրուած Կամուրջի մեծաքանակ պահեստներէն, հաւաքուեր էին ու եկեր քօչ ու բարխանով, սայլերով ու ձիերով թալանելու և կողոպտելու: Բայց անսպասելիօրէն դէմ-յանդիման գալով մեր զինուորներուն, որոնք դիմաւորեր էին զիրենք գնդակացիրի ու հրացանի գնդակներու տարափով, թողեր էին ու փախեր՝ տալով սպանուածներ և վիրաւորներ»[3]:

Մի բան պարզ էր, որ Զիլանի քրդերը կանոնավոր հարաբերութիւնների մէջ էին Ադիլջևազի թուրքական բանակի հետ և լուրջ վտանգ էին ներկայացնում:

Հուսահատական այս իրավիճակում, ժողովրդի տրամադ-

---

[1] Վարդանեան Ե., «Նահանջ բիւրոց» Վասպուրականի էջ 33:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 10, թիւ 85:

[3] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81:

րությունը բարձրացնելու համար հրապարակվում է ոչ պակաս կարևոր մի լուր, որ «Պագուի և Երևանի Թիւրքեր յանձնուած են Հայերուն, հայկական իշխանութեան ձեռքն է այդ չրջանները»[1]: Սակայն, սպասվող վտանգն այնքան բացահայտ էր, որ ժողովուրդն այն անտարբերության է մատնում:

Մարտի 14-ի առավոտյան թե՛ Ոստանի և թե՛ Արճեշի Օրորան գեաի կողմից վերսկսվում է թուրքերի հարձակումը: Պատերազմական այս իրավիճակում Սավալիում Վանի կոմիսարության ներկայացուցիչ Տեր-Միքայելյանի անունով մարտի 15-ին ստացվում է Սավալիի չրջանի պարսիկ կառավարիչ՝ Ամիր Թյումանի ծանուցագիր-նամակը, որտեղ պարսիկ պաշտոնյան իրազեկ լինելով Վասպուրականի ճակատագրին, հիմք ընդունելով պարսկական, ռուսական, անգլիական և թուրքական կառավարությունների համաձայնագիրը, Պարսկաստանից զորքերը հանելու և նրա չեզոքությունը հարգելու սկզբունքից, ինչպես նաև՝ արտաքին թելադրանքից մղված՝ առաջարկում է դատարկել Սավալին, որտեղ գտնվում էին զինվորական պահեստներ և որոնց տեղափոխումը անհնար էր փոխադրության միջոցների բացակայության պատճառով:

Նույն օրը երեկոյան Կ. Համբարձումյանը Տեր-Միքայելյանին է հանձնում Վանի կոմիսարիատի անունից գրված պատասխան նամակը՝ հետևյալ բովանդակությամբ. «Մենք ձեր հողին աչք չունինք, իսկ եթէ կ՛ուզէք որ ձեր հողէն հեռանանք, մեզ դիւրութիւններ և փոխադրութեան միջոցներ տուէք՝ ու մենք կը հեռանանք մեծ ուրախութեամբ, իսկ եթէ այդ չէք ըներ և կը պահանջէք, որ հեռանանք, մենք չենք լսեր ձեզ, ինչ որ կարող էք ըրէք: Միևնոյն ատեն դուք՝ Ամիր Թիւման՝ չմոռնաք ձեր այսօրուայ խօսքերը , եթէ երեսուն տարի ալ անցնի, այս վրէժը ձեզմէ պիտի լուծուի»[2]:

Կոմիսարիատի այս սպառնալից պատասխանով Վասպուրականի մոտ 36.000 հայեր չորս կողմից հայտնվում են

[1] Վարդանեան Ե., «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 35:

[2] Անդ, էջ 35-37:

կատարյալ պաշարման մեջ՝ չրջապատված թշնամիներով և ապավինելով միմիայն իր սեփական ռազմական ուժին:

Թուրքերը կարինի անկումից հետո իրենց ուժերի մի մասն ուղարկում են դեպի Վան-Վասպուրական: Նրանց նպատակն էր գրավել Առնիս-Սարայ գիծը, կտրել Կովկաս-Երևան տանող նահանջի արահետը, հարավից սեղմել ու աքցանի մեջ վերցնել Վասպուրականի ամբողջ ժողովրդին, զորքին և կառավարությանը: Թշնամին մեծ ուժեր է կուտակում Ոստանի ու Արճեշ-Առնիսի ճակատներում: Օգտվելով դրանից՝ Զիլանի քրդերը ավելի են ակտիվացնում իրենց գործողությունները: Բոլորին էլ հայտնի էր, որ Թուրքիան, իր կորցրած նահանգները վերագրավելուց զատ, Վանը ևս պիտի գրավեր և լուծեր 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի վրեժը: Բացի այդ, լուրեր էին պտտվում, որ անգլիացիները, որոնք առաջանում էին Աֆղանստանի գծով և իրենց ռազմական ուժերն էին կենտրոնացրել Ղազվինում, պատրաստվում էին ռազմական գործողություններ սկսել Պարսկաստանի տարածքում: Իսկ ասորիները քուրդ ավազակապետ Սմկոյի կողմից ասորիների առաջնորդ Մար-Շիմոնի սպանությունից հետո իրենց 12.000 զինվորներով գրավել էին Ուրմին և իրենց ազդեցությունը տարածել Դիլմանի, Քյոհնիշահերի և Սալմաստի վրա[1]:

Մահ կամ ազատություն. ահա սա էր Վան-Վասպուրականի հայության միակ ճիշտ կարգախոսը 1918 թ. մարտի երկրորդ կեսին: Մխիթարականն ու ոգևորիչը միայն այն էր, որ Կովկասից հետ են վերադառնում Խաչիկ Խուանյանի և Մեսրոպ Ջանոյանի 100 ձիավորները, որոնք էլ իրենց հերթին հայտնում են, որ գնդապետ Բաղդասարյանի գլխավորությամբ՝ Վասպուրականի երիտասարդներից 2500 հոգուց բաղկացած երկու գունդ է կազմավորվել ու զինված սպասում են Վան մեկնելուն: Բաղդասարյանի գնդերը թեև ունեին թնդանոթներ, որոնցից այդ ժամանակ գրեթե զուրկ էր Վասպուրականը, սակայն թնդանոթաձիգների խիստ պակասություն էր զգացվում: Նախկինում նրանց մեծ մասը ռուս-

[1] «Յորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 5, թիւ 83:

ներ էին, սակայն վերջիններս արդեն հեռացել էին: Ձյան պատճառով գնդերը տեղից չէին շարժվում ու սպասում էին Իգդիրում: Ըստ գեներալ Թ. Նազարբեկյանի տվյալների՝ այդ բրիգադից Զինգիլի լեռնանցքով Բայազետ հասնում են միայն 400-500 մարտիկներ (մնացածը դասալքվեցին), որոնք հրաժարվում են առաջանալ և փորձում են ետ վերադառնալ Իգդիր[1]: Նահանջի ժամանակ Զինգիլի լեռնանցքում գունդը կռվի է բռնվում թուրքական գումարտակի հետ և մեծ դժվարությամբ դիմակայելով հակառակորդի հարձակմանը՝ նահանջում մեծ կորուստներով: Իսկ գնդապետ Զախմախչուն իր 20 զինվորներով Օրկովի մոտ թշնամու հարձակման փորձը կասեցնելու ժամանակ սպանվում է[2]:

Ռազմական իրավիճակն այսպիսին էր. Վանա լճի հարավային ափին՝ Ոստանում, կանգնած էին Ռ. Ժամհարյանի գումարտակի հետևակ 4 վաշտերը (8 հարյուրակ), 2 հարյուրակ հեծելազոր և 1 անգեն հարյուրակ, որը նաև փամփուշտների մատակարարն էր: Դերգում կանգնած էր հետևակ 1 հարյուրակ, որն ամեն օր Խան էր ուղարկում՝ հետազոտության: Իսկ Խոշաբի Նորգյուղ գյուղի մոտ կանգնած էր հեծյալ հարյուրակ[3]:

Կարինի գրավումից հետո թուրքական 50-60 հազ. հոգանոց առաջին կովկասյան կորպուսն առաջ շարժվեց Սարիղամիշի ուղղությամբ: Մարտի 17-ին հիշյալ կորպուսի զորամասերը գրավեցին Քյոփրյի-քյոյը և Թորթումը, որոնք ընկած էին Կարինից դեպի արևելք և հյուսիս-արևելք, և հասան Արևելյան Հայաստանի սահմանին:

Մարտի 19-ին Ոստանի ընդհատված կռիվները նորից վերսկսվեցին, և թուրքերը հայերին կրկնակի անգամ գերազանցող ուժերով, երկու թնդանոթով, երեք գնդացիրներով, միաժամանակյա հարձակում կազմակերպեցին թե՛ Ոստանի

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թ. 7:

[2] Հետագայում նրա դին ամփոփվեց Վաղարշապատի ս.Գայանե եկեղեցու բակում, տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 20, թ. 24, նաև՝ գ. 15, թ. 14:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 3:

և թե՛ Առնիսի դիրքերի վրա: Ոստանի ճակատում թուրքերը երկու անգամ գիշերային գրոհ կազմակերպեցին Յիլիի ձորում, սակայն՝ անհաջող: Հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին:

Ահա թե ինչպես է նկարագրում իրավիճակը Ասպետը. «Առաուն ժամը 5-էն սկսեալ կռիւը չարունակուեցաւ թէթի հրաձգութիւններով. թնդանօթը դեռ չի գործեր: Արտակարգ ոգևորութիւն կը տիրէ ժողովրդի մէջ, փախուստի և վախի հետք իսկ չերևիր. ամենք ամեն կողմէ կուգան խումբերով և զէնք կը խնդրեն Ոստան երթալու: Շատ չատեր ինքնաբերաբար իրենց զէնքերով Ոստան գացեր են արդէն: Կառավարչատուն և փողոցները դատարկած են, ոչ մէկ տղամարդ կրնաս տեսնալ: 18 տարեկան խումբ մը տղաներ ահա, հրացան ուսերնին կը մեկնին դէպի Ոստան: Ճամբայ հանուեցան 80 բանուորներ խրամներ փորելու համար»[1]:

900 հետևակով և 100 ձիավորով հայերը Լևոն Շաղոյանի, Ռուբեն Տ. Ժամհարյանի, Մելքոն Գասպարյանի, Շատախցի Ազատ Սիմոնյանի, Մելիք Աբրահամյանի, Սամվել Մեսրոպյանի, Մուրադ Դիլոյանի գլխավորությամբ, ամրանալով Պատականից բլուրներում, շարունակում էին կռիվը Ոստանի խիստ ավելացած թուրքական 1500 հոգանոց ռազմական ուժերի դեմ, չհաշված քրդերին, որոնք ունեին 2 թնդանոթ և 4 գնդացիր հայերի 2 գնդացրի դիմաց[2] (մեկ այլ վկայության համաձայն՝ 4 թնդանոթ և 6 գնդացիր[3]: Ըստ Լևոն Շաղոյանի վկայության «Մեր աջ թևը պաշտպանւած է եղեր Թիմարցիներէ, որոնք չափազանց անփորձ են եղեր և հրացաններն վեր բարձրացուցած անվերջ կրակեր են: Արտաշէս Շիրվանեան, որ անոնցմէ մէկ հարիւրեակին հարիւրապետն է եղած, թոյլ դուրս եկած է: Լևոն զանոնք ուշքի բերելու համար երբ

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 10, թիւ 85:

[2] Պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան (ՆՊ ԲՄ), թիվ 839, արկղ 4, գ. 195, թ. 232, նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 16, թիւ 90:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. ?:

անոնց դիրքերը յառաջացեր է, վիրաւորեր է: Զախ թեւի վրա եղած են Մուրատ, Սամուէլ, Ազատ, իսկ կեդրոնը՝ Համբարձում Մոկացի, որ անդադար Լևոնին թոյլ չէ տւած անխոհեմութիւն ընել իր անձին նկատմամբ»[1]: Շուտով օգնութեան է հասնում փոքրիկ ռազմանավը՝ Կոստի Համբարձումյանի գլխավորությամբ, որը ամբակոծում է թուրքական դիրքերը: Կռիվները գնալով բորբոքվում են՝ տևելով անընդմեջ 14 ժամ: Հայերը տալիս են 2 սպանված և 10 վիրավոր, այդ թվում Լևոն Շաղոյանը[2], որը տեղափոխվում է Վան, հետո Ջանիկ[3]: Զգացվում էր զինամթերքի պակասություն: Այդ նպատակով Բայազետում գտնվող Ասլանը 40 կառքեր է ուղարկում իդդիր՝ փամփուշտներ և հրացաններ ստանալու համար[4]:

Այս դեպքերի մասին ականատես Ա-Դոն գրում է. «Մերոնք կատաղի ու հերոսական դիմադրություն ցույց տվին... Արտակարգ ոգևորություն կտիրե ժողովրդի մեջ, փախուստի ու վախի հետք իսկ չերևիր, ամեն կողմէն կուգան խումբերով և զենք կխնդրեն Ոստան երթալու: Շատ-շատերը ինքնաբերաբար իրենց զենքերով Ոստան գացեր են արդեն: Կառավարությունը և փողոցները դատարկված են, ոչ մեկ տղամարդ կրնաս տեսնալ...»[5]: Ոստան ուղարկվեցին վերջին ուժերը: Ոստան մեկնեց Հ. Մելքոնյանը և V գնդի մնացած 50 զինվորները[6]: 18 տարեկաններն էլ դիմեցին Ոստան մեկնելու համար: Ինքնապաշտպանական ուժերը մնացին առանց պահեստազորի:

[1] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1938, յունուար, թիւ 3, էջ 94:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 71:

[3] **Յացագործյան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՅԱ, 1969, թիվ 1, էջ 220:

[4] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յուլիս-հոկտեմբեր, թիւ 3, էջ 93:

[5] Պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան (ՆՊ ԲՄ), թիվ 839, արկղ 4, գ. 195, թ. 233:

[6] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յուլիս-հոկտեմբեր, թիւ 3, էջ 93:

Հայոց Զորի գյուղացիությունն անում էր ամեն ինչ, նույնիսկ իր ուժերից էլ վեր՝ կասեցնելու թուրքերի առաջխաղացումը: «Արտակարգ ոգևորութիւն կը տիրէ ժողովուրդին մէջ. ամէն կողմէ խումբերով կուգան և զէնք կը խնդրեն Ոստան երթալու: Այսօր ղրկուեցան 60 բանուորներ»[1]:

Այդ բոլորն իզուր էր, որովհետև հյուսիսային ճակատի դրությունը գնալով ծանրանում էր:

Վանի կառավարությունը նահանջը ձգձգում էր՝ կապված ցրտերի ու սառնամանիքների հետ:

Առնիսի ճակատում վիճակը հուսահատական էր: Խնուսի և Ալաշկերտի գրավման հետևանքով Ախլաթը դատարկվում էր:

Մարտի 18-ին 5000 հոգանոց թուրքական բանակը (ըստ Ե. Վարդանյանի՝ 500 հետևակ և 100 ձիավոր[2]), երեք լեռնային թնդանոթներով և չորս գնդացիրներով զինված, Զիլանի ձորի, Պատնոսի և Սարիսուի 1500 քրդերի օգնությամբ, Օրորան գետի մոտից գրավում են Արճեշը և շարժվում դեպի Առնիս, ուր կար հայկական մոտ 800 հետևակ և 200 հեծելազոր՝ բաղկացած հիմնականում թիմարցիներից, և 1 թնդանոթ (թնդանոթաձիգը գերմանացի էր)՝ պորուչիկ Սաշա Գասպարյանի գլխավորությամբ: «Մերոնք, - գրում է Ա-Դոն, - գործ ունին գերմարդկային ճիգ թշնամուն հետ մղելու համար, բայց անոր թարմ ուժերը անվերջ կհանվին և անդադար մեր գնդակներու տարափի տակ կառաջանային... Մեր միակ գնդացիրը խանգարված էր... Ժամի 9-ին կռիվը ամենատաք բնույթն ստացավ, պարտավորվեցանք նահանջել, չնայած որ կես վերստ միայն բացվածք գտանք... 8 վերստ տարածութիւն անընդհատ կռիվ մղելով քաշվեցինք դեպի Առնիս»[3]:

Սարայի, ավելի շուտ Խոշաբի քրդերն ակտիվանում են և փորձում են կտրել ու փակել Խոյ տանող ճանապարհը[4]: Չնայած կովողների տրամադրությունը բարձր էր, սակայն

[1] **Մանուկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 93:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 41:

[3] Պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան (ՆՊ ԲՄ), թիվ 839, արկղ 4, գ.195, թ. 234:

[4] Վասպուրական. 1915-1930, էջ 110-111:

դրությունը ճգնաժամային էր, քանի որ Առնիսի կորստով փակվում էր Վան-Երևան ճանապարհը: Գնալով Առնիսի դրությունը ծանրանում է և ընկնում է վտանգի տակ: Այդ մասին դեպքերի ականատես Ե. Վարդանեանը հիշում է. «Ահու դողի մէջ է ամբողջ ժողովուրդը, վերահաս զուլումի ուրուականէն սարսափահար՝ սուգի մէջ է ան, ոչ ոք կ'ուզէ խօսիլ, ոչ ոք կ'ուզէ չրթունք չարժել, նահանջի ու կոտորածի ուրուականը կը չրջի...: Բայց ոչ ոք կ'ուզէ այդ անուններ իր բերան առնել»[1]: Գնդի հրամանատար Միշան մի կերպ փրկում է վիճակը՝ հետ մղելով թշնամու աջ թևը: Իսկ թնդանոթակիր երկու չոգենավերը նահանջի են մատնում թշնամու ձախ թևը[2]: Սակայն, մարտի 21-ին՝ երեկոյան ժ. 18-ին, թուրքերը մեծ ուժերով (2000 թուրք զինվորներ և 3000 քրդեր), հրանոթների և գնդացիրների անմիջական պաշտպանությամբ, հարձակում են կազմակերպում Արճեշի վրա՝ Օրորան գետի մոտ, և գրավում դիրքերի առաջին գիծը[3]: Այդ նույն օրը Առնիսի ինքնապաշտպանության ղեկավար, «քաջ և յանդուգն մարդ մը», եպիսկոպոսուհիկ Ս. Գասպարյանի զոհվելուց հետո, հայ մարտնչողների շարքերը թուլանում են, և կացությունը դառնում է տագնապալի[4]: Կոստին փորձում է մոտորանավերով, որոնք ղեկավարում էին գերմանացի ծովային սպաները, ծովապետ Վիլսոնը և նրա օգնական Կանինգհեղդը, օգնության հասնել, բայց՝ իզուր: Ծովակի կատաղի փոթորիկը թույլ չի տալիս նավերին մոտենալ ափին: Այդ ժամանակ Տիգրան Բաղդասարյանին ուղարկում են Առնիս՝ փոխարինելու Միշային: Սակայն վերջինս ուշ է հասնում տեղ: Վանից անկարելի է լինում նոր ուժեր ուղարկել, և թշնամին կարճ ժամանակում գրավում է Արճեշը, որը դառնում է ճակատ, և Առնիսի դրությունը փոխվում է:

[1] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 41:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 3:

[4] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, ապրիլի 27, թիւ 79:

Մարտի 21-ին Արճեշի գրավման լուրը հասավ Վան: Բայց տարօրինակ է, որ կոմիսարները դեռ հապաղում էին նահանջի որոշում տալու: Թուրքերը գրավեցին նաև ռազմական հենակետ Առնիսը, որի ռազմական պահեստները գրեթե ամբողջությամբ անցան թշնամու ձեռքը, և առաջ շարժվեցին՝ Բերկրիի գիծը փակելու համար: Մինչ այդ Առնիսի զորամասն էլ, այրելով ռազմակույկները 8 վերստ լայնությամբ և անընդհատ կռիվներ մղելով, ետ նահանջեց ու քաշվեց դեպի Բերկրի, որտեղ Զիլանի ձորում նրանց մի մասը կոտորվեց, մյուս մասը՝ Օրկովի լեռնացնքով անցավ Երևան, իսկ երրորդ խումբը՝ նահանջեց Աբաղայի ուղղությամբ՝ իրենց հետ վերցնելով Բերկրիի և Վերին Թիմարի 2.000 հոգանոց բնակչությանը[1]:

Այդ մասին Ե. Վարդանյանը հիշում է. «Վախի և սոսկումի տակ սահմռկած ժողովուրդ յուսահատութենէն ինքզինք կորսնցուց. անոր զաւակներ Ոստան և Առնիս կը գտնուէին, կային ընտանիքներ որ երախաներու ձեռք բռնող մարդ մը իսկ չունէին: Տիրեց քաոսային ժխորը, ողբ աղաղակ ու փախո՛ստ...: Ու ժողովուրդ լալով կը համբուրէր իր հայրենի օճախի չեմքը՝ ուր թողնելով իր ամբողջ հարստութիւն գաղթի ճամբան ձեռք կ'առնէր: Բայց այս անգամուան գաղթը արդէն անյոյս էր ու աղէտաբեր...»[2]:

Առնիսի կռիվներում հերոսական դիմադրություն ցույց տված 800 հայ զինվորները տվեցին մոտ 100-300 զոհ և 50 վիրավոր[3], իսկ թշնամին՝ 300-ից ավելի[4]

Եթե Առնիսի անճարակ ու մորթապաշտ ղեկավարները, այդ թվում՝ Տիգրան Բաղդասարյանը, լավ կազմակերպեին

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 110:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81, նաև՝ **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 42:

[3] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, ապրիլի 18, թիւ 72, նաև՝ **Յացագործեան Ա.**, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Ականատեսի հուշեր), ԲՅԱ, 1969, թիվ 1, էջ 220:

[4] « Աշխատանք»,Երեւան, 1918, մարտի 31, թիւ 91:

զորքը և երկու օր ևս դիմադրեին, օգնության եկող զորքը կհասներ, և դրությունն այն ժամանակ այլ կլիներ:

Բուլղարացի Գրիգորը, ծանոթանալով Ոստանի և Առնիսի իրավիճակին և հաշվի առնելով Դուքաղ-Սինճան ուղղությամբ թուրք-քրդական լայնածավալ նոր հարձակման վտանգը և միջազգային իրավիճակը (գերմանացիները գրավել էին Պետրոգրադը, Օդեսան, Խարկովը) խորհրդակցելով Սամվելի, Լևոնի, Տիգրանի և Դանիել վարդապետի հետ, առանց սպասելու Կ. Համբարձումյանի ժամանմանը, մարտի 21-ին ռազմական խորհրդի անունից Ժամհարյանին հրամայում է թողնել Ոստանը և նահանջել Անգղ: Սրտի խոր կսկիծով խոսելով վերջնական նահանջի մասին՝ Վանի գավառի կոմիսարի օգնական, Վանի Շրջանային վարչության անդամ Հ. Մանուկյանը հիշում է. «Երեք ամիս է, որ Վասպուրական մնացեր է ինքն իրեն, ո՛չ կապ և ոչ յարաբերութիւն. այդ պայմաններու մէջ հարկաւ դիմադրութիւն ցոյց տալ հնարաւոր չէր: Հայութիւնը չի կրնար կազմակերպուիլ, և այդ է իր միակ դժբախտութիւնը: Ահա դեկավար շրջան մը Վանի մէջ. ո՛չ մէկ ջանք, միջոց մը, ո՛չ մէկ ձեռնամխութիւն, թէլէֆոն տալ և առնել՝ ահա բոլորը. դժբախտ ենք և պիտի կոտորուինք... Կովկասը տակնուվրա, ճակատը՝ բաց և թշնամին առագաքայլ կը յառաջանայ. բուռ մը հայութիւն պաշարուած թշնամիներով և դաժան պայմաններով»[1]:

2.5. Վան-Վասպուրականի ազգաբնակչության վերջին՝ 1918 թ. մարտյան գաղթը, պետականության անկումը և նահանգի դատարկումը:

Վասպուրականի երկրորդ կառավարությունը, խորհրդակցելով Դաշնակցության կենտրոնական կոմիտեի հետ և հաշվի առնելով այն, որ այլևս քիչ ուժերով հնարավոր չէր դիմակայել թուրքական ու քրդական արյունկզակ մեծաթիվ բանակին, 1918 թ. մարտի 21-ի (ըստ Ա. Հացագործյանի՝ մարտի 28-ը հ.տ.[1]) երեկոյան ժամը 16-ին հրամայում է ժողովրդին պատրաստվել ու անհրաժեշտության դեպքում Բերկրիի գծով նահանջել դեպի Իգդիր-Երևան: Արդեն երկու օր էր՝ ինչ Վանում փակվել էին բոլոր հաստատությունները, իսկ Վանի շրջակայքի բնակիչներն արդեն ատիճանաբար տեղափոխվում էին ավելի ապահով վայրեր: Դեպքերի անմիջական ականատես Եղիշե Վարդանյանի կարծիքով՝ «... Երկինքի Աստուածն անգամ կարծես տրամադիր չէր այլևս տկարի աղօթքն լսելու, կարծես իր յաւիտենական լուսթեամբ հասկցներ կ'ուզէր թէ - Զա՛րկ, որ ապրիս, իրաւունքը հզօրին է»[2]: Ամենուրեք քաղաքի փողոցների պատերին փակցվեցին գաղթն ազդարարող հայտարարություններ: «Հայրենակիցնե՛ր, - նշվում էր հայտարարություններից մեկում, - Սիրտ ենք նահանջեցնել ժողովուրդը, թեթև յարմարութիւններով, ոչինչ աւելորդ մի՛ վերցնէք: Զինուած ուժերը տրամադրելի պիտի մնան զինուորական մարմնին նահանջը ապահովելու համար: Ժողովուրդը հիմա պէտք է դուրս գայ վաղ երեկոյ Բերկրի հասնելու համար: 918, 21 մարտ, Զին. Մարմնի կողմէ Գրիգոր, Վան»[3]:

Խառնաշփոթ իրադրության պայմաններում նահանջելու մասին որոշումը ճիշտ էր, քանի որ թուրքական բանակը երկու ուղղություններով՝ աջ թևով դեպի Ոստան, իսկ ձախ թևով՝ Արճեշի վրայով առաջանում էր դեպի Վասպուրականի խորքերը և դեպի Բերկրի-Կալա:

Բանն այն է, որ արդեն երկու օր էր՝ ինչ Վանում փակվել էին բոլոր հաստատությունները, իսկ Վանի և շրջակայքի բնակիչներն արդեն ատիճանաբար տեղափոխվում էին: «... Երկինքի Աստուածն անգամ կարծես տրամադիր չէր այլևս

[1] **Մանուկեան Հ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1938, յունուար, թիւ 3, էջ 90-91:

[1] **Հացագործյան Ա.**, Բ. Վասպուրականի երկրորդ հայկական կառավարությունը կամ Վանի նահանգային ինքնավար կոմիսարությունը, ԲՅԱ, 1969, թիվ 1 (22), էջ 220:

[2] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 21:

[3] Պատմության թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան (ՆՊ ԲՄ), թիվ 839, արկղ 4, գ. 195, թ. 235, նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 10, թիվ 85:

ակարի աղօթքն լսելու, կարծես իր յաւիտենական լռութեամբ հասկցներ կ՛ուզէր թէ - Ձա՛րկ, որ ապրիս, իրաւունքը հզօրին է»[1]*:*

Սակայն, հայատարարութիւնը ոչ միայն տարօրինակ էր, այլև միանգամայն անհասկանալի, քանի որ Վանից Բերկրի (չխոսելով Հայոց Ձորի ազգաբնակչութեան մասին) հասնելու համար, ոչ թէ 24, այլ 64 ժամն էլ դեռ քիչ էր:

Գաղթի մեկ այլ հայատարարութեան մեջ ազդարարվում էր. 10-12 ժամվա ընթացքում կտրել 52 կմ ճանապարհ և հասնել Թիմար գավառի Ջանիկ գյուղը: «Հայրենակիցնե՛ր, Վարիչ մարմնի այս կէսօրից յետոյ կայացած վճռի համաձայն՝ հրահանգուում է անմիջապէս թողնել քաղաքը և չուտափոյթ նահանջել դէպի Ճանիկ: Ամէն կերպ ջանացէ՛ք մինչև վաղ առաւօտեան Ճանիկ հասնել: Հետագայ կարգադրութեան մասին կը տեղեկացուի Ճանիկում»[2]*:*

Նահանջի հայատարարութիւնն անսպասելի անակնկալ էր «հաղիւհազ վերաշնչել և վերաշինել սկսող չքնաղատեսիլ... Այգեստանի»[3] *ժողովրդի համար: Կարծես թե կրկնվում էր 1915 թ. հուլիսյան մեծ գաղթի ողբերգությունը, որի աննկարագրելի ահն ու սարսափը մթագնել էր ժողովրդի գիտակցությունը: Գաղթի հրամանի չտապողականութիւնը չփոթեցրել և չշմեցրել էր Վանի ազգաբնակչութեանը: Թեև ոչ ոք չէր ուզում գաղթել, սակայն ուրիշ ելք չկար: Այդ մասին Հ. Մանուկյանը վերհիշում է. «Ժողովուրդը կապրի չափազանց արիւնաքամ բոպէներ: Նահանջի տրամադրութիւն չկայ, նկատի ունենալով անկարելիութիւնը: Շատախցի Պազիկը ներկայացաւ կոմիսարներու Խորհրդի նախագահին և հարցուց, թէ ո՞վ կուզէ նահանջ, ո՞վ կուզէ մնալ. «նահանջ մարդկութի՞ւն է, նահանջ մեռնել է. երկու տարի ապրեցանք, բայց ի՞նչպէս, ո՛չ մենք չենք ուզեր նահանջ, մենք կուզենք մնալ, կուլլ և մեռնիլ»*[4]*:*

[1] **Վարդանեան Ե.**, «Նահանջ բիւրոց» Վասպուրականի, էջ 21:

[2] **Սարիաղեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 174:

[3] **Անդ**:

[4] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ,

Ով չէր ցանկանում թշնամու կոտորածին ենթարկվել, պիտի փախչեր, հեռանար՝ առանց մի վայրկյան իսկ կորցնելու:

1918 թ. մարտի 21-ը ահավոր սգի օր էր Վան-Վասպուրականի հայերի համար: Այն վերջին ու անվերադարձ նահանջն էր, որն ինչպես Ա. Հացագործյանն է նկատում՝ «խոր վշտի և հուսահատության մատնեց գեղեցիկ երազներով Վան վերադարձած և երեք ամիս անկախության քաղցրությունը վայելած վասպուրականցիներին»[1]*:*

Վան-Վասպուրականի դժբախտ ժողովուրդը, որն այնքան մեծ ոգևորությամբ, ուրախությամբ և ապագայի չողչողուն հույսերով իր հարազատ երկիրն էր վերադարձել, տեր կանգնել իր օջախին և կարճ ժամանակահատվածում իր քրտնաջան աշխատանքով և բոլորանվեր ջանքերով սկսել էր իր քանդված բույնը վերաշինել, «ահավասիկ անգութ բախտի բերմամբ և նամարդ թշնամու ահաբեկման սարսափով»[2] *իր անհեռատես ղեկավարության պատճառով, չկարողանալով օգտվել իրեն ընծայված իրատեսական հնարավորություններից, այս անգամ մեկընդմիշտ կորցնում է իր հարազատ հայրենիքը, որին այնքան սիրով և կարոտով էր փարված: Վասպուրականը «քանդվեց» չորրորդ անգամ՝ բռնելով մի նոր տառապանքի ճանապարհ: Այդ մասին ականատես Մխիթար Գևորգյանը նշում է. «...մենք 1918-ի մարտ 28-ին գաղթեցինք մեր պաշտելի հայրենիքէն՝ թողնելով ոչ միայն մեր տունն ու տեղը, արտերն ու այգիները, այլև Վասպուրականի կապուտակ երկնակամարը, մեր սրբազան տաճարներն ու հոյակապ վանքերը, ինչպէս և մեր բիւրաւոր մեռեալներն ու գերեզմանները»*[3]*:*

1938, յունուար, թիւ 3, էջ 91-92:

[1] **Հացագործյան Ա.**, Բ. Վասպուրականի երկրորդ հայկական կառավարությունը կամ Վանի նահանգային ինքնավար կոմիսարությունը, ԲՅԱ, 1969, թիվ 1 (22), էջ 220:

[2] **Սարիաղեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 176:

[3] **Գէորգեան Մ.**, Վասպուրականէն՝ Պաղտատ և Պասրայի անապատները, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1965, թիւ 2, էջ 41:

Մարտի 21-ի երեկոյան ժամը 18-ին Վանից դուրս եկավ գաղթականների առաջին քարավանը[1], այն դեպքում, երբ թիմարցիներն ընդհանրապես տեղեկություն չունեին գաղթի մասին: «Հառաչանք, վազվզոուք, հայհոյանք, անէծք, իրարու կը յաջորդեն», - ահա այսպես է ներկայացնում գաղթի առաջին տպավորությունները ժամանակի պարբերականներից մեկը[2]:

Մարտի 21-ի երեկոյան ժամը 19-ին Վանի երկրորդ կառավարության Ռազմական խորհրդի անունից Ռազմական վարիչ (կոմիսար) Գ. Բուլղարացին հրամայում է պորուչիկ Տ. Ժամհարյանին թողնել Ոստանը և նահանջել մինչև Անգղ՝ հաղորդելով միաժամանակ, որ Վանի և շրջակայքի բնակիչներն արդեն տարհանվել են[3]:

Ոստանի ուժերը նոր էին հասել Վան, երբ մարտի 22-ի առավոտյան ստացվեց Գրիգոր Բուլղարացու նոր հրամանը՝ ուղղված Ոստանի և Առնիս-Արճեշի ինքնապաշտպանության մարտիկներին՝ նահանջել մինչև Վան և դրանից էլ այն կողմ: Ընդ որում Բուլղարացի Գրիգորը պահանջում էր չտապել, քանի որ Առնիսում վիճակը վատ էր և անհրաժեշտ էր անհապաղ անցնել Բերկրի-կալայի լեռնանցքը՝ շրջապատման մեջ չընկնելու համար: Այդ մասին պորուչիկ Տիգրան Ժամհարյանը[4] հիշում է. «Մարտի 22-ի ցերեկւա ժ. 3-ին ևս ժամանեցի էվակուացւված Վան: Քաղաքը հրդեհների մեջ էր, թնդանօթային պահեստը հրկիզւել էր, և ամենուր հնչում էին արկերի և փամփուշտների բարձրաձայն պայթիւններ»[5]:

[1] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81:

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 10, թիւ 85:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 4:

[4] Հայկական V հրաձգային հարվածող գնդի պորուչիկ Տիգրան Ժամհարյանի «Վանի վերջին նահանջը» զեկույցը՝գրված 1919 թ. մարտի 21-ին, ավելի հանգամանորեն տես **Սահակյան Ռ. Օ.**, Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2011, թիվ 1-2 (630), էջ 336-362:

[5] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 4:

Բայց ժամանակակցի հավաստմամբ. «Զարմանալին այն էր, որ ոչ լացու կոծ կար, ոչ ալ խուճապային իրարանցում»[1]:

Գնդապետ Տիգրան Բաղդասարյանը, որ մարտի 20-ի դիշերվա ժամը 1-ին Վանից մեկնել էր Առնիս, Առնիս-Արճեշի ինքնապաշտպանության ղեկավար, մահացու վիրավորված՝ ենթապորուչիկ Մ. Գասպարյանի փոխարեն տեղի զինվորական գունդը ղեկավարելու համար և ապահովելու Բերկրիի գծի անվտանգությունը: Այնտեղ հասնելուց և ամեն ինչ խառնակ ու խառնված տեսնելուց հետո նա, ստիպված, մարտի 23-ի վաղ առավոտյան Բերկրիից հեռախոսով կապվում է Փանդ՝ Կոստի Համբարձումյանի, Գրիգոր Բուլղարացու և Սամվել Մեսրոպյանի հետ ու հայտնում հետևյալը. «Առնիսն արդէն ընկած է, մերոնք (խոսքը զորքի մասին է, - Ա.Հ.) սկսել են նահանջել անորոշ ուղղութիւններով, կացութիւնը լուրջ էր ու վտանգաւոր, մերոնց բարոյական կորովը վերականգնելու ոչ մեկ միջոց չկայ»[2]: Քանի որ հնարավորություն չկար Առնիսի երկու թնդանոթները հասցնել Ջանիկ, Կ. Համբարձումյանը մարդիկ է ուղարկում՝ թնդանոթները տեղում պայթեցնելու համար[3]:

Գաղթող ժողովրդին սննդամթերքով ապահովելու համար Գրիգոր Բուլղարացու հրամանով սայլերի վրա են բեռնվում նախապես պահեստավորված բրինձի, այլուրի, չաքարի, յուղի և մսեղենի պաշարների 1/3-ը, որոնց նկատմամբ հաստատվում է հսկողություն: Իսկ մնացածը տեղափոխելու անհարմարության պատճառով հրկիզվում է[4]:

Բերկրիի ճորն ամուր պահելու, նրա պաշտպանությունը հաջող կազմակերպելու ակնկալիքով նախապես այնտեղ էր ուղարկվել Ոզմեցի Ասլանը, որը Սաֆարլիից տեղափոխվել

[1] **Գէորգեան Մ.**, Վասպուրականէն՝ Պաղտատ և Պասրայի անապատները, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1965, թիւ 2, էջ 41:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81, նաև՝ «Հորիզոն», 1918, մայիսի 10, թիւ 85:

[3] **Սերինե**, Վեպ, որն այդպես էլ չգրվեց... Նյութեր ապագա վեպի համար, «Նորք», 1991, թիվ 4, էջ 139:

[4] **Սարիաղեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 174:

էր Բերկրի և նույնիսկ օգնել ճիավոր մի խմբի անցնմանը՝ կիրճով: Սակայն, մի քանի օր սպասելուց հետո, ստիպված է լինում նահանջել Բայազետ: Արդյունքում՝ խզվում է կապը կառավարության անդամների հետ:

Մարտի 22-ի երեկոյան ժողովուրդն անկարգ, անկանոն հասնում է Վանից 50 կմ հեռու գտնվող Թիմարի Ջանիկ ու Փանզ գյուղերը: Ահա թե ինչպես է նկարագրում գաղթի ճանապարհը Ա. Կյորկիզյանը. «...Գիշերուան խաւարը իր տակ ծածկած է Բանդէն մինչև Կէօլու երկարող ճանապարհի եզերքներուն փռուած վասպուրականցիները, որոնք ամենուրեք պզտիկ կրակներ վառած, իրենց ցրտահար մարմինները տաքցնել կը փորձեն, իսկ ոմանք ալ՝ կերակուր եփելու համար... Վախ համարեա թէ չկայ. կան միայն յուզում և տարօրինակ չփոթութիւն... Վանի Զինուորական Մարմինը և Կոմիսարներէն մաս մը, լաւ ձիերու վրայ նստած, Բանդ կը հասնին, իրենց եռանը թողելով Ոստանի խրամներուն մէջ դեռևս թշնամիին գնդակներուն կուրծք տուող հերոս զինուորները և Բանդէն մինչև Կէօլու երկարող ճանապարհին փռուած 30.000 ժողովուրդը... որ կը ցանկայ չուտ կարելանցնիլ նահանջի ճանապարհը...»[1]:

Իսկ դեպքերի մեկ այլ ականատես Սիրաք Սարհադյանը հիշում է. «Նորից աղմուկ, աղաղակ, թոհ ու բոհ, նզովք ու հայհոյանք... Աճապարանքն ու խուճապը կարծես խենթացրել էր մարդկանց: Հեռանալ, փախչել ու ազատուել տեսած ու ճաշակած նախկին աղէտ-չարիքից: Ամենքն անխտիր ենթարկուել էին սուգ ու շիւանի խելակորոյս և շնչասպառ վազքին: Այս անգամ կարծես ոչ մէկը ուրիշին ճանաչել չէր ուզում, թէկուզ այդ ուրիշն իր հարազատը լինէր: Վայը եկել էր այն թշուառին, որ այդ կարճ ժամանակամիջոցում չյաջողէր իրեն Ճանիկ հասցնել: Նա կորած կը լինէր: Գիշատիչ գայլի անճար ու անպաշտպան որսն էր դառնալու»[2]:

[1] **Կէօրկիզեան Ա.**, Անմոռանալի յուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի գուլումի տարիներուն, Ազգային դէմքերու և դէպքերու կապակցութեամբ, էջ 105-106:

[2] **Սարիադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 174:

Այն, ինչ որ տեսավ վասպուրականցին մարտի 23-ին Թիմարի Փանզ ու Ջանիկ գյուղերում, ամենասարսափելին ու ամենազարհուրելին էր: «Ճանիկը, - գրում է Ս. Սարհադյանը, - վերածուել էր լաւայից ժայթքող մի խառնարանի: Ամէն տեղ չփոթ, իրարանցում, աղմուկ, աղաղակ, կանչ, փնտրտանք, լաց ու կոծ: Սպասողական ջղային լարուածութիւն և կոչմարային անորոշութիւն: Ոչ մէկն իր անելիքը չգիտէր... Աննկարագրելի չփոթն ու աճապարանքը մարդկանց գժւեցրել, խենթացրել էր»[1]:

«Ճանապարհը սև տողանցքի մը նմանեցաւ, - գրում է դեպքերի ականատես Արմենակ Մաքսապետյանը, - որը չարունակուեցաւ մինչև յաջորդ օրւայ կէսօրին, երբ Ջանիկը թողինք, ինչպէս որ թողած էինք Ոստանի զինուորները: Ջանիկը վերածուեցաւ խառնարանի մը, ուր ամէն ինչ կար, բացի գիտակցութենէ: Սինեմաներու մէջ Վերդունի նահանջը տեսած եմ և համեմատած մեր այդ նահանջի հետ: Ի՞նչ նմանութիւն»[2]:

Ջանիկի ճանապարհին վասպուրականցին իմացավ, որ մոտակա գյուղերի փոքրաթիվ թուրքերն ու քրդերը դեպքերից անտեղյակ և հայերից առավել խուճապահար՝ փախչում էին Արճեշ[3]:

Ջանիկում նախ զինվորներին, ապա կարիքավոր գաղթականներին բաժանվեց 10 կառքերով Վանից Ջանիկ տեղափոխված կենսամթերքների կեսից ավելին: Սակայն, չարացած ժողովրդի մեծամասնությունը, լինելով կարիքավոր, կողոպտեց մնացած կենսամթերքները և նույնիսկ ցանկացավ ջարդել դատարկ կառքերը և առևանգել դրանց լծված ձիերը, որը, սակայն, կանխվում է զինվորների կողմից: Համբերությունից դուրս եկած նահանջող այդ ժողովուրդը ճգտում էր «ո՛չ միայն խլել ու կողոպտել, այլև նաև ջարդել ու փշրել,

[1] **Սարիադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 175:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 111, նաև Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 124:

[3] **Սերինե**, Վեպ, որն այդպես էլ չգրվեց... Նյութեր ապագա վեպի համար, «Նորք», 1991, թիվ 4, էջ 139:

խորտակել բոլոր նրանց, որոնք ի վիճակի չէին եղել իրենց անվտանգութեան և ապահովութեան մասին ժամանակին մտածել...»[1]:

Գոյութիւն ուներ գաղթի երեք ճանապարհ. 1) Վան-Թիմար-Բերկրի-Սոուկսու-Սաֆալու-Բայազետ-Մոսուն-Խալֆարլու-Իգդիր-Երևան[2]*: 2) Սարայ-Արճակ-Աղբուլաղ-Բերկրի-Խոյ-Երևան և 3) Խոշաբի վրայով, Կոտուրի կիրճով դեպի Սալմաստ ձգվող ճանապարհները*[3]*: Առաջին երկու ճանապարհներով կարողացան անցնել միայն Վան քաղաքի և արվարձանի 1500-3000 ազգաբնակչութիւնը (ըստ Թեոդիկի՝ 4000-5000 հոգի)*[4] *և 900 (1200) հայ զինվորներ, որից հետո Բերկրիի գիծը փակվեց, քանի որ այն չրջապատվեց թուրքական կանոնավոր զորամասերով ու քրդերով և որի հետևանքով «1915 թվի յուլիսեան մեծ նահանջը, իր սարսափով կենդանացաւ ժողովուրդին առջև»*[5]*: Մտաբերելով Բերկրիի կիրճով անցնելու սարսափները՝ դեպքերի ականատես Արբրահամ Գրիգորյանը հիշում է. «Բերկրիի-ձո՛ր... դերեզմանը Վասպուրականի հայութեան, գաղթականի ցուպը ձեռքերնիս քանիերորդ անգամն է, որ կուգանք ու կանցնենք այս ճամբարներէն, որ դաւադիր թշնամու գնդակներուն տակ զոհ դարձած ենք միշտ ու միշտ»*[6]*:*

Բերկրին անցած և սահմանի մյուս կողմում հայտնված գաղթականները ճանապարհին հանդիպում են Վանի գնդի 2.500-ից ավելի զինվորների, որոնք գնում էին Վան-Վասպուրականին օգնության: Այդ մասին Կ. Սասունին նշում է. «Վասպուրականի ժողովուրդը, ապրիլի վերջերը, Արարատեան բարձունքներէն, ձիւնէ հիւսի մը պէս, վար կ'իջնէր դէպի Սուրմալու: Այս հսկայ բազմութեան հետ երևակայեցէք հարիւր հազարաւոր մեծ ու փոքր անասուններու հօտեր, բռնած ամբողջ դաշտի լայնութիւնը, ամէն ինչ աւերող մարախի պէս, ալիք առ ալիք կ'առաջանար: Այս զանգուածն էր, որ մնաց Հայաստանի հանրապետութեան (տակաւին չկազմուած) սահմաններու մէջ: Ձափեց երկրի լայնքն ու երկայնքը, գալարուեցաւ վտանգներու ցանցերուն մէջ, արիւնոտեցաւ ու արիւնոտեց, բայց զօրացաւ և արմատ ձգեց նորակազմ Հայրենիքի հողին խորքը, և հայկական դիմագիծ տուաւ անոր»[1]*:*

Արևելյան Հայաստան հասած վասպուրականցիները տեղավորվում են Երևանի ու Էջմիածնի շրջաններում, իսկ Վասպուրականի զինված ուժերը, վերածվելով կանոնավոր գնդի, շարունակում են մնալ գնդապետ Տ. Բաղդասարյանի (որի օգնականն էր խմբապետ Ասլանը) հրամանատարության տակ՝ կտրված մնալով ժողովրդական զանգվածներից:

Մարտի 23-ին Բերկրի է շարժվում նաև Սարայի շրջանի մի քանի գյուղերի և Արճակ գավառի 22-23 հազ. ազգաբնակչությունը, որին հարկավոր էր ապահով կերպով անցկացնել վտանգավոր Աղբուլաղից: Եկել էին ասորի Մելիքը, Լազարը և Արսեն Զուբախիկյանը, որոնք խորհրդակցում են Հասփոտանցի Հովսեփի ու Միհրան Դալլաքյանի հետ և մի կերպ ժողովրդին՝ թվով 1500 հոգու, ապահով հասցնում են Բերկրիի Գործոթ գյուղը, բայց ճանապարհին Քյարաբեկի քրդերը հարձակվում են հայերի վրա: Զորաժամյա կռվից հետո, այդուհանդերձ, ժողովուրդն ապահով անցնում է Բերկրիի կիրճը: Քրդերին միայն հաջողվում է տանել 500 գլուխ ոչխար: Շուտով Վարդան Մոկացյանը հայտնում է, որ Բերկրիի գիծը փակ է ու կտրված, և ժողովուրդը ստիպված գիշերվա ժամը 1-ին հետ է շարժվում դեպի Սարայ, որից ժողովուրդը դեռ չէր էլ տեղաշարժվել: Այս հանգամանքը գալիս է ապացուցելու մարտյան նահանջի անկազմակերպ բնույթը:

---

[1] **Սարիադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 176:

[2] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 13, թիւ 78:

[3] Անդ:

[4] **Թեոդիկ**, Ամէնուն տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 113:

[5] Վասպուրական. 1915-1930, էջ 111, նաև՝ Վան-Վասպուրականի հերոսամարտը, 75, էջ 111:

[6] «Հայրիզոն», Թիֆլիս, 1918, մայիսի 19, թիւ 93:

[1] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, էջ 173:

Քրդերը լսել էին վասպուրականցիների նահանջի լուրը: 1918 թ. մարտի 23-ին՝ ուշ երեկոյան, Մհմեդիկի ձորում նրանք հարձակվում են ժողովրդի վրա: Խիստ ակտիվանում են ու ոտքի կանգնում նաև Արճակ գավառի արևելակողմում գտնվող Նոշարի չրջանների քրդերը, որոնք խմբերի բաժանված՝ հարձակվում են գաղթող ժողովրդի վրա՝ կոտորելով ու թալանելով նրանց: Ի վերջո Արճակի ժողովուրդը գաղթականներին հասնում է Սարայում[1]:

Վասպուրականի հայերի մի ուրիշ խումբ՝ Հազարենի, Բողազքեսենի, Տաղվերանի, Սևանի, Լիմ ու Զարանց գյուղերի բնակիչները՝ բողազքեսենցի Ավագի գլխավորությամբ, շարժվում են դեպի Բերկրի՝ վանեցիների քարավանին միանալու համար: Նոշարի քրդերը սրանց վրա ևս հարձակվում են, բայց գյուղերի ղեկավարները կազմակերպում են դիմադրություն՝ ապահովելով իրենց ժողովրդի չարժընթացը դեպի Սարայ, որտեղ միանում են գաղթող ժողովրդին: Շուտով ժողովրդի հետևից գալիս են նաև Մուրադի, Ազատի, Գարեգինի և այլոց վաշտերը, որոնք ճանապարհին մնացած բոլոր հայերին՝ ծեր, երեխա, հիվանդ, անկար, բերում են իրենց հետ և սավարացնում կռվող զորքերի թիվը:

3) Խոշաբ-Կոտուր-Սալմաստ երրորդ ճանապարհով չարժվեց բնակչության մեծ մասը՝ 25-30 հազ. հոգի (ըստ Թեոդիկի՝ 12 հազ. հոգի[2]), որից 2.000-ը կռվողներ էին՝ Կոստի Համբարձումյանի, Տիգրան Ժամհարյանի, Լևոն Շաղոյանի, Բուլղարացի Գրիգորի և ուրիշների գլխավորությամբ:

Թուրքերի կողմից Բերկրի Կալայի գրավումից հետո, երբ փակվում է Վան-Երևան գիծը, թուրքերը ջանք են թափում երկու կրակի մեջ առնելու և բնաջնջելու Վանի և Ոստանի ժողովրդին և զինված ուժերին:

Գաղթը հաջող կազմակերպելու և ժողովրդին ոգևորելու գործում մեծ դեր է խաղում ժողովրդից ավելի չուտ Փանոս Հասած Կոստի Համբարձումյանը, քանի որ Վանի հասարակական որոշ գործիչներ՝ Ներքին գործերի կոմիսար Համայակ Մանուկյանը, պարենավորման կոմիսար Զավեն Կորկոտյանը, Ոզմեցի Ասլանը, Զինվորական կոմիսար Գրիգոր Բուլղարացու ընտանիքը, հոգևոր առաջնորդներ՝ Եզնիկ և Դանիել վարդապետները Ալջավազ-Արճեշի, Վերին Թիմարի որոշ գյուղերի ու Բերկրիի բնակիչները՝ չուրջ 3000 վանեցիներ և 1200 կռվողներ Ջանիկից-Սարայի վրայով արդեն հեռացել էին Վանից, անցել էին Բերկրի կիրճը՝ թողնելով ժողովրդի մեծ մասին ու Ոստանի 1200 զինվորներին թուրքական գերության մեջ: Միաժամանակ, նրանք խորհուրդ են տալիս Փանդում գտնվող ղեկավարներին՝ թողնել Բերկրիի գիծը և ժողովրդին տանել Արճակ-Սարայ գծով դեպի Խոյ-Ջուլֆա-Երևան: Սա դժվարին, սակայն միակ ուղին էր: Այդ մասին Տ. Ժամհարյանը հիշում է. «Հասնելով Գելլի՝ ես հանդիպեցի հետ գնացող գաղթականներին: Իմ այն հարցին, թե ի՞նչ է պատահել, նրանք ասացին հետևյալը. «Բերկրի-Կալան արդեն գրավված է թուրքերի կողմից, ճանապարհը կտրված է, Գ. Բուլղարացին և մյուսները ասացին, որ ժողովուրդը հետ վերադառնա գյուղերը, իսկ բոլոր զինվածները և ընդհանրապես տղամարդիկ, ճղում-անցնում էին՝ ով ինչպես կարող է»[1]:

Սակայն, հետո պարզվեց նաև, որ Արճակ-Սարայ ճանապարհը ևս բռնված էր թուրքերով ու քրդերով:

Այս իրարանցման և խառնաշփոթության պայմաններում Գրիգոր Բուլղարացին Կ. Համբարձումյանին խորհուրդ է տալիս՝ «Լսիր Կոստյա, հիմա ի՞նչ ժամանակն է ժողովրդի մասին մտածելու, արի մեկնենք ու վերջ»: Սակայն հին փիդայու մտադրությունը բացասական երանգ է թողնում Կոստիի մոտ և ինչպես ինքն է հիշում՝ «այդ պահից ես դադարեցի նրան հարգելուց»[2]: Դրանով նա կորցրեց իր հեղինակությունը և վստահությունը ժողովրդի մեջ և մինչև Սալմաստ այլևս չմիջամտեց հետագա գործերին:

[1] Կէօրկիզեան Ա., Անմոռանալի Ցուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն, Ազգային դէմքերու և դէպքերու կապակցութեամբ, էջ 107:

[2] Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ժ-ժդ տարի, 1916-1920, էջ 113:

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 96, թ. 4:

[2] Անդ:

Ջանիկում «Վասպուրականի ճակատագրի հետ խաղացող» Ջինվորական մարմինը և Կոմիսարների խորհուրդը մարտի 23-ի առավոտյան դռնփակ նիստ է գումարում՝ հետագա անելիքները պարզելու և ժողովրդին հետագա անորոշ և վտանգավոր դրությունից ազատելու համար: «Վայրկեաններ ծանր էին ու ահաւոր, - հիշում է դեպքերի ականատես Ե. Վարդանյանը: - Շփոթուած ժողովուրդ առանց բացառութեան կորանցուցած էր իր պաղարիւնութիւն, բերանաբաց ու ակնապիր կը սպասէր, վստահ ըլլալով, որ իր առաջնորդներ ղեկավարների վայել յատկութեամբ մը ի վիճակի պիտի ըլլային ժողովուրդը ազատել այս տարօրինակ դրութենէն, ցոյց պիտի տային միջոց մը, պիտի մշակէին ծրագիր մը՝ որ պիտի փառաւորէր իրենց և Վասպուրականի անունը: Վախ համարեայ թէ չկայ, կայ միայն շփոթ և տարօրինակ անորոշութիւն»[1]:

Անխղճորեն առաջարկվում է երեք տարբերակ. ա) անելանելի դրությունից դուրս գալու միակ ելքը կռվով ճեղքելն էր թշնամական օղակումը: Սակայն նման մեծ բազմությամբ՝ հիվանդներով, ծերերով, երեխաներով, ըստ էության, անհնարին էր, բ) ընտրել կորուստներից փոքրագույնը՝ յուրաքանչյուր ընտանիք իր ճեռքով պետք է գնդակահարեր քայլելու անընդունակներին... անխուսափելի մահից մյուսներին փրկելու համար[2], գ) «Ջինուած ձիաւորները չարքի, իսկ ժողովուրդը ճերմակ դրօշակ պարզած՝ թող վերադառնայ իր տեղը և յանձնուի...»[3]:

Վերջապես, ընդունվում և տարածվում է դավաճանական այն որոշումը, որ Փանգում գտնվող «զինուած ու քալելու ընդունակ եղողները կամ գրաստ ունեցողները առաջ չարժուին Դարաբէկ-Արճակ-Սարայ ուղղութեամբ»[4], իսկ բախտին

[1] Վարդանեան Ե., «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 48:

[2] Սերինե, Վեպ, որն այդպես էլ չգրվեց... Նյութեր ապագա վեպի համար, «Նորք», թիվ 4, էջ 139:

[3] Կէօրկիզեան Ա., Անմոռանալի յուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի գուլումի տարիներուն, Ազգային դէմքերու և դէպքերու կապակցութեամբ, էջ 106:

[4] Վասպուրական. 1915-1930, էջ 111:

թողնված հուսահատ, լքված և անտեր մնացած ժողովուրդը, սպիտակ դրոշները պարզած, ետ պիտի վերադառնար իրենց տներն ու հպատակվեր թուրքերի ողորմածությանը: Այդպիսի անճարակ և ազգադավ որոշումն իր հայրենակիցների համար, որ կայացրել էին Վան-Վասպուրականի գլուխը կորցրած ղեկավարները, չէր կարող կատարել և ոչ մի կառավարություն: Դա Լևոն Շաղոյանի բացակայության արդյունքն էր, ով, վիրավոր լինելով, պառկած էր Ջանիկում, ինչից օգտվելով՝ կառավարության տատամսող անդամները ճնշում էին գործադրել Կ. Համբարձումյանի վրա և բեկանել նրա կարգադրությունը:

Որոշումը լսելուց հետո ժողովուրդը սկսում է ողբալ, աղաղակել, և իրարանցում է տեղի ունենում: «Ամէն կողմից դժգոհութեան, գանգատի, բողոքի և հայհոյանքի պոռչտուք-աղաղակներ էին լսւում, - տեղեկացնում է Ս. Սարհադյանը: - Ընչի՞ համար մեզ մինչև էսօր խաբար չարաք: Ընչի՞ մեզ Իգդիր չէք տանի: Տաճկից կուզէք ազատել մէ ուրիշի ձեռքը տալու համար: Վայն իկէ մեր գլխին, որ ձեզ պէս առաջնորդ-գլխաւորներ ունենք»[1]:

«Խելացի և անճնվեր» ղեկավարները, լքելով ժողովրդին, փորձում են բռնել Դարաբեկ գյուղի ճանապարհը՝ դեպի Արճակ-Սարայ՝ թողնելով 30.000-ից ավելի ժողովրդին անպաշտպան վիճակում: Սակայն, կառավարության այդ որոշումը փոխվում է, որովհետև ժողովրդի մեջ եղած զինված մարդիկ պահանջում են, որ Դարաբեկի ճանապարհը բռնեն նաև ժողովրդի չափահաս այն մասը, թե՛ տղամարդ և թե՛ կին, ովքեր կարող էին երկար քայլել, որի հետ միանգամայն համաձայնվում է կառավարությունը, առանձնապես Կ. Համբարձումյանը: Դեռ ավելին, որոշվում է զինվածներին բաժանել 2 մասի, որոնց մի մասը պիտի գնար բազմության առջևից, իսկ մյուս մասը՝ հետևից: Տեղում՝ Փանգ-Ջանիկում, մնում են ծերերը, թույլերը, անկարողները, հիվանդները և երեխաները՝ մինչև 12 տարեկան՝ գրեթե ժողովրդի կեսը: Սա-

[1] Սարհադեան Ս., Կեանքիս յուշերից, էջ 176:

կայն, եղած չատ չափահասներ ևս չեն լքում իրենց երեխաներին ու հարազատներին և մնում են տեղում՝ մի որևէ ելք գտնելու հույսով:

Շուտով, Ոստանի ճակատից ժողովրդի մնացորդների հետ Ջանիկ են գալիս զորքի հետ մնացած մասը՝ թվով 200 դինյալ հայ երիտասարդներ[1], որոնց հրամանատարները Ջանիկում ներկայանում են վիրավոր Լևոն Շաղոյանին, որ չէր մեկնել ղեկավարների հետ և սպասում էր իր զորքի հավաքվելուն: Ժողովրդասեր գործիչը ծանոթանալով իրադրությանը, անմիջապես կարգադրում է Մելքոն Գասպարյանին, Հ. Մելքումյանին (Մելքոնյանին) Մուրադ Դիլոյանին, Մելիք Աբրահամյանին, Ազատ Սիմոնյանին, Գարեգինին և Սամվել Մեսրոպյանին հայոցձորցիներից և չատախցիներից բաղկացած իրենց խմբերով ուղեկցեն ժողովրդին, աչխատեն, որ ոչ ոք չմնա գյուղերում և անխտիր ճանապարհ դնեն բոլորին՝ դեպի Դարաբեկի բարձունքները՝ դեպի Արճակ-Սարայ ուղին: Այդպես էլ արվում է: Փանզ-Ջանիկում և մյուս գյուղերում ոչ ոք չի մնում, անխտիր բոլորը չարժվում են դեպի Սարայ: Այդ քաջարի գործողությամբ նրանք կատարում են մեծ և գովելի ծառայություն՝ նահանջող ազգաբնակչության թիկունքն ապահովելու համար:

Նախապես որոշվեց չարժվել սահմանամերձ Սարայ գյուղաքաղաքը, մտնել Պարսկաստան, ապա առաջին իսկ հնարավորության դեպքում անցնել Ռուսաստան: Այն դժվարին, սակայն միակ ուղին էր: Ոչ թե «փոթորկված» կովկաս, այլ դեպի Պարսկաստան գաղթելն ուներ երկու գլխավոր պատճառ. 1) Բերկրիի անապահովությունը և 2) Միջագետքում անգլիական բանակին միանալու հավանականությունը, որը կդառնար ապահով ճակատ կազմելու երաշխիք[2]:

[1] **Սերինե**, Վեպ, որն այդպես էլ չգրվեց... Նյութեր ապագա վեպի համար, «Նորք», թիվ 4, էջ 139:

[2] **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետության տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմութեան մեջ, Բոստոն, 1927, էջ 170-171:

Սկսվում է Վասպուրականի ժողովրդի նահանջ բյուրոցը, որը ժամանակակիցների գնահատմամբ նույնիսկ անհամեմատելի էր Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցած Վերդենի նշանավոր նահանջի հետ[1]:

Ժողովրդի գաղթի ճանապարհին էր առաջին հերթին Արտավեզ գյուղի ձորը, որ ծածկված էր ձյան հաստ շերտով, որի միջով հոսում էր Սև գետը՝ վարարած, և որը մի տեսակ չարիք էր դարձել ժողովրդի համար: Բայց և այնպես, ժողովուրդը տրորում է ձյան հաստ շերտը, հաղթահարում գետի արգելքը և շարունակում իր ճամփան: Զինվորներն ամենուրեք օգնում էին ժողովրդին գետն անցնելիս:

Արճակից դեպի Սարայ ճանապարհը չափազանց դժվարանցանելի էր ձնհալքի պատճառով: Տեղացած ձյան հաստ շերտը փակել էր ճանապարհը: «Անձրևային տեղատարափը ձյունի շերտերը փափկացրել և խառնչկտել էր ցեխի կոյտերի հետ»[2]: Բացի այդ, ճանապարհը սարսափելի էր նաև այն առումով, որ հետիոտն նահանջողներից և ոչ մեկն ի վիճակի չէր նույնիսկ իր հարազատին օգնելու, քանի որ փոխադրական միջոց ունեցողները վաղուց արդեն հեռացել էին: Արդյունքում՝ «...կեանքի և մահուան կուի ճանկերում ...մէկ կողմից յուսահատական, աղերսալից օգնութեան կանչ, միւս կողմից ուժասպառ ընկրկում, նորից ոտքի կանգնելու զերագոյն ճիգ ու ջանք...»[3]:

Սակայն հուսադրողն այն էր, որ հայ զինված տղաներն ուղեկցում և օգնում էին ժողովրդին: Ստեղծվել էր 100 հոգուց բաղկացած ավանգարդային մի խումբ, որը հետախուզում էր չրջակայքը: Անվտանգության առումով 1.000 զինվորներից բաղկացած ձիավոր գունդը չարժվում էր առջևից, իսկ 4.000-5.000 զինվորներին էլ հսկում էին ժողովրդին թիկունքից և կողքից[4]:

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 111:

[2] **Սարհադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 176:

[3] **Անդ**, էջ 176-177:

[4] **Գէորգեան Մ.**, Վասպուրականէն՝ Պաղտատ և Պասրայի անապատները, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1965, թիվ 2, էջ 41:

Բնակչության հիմնական մասն իր հետ տանում էր մինչև անգամ ընտանի կենդանիներ և ոչխարի հոտեր[1]: Սակայն շուտով լուր ստացվեց այն մասին, որ Արճակ-Սարայ ճանապարհը ևս վտանգված է: Ավազակապետ Սմկոն՝ իր զինված բազմաթիվ ցեղակիցներով, իր գլխավոր կենտրոնավայրից՝ Խոշաբից, շարժվել էր դեպի Կոթուրի լեռներ՝ գաղթականների վերջին ճանապարհը կտրելու և նրանց առաջխաղացումը խափանելու համար:

Մարտի 24-ին Սարայ է հասնում Ոստանի գունդն իր քարավանով, որը որոշում է իջևանել այնտեղ և սպասել Վանի նահանգի հայության մյուս հատվածներին: Նույն օրը ընդհանուր քարավանին է միանում Վանի ժամանակավոր կառավարության նախագահ Կոստին՝ իր հետ բերելով ռազմամթերքով բեռնավորված 170 ուղտերի քարավանը:

Ամենամեծ դժբախտությունն այն էր, որ բազմահազար գաղթականներ դեռ չէին հասել Սարայ[2], քանի, որ գյուղարնակ հայերին տրված հրամանն ավելի ուշ էր տեղ հասել, ու նրանք ավելի ուշ էին անից դուրս եկել: Հետևաբար, Սարայում ժողովուրդը երկու օր հանգստանում է՝ կորածներին գտնելու, ընտանիքները միավորելու, կռվող ուժերը կարգի բերելու և ուշացածներին սպասելու համար:

Գովեստով պետք է նշել Սարայի շրջանի Նոշարի քրդերի մասին, որոնք II կառավարության ջանքերի շնորհիվ անտեսում են Կամուրջի թուրքական զորքերի հրամանատարի հրահանգը և չեն փակում գաղթող ժողովրդի ճանապարհը[3]:

Սարայում կոմիսարները, դատապարտելով իրենց նախկին սխալ որոշումը, Լևոնի և Կոստիի նախաձեռնությամբ որոշում են, որ այսուհետև նահանջն իրականացնեն միայն և միայն ժողովրդի հետ միասին: Բացի այդ, կարգի են բերվում մարտական ուժերը, ստեղծվում են առաջապահ, վերջապահ, աջ և ձախ թևային զորամասեր, որոնց հրամանատարներ են նշանակվում Սարայից մեկնելու վերջին պահին իրենց զինակից մի խումբ ձիավորների հետ Սարայ հասած Լ. Շաղոյանը, Մ. Գասպարյանը, Հ. Մելքումյանը (Մելքոնյան), Տ. Ժամհարյանը[1]: Անհրաժեշտ համարվեց նաև մի քանի ձիավոր սուրհանդակներ ուղարկել, ինչպես Խոյ, այնպես էլ Սալմաստ՝ քաղաքական և պատերազմական դրությունն ուսումնասիրելու և անհրաժեշտ տեղեկություններ հայթայթելու համար[2]:

Նահանջի ժամանակ, Առնիսում և Վան լճի կղզիներում՝ մասնավորապես Լիմում, մնացին և թուրքերին անձնատուր եղան Թիմարի ժողովրդի մեծ մասը՝ 3000-4000 հոգի, ինչպես նաև հայերի կողմից Առնիսի կռիվների մասնակից և Վանա լճի երկու մոտորանավակների հրամանատարներ՝ գերմանացի ծովապետ Վիլսոնը և նրա օգնական Կանիֆելդը[3]:

Զինված տղաները փորձ են անում կղզուց դուրս բերել այնտեղ ապաստանածներին, բայց փոխադրամիջոցներ չլինելու պատճառով (կղզի փոխադրված գաղթականները այրել էին լճի վրա եղած մակույկները) հաջողության չեն հասնում, որով մոտ 3000 հոգու կորստով, ժողովուրդը գաղթում է և բռնում Սարայի ճանապարհը[4]:

Այդ մասին Հ. Երամյանը հիշում է. «Վան ևս որ հայ միլիսներու և սակաւաթիւ ռուս զինուորներու քաջութեամբ դեռ կը պաշտպանուէր, պիտի իյնար իր կարգին վերջապէս 1918-ի մարտին, որով իբր 40 հազար հայ ժողովուրդ պիտի ստիպուէր հուսկ յետին հրաժեշտը տալ իր պաշտած հայրենիքին և ղէն ի ձեռին դիմել ղէպի Սալմաստ և Ուրմի: Իսկ յետամնաց 8-10 հազարի չափ թշուառները սովով և սրով

[1] **Մուրադյան Հ.**, Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, Երևան, 1983, էջ 97:

[2] **Սարիադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 177:

[3] **Մանուկեան Յ.**, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), «Վէմ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1, էջ 62:

[1] **Մուրադյան Հ.**, Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, էջ 97:

[2] **Սարիադեան Ս.**, Կեանքիս յուշերից, էջ 177:

[3] Պատմության թանգարան, Նոր պատմության բաժնի մատյան (ՆՊ ԲՄ), թիվ 839, արկղ 4, գ. 195, թ. 235:

[4] Վասպուրական. 1915-1930, էջ 111:

անխնայ պիտի կոտորուէին Թիմար (Վան-Տոսպ) գաւառի և Լիմ ու Կաուշ կղզիներուն մէջ»[1]:

Վասպուրականի ազգաբնակչութեան մի խոշոր մասն էլ՝ 7000 հոգի, նահանջից անտեղյակ՝ մնացել էին Ալյուրի, Թիմարի, Բերկրիի և այլ շրջաններում[2]:

Այսպիսով, Վան-Վասպուրականի 35000-36000 հայ բնակչության մի մասը՝ մոտ 3000 հոգի և 1200 զինվորներ (մոտ 4200 հոգի), Բերկրիի գծով գաղթում են դեպի Արարատյան աշխարհ, մոտ 30.000 հոգի Կոտուրի գծով անցնում է Սալմաստ, մի մասը՝ 3000-4000 հոգի (ըստ Ե. Վարդանյանի՝ 15.000 հոգի)[3], մնում է ճանապարհին՝ ապաստանելով հիմնականում Վանա ծովի Լիմ կղզում, մի փոքր մասն էլ՝ 8000-10000 հոգի, մնում է ճանապարհին ու թաքնվում գյուղերում՝ կարծելով, որ գաղթողները նորից կվերադառնան, սակայն հետագայում կոտորվում է քրդերի կողմից: Իսկ 7000-ն էլ զոհվում է գաղթի ճանապարհին:

Ո՞րն էր 1918 թ. մարտյան նահանջի նման սխուր վերջաբանի պատճառը: Պարզվում է, որ 1918 թ. մարտյան նահանջը Երևանից ստացված կարգադրության հետևանքով էրզրումի իրադարձությունների և նպատակադրված նյութական ու ռազմական միջոցների բացակայության պատճառով իրականացվեց առնվազն 15 օր ուշացումով: Սխալ հաշվարկի հետևանքով Երևանում մտածում էին հնարավորինս հետաձգել Վասպուրականի հայ ազգաբնակչության նահանջը՝ հուսալով պահել և փրկել Վանի II կառավարությունն անվերադարձ կորստից: Արդյունքում, շուրջ 30.000 վասպուրականցիներ զրկվեցին Իգդիրի ճանապարհով Երևան տեղափոխվելու հնարավորությունից՝ տարիներ շարունակ դեգերելով Պարսկաստանում և Միջագետքի տոթակեզ անապատում:

Կարելի է նշել, որ այն նաև Վանի II կառավարության վարիչ-կոմիսարների անհաշվենկատ և անհեռատես քաղաքականության արդյունք էր: Ինչի՞ վրա էին վստահ նրանք, երբ արգելեցին ազգաբնակչության նահանջն այն ժամանակ, երբ Էրզրումն ու Ալաշկերտն արդեն անցել էին թշնամու ձեռքը: Կամ՝ ինչո՞ւ մերժեցին, երբ հայկական V դիվիզիան առաջարկում էր ժողովրդին իր հետ Կովկաս փոխադրել: Հավանաբար, չէին ուզում առանց թշնամու կողմից հետապնդման թողնել և հեռանալ Վանից՝ մտածելով, որ հնարավոր էր սակավաթիվ և անվարժ զինվորներով պահել մեկուսացած Վանը: Սակայն, «...և այն րոպէին, երբ զինուորի այնքան կարիք կար, ինչո՞ւ կուսակցական ինչ ինչ ճղճիմ հաշիւներով կը հեռագրէին Կովկաս, թէ մենք ոյժ պէտք չունինք»[1]: Մի՞թե չէր կարելի կանանց և երեխաներին ճանապարհել և զինված տղամարդկանց միայն պահել:

Խոսելով 1918 թ. մարտյան նահանջի աղետաբերության մասին՝ դեպքերի ականատես և Վանի երկրորդ կառավարության անդամ Ս. Սարհադյանը նշում է. «...Վերջին նահանջի ուշացման և խուճապային բնոյթի պատասխանատուն մենք էինք: Եթէ մենք, ժամանակին ենթարկւած լինէինք Անդրանիկի և նրա գործակից զինուորականների ցուցմունքներին և Երևանի Ապահովութեան խորհրդի ու ընդհ. զօրահրամանատար Սիլիկեանի հրահանգներին, վասպուրականցիները վերջին նահանջին այդքան չէին տուժի և մանաւանդ իրենց Կովկասի հայրենակիցներից զրկւած և հեռաւոր հորիզոններից ներքև չպրտւած չէին լինի: Ինչքան հերոսական և սքանչելի եղաւ վասպուրականցիների դիմադրական պայքարն իրենցից հազարաւոր անգամ աւելի ուժեղ ու զինական կատարեալ միջոցներով օժտւած թշնամու դէմ, այնքան խղճուկ և անկազմակերպ եղան մեր՝ թէ՛ առաջին և թէ՛ ամենավերջին նահանջները»[2]:

[1] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հտ. Բ,. էջ 437:

[2] Սարիադեան Ս., Կեանքիս յուշերից, էջ 177:

[3] Վարդանեան Ե., «Նահանջ Բիւրոց» Վասպուրականի, էջ 101:

[1] «Մշակ», Թիֆլիս, 1918, ապրիլի 17, թիւ 81:

[2] Սարիադեան Ս., Կեանքիս յուշերից, էջ 178:

2.6. Վասպուրականի գնդերի մասնակցությունը Սարդարապատի 1918թ. հերոսամարտին

Երզնկայի զինադադարից հետո «տաճկական բանակը կշտացաւ ռուսի մեզ թողած անբաւ կենսամթերքէն. նա կանգնուեց, զինուեց ու կանգնեց Արեւելյան Հայաստանի սահմին»[1]:

Մայիսյան հերոսամարտերի նախօրյակին արեւմտահայ զինական միավորները բաղկացած էին Երզնկայի (Երզնկայի գունդը), Էրզրումի (Էրզրումի գունդը և Ա ու Դ գնդերը), Կարսի (3 գունդ), Խնուսի (Բ գունդը և Խնուսի և Վանի գնդերը), Վանի (հայկական Ե գունդը և Վանի Ա, Բ, Դ գումարտակները) և Մակուի գունդից: Դրանից զատ, գործում էր նաև հատուկ մի զորամաս՝ Անդրանիկի գլխավորությամբ, որի մեջ մտնում էին Սեպուհի, Մուրադի, Տեր- Ղևոնդյանի, Թորգոմի և Պանդուխտի խմբերը[2]:

Վասպուրականի գնդերը, Արևմտյան Հայաստանի հողերի լքումից հետո մտնելով Մ. Սիլիկյանի բանակի մեջ, պարտականություն են ստանում մասնակցել Արարատյան աշխարհի առաջին պաշտպանությանը:

Կազմելով հայկական բանակի մի մասը և ենթակա լինելով բարձրագույն հրամանատարությանը՝ այն սիրահոժար կանգնած մնաց նոր ճակատի վրա և չարունակեց իր պայքարը մինչև Հայաստանի Հանրապետության ստեղծումը և դրանից հետո:

Վան-Վասպուրականի 2 գնդերը, որոնց հանձնարարված էր ռուս-թուրքական սահմանի պաշտպանությունը, դիրքեր են զբաղեցնում Առհուլ գյուղի, Օրկովի, Ճիլլի և Բարթողի լեռնաշղթայի ուղղությամբ՝ մինչև Կողը գյուղը, ուր տեղակայված էր Զեյթունի գունդը: Իսկ Վան-Վասպուրականի Առնիսի զորամասը՝ Տիգրան Բաղդասարյանի հրամանատարությամբ, հանգստանալուց և վերակազմակերպվելուց հետո մեկնում է Դաշբուռուն գյուղը և Մասիսի փեշերը, որոնք գրավվել էին Արարատի քրդերի և Սուրմալուի ու Արախլիի թաթարների կողմից: Վան-Վասպուրականի այս զորամասը, գրավելով Դաշբուռուն գյուղը, պաշտպանում են Իգդիր-Մարգարա կամուրջը և ճանապարհը ու պատժում Արախլիի ապստամբներին՝ փրկելով Սուրմալուի հայերին անժամանակ նահանջի սարսափից[1]:

Բարթողի ուղղությամբ Վանի գնդերը չատ հաճախ չփման մեջ էին թուրքերի հետ: Սակայն արյունալի կռիվներ տեղի են ունենում միայն մարտի 15-16-ին, որովհետև թուրքական բանակն Արևելյան ընդհանուր հրամանատար Վեհիբ փաշայից հրաման էր ստացել անցնել ընդհանուր հարձակման, գրավել Իգդիրը և ամբողջ Սուրմալուն, ապա հարձակվել ու գրավել Էջմիածինն ու Երևանը: Թուրքերի ընդհանուր հարձակման հետևանքով սկսում են կատաղի մարտեր, բայց գլխավոր ճակատամարտը տեղի է ունենում Իգդիրի բաց դաշտում՝ մինչև Օրկովի կիրճը: Թշնամին, մեծ զոհեր տալով, ստիպված ետ է քաշվում: Իգդիրն ու Սուրմալուն մնում են աննվաճ: Հայերը նույնպես զգալի քանակությամբ զոհեր են տալիս՝ 80 հոգի, որոնց թվում և մտավորականներ: Օրկովում զոհվում են Ա գնդի հրամանատար գնդապետ Զարուխյանը, «Վան-Տոսպի» խմբագիր Վարդան Պապիկյանը և ուրիշներ: Դրանից հետո թուրքերն այլևս Իգդիրի վրա չեն հարձակվում[2]:

Այս վիճակն Արարատյան աշխարհում մնում է մինչև 1918 թ. ապրիլի 12-ը՝ մինչև Կարսի անկումը: Այնուհետև, 1918 թ. մայիսի 2-րդ կեսին գեներալ Մ. Սիլիկյանի չատը, հաշվի առնելով ճակատի լայնությունը և իր ուժերի սակավությունը, ճակատն ուղղելու և նեղացնելու նպատակով,

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 117:

[2] **Խատիսեան Ա.**, Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 44:

[1] Վասպուրական. 1915-1930, էջ 117, նաև՝ **Ափանասյան Ս.**, Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Երևան, 1991, էջ 41:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 117-118:

դատարկում և առանց կռվի թուրքերին է հանձնում Իգդիրն ու Սուրմալուն, իսկ ժողովրդին և զորքին հետ է քաշում Արարատյան աշխարհ, որի արդյունքում Արաքս գետը դառնում է սահմանագիծ հայ և թուրք ռազմական ուժերի միջև:

Այդ տարի Արաքսը խիստ վարարել էր, և անհրաժեշտության դեպքում թուրքերը հեշտությամբ չէին կարող անցնել գետը: Դրանից հետո Վանի գնդերը հրաման են ստանում կանգնել Ղամարլու-Դավալու ուղղությամբ՝ փրկելով Դավալուի հայերին կոտորածից և անխափան դարձնելով Դավալու-Ղամարլու երկաթուղին: Բանն այն է, որ թուրքաբնակ Բյույուք-Վեդիի, Ավշարի, Կարալարի, Սադարակի և Շիրազլուի թաթարները՝ թվով 5000 հոգի, շրջապատել էին Դավալուն՝ փակելով խճուղու և երկաթուղու հաղորդակցությունը:

Գիժ Սիմոնի, Փիլիպոսի, Արամի վաշտերը, Հովհաննեսի, Լևոնի հարյուրակներն իրենց անձնազոհ կռվով 1918 թ. մայիսի 24-ին տալով 7 զոհ և 23 վիրավոր՝ փրկում են իրավիճակը, ջախջախում Շիրազլուում կենտրոնացված հակառակորդի 6-7 գյուղերի զինական ուժը և հետ մղում թշնամուն, որը տալով 100-ից ավելի զոհ՝ նահանջում է մինչև Յուվա[1]:

«Հրաշք, որ ափսո՜ս չատ ուշացաւ և մարմին չստացաւ Հայկական պարի միւս կողմը, Մասիսի, Սիփանի և Բիւրակնեան լեռներու թևերուն մէջ»[2]:

Այն, որ արևմտահայերը և մասնավորապես՝ վասպուրականցիները մեծ դեր են խաղում Արարատյան դաշտի՝ Սարդարապատի և Բաշ-Ապարանի փրկության գործում, վկայում են Հայկական բանակի սպայակույտի պետ գնդապետ Վեքիլյանի թողած տեղեկությունները: Արևմտահայ զինական ուժն ուներ հետևյալ պատկերը. Վանի I և II գնդեր- 2500, 4-րդ գունդը - 1500, Պարտիզանական I գունդ - 1200, 5-րդ գունդը - 800, Պարտիզանական ձիավոր գունդը - 800, Երզնկայի գունդը - 700, II ձիավոր գունդը - 700, Հատուկ ձիավոր գունդը - 500, Սմբատի, Դալի, Ղազարի և Մուրադի խմբերը - 500, Զեյթունի ձիավոր գունդը - 500, Մակուի գունդը - 300, Սպայակույտի Պարետի գումարտակը - 200[3]:

Սարդարապատի կռվին մասնակցող զինվորների թվի 1/4-ը վասպուրականցիներ էին, որոնց մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում Վանից վերադարձած IV գնդի զինվորները[2]:

Սարդարապատի կռվողներին նվերներ, ուտելիք, ջուր, ծխախոտ հասցնելու գործում մեծ խանդավառություն և աննկարագրելի նախաձեռնություն ցուցաբերեցին վանեցի կանայք ու աղջիկները՝ արևմտահայ կանանց կոմիտեյի ղեկավարությամբ[3]:

1918 թ. մայիսի 22-28-ին Արարատյան աշխարհը փրկվում է, և հայ ժողովուրդը վերապրում է իր երկու հատվածների սերտ համագործակցության հրաշքով: Դա այն դեպքում, երբ արևմտահայը մարտնչում էր Էջմիածնի և Երևանի մատույցներում, իսկ արևելահայը լքել էր Վանն ու Էրզրումը:

Բաթումի պայմանագրից հետո Արամ Մանուկյանը թուրքերին սիրաշահելու համար աշխատում է Վան-Վասպուրականի գնդերը Երևանից տեղափոխել այլ վայրեր: «Արամը Վանի գնդերու ներկայութիւնը անբաղձալի կը համարէր Թողուլ Երևան, միշտ նկատի ունենալով թուրքերու ներկայութիւնը Երևանի տակ»[4]: Բայց Երևանի Ազգային խորհուրդի մեծամասնությունը չի համաձայնում այդ որոշմանը: Հարցը շատ պարզ էր: Արամ Մանուկյանը նեղ տեղից դուրս էր եկել, Վասպուրականի գնդերը նրան փրկել էին Երևանում, ինչպես 1915 թ. ապրիլին՝ Վանում, այժմ նա նրանց կարիքը չուներ: Այդ դեպքից հետո նրա հեղինակությունը խիստ ընկնում է ոչ միայն վան-վասպուրականցիների, այլև Վանի դաշնակցականների աչքին:

[1] «Աշխատանք», Երևան, 1918, մայիսի 29, թիւ 3:

[2] Վասպուրական. 1915-1930, էջ 119:

[1] **Մելիքեան Յ.**, Արեան ճանապարհին, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, թիւ 3, նաև՝ Վասպուրական, 1915-1930, էջ 119:

[2] Յիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտներուն, էջ 313:

[3] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 216:

[4] Վասպուրական. 1915-1930, էջ 119:

Այդուհանդերձ, թուրքական սարսափազդու չարիքի դեմ պայքարելու համար, Արամի կարգադրությամբ Արճեշի և Առնիսի հերոսական և արյունալի կռիվներից հետո, Երևանի մեջ վերակազմված Վանի գունդը՝ շատախցի գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գլխավորությամբ, տեղավորվեց Ղարաքիլիսայում և Դիլիջանում՝ մինչև Իջևան: Արամը շատ լավ էր հասկանում, որ միայն վանյան ուժերը կարող էին գգաստության մեջ պահել թուրքերին և նրանց պարբերաբար հիշեցնել «վանլի ըմ վանլի, կլըճըմ տըր կանլի» (վանեցի եմ վանեցի, թուրս է արյունալի) արտահայտությունը[1]*:*

Ավելի ուշ վասպուրականցիները մասնակցեցին նաև Նախիջևանի և Ղարաբաղի կռիվներին:

Այսպիսով, Վասպուրականի հայությունը իր փրկության համար պարտական էր այն հերոսական կռիվներին, որ մղել էին հայ մարտական խմբերը զանազան տեղերում՝ թվով իրենց մի քանի անգամ գերազանցող թուրքական զորքերի և քուրդ հերոսակախմբերի դեմ:

[1] Յիշատակարան նուիրուած 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտներուն, էջ 313:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

ԳԼՈՒԽ Ա - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ, ՀՈԳԵՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ (1908-1917 ԹԹ.)

1.1. Մշակութային կյանքի աշխուժացումը (1908-1914 թթ.) 9
1.2. Նորսերնդական շարժումը Վանում և Հայ Եկեղեցին 88
1.3. Հոգևոր-կրոնական հարաբերությունները, եկեղեցական կյանքը և Աղթամարի կաթողիկոսության կողոպտման խնդիրը 107
1.4. Կաթոլիկական և բողոքական քարոզչությունը Վանում 137
1.5. Վասպուրականի ձեռագրական հարստությունները, կորուստները և փրկության գործ 154

ԳԼՈՒԽ Բ – ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՓՈՐՁԸ ՎԱՆՈՒՄ (1917-1918 ԹԹ.)

2.1. 1917 թ. ռուսական Փետրվարյան հեղափոխության արձագանքները Վան-Վասպուրականում և Վանի Շրջանային վարչության գործունեությունը (1917 թ. մարտ-նոյեմբեր) 183
2.2. Կովկասյան ռազմաճակատի քայքայումը և Վան-Վասպուրականի պաշտպանության հարցը (1917 թ. հոկտեմբեր - 1918 թ. հունվար) 220
2.3. Վանի նահանգային ինքնավար Կոմիսարության՝ հայկական նորանկախ կառավարության հռչակումը և գործունեությունը 237
2.4. Ինքնապաշտպանական մարտերը Վան-Վասպուրականում (1918 թ. փետրվար-մարտ) 254
2.5. Վան-Վասպուրականի ազգաբնակչության վերջին՝ 1918 թ. մարտյան գաղթը պետականության անկումը և նահանգի դատարկումը 282
2.6 Վասպուրականի գնդերի մասնակցությունը Սարդարապատի 1918 թ. հերոսամարտին 302

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՐՈՆԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁԸ (1908-1918 ԹԹ.)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ – 2018

Հրատարակչական բաժնի տնօրեն՝	Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝	Գևորգ եպս. Սարոյան, Զաքարիա Ծ. վրդ. Բաղումյան, Գարեգին վրդ. Համբարձումյան, Ա. Մադոյան, Գ. Տեր-Վարդանյան
Սրբագրիչներ՝	Ց. Հարությունյան, Ս. Գրիգորյան
Էջադրումը՝	Ղևոնդ ավ. քահանա Մայիլյանի

Թուղթ՝ օֆսեթ 70 գր., չափսը՝ 60x84 1/16,

ծավալը՝ 308+8 ներդիր էջ, տպաքանակը՝ 300:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ